

ՅՈՒՆԻՍԿՈՒՄ



2-Պ ԹԻՆ



ՀԱՆԴԵՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԺԳ

ՅՈՒՆԻԱՐ - ՓԵՏՐԻԱՐ

Փ Ա Ր Ի Զ
1936

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ՌՈՍՏՈՄ — Հայ-վրացական փոխյարաբերությունները	1
ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆ — Հայերուրբ վաերաքղթեր	12
ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ — Բագրատ վարդ. Գեորգ-Թաւաբախան	25
ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ — Լեւոն Թադէոսեան (Պապաշա)	37
ՎԱՀԱՆ ՄԻՆԱՆՈՐԵԱՆ — Արեւաիբի Օրեր	48
ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ — Համաշխարհային Պատերազմը եւ Տարօնի Աշխարհը	68
ԱՐՄԷՆ ՍԵԻԱՆ — Փետրուար 18-ի Յեղափոխությունը	87
ԱՆՅԵԱԼՔ — Ակադ. Ալեքսանդր Թամանեան	105
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ — Մարդկային երկու վաերաքրեր — Մի Ոչխարի վաերաքրանի մասին	118
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ	120
ԳՐԱՆՈՍՏԱԿԱՆ — Յիրդուսի, «Բանաստեղծի ծննդեան հազար- ամյակին նվիրված ժողովածու», Յ. Չ.	122
ՅԱԻԵԼԻԱԾ — Վ. Մանկունի, Գեորգ Գ. եւ իր ժամանակը	177

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրություն, Եգիպտոս, Իտալիա՝
տարեկան 70 ֆրանկ
Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանկ
Ռուսմանիա, Բուլղարիա, Յունաստան Սիւրիա, եւ
Պարսկաստան՝ ,, 50 ֆրանկ
ՆԱՆՈՐԳ ՏԱՐԻՆԵՐԻ ԻԲՐԱԲԱՆՁԻՐ ՏԱՐԻՈՅ Ե ԳԻՐՔԸ՝ 25 Ֆր.
Հասցէ՝ նամակների. դրամի, յողւածների եւ ուրիշ ամէն
տեսակ առաքումների համար —


S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

Impr. ARTISTIQUE 42 Rue de la Jonquièrre PARIS (17^e)

05. 2013

2-Պ ՅՔԳ



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Դ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1 1936 ՅՈՒՆԻԱՐ — ՓԵՏՐՈՒՐ

ՌՈՍՏՈՄ

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ
ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Յ. Գ. Կենտրոնական Գիււանում, Ռոստոմի նամակների եւ
ձեռագիրների շարքում, պահել է եւ այս գրածքի բնագիրը: Երեւ
մեծադիր չորս էջոց քերթեր՝ գրած Ռոստոմի պարզ ու յստակ
գրչով: Տեղ-տեղ ջնջուած ու բարեփոխուած: Ոչ վերնագիր ունի,
ոչ տարեթիւ եւ ոչ ստորագրություն: Ե՞րբ է գրած, ի՞նչ նախատա-
գիր է ունեցել գրածքը, — յայտնի չէ: Սակայն ընդհանուր տալա-
ւորությունը այն է, որ գրությունը յատկացուած է «Գրօշակ»-ին՝ հը-
րատարակելու կովկասից գրած նամակի ձեւով: Արդեօք իրօք
կովկասից է գրել Ռոստոմը, թէ հէնց ժընէվում, — այդ էլ կարելի
չէ ասել:

Գրութեան բովանդակությունից երեւում է, որ «նամակ»-ը
գրած է այն օրերին, երբ հայ-վրացական բանակուրը առանձնապէս
սուր հանգամանք էր ստացել շնորհիւ Գոլիցինեան ազգամիջեան
կրքերը հրահրող քաղաքականութեան: Ռոստոմի առաջին յե-
ղափոխութեան նախորդող տարիներն էին դրանք, երբ Թիֆլիսի
ռուս եւ վրացի մամուլի մէջ շահատակություններ էին անում վելիչ-
կոների եւ Ակակի Ծերեթելիների տիպի հայակեր ասպետներ:

Ռոստոմը հայ-վրացական փոխյարաբերությունների հարցը դը-
նում է սկզբունքային հողի վրա, քննում պատմական, ընկերային —

Ֆաղափական մեկնակետից ելնելով եւ իրեն յատուկ յստակամտութեամբ ներկայացնում է Հ. Յ. Դաշնակցութեան տեսակետը: Բընորոշ է մասնաւորապէս նիւթի հարցադրութեան եւ զարգացման եղանակը-մէթոդը, որ իր մէջ խտացնում է Ռուստովի իւրայատուկ «մարքսիզմը»: Ռուստովը խորփով, անշուշտ ազդած էր մարքսիստական աշխարհահայեացքից, բայց գտարիւն մարքսիստ նրան, ի հարկէ, համարել չի կարելի, ինչպէս գտարիւն նարոդնիկ չէր եւ Բըրիտափորը. եւս առաւել անհեթեթութիւն է «անիշխանական» կամ, մանաւանդ, «նեչայեւեց» ցոյց տալ Ս. Զաւարեանին: Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր երրորդութիւնը, անտարակոյս, աւելի կամ պակաս չափով ազդել են եւրոպական եւ ռուսական այս կամ այն ֆաղափական դպրոցի ուսումնէից, բայց նրանց գլխաւոր առաւելութիւնը հէնց նրանումն է, որ, ոչ յօրինակ հնչակեան հիմնադիրների, մեկնել են հայ իրականութեան առանձնայատուկ պայմաններից, կարողացել են մշակել ու ձեւակերպել որոշ չափով ինքնուրոյն աշխարհահայեացք եւ ընկերային-ֆաղափական սեփական գաղափարախօսութիւն:

Հայ- վրացական փոխյարաբերութիւնների խնդիրը, այնպէս ինչպէս ներկայացնում է Ռուստովը, ըստ էութեան այսօր էլ մնում է իր ուժի մէջ, սակայն, կարելի չէ չընդունել, որ Ռուստովը խրեդիք չի առել բովանդակ ծաւալով: Դասակարգային բացատրութիւնը, անշուշտ, միշտ է, բայց ամբողջ մշտնադրութիւնը չէ: Խնդրի մէջ կան եւ ներքին-պատմական պատճառներ, երկու ժողովուրդների ֆաղափական նախադրի բաժանման եւ ֆաղափական հակումի նկատումներ, եւ, ի հարկէ, նաեւ ռուս կառավարութեան ֆաղափական դաւերը եւ այլն: Այսօր, նոր դէպքերի ու փաստերի լոյսի տակ, Ռուստովի հիմնական միտքը կարելի է շատ աւելի լայնացնել ու խորացնել:

Այդուհանդերձ, Ռուստովի գրութիւնը մեծապէս շահեկան է, ոչ միայն լոկ իբրեւ պատմական վաւերագիր, այլ եւ որպէս գործնական արժէք ներկայացնող գրածք:

ԽՄԲ.



Այս նամակը վաղուց է գրւած, ռուս մամուլի եւ վրաց հասարակութեան որոշ մասի «ազգասիրական» արշաւանքը համարեա թէ դադարել է, ռուս կառավարութիւնը արդէն «խեղդում է տաճկահայերի եւ ռուսահայերի մէջ ծագած առաջագիմական շարժումը» (մենք մեր կողմից այդ, ի հարկէ, չենք վերագրում ռուս եւ մանաւանդ վրաց ազգասէրների արշաւանքին): Բայց մենք դիտենք, որ ի-

րենց ազգի շահերի համար անձը չինայող այդ հաստատակամ գաղափարական գործիչները մի քիչ շունչ առնելով նորից կը բարձրացնեն իրենց ազգասիրական կռիւտը եւ նորանոր, աւելի անմխառնասպելներ հնարելով՝ կը պղտորեն նորից միամիտների մտքերը, աշխատելով ցոյց տալ, թէ իրենք են ազգի միակ արթուն հովիւները եւ թէ առանց իրենց ազգի շահերը բոլորովին օտնատակ կը լինեն:

Ռուս թթու ազգասէրների արշաւանքին մենք վաղուց ենք ընտելացել, ինչպէս եւ Ռուսաստանում ապրող միւս ազգութիւնները. դրանց ընտելացել է եւ ըստ արժանւոյն գնահատել եւ ռուս հասարակութիւնը, որի լաւագոյն մասը ատելով ատում է այդ ուղղութիւնը: Սակայն, մեզ համար անսպասելի էր եւ միանգամայն ցաւալի մեր հարեւան վրաց հասարակութեան անմխառն յարձակումը եւ այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ մենք աչք չէինք կարողանում բաց անել մեր դիւխի թափուղ հարեւաններից, երբ մենք «աւելի քան երբ եւ իցէ կարօտ էինք սլաշտպանութեան»: Վրաց ինտելիգենցիան մոռացաւ իւր «ասպետական բնաւորութիւնը», մոռացաւ իւր ազգի իրական շահերը եւ տարաւ իւր արշաւանքը ամէն կողմից՝ թէ բերանացի, թէ իւր մամուլի միջոցով եւ թէ ռուս խաւարամիտ մամուլին նիւթ մատակարարելով: Վրաց հասարակութեան մէջ եղան եզակի, թոյլ, հակառակ ձայներ, բայց չգտնեց մէկը, որ ասպարէզ դուրս դար եւ իրստ կերպով բողոքէր այդ անտեղի արշաւանքին դէմ: Վրաց հասարակութեան լաւագոյն մասը ինքն էլ կամայի (եթէ միայն չի ամաչել) այդ անմխառն, անտակտ, փոխադարձ ազդային ատելութիւն գրգռող քայլից:

Այս ի՞նչ արշաւանք է, ի՞նչ են պահանջում հայերից ռուս եւ վրաց ազգերի անունից ճառող ինքնակոչ փաստաբանները, ի՞նչ թշնամութիւն կարող է լինել այդ ազգերի մէջ: «Հայերը վաշխառուներ են, նրանք անխիղճ կերպով հարստահարում են հարեւան ազգերին, իրենց ձեռքն են ձգել ատելուրը, յախշտակել են ամէն ինչ, մինչեւ իսկ . . . ուղղափառների սրբավայրերը (ա՛խ, չարադործներ)»:

Նախ եւ առաջ, ճի՞շտ է արդեօք այս բոլորը: Ճի՞շտ է, որ հայերը կովկասում յախշտակել են ամէն ինչ: Նրա՞նք են միայն երկրի միակ հարստահարիչները: Նոյն ռուսները, վրացիները, մանաւանդ իմերեթները վաշխառուներ չե՞ն արտադրում: Ցոյց տա՞նք արդեօք այն գաւառները, որտեղ թուրք վաշխառուներին ոչ ոք չի կարողանում դիմադրել: Նորէյները, Բոտախիւները, Շիրախիւները, Մորոզովները, Ալեքսէյիւները, Կորգինկիները, որոնք ահաղին կապի-

509-2001

տալներով մուտք են գործել Կովկաս, հայեր են միթէ: Բորժոմի լայնատրած կալածները փոխարքան չի՞ «յափշտակել»: Այդ փոխարքան չէ՞ր, որ ուժով իր հողի վրա բնակեց վրացի խիզաններին զրկեց իրենց դարաւոր իրաւունքներից: Կախեթի ամենալաւ մասը՝ Մուզուրկանը, Յինանդալը Ռուսաց Կայսերական տունը չէ՞ «յափշտակել»: Հայհոյեցէ՛ք «յափշտակողներին»․ ձեր հայհոյանքի ամենամեծ մասը թափւում է ձեր պաշտած կայսերական տան վրա: Այս բոլորը շատ լաւ է յայտնի յարձակում գործողներից շատերին, բայց դրանք դիտմամբ հարցին այս ձեւը տալով՝ աշխատում են մոլորեցնել հասարակական կարծիքը եւ դա իրենց բուն նպատակին ծառայեցնել:

Ռուսաստանում վերջին ժամանակներս արդէն կադմակերպւել է խոշոր արդիւնաբերողների, խոշոր վաճառականների, կամ այսպէս անուանեալ բուրժուական դասակարգը: Բայց Ռուսաստանն ընդարձակ երկիր է, բազկացած բազմաթիւ մասերից, որոնք գտնուում են կուլտուրական շատ տարբեր աստիճանների վրա: Լեհաստանում մենք տեսնում ենք կապիտալիզմի ահագին դարգացում․ բուն ուսական կենտրոնում՝ Մոսկւայում եւ իւր շրջակայքում արդիւնագործութիւնը նոյնպէս դարգացած է, բայց ոչ այնպէս, ինչպէս Լեհաստանում․ այնուհետեւ Ռուսաստանի միւս մասերում, ինչպէս օրինակ Կովկասում, խոշոր արդիւնագործութիւնը նոր է մուտք գործել․ սրա հետ միստամանակ այլ եւ այլ անկիւններում պատահում ենք վայրեր, ուր դեռ տիրապետում է ապրանքների անմիջական փոխանակութիւնը եւ ուր իբր դրամ գործ են ածում կենդանիների մորթին: Ծնորհիւ Ռուսաստանի ընդհանուր անտեսական սկզբունքի թոյլ դարգացման, նրա դանաղան մասերի կադմակերպւող եւ կադմակերպւած բուրժուաների մէջ դեռ չէ կարող գոյութիւն ունենալ շահերի ընդհանուր համերաշխութիւն, նրանց մէջ դեռ չի կարող ծագել ընդհանուր դասակարգային դիտակցութիւն: Իւրաքանչիւր մասի բուրժուաները անխուսափելի կերպով պէտք է ուրեմն եւ մրցեն միւս մասերի բուրժուաների հետ, պէտք է ուրեմն եւ թշնամանան: Այս թշնամութիւնը չնորհիւ մի քանի պատմական հանգամանքների Ռուսաստանում կարողանում է քողարկուել այդպիսի գաղափարով: Բուն ուս նահանգների բուրժուաները չեն կարողանում մրցել Լեհաստանի բուրժուաների հետ, որովհետեւ վերջիններս աւելի ուժեղ են եւ ոչ թէ միայն թոյլ չեն տալիս իրենց բարոնում տարածել առաջինների ապրանքները, այլ եւ մեծ աջողութեամբ տարածում են իրենց ապրանքը դրանց բայոնում: Պարզ բան է, քանի որ այդ մրցումը գոյութիւն ունի, թշնամութիւնը անխուսափելի կը

լինի, լեհական հարցը ասպարէզից չի իջնի, ուս մամուլի որոշ մասի արշաւանքը լեհացիների վրա չի դադարի:

Ռուս արդիւնագործողները ուզում են մտցնել իրենց կապիտալները Կովկասում, ուս վաճառականները իրենք են ուզում ապրանք արտահանել Կովկաս, սակայն դուք երկրի մէջ պատահում են լուրջ մրցակիցներ, որոնք գլխաւորապէս հայերն են, որոնք նոյնպէս ձեռնամուխ են լինում խոշոր արդիւնագործական ձեռնարկութիւններին, նոյնպէս աջող կերպով մտցնում են երկրի մէջ եւրոպական եւ ուսական ապրանքներ եւ աւելի լաւ ճանաչելով երկրի պայմանները՝ կամ թոյլ չեն տալիս միւսներին հաստատուելու, կամ մեծ խոչընդոտ են լինում հաստատուածներին:

Կառավարութիւնը դրաւում է Անդրկասպեան երկիրը, դցում է երկաթուղու գիծը, ուս բուրժուան հրճում է, այդ նրա տենչալի ցանկութիւնն է՝ իւր ապրանքները մտցնելու, այնտեղից ապրանքներ արտահանելու համար նոր հրապարակ է բացում: Սակայն, մի քանի ժամանկից յետոյ, ուս բուրժուան տեսնում է, որ ամբողջ Անդրկասպեան երկիրը պատած է դարձեալ . . . հայ վաճառականներով: Ի՞նչ հարկէ, այս պայմանների մէջ չի կարելի սպասել, որ դանաղան Մորոզովները, Ալեքսէյէվները, Կորզինկինները բարեկամական աչքով նային հայերի վրա․ պարզ բան է, որ գրգռւած ուս բուրժուաները եւ իրենց բարեկամները, չուզենալով թշնամութեան բուն պատճառը երեւան հանել, ամէն տեսակ յիմար զրպարտութիւններ կը թափեն «հայերի» վրա եւ կը ծափահարեն Սուլթանին հայերի գըլխին կատարած վայրագութիւնների առթիւ: Այս պարոնները կովկասեան բոլոր ազգութիւնների մէջ միայն հայերին են մեղադրում ապստամբութեան մէջ կառավարութեան դէմ: Ծիծաղելի չէ՞ այս Կովկասի մահմետականները միշտ պատրաստ են եղել ապստամբելու ուս կառավարութեան դէմ: Ամենքը յիշում են անշուշտ վերջին ուս-տաճկական պատերազմի ժամանակ մահմետականների պատրաստութիւնները, եւ եթէ տաճիկները քիչ էլ առաջ խաղային, երեւանը գրաւէին, բոլոր մահմետականները ոտի կը կանգնէին: Լեռնական Ղազըլ-Ղումուզցիք դրան էլ չսպասեցին եւ ապստամբեցին: Ոչ ոք էլ չի կարող ասել, որ վրացիների մէջ ձգտում չկայ ուսական բռնակալ լծից ազատուելու: Բայց եւ այնպէս, կրկնում ենք, այդ պարոնների աչքում միայն հայերն են մեղաւոր: Ինչո՞ւ: – Որովհետեւ հայերն են դրանց աւելորական ասպարէզում խոչընդոտ հանդիսանում եւ ոչ վրացիք, կամ թուրքերը: Պարզ է, որ այստեղ ոչ քաղաքականութիւնն է դեր խաղում եւ ոչ համայն ուս ազգի շա-

հերը, այլ Մոսկւայի ծանրամիտ Տիտ Տիտիչներին *) դրպանի շահերը:

Հաստատիր եւ ծանրագլուխ ուսուցիչները չեն կարողանում մըցել հրէաների հետ: Ահա հրէական հարցը սուր կերպարանք է առնում, հրէաները տանեակ հաղարներով քշում են Ռուսաստանից, մնացածների իրաւունքները կրճատում: Այս բոլորը կատարւում է ազգասիրաբար, յանուն ուսուցիչների բարեկեցութեան եւ այլն: Տոյց տալու համար, թէ ինքը ուսուցիչները ինչպէ՞ս է վերաբերում այդ տեսակ ազգասիրութեան, առաջ բերենք մի փաստ: Հարաւային Ռուսաստանում, Բեսարաբիայում ահագին թւով հրէա վաշխառուներ կային, ցրած գիւղերում: Հրէական արշաւանքի ժամանակ այդպիսի խոշոր կալաւածատէրերը, հանդիսանալով ջերմ պաշտպան գիւղացիների շահերի, սաստիկ աղմուկ էին բարձրացրել տեղական հրէաների դէմ, աղաղակելով, թէ դրանք ժողովրդի արժանի ծծողներ են եւ այլն, պէտք է դրանց բոլորին քշել, որպէսզի բունդները նեարդները շատ էին նրբացել: Նրանք ժողովրդի թշուառ դատութեան համար «արդարութիւն», «արդարութիւն» կոչելով կառավարութեան դիմեցին: Բարեխնամ Հայր-Թաղաւորը լսեց դրանց արդար բողոքները: հրէաները հալածւեցան, Բեսարաբիան զգալի կերպով ազատեց իր կեղեքողներից, բայց յիմար ուսուցիչները սկսեց . . . լալ՝ ափսոսանքով յիշելով մօտիկ անցեալը: Պատճառը շատ պարզ էր: Այդ գիւղացիները չունին սեփական հող. բոլոր հողերը պատկանում են խոշոր, շատ խոշոր կալաւածատէրերին: Քանի կային հրէա վաշխառուները, գիւղացիները փոխ էին առնում դրամ, կապալով վերցնում կալաւածատէրերի հողը եւ վարում: Այդ իրենց աւելի ձեռնառու էր: Իսկ վաշխառուների հեռանալուց յետոյ, գիւղացիները ստիպւած եղան անպատճառ աշխատել նրանց արտերում, իբր հասարակ մշակ, որ ստանում է միայն իր օրավարձը, ստիպւած եղան իրենց հարկաւոր դրամի համար անպատճառ կալաւածատէրերին դիմել եւ այդպիսով ընկնել բացառապէս դրանց ճանկը:

Եւ ինչպէ՞ս չլալ . . .

Քանի որ, կրկնում ենք, Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը թոյլ է, նրա զանազան անկիւններում գոյութիւն ունի տնտեսական անհասար զարգացում, քանի որ մէկ անկիւնի արդիւնա-

*) Տիտ Տիտիչ - ուսուցիչական տիպ՝ կոպիտ վաշխառու վաճառական:
**) Գոգոլի հերոսներից մէկը՝ գոեհիկ կալաւածատէր:

դործողները, վաճառականները աշխատում են ներս մտնել այնտեղ, ուր տեղացիներն արդէն տարածել են իրենց ցանցերը, դրանց մէջ անխուսափելի է լսմբական թշնամութիւնը, որ հետեւանք է պարզ տնտեսական մրցման: Եւ որտեղ որ հնարաւոր է, այդ տնտեսական թշնամութիւնը քողարկւում է այս կամ այն դադափարով՝ ազգային, քրիստոնէական եւ այլն: Իսկ երբ Ռուսաստանն եւս մտնի կապիտալիստական զօրեղ կազմակերպութեան մէջ, երբ երթեւեկութիւնը դիւրանայ, իրարից հեռու անկիւններն ընդունեն քիչ թէ շատ միատեսակ տնտեսական զարգացում, այն ժամանակ այդ լսմբական թշնամութիւնը կը վերանայ, այն ժամանակ մրցողները կը լինեն ոչ թէ մի անկիւնի բուրժուանները միւս անկիւնի բուրժուանների հետ, այլ այս անհատը միւսի հետ, որ անկիւնին էլ դրանք պատկանեն: Եւ երբ վերանայ այդ տեսակ թշնամութիւնը, այն ժամանակ երկրի մէջ կը թուլանան եւ հետզհետէ կը կորչեն զանազան ազգային թշնամութիւնները: Ընդհակառակը, այն ժամանակ տեղի կունենայ մի նոր երեւոյթ. Մոսկւայի բուրժուան իւր բարեկամական ձեռքը կը մեկնի իր վաղեմի թշնամի՝ Կովկասի, Լեհաստանի բուրժուաններին: Նրանց մէջ կը զարգանայ դասակարգային ինքնաձանաչողութիւնը. նրանք իրար ձեռք ձեռքի կը տան միացեալ ուժերով կուելու բանւոր դասակարգի կազմակերպութեան դէմ, այն սարսափելի ուժի, որ անխուսափելի հետեւանք կը լինի կապիտալիստական զարգացման: Իսկ մինչեւ այդ ժամանակ հայ ազգը, լեհ ազգը եւ այլն կը կրեն անընդհատ յարձակումներ ուսուցիչներու վրայ կողմից, քաւելով իրենց բուրժուանների մեղքը:

Ահա ուսուցիչները որոշ մասի արշաւանքի բուն դրդիչ պատճառները, մամուլի, որ արտայայտիչ է այս դէպքում ուսուցիչների նպատակների: (Սրանով չենք ուղում ասել, ի հարկէ, որ այդ օրդանները բուն բուրժուական են. Ռուսաստանի տնտեսական կեանքը դեռ այն աստիճան չի զարգացած, որ բուրժուանները կարողանան որոշ ուղղութեամբ ասպարէզ դուրս գալ): Իրա այդ ուղղութիւնը գնահատուած է բոլորի կողմից, հասկացող դասի մէջ նա իւր յարձակումներով ու չնաշխարհիկ առասպելներով միայն ծիծաղ է կարողանում շարժել:

Այլ բան է մեր հարեւան վրացիների արշաւանքը, որը դեռ չէ քննադատուած, դեռ չէ գնահատուած նոյն իսկ վրաց հասկացող դասի կողմից եւ որը մի քիչ այլ բնաւորութիւն ունի:

Հայերը շատ վաղուց են ապրում վրաստանում: Հէնց առաջաւնից հայերի մեծամասնութիւնը երկրագործ էր, բայց եւ այնպէս երկրի առեւտուրը եւ արհեստները շուտով անցան դրանց ձեռքը: Այդ

Ժամանակ վաճառականը, արհեստաւորը անհրաժեշտ տարր էին երկրի համար. նրանք անհրաժեշտ էին թէ կառավարութեան, թէ ազնւականութեան եւ թէ ժողովրդի համար: Նրանց դէմ թշնամութեան ոչ մէկ նշոյլ չէր նկատուում: Ռուսաց տիրապետութեան ժամանակ էլ հայերը կարողացան պահպանել իրենց դիրքը: Վրաց ազնւականներն այս ժամանակ իրենց շատ լաւ էին զգում. նրանք ազատել էին իրենց պարտականութիւնից՝ հայրենիքի պաշտպանութեան համար կռուելուց, մի բան, որ արդարացնում էր նրանց գոյութիւնը, ու անձնատուր էին եղել խաղաղ, անհող կեանքի: Վրաց նախկին ազնւականները մրցում էին իրար հետ իրենց քաջութեամբ, հայրենիքի պաշտպանութեան համար արեւն թափելու պատրաստակամութեամբ, իսկ այդ ժամանակից սկսած ազնւականները մրցում էին . . . դէնի խմելու ընդունակութեամբ: Այդ խաղաղ, անհող, անհող կեանքը երկար չէր կարող տեւել. երկրի մէջ այդ ժամանակ տեղի էին ունենում նշանաւոր փոփոխութիւններ, որոնք սկսում էին աւելի եւ աւելի վրդովել վրաց ազնւականութեան թռչնային անդարդ կեանքը: Երկրի տնտեսական կեանքը սկսեց արագ դարձանալ, արհեստները ծաղկեցին, առեւտուրը մեծ ծաւալ ստացաւ, ճանապարհները լաւացան, լուսաւորւած երկրների հետ շփումը սաստկացաւ, կեանքի մէջ առաջացան նորանոր կարիքներ, որոնց հարկաւոր էր բաւականութիւն տալ: Այդ կարիքները աւելի ծագում էին ազնւականութեան մէջ, իբր երկրի առաջադէմ տարրի: Նոր կարիքներին բաւականութիւն տալու համար հարկաւոր էր դրամ: Այդ դրամը ազնւականութիւնը չուներ, չէր կարող ստանալ իւր ճորտ գիւղացիներից: Վերջիններս միմիայն բնական նիւթ կարող էին տալ: Ահա այստեղ դրամատէրերը՝ հայ վաճառականներն ու վաշխառուները, կամ խօսելով ընդհանուր լեզուով՝ հայերը սկսեցին մեծ դեր խաղալ մի տեսակ միջնորդի դեր կատարելով ազնւականութեան եւ գիւղական տարրի միջեւ: Ազնւականին դրամ է հարկաւոր. նա ինքը անընդունակ է առեւտրական ձեռնարկութիւնների համար, նա չի կարող ծախել ինքը իւր գիւղացիներից ստացած բնական տուրքը՝ ցորենը, գարին, բուրդը, մրգերը եւ այլն: «Հայը» տալիս է ազնւականին հարկաւոր դրամը եւ վերցնում է դրա փոխանակ նրա ստացած արդիւնքը եւ անաղին օգուտով էլ իւր դրամի համար ծախում այլ տեղեր, նորից դրամի փոխանակում: Գիւղացուն նոյնպէս դրամ է հարկաւոր: Հայը նրան էլ է տալիս եւ մէկին երկու-երեք առնում նրա հասոյթից: Այսպիսով «հայը» կեղեքում է ազնւականին էլ, գիւղացուն էլ եւ երկուսն էլ նրանից դո՛հ են:

Երբ ճորտութիւնը վերացաւ, Վրաստանի տնտեսական կեանքը

աւելի ազատութիւն ստացաւ, հայը աւելի սաստիկ, աւելի մեծ դիւրութեամբ շարունակեց իւր կեղեքումը: Այդ ժամանակ էլ չէր լուում ոչ մի բողոքի ձայն ոչ մի կողմից. այդ ժամանակ էլ վաշխառու անհրաժեշտութիւն էր երկուսի համար էլ. առանց այդ տարրի նըրանք չէին կարող յարմարել կեանքի նոր պահանջներին: Ազնւականութեան կարիքները հետզհետէ մեծանում էին. գիւղացիներից ստացած տարեկան հասոյթը չէր կարող բաւականութիւն տալ ազնւականի արժանավայել կեանքին: Եռայլ ծախսերը ծածկելու համար հարկաւոր էր գրաւ դնել հողերը, ձեռնամուխ լինել, «մայր դումարին», եւ վրաց ազնւականները միշտ գնում էին «չնչին, անպէտք հողերը» նաղը փող համարելով: Այսպէս, շատ բնական ճանապարհով, մի կողմից քայքայւում էր վրաց ազնւականութիւնը, իսկ միւս կողմից հարստութիւնը դիւրում էր հայ եւ մասամբ էլ նոր ծնունդ առած վրաց դրամատէրերի մօտ: Այս ժամանակ անա սկսւում են կամաց-կամաց լուել բողոքի ձայներ հայ «վաշխառուների», «հայութեան» դէմ: Եւ վրաց հասարակութեան այժմեան ազգասիրական ճառերը, նրա կոյր արշաւանքը «Հայութեան» դէմ արտափայլումն է վրաց ազնւականութեան տնտեսական քայքայման: Դոքա ուժասպառ եղած, թուլացած, իրենց անկումը զգացած ազնւականների անդոր ձիչերն են. դրանք դէպի վաճառականական, վաշխառուական ասպարէզը ձգտող, բայց արդէն փորձաձաների հետ մըրցելու անընդունակ ազնւականների կատաղած ազմուկներն են. դըրանք, վերջապէս, ձուլից նոր դուրս եկած եւ իրենց նոր ասպարէզի վրա արդէն քիչ թէ շատ աջողութիւն գտած վրացի դրամատէրերի ինքնաբաւական մըթմըթոցն է: Եւ վրաց ինտելիգենտները, որը գիտակցաբար, որը անգիտակցաբար, որը կամայ, որը ակամայ, իրենց գցել են այդ հոսանքի մէջ, հետեւում են վերոյիշեալների շահագիտական միտումներին, մի կողմ թողնելով իրենց ժողովրդի իսկական շահերը:

Այդ արշաւանքի բուն աղբիւրը պարզ է մեզ համար. մենք չենք խաբւի դրանով եւ չենք վերագրի այդ ամբողջ վրաց ազգին, ինչպէս չենք ընդունի ուսւ մամուլի որոշ մասի արշաւանքը իբր արտայայտիչ համայն ուսւ ժողովրդի ձգտման: Մենք տեսնում ենք, որ հայ, վրացի, թուրք, ուսւ աշխատաւոր տարրի մէջ վիտտում են ամէն աղբի, ամէն դերքի պատկանող արեւն ծծող վամպիրներ, որոնցից ոմանք ուժով, ոմանք քաղցրութեամբ, ոմանք խաբելով, ոմանք քրքրանելով եւ նրա թոյլ կողմերը շոյելով՝ առաջարկում են իրենց ծառայութիւնը . . . նրան կեղեքելու: Իւրաքանչիւրը դրանցից աշխատում է հաւատացնել, որ եթէ ինքը կեղեքի, աւելի լաւ կը լինի:

Ճնշած եւ տգէտ ժողովուրդը այդ կեղեքումը համարելով շատ բնական երեւոյթ եւ ընտրութիւնն անխուսափելի, հակում է սրա կամ նրա կողմը, և հարկէ, որքան դա կախած է իր կամքից, որքան թոյլ են տալիս իրեն իւր տնտեսական եւ քաղաքական պայմանները: Բացի այդ, նա յաճախ ոչ թէ միայն չի ճանաչում իւր իսկական թըշնամիներին, այլ խարելով այդ վամպիրների ճարտիկ խաղերից, սկսում է թշնամաբար վերաբերւել դէպի միւս տիպերի իւր վիճակակից աշխատաւորները եւ իւր այդ թշնամական վերաբերմամբ աւելի քան լաւ գործիք դառնում վամպիրների շահագրգռական նըպատակներին: Բայց այսպէս չի մնայ. կը գայ ժամանակ, երկրի դրութիւնը կը փոխւի, աշխատաւոր տարրը կը տեսնի, որ պարտաւոր չէ անպատճառ ընտրութիւն անել կեղեքողների մէջ, որ կարելի է եւ չկեղեքել. նա կը ճանաչի իւր իսկական թշնամիներին, կը ճանաչի եւ բարեկամներին. նա միջոց կուեննայ բարձրացնել իւր հսկայական ջրուտ բազուկը, շարժել այդ վամպիրների գլուխը եւ լինել տէր իւր աշխատանքին: Իսկ աւուրեայ ծանր հոգերի մէջ խորասուզած աշխատաւոր տարրին կուելու միջոց տալու պարտականութիւնը ծանրանում է երիտասարդ ուժերի վրա, եւ իւրաքանչիւր երկրի երիտասարդութիւնը պարտաւոր է կրել այդ ծանր լուծը:

Մենք հաւատացած ենք, որ վրաց երիտասարդութեան այն մասն էլ, որ հասկանում է իրերի դրութիւնը, կը հասկացնի վրաց հասարակութեան այդ թշնամութեան, այդ բողոքների իսկական արժէքը. հաւատացած ենք, որ վրացի երիտասարդ ուժերը, որոնք անկեղծ կերպով ձգտում են իրենց ժողովրդի բարեխառութեան, բայց տարւում են ընդհանուր հոսանքով, կը հասկնան, որ վրացի, հայ, ռուս, թուրք աշխատաւոր տարրերի մէջ չի կարող լինել շահերի անհամերաշխութիւն, որ այդ անհամերաշխութիւնը կարող է լինել միայն դրանց կեղեքող տարրերի մէջ. հաւատացած ենք, որ վրացի երիտասարդութիւնը չի հետեւի «Իվէրիա» *) լրագրի օրինակին՝ քծնելով ռուս մամուլի ստոր մասի առաջ՝ աշխատել ձեռք բերել երկրի համար լաւ դրութիւն, այլ ձեռք ձեռքի տւած բոլոր միւս ազգութիւնների գործողների հետ՝ կը կուին հայ, վրացի, թուրք, ռուս հարստահարիչների դէմ, կը կուին փոխաբքայի, կայսերական տան ոտնձգութիւնների դէմ, կը կուին վերջապէս, երկրի գլխաւոր չարիքի միտպետական բռնակալութեան դէմ:

Յ. Գ. - Վրաց հասարակութեան մի մասի մէջ տարածւած է

*) Վրացական ազգայնամուլ-կայտսեաց քերթ:

այն միտքը, իբր թէ հայերը ձգտում են Կովկասում ձեռք բերել ազգային անկախութիւն եւ Թիֆլիզը դարձնել մայրաքաղաք: (Ընթերցողները, անշուշտ, յիշում են «Նովոյէ Վրէմիա»-ի *) յօդւածը, որով ազատ Հայաստանի սահմանները հասնում էին մինչեւ Ռոսիոյ): Դա զարմանալի չէ. վրաց հասարակութիւնը այժմ այնպէս է տույ): Դա զարմանալի չէ. վրաց հասարակութիւնը այժմ այնպէս է տրամադրւած, որ դրանից էլ աւելի անհեթեթ կարծիքներ կարող են իբր ստոյգ լուրեր տարածւել, եւ մենք հասկանում ենք վրաց ազգասէրների արդար վայրոյթը . . . Թիֆլիզի դրաման առթիւ: Հասկանում ենք, բայց ներել չենք կարող այդ աստիճանի միամտութիւն: Կարող ենք հաւատացնել այդ կարգի բողոքողներին, որ հայ յեղափոխականների կողմից չկայ ոչ մի լուրջ ձգտում ոչ Թիֆլիզը դրաւելու, ոչ էլ առհասարակ Ռուսահայաստանն անջատելու եւ նրա անկախութիւնը հռչակելու: Կարող ենք հաւատացնել, որ հայ յեղափոխականները ռուսահայերի դրութիւնը բարուքելու համար չեն դիմի անջատման, այլ Ռուսաստանի բոլոր միւս յեղափոխականների հետ կը կուեն երկրի ընդհանուր չարիքների դէմ:

Ժիշտ է, հայ սոցիալ-դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան ծրագրի մէջ կայ մի կէտ, որի համաձայն այդ կուսակցութիւնը, Տաճկաստանի ազատութիւնից յետոյ, պէտք է զբաղւի Պարսկահայաստանի եւ Ռուսահայաստանի ազատութեան գործով՝ աշխատելով կազմել այդ երեքից մի ընդհանուր հայկական կառավարութիւն (ուզում է ասել՝ պետութիւն. ՍՄԲ.): Բայց ամենայն վստահութեամբ կարող ենք հաւատացնել վրաց հասարակութեան, որ Հնչակեան կուսակցութիւնը ոչ մի ժամանակ այդպիսի տղայամիտ ձգտում չի արտայայտի: Չէ՞ որ նրա ծրագրի համաձայն Ռուսահայաստանի ազատութիւնը ապագայի գործ է, դրանով նա կը զբաղւի Տաճկահայաստանի եւ դուրսէ Պարսկահայաստանի ազատութիւնից յետոյ: Իսկ մինչեւ այդ ժամանակը Հնչակեան կուսակցութիւնը կը համոզւի իւր ծրագրի կատարելալ սնամտութեան մէջ, մենք հաւատացած ենք դրանում: Կարելի՞ ըսն է, որ այդքան ժամանակայ ընթացքում գիտական-սոցիալիստ Հնչակը չհասկանայ, վերջապէս, գիտական սոցիալիզմի ամենատարրական սկզբունքը:

Թո՛ղ վրացիք ի դուր տեղը չվրդովին. հայերը Թիֆլիզը չեն «յափշտակի»: մենք երաշխաւորում ենք Հնչակեան կուսակցութեան կողմից:

*) Ռուս պահպանողական - կայակեր քերթ:

ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆ

ՀԱՅԵԻԹԻՒՐՔ ՎԱԽԵՐԱԹՂԹԵՐ

1

Հարկ չկայ շեշտելու, թէ ո եւ է դարաշրջան եւ կամ առհասարակ պատմական մի դէպք ուսումնասիրելու համար ի՞նչ մեծ կարեւորութիւն ունի նիւթին վերաբերեալ վաւերաթղթերի ծանօթութիւնը, լինի դրանք դաշնագիրներ, պայմանագրութիւններ, համաձայնաթղթեր թէ նման ուրիշ փաստաթղթեր: Պատմագիտական հետազոտութեանց համար դրանք հանդիսանում են մի-մի առաջնակարգ աղբիւրներ, որ անտես չէ կարող անել եւ ոչ մի բարեխիղճ ուսումնասիրող: Ընդհակառակը, որոնել պարտաւոր է այդ աղբիւրները, հնարաւորութեան սահմանում:

Եւրոպական դիտութեան համար ըստ ինքեան հասկանալի նախապայման է այդ աշխատանքը, որ, դժբախտաբար, դրեթէ անտես է առնւած մեղմում: Մինչեւ իսկ մեր սեփական, նորագոյն պատմութիւնը ուսումնասիրելու համար հայ հետազոտողը հարկադրւած է յաճախ օտար ժողովածուների եւ դիւանների դիմելու: Հայկական Հարցին, Հայոց նորագոյն պատմութեան վերաբերեալ փաստաթղթեր ամփոփող հայերէն հատորներ մենք չունենք հրատարակի վրա:

Մեղ հետաքրքրողը, ամենից առաջ, բուն վաւերագիրներն են, անհրաժեշտ ծանօթագրութիւններով: Ինչ վերաբերում է դրանց լուսարանման եւ օգտագործման, այդ արդէն կախւած է հետազոտողի անձնաւորութիւնից եւ պատմագիտական հայեցողութիւնից, նրա ենթակայական վերաբերմունքից հանդէպ ուսումնասիրութեան առարկայի: Մենք կարող ենք եւ պէ՛տք է որ, ի հարկէ, որոշ վերապահութիւն հանդէս բերենք հրատարակիչների կամ հետազոտողների կողմից տրւած մեկնաբանութեան եւ գնահատութեան այս կամ այն վաւերագրին: Եւ սակայն անտես անել կարող չենք բուն իսկ վաւերագիրը եթէ կեղծւած չէ նա: Հետազոտողը ուշի ուշով կարգալու, օգտագործելու է իր նիւթին հայոց ամէն մի վաւերագիր, հրատարակւած լինի նա մինչեւ իսկ շահագրգռւած մարդոց եւ մար-

միւնների կողմից: Այդպիսիք են, օրինակ, ամէն կարգի «կապոյտ», «դեղին», եւ այլ դոյնի կառավարական հրատարակութիւնները: Չոր ու ցամաք վաւերագիրների ժողովածուներ լինելով հանդերձ՝ դրանք խմբագրւած են որո՛շ միտումով եւ հետապնդում են մի մասնակի նպատակ: Երբ նման ժողովածուներ նոր եւ մանաւանդ նորագոյն ժամանակների դէպքեր են շօշափում, մեր վերապահութիւնը, ի հարկէ, պիտի լինի աւելի՛ մեծ: Բոլոր պարագաների տակ, հայ հետազոտողը պարտաւոր է դիմել ոչ միայն անմիջապէս, այլ եւ միջնորդապէս Հայաստանին եւ հայ ժողովուրդին վերաբերող վաւերագրային աղբիւրներին: Այդպիսիք են, առաջին հերթին, Թիւրքիային եւ Ռուսաստանին հայոց եւ կամ նրանց կառավարութիւնների կողմից հրատարակւած վաւերագիրները:

**

Այսպէս մօտենալով խնդրին առ հասարակ, մեր ուշադրութիւնը դրաւում են այսօր մի շարք վաւերագրային հրատարակութիւններ, որ վերջին տարիների ընթացքում լոյս է բնծայել Բերլինի Համալսարանին կից գործող եւ նրա ինքնավար մի բաժանմունքը հանդիսացող «Արեւելեան Լեզուների Սեմինար»-ի թիւրքաբանութեան երիտասարդ ուսուցչապետ Դոկտ. Գ. Եչկէ (G. Yaschke), նոյն հիմնարկութեան տարեկան «Տեղեկագիրներ»-ի վերջին երեք հատորներում (1932-1934 թ.): Պրոֆէսորը հմուտ է, թիւրքերէնից գտտ, նաեւ եւրոպական բոլոր լեզուներին եւ ուսերէնին ու կարողացել է օգտւել անմիջական աղբիւրներից: Հայաստանին վերաբերեալ վաւերագիրների հարցում նկատելի է հայերէն աղբիւրներից օգտւել չկարենալու իր թերին, որ դիտակցում է եւ հեղինակն ինքը: Անկախ իր անհատական վերաբերմունքից եւ տւած լուսարանութիւնից, մեզ շահագրգռում են իր լոյս բնծայած կամ հետազոտած վաւերագիրներն՝ ինքնին, որպէս այդպիսիք:

**

Արեւելեան Լեզուների Սեմինարի 1932 թ. «Տեղեկագիրներ»-ի մէջ պրոֆ. Եչկէ հրատարակել է այսպէս կոչւած Ալեքսանդրապոլի Դաշնագիրը՝ թիւրքերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն լեզուներով ու մի համառոտ տեսութեամբ: Գրւածքի վերնագիրն է՝ «Թիւրք-հայկական սահմանը եւ Գիւմրիի (Ալեքսանդրապոլի) հաշտութեան դաշնագիրը»: Die turkisch - armenische Grenze und der Friedensvertrag von Gumru (Alexandropol).

Ալեքսանդրապոլի դաշնագիրը (2 Դեկտ. 1920 թ.) յայտնի է,

պատմական դէպքերի հետեւանքով վաւերացւած չէ՝ ոչ Հայաստանի եւ ոչ էլ Թիւրքիոյ պետական գերագոյն մարմինների կողմից: Այդ պատճառով եւ նա երբեք չի դիտուել որպէս բուն իսկ դաշնագիր: Դրանով բացատրելու է թերեւս եւ այն, որ «հաշտութեան դաշնագիր» կոչւած այդ վաւերացումը հրատարակութեան չեն տւած հայ եւ թիւրք կառավարութիւնները: Արդէն իսկ, իրականին մէջ չեղեալ նկատուած այդ «դաշնագիր»ը հետագային փոխարինուել է, յայտնի է, Մոսկուայի (1921 թ. Մարտ 16) եւ Կարսի (1921 թ. Հոկտեմբեր 13) դաշնագրերով:

Այս այսպէս լինելով հանդերձ, գիտութիւնը այնուամենայնիւ հետամուտ է չհաստատուած ու չիրագործուած վաւերացումներ եւս հրատարակ հանելուն: Դրանք նմանապէս մի-մի արձագանգ են պատմական որոշ մոմէնտի: Այդպէս պիտի նայել նաեւ պրոֆ. Եշկէի հրատարակութեան վրա: Վերջինիս աղբիւրները պաշտօնական ընդթ չեն կրում, այլ՝ մասնաւոր: Գրւածքը («Տեղեկագիրներ» 1932 թ. Բ. մաս, էջ 162-176) բաղկացած է հետեւեալ մասերից. ա.) 1.- Ներածութիւն, ուր տրւած են մի շարք լուսարանութիւններ, ծանօթագրութիւններով հանդերձ: Որչափ եւ չեղինակը աշխատում է ըստ երեւոյթին առարկայական լինել, նկատելի է սակայն, որ նա դերձ չէ միակողմանիութիւնից ու նախասիրութիւնից: Այդ աղբիւնք է թերեւս առաջին հերթին, ր աղբիւրների միակողմանիութեան: Համաթուրանականութեան նկատումների փաստը «ի հաշիւ Հայաստանի» ընդունելով հանդերձ՝ հետազոտողը մեզ քաջ ծանօթ պատմական դէպքերը սովորական դարձած պարզունակ եղանակով տանում կապում է «Ռուսական իմպերիալիզմին» եւ «Հայկական աղ-դայնականութեան», որ հարցի ճշգրիտ լուսարանութիւնը չէ, ի հարկէ:

Պրոֆ. Եշկէի հրատարակած բնագրին (Ալեքսանդրապոլի դաշնագրի) հիմք ծառայել են ա.) Հայաստանի կառավարութեան կողմից բանակցութիւններին մասնակցող պուրակութեան նախագահ Ա. Խատիսեանի մէկ գրւածքը՝ լոյս տեսած Revue des Études Arm.

IV հատորում (1924 թ.), էջ 43, ուր «փորձ է արւած անագանօրէն վերականգնելու բնագիրը»: Վերջինս հրատարակել է, ծանօթագրում է Եշկէ, եւ Պուադէբարտ (Poidebard) իր «Le Transcaucase et la République d'Arménie dans les Textes Diplomatiques de Brest — Litovsk au Traité de Kars 1918 — 1921 » աշխատութեան մէջ (Revue des Études Armén. III. (1923), էջ 63-78. տես նաեւ հատ. IV էջ 31 -98 վաւերագրերը):

Բ. Անգորայի կառավարութեան այն ատենւան արտաքին գործոց գործավարի փոխանորդ Ախմէդ Մուխտար Բէյի կողմից Ազդա-յին Մեծ Ժողովի նիստում քաղաքօրէն կարգացւած դաշնագրի բը-նագիրը, որ այդ ձեւով էլ մուծւած է նիստի (6 Դեկտ. 1920 թ.) արձանագրութեան մէջ ու լոյս է տեսել «Հաքիմիէթ Միլլիէթ» թերթի թ. 55,105-ում:

«Այդ երկու բնագրերը, ասում է Եշկէ, Էսկան կէտերում տարբերում են իրարից: Մինչ, օրինակ, համաձայն թիւրքական ըմբռնման՝ սահմանը (Հայաստանի եւ Թիւրքիոյ) դրեթէ բոլորովին նոյնանում է Մոսկուայի եւ Կարսի դաշնագրերի մէջ առաջ բե-րածի հետ, անդին՝ Դոկտ. Սատիսեանի տեսչներից հետեւցնել կա-րելի է, որ Մուստաֆա Բէմալ շարունակել է, անցողակի կերպով, 1918 թ. համաթուրանական քաղաքականութիւնը *): Այդ ընդունում է նաեւ եւրոպական-ամերիկեան գրականութիւնը, որ բացառապէս հայ աղբիւրների վրա է հիմնուում (օր. Մանդէլշտամ «La Société» եւն., էջ 98): Թիւրք բնագրի - ոչ լրիւ, անշուշտ - վստահելիութեան համար խօսում է այն փաստը, որ նա ծանուցել է՝ դաշնագրի-րը կնքելուց անմիջապէս յետոյ»:

Եշկէ շարունակում է, «Թէեւ Գիւմրիի դաշնագիրը ստորագրւած օրն իսկ կանխուած էր Հայաստանի խորհրդայնացումով, բայց եւ այնպէս՝ պատմական տեսակէտից նշանակալից է իրրեւ Ազդային Թիւրքիոյ առաջին դաշնագիրը, միջազգային իրաւունքի գետնի վը-րա»: Այնուհետեւ հեղինակը առաջ է բերում թարգմանութիւնը Ալեքսանդրապոլի դաշնագրի այն յօդւածների (առնելով «Հաքիմիէ — Միլլիէթ» թերթի 1920 թ. Դեկտ. 7, թիւ 83-ից), որ Մուխտար-Բէյը կարգացել է Անգորայի Ազդային Ժողովում: «Պակտոյ յօդւածնե-րը, ասում է Եշկէ, կարեւորութիւն չեն ներկայացնում եւ վերաբե-րում են մասնակի բաների»: Ապա, «Հաշտութեան պայմանները» վերնագրի տակ առաջ է բերում դաշնագիրը, որ պարունակում է

*) Որքան յիշում եմ՝ Ա. Խատիսեան վերոյիշեալի նման մի փարձ արել էր աւելի վաղ, 1921 թ. Կ. Պոլսի «Ճակատամար» քերքի էջերում: Ո՞ւր է գտնուում այժմ բուն օրինակը դաշնագրի, յայտնի չէ մեզ:

Շատ ուրիշների նման՝ Եշկէ եւս այն միամիտ հաւատն ունի, քէ Մուստաֆա Բէմալ առիտարակ, սկզբունքով, հրամարած է ընդմիշտ համաբարանակամ ըը-կրտումներից:

ՊՈՒՆՈՒՄ. ԽՄԲ. — Ալեքսանդրապոլի դաշնագրի բնագիրը պատկերակութեան նախագահ Ա. Խատիսեանը 1920 թ. դեկտեմբերին յանձնել է Հայաստանի խորհրդ-դային կառավարութեան եւ, ուրեմն, գտնում է Երեւանի պետական դիւանում:

3-րդից մինչև 15-րդ յօդածները: Հեղինակն իր կողմից կցում է բազմաթիվ ծանօթագրութիւններ, առաջ բերելով միեւնոյն ժամանակ իրեն բոլոր աղբիւրները, անելով նաեւ յաւելումներ ու բաղա-տութիւններ:

Գերմաներէն թարգմանութիւնից յետոյ, արեւած թիւրքերէնի վրայից, առաջ է բերւած Ա. Խատիսեանի վերականգնած բնագիրը՝ Փրանսերէն լեզուով (Revue des Études Arméniennes IV. (1924), էջ 70-72), որ բաղկացած է 16 յօդածից (1-16): Ստորագրած են, Ալեքսանդրապոլ 2 Դեկտ. 1920 թ. Հայաստանի կողմից՝ Ա. Խատիսեան, Ա. Գիւլիսանդանեան, Ս. Կորգանեան. Թիւրքիոյ կողմից՝ Քեազիմ Կարաբէքիր փաշա, Հիւսէյին Բէյ (էրզրումի պատգամա-ւոր) եւ մի երրորդ անձ, Տրապիզոնի պատգամաւոր, որի անուն տեղ բազմակէտեր են նշանակւած:

Վերջը հետեւում է թիւրքերէն բնագիրը:

II

Նոյն հեղինակը, պրոֆ. Եշկէ, Արեւել. Լեզ. Սեմինարի «Տեղե-կագիր»-ի 1934 թ. հատորում (Մասն Բ., էջ 133-142) հրատարակել է եւ մի ուրիշ գրութիւն՝ «Վաւերագիրներ Գիւմրիի (Ալեքսանդրա-պոլի) դաշնագրի մասին», որ լրացումն եւ ամբողջացումն է իր ա-ռաջին՝ վերջ յիշատակւած հրատարակութեան: Այդտեղ նախ եւ առաջ յիշատակում է խորհրդային կառավարութեան (Մոսկւայի) հրահանգով ու Պրոֆ. Կիւլչնիկովի եւ Ա. Սաբանինի խմբագրու-թեամբ հրատարակւած (ուսերէն լեզուով) «Նորագոյն ժամանակնե-րի միջազգային քաղաքականութիւնը» անունով վաւերագիրների ժողովածուի *) թիւ 842²-ը (Մասն Գ. պրակ 2, (1929), 26 էջ 71-73), որ է՝ «Հաշտութեան դաշնագիր Հայաստանի Դաշնակցական կառավարութեան եւ Թիւրքիոյ միջեւ, կնքւած 1920 թ. դեկտ. 2-ին Ալեքսանդրապոլ - Գիւմրիում»:

Ըստ երեւոյթի, ասում է Եշկէ, մենք այստեղ գործ ունինք ուսերէն մի թարգմանութեան հետ — ոչ բոլորովին լրիւ եւ ոչ ան-սխալ —, որ կատարւել է Կարմիր Բանակի Երեւան մանկուց յետոյ՝ այնտեղ գտնւած բնագրի վրայից **): Այդ բնագիրը մեծապէս հա-

*) Այդ հրատարակութեան կանդրադատանք մեք առանձին յօդածով:

**) Մի տեղ — չեմ յիշում ո՛րք — կարդացած պիտի լինեմ, որ հայ բաշեկիները հրատարակած են հայերէնը:

մաճայն է 1920 թ. դեկտ. 6-ին Անգորայում ծանուցւած թիւրք խմ-բագրութեան: Նա հնարաւորութիւն է տալիս միեւնոյն ժամանակ՝ լրացնելու վերջինիս (թիւրքերէն բնագրի) պակասները եւ վերջս-տուգման ենթարկելու հայ լիազօր բանագնաց Դոկտ. Ա. Խատիսեա-նի *) վերականգնած բնագիրը»:

Շարունակութեան մէջ մատնանշւած են (ուսերէն թարգմա-նութիւնից) Ալ-Պոլի դաշնագրի այն կէտերը միայն, որ զգալիօրէն տարբերում են թիւրքերէն բնագրից: Թիւրքիոյ լիազօր բանագնաց-ներ յիշւած են այդտեղ՝ Քեազիմ Կարաբէքիր փաշա, Համիդ-Բէյ եւ Սուլէյման Նեջադի-Բէյ **): Այնուհետեւ առաջ են բերւած տարբե-րութիւնները՝ 1, 2, 15 կէտերի տակ, Եշկէի գիտողութիւններով մէկտեղ:

Գրւածքի շարունակութեան մէջ առաջ են բերւած Մ. Քէմալի կառավարութեան կողմից 1920-21 թ. Անգորայում («Հաքիմ. Միլ-լիյէ») եւ Փարիզում («Echo de l'Islam») հրատարակութեան տըր-ւած դիւանագիտական մի շարք թղթեր, «որոնք որոշ լոյս են սփռում Գիւմրիի հաշտութեան նախապատմութեան վրա»:

Այդ վաւերագիրներն են՝ Ա. «Թիւրքիոյ նոտաները Ռուսաստա-նին»: 1.— Ազգային Մեծ Ժողովի նախագահի 20 յունիս 1920 թ. պա-տասխան-գրութիւնը ***) Ռուս. Սոց. Դաշն. Խորհ. Հանրապետու-թեան Արտաքին գործոց Ժող. Կոմիսարի (3 յունիս 1920 թ. թւա-կիր) նամակին ****): Ստորագրած՝ Մ. Քէմալ: 2.— Թիւրքիոյ (Ան-գորայի) նոտան Ռուսաստանին, 1920 թ. (°) նոյեմբերի: Քաղաճք: Ստորագրած՝ Ժող. Կոմիսար Ա. Մուխթար («Echo de l'Islam»): Բ. Թիւրքական յուշագիր, 26 սեպտ. 1920 թ.: Քաղաճք: Ստո-րագրած՝ Արտ. Գործ. Կոմիսար Ահմէդ Մուխթար (Echo de l'Is- lam), Գ. Թիւրք - Հայկական նոտաների փոխանակումն:

1.— Թիւրքական նոտա 1 (2 ?) նոյ. 1920 թ.: Քաղաճք: («Echo de l'Islam», թ. 19: Թիւրքերէնը՝ «Հաքիմ. Միլ.» թ. 74): Ստորա-

*) Եշկէ ծանօթագրում է, «Այդ բնագիրը այժմ տպւած է նաեւ Amedeo Gianini-ի «Documenti per la storia della Pace Orientale» (1915-1932), համարում 1933, էջ 17:

**) Երկրորդ անգամ համար Եշկէ ծանօթագրում է. «Հաւանօրէն՝ նախ-գաղ-է Հաւիդի, Տրապիզոնի պատգամաւոր», իսկ երրորդ անգամ համար՝ «Միւլէյման Նեջադի, էրզրումի պատգամաւոր»:

***) «Հաքիմ. Միլիյէ», 8 յուլիս 1920 թ.: Արտատպւած «Ճումհուրիէթ»ում, 11 յուլիս 1924:

****) Revue du Monde Musulman, LII, (1922), էջ 195. ըստ Կիւլչնիկովի (Բ. 622) բնագրւած 2 յունիս եւ պատասխանւած 22 նոյեմբերի:

509-200

320.7



զրաժ՝ Ա. Մուխթար: Եչկէ ծանօթագրում է. Թիւրքիոյ առաջին
ուլտիմատումը Հայաստանին՝ 7 յուլ. 1920 թ. (Մ. Քէմալ՝ «Նու-
թուք», էջ 304, Գերմ. հրատարակ. Բ. հատոր, էջ 47):

2.- Հայկական նոտա, 3 նոյ. 1920 թ.: Քաղաժք: «Ec. de l'Is-
lam», թ. 21: Թիւրքերէնը՝ «Հաքիմ. Միլ.», թ. 74):

Ստորագրած՝ Հայաստանի Արտ. Գործ. նախարար Ահա Զան-
եան (Գոկա. Հ. Օհանջանեան): Քաղաժք: («Echo de l'Islam», թ.
21: Թիւրքերէնը՝ «Հաքիմ. Միլ.», թ. 74: Թիւրքերէն ընդգրում ըս-
տորագրութիւնը՝ Ահանջանեան):

3.- Թիւրքական նոտա 8 նոյ. 1920 թ.: Քաղաժք: (E. de l'Isl.)
թ. 20: Թիւրքերէնը՝ «Հաքիմ. Միլ.», թ. 74): Ստորագրած՝ Ահմէդ
Մուխթար:

4.- Հայկական նոտա 9 նոյ. 1920 թ.: Քաղաժք: (Ec. de l'Isl.
թ. 21): Ստորագրած՝ Ա. Դիանեան (Օհանջանեան):

5.- Հայկական նոտա 10 նոյ. 1920 թ.: Քաղաժք: («Հաքիմ.
Միլ.», թ. 76): Ստորագր. Օհանջանեան: Ծանօթագրութեան մէջ
Եչկէ նկատում է. «Թիւրքերի ներկայացրած զինադադարի պայման-
ների (8 նոյ.) մասին համեմատել «Revue du Monde Musulm.» LII
էջ 198: 18 նոյ. զինադադարի մասին՝ A. Giannini: «L'Ultima fase
della questione orientale» (1913 - 1932), Հոտմ 1933, էջ 204:

6.- Հայկական նամակ Քեաղիմ Կարաբեքիր փաշային, 13 նոյ.
թւակիր: («Հաքիմ. Միլ.», թ. 77): Ստորագրած՝ Արտ. Գործ.
նախարար Օհանջանեան: Զօրավար Արեջե:

7.- Թիւրքական նոտա 13 նոյ. 1920 թ. («Հաքիմ. Միլ., թ.
77): Ստորագրած՝ Ահմէդ Մուխթար:

**

Իր գրածքի վերջում Պրոֆ. Եչկէ աւելացնում է. «Սորհրդա-
յին Ռուսաստանը, որ հոկտ. 17-ին Հայաստանին եւ նոյ. 11-ին
վերջին անգամ Թիւրքիային իր միջնորդութիւնն էր առաջարկել,
բայց առանց արդիւնքի, Գիւմրիի հաշտութեան բանակցութիւննե-
րը սկսելուց յետոյ՝ դործի գիմեց: Նոյն այն օրը (29 նոյ.), երբ
տանը Ազգերի Դաշնակցութեան մէջ ընդունելու, նոյն այդ օրը Յե-
ղափոխական Կոմիտէն (Կասեան) Հայաստանը խորհրդային հանրա-
պետութիւն հռչակեց (Կիւլչնիկով, թ. 644): Երեւանի կառավա-
րութիւնը, սակայն, որ 25 նոյեմբերի Վրացեանը, իսկ 2 դեկտ. զօ-
րավար Դրօն էր ստանձնել, Գիւմրիի հաշտութիւնը կնքելուց մի քա-

նի ժամ առաջ Հայաստանի հետագայ ճակատադիրը Սորհրդային
Ռուսաստանի ձեռքը յանձնեց (1920 թ. դեկտ. 2-ի դաշնագիրը: Տես՝
«Yahrbuch des Vol Kerrechts», հատոր XVI էջ 32): Իսկ Ռուսաստա-
նը, յանուն իր բարեկամութեան շահի Թիւրքիոյ հետ, հրաժարեց
այդ հաշտութեան՝ Հայաստանի համար նպաստաւոր գրեթէ բոլոր
որոշումներէն: Ծանօթագրութեան մէջ առած է. «Նախագահ Վիլ-
սոնի՝ որպէս իրաւարարի տւած որոշումը (22 նոյ. 1920 թ.) տրւե-
լած է այժմ «Bulletin de l'Institut Juridique International, XXXI
(1934), էջ 329-336»:

Ահա, մի քանի խօսքով, Եչկէի հրատարակութեան գլխաւոր
կէտերը, Ալեքսանդրապոլի դաշնագրի այլ եւ այլ խմբագրութեանց
մասին: Վերջիններս, այսպիսով, ի մի են հաւաքուած այժմ առաջին
անգամ, գերման հետազոտողի կողմից եւ օժտուած են բաղձաթիւ
ծանօթագրութիւններով: Հեղինակը օգտագործել է Էւրոպական,
ուսական եւ Թիւրքական ամբողջ գրականութիւնը, տալով բոլորի
մանրամասն ցանկը: Հետագայ հետազոտողները անպայման նկատի
ունենալու են Եչկէի կատարած աշխատանքը:

III

Արեւելեան Սիմինարի «Տեղեկագիրներ»ի 1934 թ. հատորի Բ.
մասում (էջ 97-132) տպագրուած է Գ. Եչկէի մի ուրիշ, աւելի ըն-
դարձակ գրածքը՝ «Թիւրքիոյ պետական դաշնագիրները, համաշ-
խարհային պատերազմից սկսած» վերնագրով: Մինչ հեղինակի վե-
րոյիչեալ երկու հրատարակութեանց մէջ առաջ են բերուած բուն իսկ
վաւերաթուղթեր - բնագիր կամ թարգմանութիւն - , անհրաժեշտ
ծանօթութիւններով եւ աղբիւրների մանրամասն յիշատակութեամբ,
այս վերջին հրատարակութիւնը ներկայացնում է պարզ ցանկը բո-
լոր այն պետական դաշնագիրների, որ կնքել է Թիւրքիան զանազան
երկիրների հետ, համաշխարհային պատերազմից սկսած:

Գժւար էլ էր «Տարեգիրք»ի մէջ ներկայացնել այնպիսի մի աշ-
խատանք, ուր առաջ բերուած լինէին բոլոր դաշնագիրները: Հա-
տորներ պէտք էին դրա համար: Իր այս ձեւի տակ եւս սակայն, Եչ-
կէի աշխատանքը խիստ զնահատելի է, քանի որ մանրամասն թւա-
գրութեամբ եւ ժամանակագրական կարգով առաջ է բերում ոչ մի-
այն դաշնագիրների վերնագիրները եւ համառօտ բովանդակութիւ-
նը, այլ եւ մէկ մէկ յիշատակում է այն բոլոր աղբիւրները, ուր
լոյս են տեսած դաշնագիրները: Մասամբ զբանցից առնելով էլ հե-

ղինակը կաղմել է իր այս աշխատանքը, օգտակար լի պաշտօնական աղբիւրներից եւս: Եթէ չեմ սխալուում, այս գործն եւս իր տեսակում առաջինն է առհասարակ գրականութեան մէջ: Թիւրք Հանրապետութեան կնքած դաշնագիրների մասին մի ուրիշ համառոտ տեսութիւն լոյս է տեսած 1933-ին՝ Բերլինի «Հանդէս Քաղաքագիտութեան» (Zeitschrift fur Politik) պարբերականի մէջ (էջ 281 շար.):

Եչկէի այս գործը բաժանուած է երկու գլխաւոր մասի. Առաջին՝ Օսմանեան Կայսրութեան կնքած դաշնագիրներ: Երկրորդ՝ Ազգային Մեծ Ժողովի եւ Թիւրք Հանրապետութեան կնքած դաշնագիրներ:

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ կնքած դաշնագիրները գրաւում են փոքր տեղ միայն եւ ընդգրկում են թւով ընդամենը յիսուն դաշնագիրների վերնագիրներ (միշտ էլ՝ աղբիւրների յրիւ եւ ամբողջական յիշատակութեամբ, թիւրք թէ եւրոպական): Յանկի մէջ առաջին տեղը գրաւում է 1914 թ. յուլ. 31-ին Բուլգարիոյ հետ կնքուած առեւտրական - նաւային մի դաշնագիր:

Բրեստ-Լիտովսկի դաշնագիրները թւագրւած են 22-րդ (5 դեկ. 1917 թ.) եւ 24-րդ (15 դեկ. 1917 թ.) կէտերի տակ, իսկ Մեւ Ծովի վրա զինադադար հաստատելու դաշնագիրը՝ 25-րդ կէտի տակ: Այնուհետեւ մեզ հետաքրքրում են մասնաւորապէս՝ 1917 թ. դեկտ. 18-ին Երզնկայում ստորագրւած (Անդրկովկասեան պետութեան հետ) զինադադարի դաշնագիրը, (2-րդ կէտ), դարձեալ՝ 1918 թ. մարտ 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտութեան դաշնագիրը (30-րդ կէտ) եւ նրա յաւելածը (31-րդ կէտ), այլ եւ 1918 թ. մայիս 15-ին Բաղան գերիների փոխանակութեան մասին (37-րդ կէտ) եւ յատկապէս 1918 թ. յունիս 4-ի Բաթումի դաշնագիրը, (38-րդ կէտ), կից պարբէջանի կողմից), բ) Հայաստանի, գ) Ադրբեջանի հետ կնքուած դաշնագիրներ: Դարձեալ մասնաւոր կարեւորութիւն ունի 10 Օգոստոս 1920 թ. Մերում ստորագրւած դաշնագիրը (44-րդ կէտ), որ ձայոնիա, Հայաստան, Բեյրութ, Յունաստան, Պորտուգալիա, Ռուսիա, Չեխոսլովակիա:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՒ ԹԻՒՐԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ստորագրած դաշնագիրները ունին երեք ստորաբաժանումներ. Ա. «ԵՐԿՐԷՆ» (Երկրի հետ Նոր Թիւրքիան կնքել է դաշնագիրներ - Աֆղանիստան, Եգիպտոս, Ալբանիա, Արգենտինա, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ռուսաստան եւ այլն եւ այլն):

Հանրապետական Հայաստանի հետ կնքուած դաշնագիրներն են.

- 1) Նոյ. 7, 1920 թ. Գիւմրիի (Ալեքսանդրապոլի) զինադադար. 1
- 2) Նոյ 18, 1920 թ. Գիւմրիի (Ալ-Պոլի) զինադադար.
- 3) Դեկտ. 2, 1920 թ. Գիւմրիի (Ալեքսանդրապոլի) հաշտութեան դաշնագիրը (միշտ էլ ցոյց են տրւած բոլոր աղբիւրները):
 Խորհրդային Հայաստանի հետ կնքուած.
 1) Հոկտ. 13, 1921 թ., Կարսի դաշնագիր.
 2) Յուլիս 9, 1922 թ. Թիֆլիսում ստորագրւած հիւպատոսական դաշնագիր եւ երկաթուղային համաձայնութիւն: Դրանք ստորագրւած են նաեւ Խ. Ադրբեջանի կողմից:
 Խորհ. Վրաստան ստորագրել է Թիւրքիոյ հետ.
 1) 1921 թ. հոկտ. 13-ի Կարսի դաշնագիրը:
 2) 1922 թ. մարտ 20-ի Թիֆլիսի «Սահմանային համաձայնագիրը»:
 3) 1922 թ. մարտ 20-ի «Քոչի համաձայնագիրը» (Թիֆլիս):
 4) 1922 թ. յուլ. 9-ի հիւպատոսական դաշնագիրը եւ երկաթուղային համաձայնագիրը (Թիֆլիս):
 Խորհրդային Ռուսաստանի հետ Թիւրքիան ստորագրել է.
 1) 1921 թ. մարտ 21-ի Մոսկուայի «բարեկամութեան եւ եղբայրութեան դաշնագիրը» (մանրամասն աղբիւրներ):
 2) 1921 թ. մարտ 28-ի Մոսկուայի համաձայնագիրը՝ պատերազմական գերիների փոխանակման մասին:
 3) 1921 թ. հոկտ. 13-ի Կարսի դաշնագիրը:
 4) 1922 թ. յուլ. 9-ի հիւպատոսական դաշնագիրը եւ երկաթուղային համաձայնագիրը (Թիֆլիս):
 Խորհրդային Միութեան հետ Թիւրքիան ստորագրել է ամենից շատ դաշնագիրներ եւ համաձայնագրութեք, թւով 23:
 1) 1923 թ. Օգոստ. 14 Հոտմ, «Նեղուցների համաձայնագիր»:
 2) 1924 թ. փետր. 7, Անգորայում, «Հիւպատոսական ժամանակաւոր համաձայնագիր»:
 3) 1925 թ. դեկտ. 17, Փարիզ, «Չէզոքութեան դաշնագիր»:
 4) 1926 թ. փետր. 25, Անգորա, «Առեւտրական ժամանակաւոր համաձայնագիր»:
 5) 1926 թ. մայիս 31, Մոսկուա - «Յաւելած-արձանագրութիւն», 1-ին կէտի մասին:
 6) 1926 թ. յունիս 29, Ստամբուլ, «Յաւելած-արձանագրութիւն», 3-րդ կէտի մասին:
 7) 1926 թ. սեպտ. 9, Թիֆլիս, «Արձանագրութեան վերջ», սահմանորոշման մասին:

- 8) 1927 թ. յունւար 8, Կարս, «Համաձայնագիր, սահմանային շուրերի մասին»:
 - 9) 1927 թ. մարտ 11, Անգորա, «Առեւտրական եւ նաւարկութեան դաշնագիր»:
 - 10) 1928 թ. մայիս 17, Անգորա, «Երկարաձգման արձանագրութիւն» Խորհրդային Վրաստանի (կէտ 3.) մասին:
 - 11) 1928 թ. օգոստ. 6, Անգորա, «Քոչի իրաւունքի մասին համաձայնագիր»:
 - 12) 1928 թ. Օգոստ. 6, Անգորա, «Համաձայնագիր սահմանային երթեւեկութեան մասին»:
 - 13) 1928 թ. Օգոստ. 6, Անգորա, «Համաձայնագիր սահմանամերձ փոքրիկ զիպւածների մասին»:
 - 14) 1928 թ. օգոստ. 6, Անգորա, «Համաձայնագիր անասունների ժանտախտի մասին, Խորհ. Վրաստանի եւ Թիւրքիոյ պաշտպանութեան համար (նախապէս ստորագրւած՝ 28 յունւար 1927, Բաթում)»:
 - 15) 1928 թ. դեկտ. 23, Անգորա, «Յաւելւած արձանագրութիւն» 1928 թ. յուլ. 9-ին Թիֆլիսում կնքւած դաշնագրի շուրջը (Խորհրդ. Ռուսի, Խորհրդ. Հայաստանի, Խ. Վրաստանի եւ Խ. Ադրբէյջանի հետ):
 - 16) 1929 թ. դեկտ. 17, Անկարա, «Երկարաձգման արձանագրութիւն» (Կարախան) 3-րդ կէտի մասին:
 - 17) 1930 թ. հոկտ. 19 Անկարա, «Առեւտրական ժամանակաւոր համաձայնագիր»:
 - 18) 1930 թ. նոյ. 25 - դեկտ. 25, Անկարա, «Համաձայնութիւն պատերազմական նաւերի այցելութեան մասին»:
 - 19) 1931 թ. մարտ 7, Անկարա, «Արձանագրութիւն ծովային ըսպառազինման մասին»:
 - 20) 1931 թ. մարտ 16, Մոսկւա, «Առեւտրական եւ նաւարկութեան դաշնագիր»:
 - 21) 1931 թ. հոկտ. 30, Անկարա, «Երկարաձգման արձանագրութիւն» (Լիտվինով), 3-րդ, 16-րդ եւ 19-րդ կէտերի մասին:
 - 22) 1933 թ. սեպտ. 30, Անկարա, «Ապրանքների փոխանակութեան եւ հաշւակցութեան համաձայնագիր»:
 - 23) 1934 թ. յունւար 21, Անկարա, «Վարկային համաձայնագիր»:
- Կցենք նաեւ երկու ուրիշ վաւերացրած եւ ստորագրւած եւ Թիւրքիոյ եւ Խորհ. Ուկրայնայի միջեւ:
- 1) 1921 թ. սեպտ. 17, Մոսկւա, «Համաձայնութիւն՝ պատերազմական եւ քաղաքացիական զէրիների հայրենիք վերադարձնելու մասին»:


- 2) 1922 թ. յունւար 2, Անգորա, «Բարեկամական դաշնագիր»:
- Աւելորդ չէ թերեւս այստեղ թելել եւ այն դաշնագիրները, որ նոր Թիւրքիան կնքել է իր եւ մեր մի ուրիշ հարեւանի՝ Պարսկաստանի հետ: Հետադասութեանց համար այդ դաշնագիրների ծանոթութեան կարեւորութիւնն եւս ակներեւ է:
- 1) 1926 թ. ապրիլ 22, Թեհրան, «Բարեկամութեան եւ ապահովութեան դաշնագիր»:
 - 2) 1926 թ. մայիս (°), Անգորա, «Առեւտրական ժամ. համաձայնագիր»:
 - 3) 1928 թ. յունիս 15, Թեհրան, «Լրացուցիչ արձանագրութիւն»: 1-ին կէտի շուրջը:
 - 4) 1929 թ. ապրիլ 9, Անգորա, «Համաձայնութիւն սահմանների ապահովութեան համար»:
 - 5) 1932 թ. յունւար 23, Թեհրան, «Համաձայնագիր սահմանների ճշտման մասին»:
 - 6) 1932 թ. յունւար 23, Թեհրան, «Իրաւարարութեան եւ իրաւաստութեան դաշնագիր»:
 - 7) 1932 թ. նոյեմբ. 5, Անկարա, «Բարեկամութեան դաշնագիր»:
 - 8) 1932 թ. նոյեմբ. 5, Անկարա, «Դաշնագիր ապահովութեան եւ անտեսական գործակցութեան մասին»:
- Թւենք նաեւ Աֆղանիստանի հետ Թիւրքիոյ ստորագրած դաշնագիրները.
- 1) 1921 թ. մարտ 1, Մոսկւա, «Եղբայրութեան դաշնագիր»:
 - 2) 1922 թ. հոկտ. 4, Քարուլ, «Լուսարանման համաձայնագիր», 1-ին կէտի մասին:
 - 3) 1928 թ. մայիս 25, Անկարա, «Դաշնագիր՝ եղբայրութեան եւ գործակցութեան շուրջը»:
 - 4) 1931 թ. սեպտ. (°), Անկարա, «Համաձայնութիւն առաջնագոյն նպատակներով մասին՝ բնակչութիւն հաստատելու համար»:
- Բ. ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐԸ Թւով շատ չեն, ընդամենը 19: Մեզ հետաքրքրում են դրանցից առաջին երեքը.
- 1) 1921 թ. հոկտ. 13, Կարսի դաշնագիրը (Թիւրքիա, Հայաստան, Ադրբէյջան եւ Վրաստան, գործակցութեամբ Խորհ. Ռուսիոյ):
 - 2) 1922 թ. յուլ. 9, Թիֆլիսի «Հիւպատոսական դաշնագիրը եւ ընտանեկան ու անհատական իրաւունքի համաձայնագիրը», նոյն պետութեանց միջեւ կնքւած:
 - 3) 1928 թ. յուլ. 9-ի Թիֆլիսի համաձայնագիրը՝ երկաթուղիների փոստի եւ հեռագրի մասին:

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐԸ թուով 42 են: Դրանք բխում են Լոգանի դաշնագրի (6 օգոստ. 1924 թ. ոյթի մէջ մտած, թիւրքիոյ համար) այս կամ այն յօդածի տրամադրութիւնիցը եւ կրում են լրացուցիչ բնոյթ: Մեզ համար դրանք չեն ներկայացնում մասնակի շահեկանութիւն:

*
**

Ահա բոլոր այն վաւերացումները, որ պատերազմի սկզբից եւ մասնաւորապէս յետպատերազմեան շրջանում կնքել է թիւրքիան այս կամ այն պետութեան հետ, եւ որոնք մասնակի շահեկանութիւն են ներկայացնում մեզ համար: Հայոց նորագոյն պատմութեան ուսումնասիրութեան համար դրանցից շատերը կարեւոր աղբիւրներ են:

Բերդին



ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ

Բագրատ Վարդ. Գէորգ-Թաւափախան

Ա.

Ռուս – տաճկական պատերազմէն յետոյ (1877) Բերլինի մէջ կը կայանար մեծ պետութեանց պատմական Վեհաժողովը, (1878 Յունիս 13– Յուլիս 13), ուր թաղեցաւ Հայկական Հարցը եւ 61-րդ յօդածն ալ իբր արձանագրեալ տապանաքար դրեցաւ անոր վրա:

Հայկական պատուիրակութիւնը՝ Սրբիմեան Հայրիկի նախագահութեամբ, կը վերադառնար Բերլինէն: Հայութեան ղեկավար մարմիններն ու դէմքերը, մամուլն ու ժողովուրդը յուսախաբւած էին ղեկանադիւթեան խաղերէն ու դաւերէն:

Սրբիմեան Հայրիկը Կ. Պոլսոյ Մայր Եկեղեցիին մէջ կը խօսէր իր պատմական քարոզը, որուն բնարանն էր – «Իսրայէլ, դա՛ւ փրկեցես գֆեգ . . .»: «Իսրայէլայի կաքսայի եւ երկաքեայ շերեփի» պատկերաւոր ու խորհրդաւոր նկարագրութեամբ Վասպուրականի Արծիւը կը հնչեցնէր Հայ ազատագրական շարժումներու ահագանդը շեշտելով, որ Հայ ժողովուրդը իր սեփական բազուկներով, իր միջոցներով միայն պիտի կրնայ ձեռք բերել իր ազատութիւնը եւ այս նպատակին հասնելու համար ամենէն առաջ անհրաժեշտ է, որ Հայութիւնը մտաւորապէս պատրաստուի, ժողովուրդը ինքնազիտացութեան հասնի, ուսում եւ կրթութիւն ստանայ, ներքնապէս ամրապնդւի դառնալու համար գիտակից քաղաքացի:

Բերլինի վեհաժողովէն յետոյ Կ. Պոլսոյ մէջ ծնունդ առաւ մըտաւոր, գրական եւ կրթական աննախընթաց շարժում մը, որուն միակ նպատակն էր նպաստել Մայր Երկրի Հայութեան զարգացման արգմապիսի պահանջներուն: Օրւան նշանաբանն էր – Դէպի՛ Հայաստան, Հայաստանի համար, ժողովուրդով եւ ժողովուրդի հայաստան, Հիմնաւոր էին կրթական եւ բարեգործական զանազան ընկերութիւններ, որոնք յետոյ միացան եւ կոչուեցան «Միացեալ Ընկերութիւններ, որոնք յետոյ միացան եւ կոչուեցան «Միացեալ Ընկերութիւն»», գերագոյն նպատակ ունենալով Արեւմտեան Հայաստանի համար:

որուն աւագանի եւ աշխարհական անունն էր Աղեքսանդր *) : Անոր հայրը աղբային եւ հայրենասիրական ոգով սողորւած հայ մըն էր, որ պետական պաշտօնեայ ըլլալով հանդերձ ուսաստեաց անձի հակումներ ունէր :

Մանուկ Աղեքսանդրը մայրենի լեզուն եւ տարրական ուսումը ստացաւ տնային, մասնաւոր ուսուցիչներէն : Այս ուղարկեցաւ թիֆլիս, ուր ընդունեցաւ ուսուցչական Սեմինարիան, սակայն կարճ ժամանակէ մը յետոյ անցաւ Բագու եւ մտաւ Բէալական դպրոցը : Յայտնի չէ թէ ի՞նչ նպատակով յիշեալ դպրոցը շաւարած անցաւ Պետերբուրգ եւ մտաւ զինուորական դպրոց :

Իրեն-տաճկական պատերազմի (1877) ընթացքին եւ յետոյ երբ Մայր Երկրի ազատագրութեան դադափարը ընդհանուր ողբերգութեան առարկայ դարձած էր, երբ Հայկական Հարցը միջազգային դիւանագիտութեան ուշադրութիւնը դարձած էր, երբ Խրիմեան Հայրիկէ նախագահութեամբ Հայկական Պատերազմութիւնը կը զարնէր եւրոպական մայրաքաղաքներու դուռները եւ, վերջապէս, երբ Խրիմեանի հայրենաշունչ քարոզները, Բաֆլի ազատատենչ վէպերն ու Գամառ-Գաթիպայի ռազմաշունչ երգերը միացած հայ մամուլի հնչեցուցած ձայներուն՝ փոթորիկի նման կալեկոծէին Հայ Աշխարհը՝ Կովկասէն մինչեւ Կիլիկիա, ահա՛ այս ընդհանուր ողբերգութեան շրջանին Աղեքսանդր Թաւաքալեանը 1879ի աշնան Պետերբուրգէն անցաւ թիֆլիս, մտաւ «Մշակ»ի շուրջ բոլորւած մըտաւարականութեան շրջանին մէջ, ծանօթացաւ Գր. Արծրունիի, Բաֆլիի եւ այլոց հետ, ընկաւ «Մշակ»ի ընդգրկած դադափարական հոսանքին մէջ, կասկեցաւ անոր սկզբունքներուն եւ որդեգրած ուղղութեան : Իր ազգասիրական եւ հայրենասէր դիպցումները բնական է, որ առաւելապէս հրահրեցան : Եւ ահա 1880 թ. Մարտ ամսին, Իզմիր եւ հոն կը սպասէ պատեհ առիթի վան անցնելու ցանկութեամբ : Առիթը կը ներկայանայ : Առեւտրականներու կարաւան մը 1880-ի Մայիսի սկզբին Իզմիրէն ճամբայ կելէր դէպի վան : Թաւա-

*) Վրացեանը «Բաղրատ Վարդապետ Թաւաքալեանի նամակները» ուսումնասիրութեան մէջ («Հայրենիք» ամսագիր, 1933 թիւ 1,2 եւ 1934 թիւ 3) կը գրէ - «... նրա ծննդեան թիւը յայտնի չէ : Ծնուած պէտք է լինի յիսնական քաղաքներէ քաղաքները կը փարատեմ տալով Թաւաքալեանի սկզբին» : Ընկ. Վրացեանի այս ենտարեթիւը, այլ եւ ամսաթիւը, վերցնելով էջմիածնի «Արարատ» ամսագրէն (1902, Մայիս-Յունիս թիւ 6-2, էջ 478) :

քալեանը, իբր առեւտրական կրնկերանայ կարաւանին, որ Տ օրէն կը հասնի վան : Երեսուն տարեկան աշխոյժ երիտասարդ Թաւաքալեանը կը ներկայանայ Խրիմեան Հայրիկին, կը ներկայացնէ իր յանձնարարականները, որոնք իրեն տրւած էին թիֆլիսէն, (անտարակոյս Գր. Արծրունիէն, Բաֆլիէն եւ ուրիշներէ) եւ անմիջապէս կը նըշանակուի ուսուցիչ Արծակ դաւառի Խառակոնիս զիւղը ու կերթայ իր պաշտօնատեղին :

Ութսունական թւականներու սկզբներուն երբ Խրիմեանի շունչն ու հոգին միացած Փորթուգալեանի յեղափոխական դադափարներուն՝ կը թեւածէին Վասպուրականի երկնակամարին վրա, ուսուցիչները ոչ միայն ուսում եւ կրթութիւն տարածող անձեր էին, այլ եւ ազատասիրական եւ յեղափոխական խօսքի ուխտեալ քարոզիչներ, զիւղական համայնքներու ղեկավարներ, ժողովրդական դաստիարակիչներ եւ այլն : Այս պարտականութիւններով կը գործէր նաեւ Թաւաքալեանը Խառակոնիս զիւղին մէջ Գէորգ Վարդապետ անունով :

Խառակոնիսցի աշուղ Ուսթա Ղազարը 1917-ին, կը պատմէր, որ Նահապետ Քուչակին վերագրւած կարգ մը երգեր եւ աւանդութիւններ իրմէ գրի առած էր իրենց զիւղի Գէորգ Վարդապետը 35-37 տարի առաջ : Եթէ 1917-էն յետ երթանք ալդքան տարի, ապա ուրեմն յիշեալ Գէորգ Վարդապետը նոյն ինքը Թաւաքալեանն է, որուն աշակերտ եղած էր նաեւ Խառակոնիսցի Գէորգ Կարապետեանը : Սա կը վկայէր, որ Գէորգ Վարդապետը, ուսուցիչ ըլլալէ աւելի յեղափոխական քարոզիչ էր, զինուորական մարդիչ, որ աշակերտներուն զինուորական մարզանք կը սորվեցնէր, ինչպէս նաեւ աղբային բուն զինուորական մարզանքով վարժութիւններ ընել կուտար, աղերդէր, փայտէ հրացաններով վարժութիւններ ընել կուտար, աղբային տօներու սոթիւ հանդէսներ կը կազմակերպէր եւ հայրենասիրական ճառեր կը խօսէր :

Եթէ Խառակոնիսցի Գէորգ Կարապետեանի այս վկայութիւններն բացարձակ փաստեր եւ իրողութիւններ են, ապա ուրեմն պարզ է թէ ինչո՞ւ Թաւաքալեանը միայն մէկ տարի մնաց Խառակոնիսի մէջ : Այնուհետեւ կատարութեան աչքին դարձաւ կասկածելի անձնաւորութիւն եւ օր մըն այ, 1881-ի ամբան, զիւղական հազուատներով արտաքսուած, իրբեւ գեղջուկ պանդուխտ վանէն Կարին մեկնող կարածայուանի մը հետ ճամբայ ելաւ հակառակ իր ցանկութեան : Կարին հասնելէ յետոյ անմիջապէս անցաւ Տարօնի Աշխարհը, շրջեցաւ Մուշի ներքէ յետոյ անմիջապէս անցաւ Տարօնի Աշխարհը, շրջեցաւ Մուշի ներքէ հայարնակի զիւղերը, այցելեց նշանաւոր սրբավայրերը - Ս. Դաւաթի հայարնակի զիւղերը, Առաքելոց եւ Աշտիշատի վանքերը : Սակայն այս անկարապետի, Առաքելոց եւ Աշտիշատի վանքերը, որ մտած էր հայ զիւղերը ծանօթ ու խորհրդաւոր թափառականը, որ մտած էր հայ զիւղերը

եւ բազմակողմանի կերպով ուսումնասիրած ժողովրդի կեանքի դանազան էջերը, ծանօթացեր էր անոր հողեկան ասորումներուն եւ այլն - հոս ալ շուտով կասկածի տակ ընկաւ եւ մինչեւ իսկ կառավարութեան հետապնդման ենթարկւեցաւ, բայց կրցաւ օձիքն ազատել եւ տաժանելի ու զրկանքներով լի ճամբորդութեամբ, իր մէկ դադափարակից ընկերոջ հետ, 1883 թ. ձմրան, անցաւ դադաճի ուստաց սահմանը, Ալաշկերտի վրայով եւ հասաւ Իզդըբը: Թաւաքալեանը մասամբ հասած էր իր նպատակին: Մօտ չորս տարի (1880 - 1883) նա սպրեցաւ ու գործեց Մայր Երկրի մէջ՝ իր սիրած ժողովուրդին համար, ծանօթանալով անոր ներքին, տառապալից կեանքի դանազան էջերուն, անոր ազգային ձգտումներուն, պահանջներուն եւ այլն: Լիակատար ծանօթութիւններով՝ Թաւաքալեանը կը հեռանար իր սիրած երկրէն ու ժողովուրդէն՝ տանելով հետը ուրախ եւ տխուր, մտայլ կամ յուսատու զգացումներ՝ ապազայի վերաբերմամբ:

Կովկաս վերադառնալէ յետոյ կորսնցուց իր մայրը, որ իր սիրատուն ու թափառական դաւակի տեսութեան չարժանացած գերեզման կիջնէր, խոր փիշտ պատճառելով նաեւ իր հարազատներուն:

Թաւաքալեանն անցաւ Բաղու եւ ուսուցչի պաշտօն ստանձնեց Հայոց ծխական դպրոցին մէջ՝ 1883-ի սեպտեմբերին: Յաջորդ տաւրի, 1884-ին, ցարական կառավարութեան կարգադրութեամբ փակւեցան Հայոց ծխական դպրոցները: Այս փտտի առջեւ փոթորկւեցաւ Թաւաքալեանի հոգին, խորապէս ընկճւեցաւ, եւ նա որոշեց ընդմիջտ հեռանալ Ռուսաստանէն, անցնել Տաճկահայաստան՝ շարունակելու համար իր կրտստ գործը:

**

Թաւաքալեանի սկզբնական գործունէութեան զլխաւոր նպատակն էր Մայր Երկրի Հայութեան մէջ տարածել ուսում եւ կրթութիւն, բանալ զիւղական դպրոցներ, անոնց կից հիմնել գրադարաններ, դարկ տալ ժողովրդի ընթերցանութեան գործին, ինքնագիտակցութեան հրաւիրել զայն:

Կովկասի մէջ քաղաքէ քաղաք շրջելով՝ նա հաւաքեց բաւական քանակութեամբ ժողովրդական ընթերցանութեան գիրքեր եւ 1886 թ. դարնան Իզդըբէն անցաւ Ալաշկերտ, Տարօնի Աշխարհն երթանալիս ցանկութեամբ: Նպատակն էր Մուշ քաղաքին մէջ հիմնել կեդրոնական գրադարան մը, որ գիւղերու գիտակից եւ ընթերցասէր երիտասարդութեան գիրքեր պիտի հայթայթէր: Իր խորհրդաւոր ու նւիրական բեռներով նա մնաց Ալաշկերտի սահմաններուն մէջ եւ ա-

պա կանգ առաւ Գիւնգէօրմազ գիւղը, չկրցաւ յառաջանալ դէպի Մուշ, վասնզի կառավարութեան կողմէ քննութեան եւ ապա հետապնդման ենթարկւեցաւ: Մտիւլած եղաւ զընուութեամբ ապրիլ յիշեալ գիւղին մէջ՝ սպասելով պատեհ առիթի Մուշ անցնելու համար: Սակայն, հակառակ իր ցանկութեան եւ ձեռք առած միջոցներուն, Մայս անդամ չյաջողեցաւ անցնել Մուշ: Միտաժամանակ նաեւ, երբ Ալաշկերտ կը գտնէր, Իզդըբէն հրաւէր ստացաւ պաշտօնավարելու տեղւոյն հայոց դպրոցին մէջ ուսուցչի եւ Ռուսաստանի աշխարհադրութիւն դասուանդելու համար:

Թաւաքալեանը իր հաւաքած 400 կտոր գիրքերը եւ 180 պատկերները տարաւ Ալաշկերտի Ս. Յովհաննու (Իւչքիլիսէ) վանքը, այնտեղ ի պահ տաւ եւ վերադարձաւ Իզդըբ, ստանձնելով ուսուցչի զպաշտօնը՝ 1886-ի Սեպտեմբերին:

Անոր ներկայութիւնը Իզդըբի մէջ վերջ դրաւ Թայֆայական բաժանումներուն եւ տեղական բնօթ կրող հակամարտութիւններուն: Էջմիածնի միարաններէն Հմայեակ Վարդապետ Արշարունին (Իզդըբցի, վախճ. 1921 Յունւարին, մօտ 80 տարեկան) կը պատմէր, որ Թաւաքալեանը Իզդըբի հայ երիտասարդութեան պաշտամունքի առարկայ դարձաւ: Ժողովուրդը Թաւաքալեանի վրա կը նայէր ոչ միայն իրբեւ հոգով-սրտով դպրոցին ներկած ուսուցչի մը, այլ եւ բացառիկ դէմքի մը, որուն տւած էին ազգասէր տիտղոսը: «Ազգասէր Գեորգ», «Ազգասէր Վարժապետ» կը կոչէր նա Իզդըբի մէջ: Եւ իր խաղաղ, հաշտարար եւ համակրելի բնաւորութեամբ լայն ժողովրդականութեան արժանացաւ: Այս մասին բերենք հետեւեալ վկայութիւնը.

«... Երեք տարւայ ուսուցչութեան ընթացքում նա դրաւ երթի իւր ընկեր ուսուցիչներին եւ թէ հասարակութեան մեծամասնութեան համակրութիւնը: Նա կազմում էր ուսուցչական խմբի եւ երիտասարդութեան կենտրոնը, դէպի նա վերաբերում էին ամենքը ակնածութեամբ եւ դիմում էին նրա խորհուրդներին դժւար դէպքերում: Նա ուսուցիչներին կապող օղակն էր, եւ այդ համերաշխ գործունէութեան շնորհիւ էր, որ տասնեակ տարիներով կուսակցութիւնների պառակտում երիտասարդները միացան, միացած ուժերով բաց արին դպրոցին կից գրադարանը եւ բարեկամական յարաբերութիւններ սկսեցին իրար հետ» *):

*) «Արարատ». 1902 Մայիս-Յունիս քիւ Ե-Ձ, էջ 479: «Արարատ»-ի յիշեալ քիւն մէջ տպւած է Թաւաքալեանի համառօտ կենսագրութիւնը, որ անստորագիր է, տակայն կենթադրեմ, որ այդ գրութեան հեղինակը՝ Խրիմեան Հայրիկի դիւանապետ Կորիւն Վարդապետն էր:

ողեւորութիւնը, չքացնելու դրանց խիզախ եռանդը: Չարմանայի չէ եթէ այդպիսի անպիտան միջավայրի երկարատեւ ազդեցութիւնը յաճախ վախկոտութեան չափ զգուշաւոր էր դարձնում նախկին անվեհեր աշխարհական երիտասարդին կամ, ընկճելով ու հիասթափեցնելով, վաղաժամ դերեղման էր իջեցնում նրան» *):

Ահա այսպիսի դժուար պայմաններու մէջ էր, որ Աղեքսանդր Թաւաքալեանը «Ազգասէր Վարժապետ»ը, կամ երիտասարդութեան մէջ Չափի անունով յայտնի հայրենանէր երիտասարդը, 1889 թ. Հոկտեմբերին, Բագրեւանդի Ս. Յովհաննու վանքի տաճարին մէջ, վանահայր Յովհաննէս Եպիսկոպոսի ձեռքով վարդապետ ձեռնադրեցաւ՝ Բագրատ անունով: Անունի այս ընտրութեան մէջն ալ պէտք է դանել յիշատակի եւ խորհրդաւորութեան իմաստը:

Հայաստանի պատմական մէկ դաւառի՝ հնագոյն Բագրեւանդի մէջ, հեթանոս հայութեան բազին-տաճարի աւերակներուն վրա բարձրացած Ս. Յովհաննու հոյակապ սրբավայրի կամարներուն տակ եւ Եփրատի ջուրերուն մէջն էր, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, ըստ աւանդութեան, Հայոց Տրդատ Գ. Արշակունի թագաւորն ու աւագանին մկրտեց, քրիստոնէայ դարձուց: Այդ նոյն տաճարին մէջ, Թաւաքալեանը, Բագրեւանդի բազին-տաճարի քրիստոնէացած կամարներուն տակ ծունկի կուգար Բագրատ անունը կրնդունէր ուխտելով նւիրել իր ազգին ու հայրենիքին: Կրօնական սքեմի տակ, մեղաբը դիւխն նա սրբազան ու գերազոյն ուխտի մը նւիրւած էր: Իւր ժողովուրդի դաստիարակութեան եւ ազատագրութեան գործն էր այդ, որուն ճամբաները սակայն ծածկւած էին այնքան խոչընդոտներով ու տատակներով:

Ամբողջ հոգով եւ մտածումներով յեղափոխական ծնւած երիտասարդ վարդապետ ի՞նչ կրնէր Ս. Յովհաննու վանքին մէջ: Ան կրցաւ իր շուրջը հաւաքել Այաշկերտի գիւղերէն հաւատարիմ եւ հայրենասէր երիտասարդներու փոքր խումբ մը: Կովկասէն իր հետ բերած Բաֆֆիի վէպերն ու երիտասարդութիւնը սգեւորող գիրքերը կուտար, որ անոնք կարդային: Ապա սկսաւ յարաբերութեան մէջ մտնել Կովկասի իր բարեկամներուն եւ դադափարակիցներուն հետ: Կաղմակերպեց սուբհանդակներու խումբ մը, որ Այաշկերտէն կերթեւեկէր Կաղզան եւ Իդդիր՝ բերելով գիրքեր, թերթեր եւ զէնքեր: Անոր գլխաւոր նպատակն էր նախ երիտասարդութեան եւ ապա ժողովուրդի սրտին մէջ բորբոքել հայրենասիրութեան հուրը:

***) Լեւոն Սարգսեան - «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս. 1902, Մայիս, Բիւ 5, էջ՝ 184:

Էջմիածնի մէջ քանի մը անգամ տեսայ (1917-1918) Այաշկերտցի Տէր Յովհաննէս քահանան (ազգանունը չեմ յիշեր), պարթեւահասակ, ալեհեր մաղ-մօրուքով, հայկական արծուենի քթով, խիզախ ու քաջ այս տէրտէրը էր պատմէր, որ ինքը Բագրատ Վարդապետ Թաւաքալեանի յեղափոխական դաստիարակութեան արժանացեր է, լսեր է անոր քարոզներն ու ճառերը, եւ մինչեւ անգամ անոր սովորեցուցած երգերէն մէկուն չորս տողը կը յիշէր՝

Հուրն սիրայ իմայ ազգի,
Միշտ ի խարոյկ սըրտիս վառի,
Չուրբք արտասուաց ո՛չ շիջանի.
Օգնեա՛ Յի՛սուս, փրկիչ բարի . . . »:

— Այս չորս տողերը, կրսէր Տէր Յովհաննէսը, օր մը պատարագի ժամանակ, Բագրատ Վարդապետը «Տէր Ողորմեա»ի առեն երգեց յուրիչ ձայնով: Այս որ լսեց վանահայր Յովհաննէս Եպիսկոպոսը, կրակ կարեցաւ ու սեղանէն ձայն տուաւ — «Ի՞նչ կէնիս նորընծայ, կուզես որ դուշմանն իդայ մըր զսուրբ տաճար քարուքա՞նդ էնի . . . »:

Ու դեղջուկ քահանան շարունակեց իր հիացմունքի խօսքերը Բագրատ Վարդապետ Թաւաքալեանի մասին, յայտնելով, որ անոր հեռանալուն պատճառը հայերը եղան: Կառավարութեան յայտնեցին թէ նա յեղափոխական գործերով կը զբաղի: Կառավարութիւնը սկըտաւ հետապնդել, եւ օր մըն ալ վարդապետը գիշերանց հեռացաւ, սահմանն անցաւ եւ գնաց Կովկաս:

Իսկապէս Թաւաքալեանը հազիւ թէ տարի մը մնաց Ս. Յովհաննու վանքը, 1890 թ.ի աշնան անցնելով Կովկաս նա գնաց իւր եղբայրներու մօտ հանգստանալու: Բայց նա չսիրեց հանգստաւէտ կեանքը: Անոր հոգին միշտ կը սուստոնէր դէպի Մայր Երկիրը, որուն ուխտեալ քարոզիչ դարձեր էր: Ամբողջ տարի մը (1891) իւր եղբայրներուն մօտ մնալէ յետոյ Թաւաքալեանը եկաւ Էջմիածին, որուն կաթողիկոսական տեղապահն էր (Մակար կաթողիկոսի մահէն յետոյ, 1891 Սպրբի 16) Երեմիա Եպիսկոպոսը: Թաւաքալեանը խընդրեց, որ իրեն յանձնեն Սարմատին մօտիկ, տաճկա-պարսկական սահմանադրուիին վրա գտնուած Դերբիկի Ս. Ասուածածին աւերակ վանքի վանահայրութիւնը:

Սահակ Արքեպ. Արվատեանը (վախճ. յերուսաղէմ 1924) կը պատմէր, որ Թաւաքալեանը երբ Դերբիկի վանահայրութիւնը կուզէ կաթողիկոսական տեղապահէն, սա զարմանքով կըսէ.

— Վարդապետ, դարերէ ի վեր Դերբիկի վանքը ամայի եւ աւե-


րակ է, ի՞նչ պիտի ընես հոն, ոչ բնակութեան տեղ կայ եւ ոչ ալ տնտեսութիւն:

— Սրբազան Հայր, — վրա կը բերէ Թաւաքալեանը — վարդապետ եղանք եկեղեցուն եւ ազգին ծառայելու համար: Վարդապետ կայ որ չէն վանքը աւերակ է դարձնում, վարդապետ էլ կայ որ ուզում է աւերակ վանքը շինացնել:

Կաթողիկոսական տեղապահը կը համաձայնէի, եւ Բագրատ Վարդապետ Թաւաքալեանը կը նշանակէի Սալմաստի առաջնորդական փոխանորդ եւ Դերիկի աւերակ վանքի վանահայրը:

Թաւրիզ

(Վերջը յաջորդ անգամ)



ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

ԼԵՈՆ ԹԱՂԷՈՍԵԱՆ

(ՊԱՊԱՇԱ)

Դեկտ. 19-ին, Փարիզում, վախճանեց Հ. Յ. Դաշնակցութեան հին սերնդի պատկառելի ներկայացուցիչներից մէկը՝ Լեւոն Թաղէ-
ոսեանը, որ ընկերների եւ բարեկամների շրջանում աւելի ծանօթ էր Պապաչա անունով:

Լեւոն Թաղէոսեանը Ադուլեսցի էր, Բրիտտափոր Միքայէլեանի քրոջ որդին: Ծնւել էր 1865 թ. փետր. 2-ին, մանր առեւտրականի ընտանիքում: Հայրը նպարավաճառի խանութ ունէր Զաքարթալայի շրջանի Կախ աւանում, իսկ մայրը զաւակներով ապրում էր Ագուլի-
սում, սեփական տան մէջ:

— Հայրս երեք տարին մէկ անգամ դալիս էր դիւզ, այդ պատ-
ճառով մեր տան բոլոր երեխաների տարիքը իրարից տարբերում է երեք տարով, ժպտալով ասում էր Պապաչան:

Նրանք երեք եղբայրներ էին՝ Լեւոն, Ստեփան (Սամսոն) ու Յովսէփ, եւ մէկ քոյր՝ Նղիտարէթ:

Լեւոնը տասը տարեկան էր, երբ մեռաւ հայրը, ընտանիքի ամ-
բողջ հոգսը ձգելով մօր վրա: Հօրից մի քիչ դրամ էր մնացել. մայ-
րը այդ դրամով պահում էր զաւակներին:

Լեւոնը նախնական կրթութիւն ստացաւ ծննդավայրի ծխական դպրոցում, ուր ուսուցիչ էր Բաֆֆին: Գիւղական դպրոցն աւարտե-
լուց յետոյ, մայրը նրան ուղարկեց Թիֆլիս, որպէս զի իր եղբոր՝ Բրիտտափորի աջակցութեամբ արհեստ սովորէ կամ խանութում գործակատար դառնայ եւ փող աշխատէ: Լեւոնը, ընդհակառակը, երազում էր ուսումը շարունակելու մասին:

Մօր պնդումներին վրա, թէ անպատճառ պէտք է դրամ վաստա-
կելու մասին մտածես, խօսք է տալիս եւ այդ պայմանով կարողա-
նում է մեկնել Թիֆլիս. մտքում, սակայն, որոշել էր չկատարել մօր պահանջը եւ մտնել որ եւ է դպրոց: 1879 թ. ապր. 12-ին Արաբաջի

Ստեփանի Փուրջոնով դուրս է դալիս Ագուլիսից եւ ապր. 25-ին հասնում է Թիֆլիս:

Քրիստափորը այդ ժամանակ ուսանում էր Ուսուցչական ճեմարանի վերջին դասարանում: Երբ կարդում-վերջացնում է քրոջ նամակը՝ դառնալով ասում է սրտատրոփ սպասող Լեւոնին. — Եթէ եկել ես ուսում առնելու, բարի ես եկել, ես քեզ կօգնեմ: Իսկ եթէ եկել ես դրամ չահելու նպատակով, ինչպէս եկել ես՝ այնպէս էլ վերադարձիր. ես քեզ չեմ կարող օգնել:

Լեւոնի ուզածն էլ հէնց այդ էր: Նա խոստովանում է, որ եկել է ուսում ստանալու եւ որ խաբել է մայրիկին:

Քրիստափորը, որ ապրում էր մասնաւոր դասերով, մի աշա- կերտ էլ է դսնում եւ դրանից ստացած 25 ռուբլին յատկացնում իր քեռորդու կարիքներին: Լեւոնը տեղաւորում է քեռու մօտ եւ ամբողջ ամառ պատրաստելով՝ 1879 թ. սեպտեմբերին յաջողութեամբ քննութիւն է տալիս եւ ընդունւում է Ներսիսեան դպրոցի երրորդ դասարանը: Նրա հետ եկած բանաստեղծ Քրիստ. Թադէոսեանը եւ ուրիշներ, որ նոյն ուսումն էին ստացել ինչ որ Լեւոնը, հազիւ կարողանում են ընդունւել երկրորդ դասարան: Քննութեան ժամանակ պատանի Լեւոնի վրա ուժեղ տպաւորութիւն է գործում ուսուցիչ Ստ. Պալասանեանը:

Քրիստափորը բնակւում էր Միքայէլեան փողոցի թիւ 179 տանը, ուր մի ընտանիքում առանձին սենեակ էր վարձում: Լեւոնն էլ ամբողջ ժամանակ նրա մօտ է ապրում: Երբ Քրիստափորը, մի տարի յետոյ, աւարտելով ուսուցչական պաշտօնով տեղափոխեց Ագուլիս, Լեւոնը մնաց նոյն ընտանիքում:

1884 թ. Լեւոնը աւարտում է Ներսիսեան դպրոցը եւ 1884-85 ուս. տարում հայոց լեզու ուսուցիչ է հրաւիրւում Ագուլիսի ուսումնարանում: Դասաւանդում է երրորդ, չորրորդ եւ հինգերորդ դասարաններում:

1885 թ. փակւում են հայոց ծխական դպրոցները: Լեւոնը դնում է Թիֆլիս, ուր Քրիստափորը նրան տեղաւորում է դէնքի եւ գրականութեան գաղտնի պահեստում՝ վստահելով նրան յեղափոխական ամենապատասխանատու գաղտնիքներ: Առհասարակ, Քրիստափորը Լեւոնի նկատմամբ ունէր անսահման վստահութիւն: Լեւոնն էլ իր հերթին պաշտում էր Քրիստափորին եւ անտրտունջ կատարում նրա կամքը:

Նոյն տարի աշնանը Ագուլիսի դպրոցը վերաբացեց: Լեւոնը վերադարձաւ հայրենիք, ուսուցչութեան պաշտօնով եւ այնտեղ մը-

նաց մինչեւ 1888 թ., երբ տեղափոխեց Թիֆլիս եւ մի տարի պատրաստեց Քրիստափորի մօտ պետական դպրոցում քննութիւն բռնելու նպատակով: 1889 թ. ամառը զնաց Բագու, որ ոչալական դըպրոցում քննութիւն տայ եւ մտնէ Մոսկուայի Պետրովսկայա գիւղատնտեսական ճեմարանը, բայց անակնկալ կերպով հիւանդանալով՝ ծրագիրը ջուրն ընկաւ:

1890 թ. ամառը Քրիստափորը նրան ուղարկում է Անդրկասպեան երկիրը ի նպաստ թրքահայոց հանդանակութիւն անելու եւ յեղափոխական կազմակերպութիւններ առաջ բերելու համար: Ասպա ուսուցիչ է ուղարկւում Տրապիզոն, բայց թիւրք կառավարութիւնը չի արտօնում մնալու քաղաքում: *)

1890 թ. սեպտեմբերից մինչեւ 1899 թ. ուսուցչութիւն է անում Գանձակում:

Այդ տարիներին Գանձակում կար երկու հակառակորդ թայֆա. մէկը Աղւանեան արքեպ. ի գլխաւորութեամբ՝ բողոքացած էր հարուստներից եւ պահպանողականներից, որոնց մէջ աչքի էին դարնում հեռագրական պաշտօնայ շամասփիւտը եւ ուսուցիչ Յովհ. Սաչումեանը: Միւսը՝ ազատականներ — Յովսէփ Մելիք-Բէգլարեան, Մկրտիչ քհն. Բարաքէօլափեան քհն., երէցփոխ Նարաթեան եւ ուրիշներ:

Հոգաբարձական ընտրութիւնների ժամանակ պահպանողականները պարտւել էին: Նորընտիր հոգաբարձութիւնը դպրոցի տեսուչ էր հրաւիրել Ներսէս Դաւթեանին եւ իրաւունք էր տւել նրան ուսուցչական խումբ կազմելու: Ն. Դաւթեան ուսուցիչ է հրաւիրում աչքի ընկնող ազատամիտ երիտասարդներ՝ Սերգէյ Դանդուբեանին, Վարդան Ենիկոլոյանին, ինչպէս եւ Քրիստափորի յանձնարարութեամբ՝ Լեւոն Թադէոսեանին:

Պահպանողականները ահաբեկն աղմուկ են բարձրացնում, թէ հրաւիրւած ուսուցիչները անկրօն ու անաստեած եւ եկեղեցու թըշնամի մարդիկ են, պասի դէմ են արտայայտւում, բնագիտութեան դասերով անբարոյական ազդեցութիւն են գործում երեխաների վրա եւ այլն: Յատկապէս Լ. Թադէոսեանին մեղադրում են այն բանում, որ, իբր թէ, դասի ժամանակ, հակառակ հայոց եկեղեցու դասնութեան, հերքել է սատանաների գոյութիւնը: Որ, իբր թէ, «մահաւանութեան, հերքել է սատանաների գոյութիւնը: Որ, իբր թէ, «մահաւանութեան է քարոզել», որովհետեւ ասել է, թէ բոլոր հա-

*) Այս դէպքը Լ. Թադէոսեանը իմէր պատմել է «Հայրենիք» ամսագրում (1925 թ. նոյեմբ.):

յերը՝ ինչ կրօնի էլ պատկանելու լինեն՝ հայ են եւ պէտք է ապրին, իբրեւ մէկ ազգ:

Այս եւ նման անհեթեթութիւններով ուսուցչական խմբի մասին զրգռիչ լուրեր են տարածուած ժողովրդի մէջ: Համախօսական է կազմուած եւ ուղարկուած էջմիածին: Մակար կաթուղիկոսը քննիչ է նշանակուած Ղեւոնդ քահ. Սարաղեանին - մի կեղծաւոր եւ երկերեսանի անձնաւորութիւն, որի քննութեան արդիւնքը լինում է այն, որ մարտ 8-ին էջմիածնից հեռագիր է ստացուած, որով հրահանգուած է փակել Գանձակի երկսեռ վարժարանները, լուծել հողաբարձութիւնը, հեռացնել ուսուցիչներին եւ Ներսէս Դաւթեանին, նրա կնոջ ու Լ. Թաղէոսեանին գրկել հայոց դպրոցներում ուսուցչութիւն անելու իրաւունքից:

Տեղի են ունենում յուզիչ տեսարաններ: Աշակերտութիւնը՝ կապած ուսուցիչներին հետ՝ լաց ու շիւան է բարձրացնում եւ մերժում է հեռանալ դպրոցից: Աշակերտներին զօրով ճանապարհ են դնում եւ դպրոցը փակում են:

Մի օր Սիմոն Շխեանը, որ այդ ժամանակ ուսուցիչ էր քաղաքային դպրոցում, յայտնում է Լ. Թաղէոսեանին, թէ ինքը ժանդարմներից լուր է առել, որ հայոց լեզուի ուսուցիչ Թաղէոսեանը անասաւածութիւն է քարոզում եւ, ուրեմն, ցարի դէմ է: Որպէս զի ձերբակալութեան առիթ չլինի, Լ. Թաղէոսեանը մարտի վերջերին հեռանում է Թիֆլիս:

Այնուհետեւ նա ընդմիջում թողնում է ուսուցչական ասպարէզը: Նախ, Ս. Զաւարեանի յանձնարարութեամբ, մտնում է հակաֆիլի-լոկսերային խմբի մէջ եւ մինչեւ 1898 թ. աշխատում է Բուխարսի եւ Թիֆլիսի նահանգներում, առաջ իբրեւ կրտսեր հետազօտող, յետոյ որպէս քննիչ-վերատեսուչ: Իր բարեխիղճ ու գործօն պաշտօնավարութեամբ՝ վաստակում է թէ բարձր իշխանութեան եւ թէ ստորագուս գործակիցների վստահութիւնն ու համակրանքը:

1898 թ. հոկտեմբերին վերջ է դնում Փիլոկսերային գործը: Պապազան դնում է Թիֆլիս: Այդ ժամանակ Գրիստափորը, Հ. Յ. Դ. երկրորդ ընդհ. ժողովի քրոշումով, պատրաստուած էր անցնել արտասահման «Իրօշակ»-ի եւ եւրոպական պրոպագանդի գլուխը կանգնելու համար: Հոկտ. 10-ին Գրիստափորին ճանապարհ է դնում դէպի Վրացիկակազ, իսկ ինքը անցնում է Բագու, զինւած Գրիստափորի յանձնարարական նամակով Արր. Դաստակեանի վրա: Սրա աջակցութեամբ կառավարչի օգնականի պաշտօն է ստանում Մկ. Բալանթարեանի Բալախանու նաւթահանքի եօթերորդ բաժնում, ուր

ծառայում է մէկ ու կէս տարի: Ապա մէկ ու կէս տարի էլ կառավարչի պաշտօն է վարում Ղեւոնդ Աբրամիչ Մարգարեանի նաւթահանքերում: Պապազայի բնորոշման տեսակէտից շատ հետաքրքրական է հետեւեալ դէպքը:

Մի օր Մարգարեանը ասում է Պապազային.

— Գիտես, Լեւոն, շատ լաւ երիտասարդ ես, ամա Բալախանու մարդ չես:

— Ինչո՞ւ, հարցնում է Պապազան:

— Էսքան ժամանակ է հասեղ ես, մի անգամ բանուր չես ծեծել. բա՛ ասանց բանուր ծեծելու կառավարիչ կարելի՞ է լինել:

Պապազան բացատրում է, թէ ինքը ուզում է բարոյական ազդեցութեամբ աշխատել:

— Չէ՛, մատաղ: Էս էն երկիրը չի . . .

Ու Պապազային տեղափոխում է Բիբի-էյրաթի իր նոր նաւթահանքը կառավարչի պաշտօնով: Այստեղ Պապազան մնում է մինչեւ 1902 թ. վերջը:

1903-1906 թ. պաշտօնավարում է նաւթարդիւնաբերողների Համագումարների Սորհրդի կահ ու կոյքի բաժնում, որպէս հաշւապահի օգնական: Ապա, երբ Նիկոլ Դումանը գնում է Պարսկաստան, ստանձնում է նրա պաշտօնը, իբրեւ Նաւթ. Համ. Սորհրդի նաւթի ամբարման գործի վարիչ: Սա պատասխանատու, բացարձակ վստահութիւն պահանջող պաշտօն էր, եւ Պապազան ճիշտ դրա մարդն էր:

Ինչպէս տեսանք, արդէն 1890 թ.ից Պապազան, Գրիստափորի ձեռքի տակ, մասնակցում էր յեղափոխական գործերին: Ֆիլոկսերային խմբում եղած ժամանակ, Միխայլովոյում, Սուրամում եւ ուր որ լինում էր, հայերի շրջանում քարոզում էր Դաշնակցութեան դափնիքները, «Իրօշակ» էր տարածում, դաշնակցական խմբեր էր կազմում եւ կապ էր պահում Թիֆլիսի ղեկավար ընկերների հետ: Բայց Պապազայի իսկական գործունէութիւնը, կարելի է ասել, ըսկուեց Բագուից, ուր նրա առջեւ աշխատանքի լայն դաշտ կար: Շրնորհիւ իր անսահման ներումին հայ ժողովուրդին ու կուսակցութեան, իր դիւրահաղորդ ու գործնական բնաւորութեան եւ ծայրաքիչ դաղտնապահութեան՝ նա արագ գրաւեց պատասխանատու դերքեր: Դարձաւ Բագուի կազմակերպութեան ողնաշարի գլխաւոր օգնականներից մէկը: Չորսուեան ծածկանունով էր յայտնի Ոսկանապատի կենտր. կոմիտէի մէջ եւ նրա հեղինակութիւնը տարածուած էր աւելի հեռուները: Համեստ ու սակաւախօս՝ նա գերազանցապէս գործի մարդ էր: Հաշիւ, գաղտնի պահեստներ, ծածկագրութիւն,

անցագրային գործ - ուր գործ ու գործնական հմտութիւն էր պահանջուած, այնտեղ էր եւ Պապազան: Բեմքասացութիւն, հրատարակային ժողով, լրագրութիւն, արտաքին փայլ - նրա համար խորթ բաներ էին: Այդ պատճառով թէ կուսակցութեան եւ թէ հասարակական մարմինների մէջ նա ամենից առաջ գրաւում էր սեւ ու յարատեւ աշխատանք պահանջող գործերը:

Երբ, հայ-թրքական ընդհարումներից յետոյ, ռուսական առաջին յեղափոխութեան օրերին, Կովկասի հայ կեանքը սղտորեց եւ Դաշնակցութեան ներսը առաջ եկան միհրանական եւ անջատական հոսանքները, հրապարակային պայքար մղող Խաթախները ու Թովիզեանների կողքին Պապազայի պէս գործիչներն էին, որոնք փրկեցին կուսակցութիւնը կործանումից: 1907 թ. Վիէննայի ընդհ. ժողովին Պապազան արդար հպարտութեամբ վայելեց իր թափած աշխատանքի պտուղները:

Այդ ժողովին էր, որ առաջին անգամ ես էլ բախտը ունեցայ ծանօթանալու եւ մտերմանալու Պապազայի հետ: Նա ա՛յդ ժամանակ եւ գրանից առաջ էլ արդէն յայտնի էր Պապազա անունով: Հիւանդոտ աչքերը պահած սեւ-կապույտ ակնոցի տակ՝ նա ժամերով լուռ եւ անմըղով նստում էր ժողովներին, խօսք էր առնում միայն ծայրայեղ անհրաժեշտութեան դէպքերում եւ միշտ փաստական ճշտումների կամ գործնական առաջարկութիւնների համար, եւ ինչ որ ասում էր, համարեա ամէն անգամ լինում էր տեղին: Բոլորովին աշխատում էր նա յանձնաժողովներում, ուր պահանջում էր գործ, թիւ, փաստ: Այստեղ նա իրեն զգում էր հարադատ տարերքի մէջ եւ մրցակից չունէր, եթէ չհաշուէր Բ. Յ. Տէր-Դաւթեանին, որի հետ համեմատած Պապազան շատախօս հոետոր էր . . . :

Վիէննայի ընդհ. ժողովից յետոյ էր, որ Կովկասում ծայր տրւին հայածանքները Դաշնակցութեան դէմ: Յարական բանտերը լեցւեցին դաշնակցականներով: Պապազային ամենից ուշ ձեռք տւին: 1908 թ. ամառը նա մասնակցեց Հ. Յ. Դ. Կովկասեան Ռայոնական ժողովին եւ մինչեւ 1909 թ. մայիս կարողացաւ զերծ մնալ Լըժինեան որսի շներից: Նա երբեմն նոյն իսկ դժգոհում էր .

— Ամենքը բանտում են, իսկ ես ազատ ման եմ գալիս. մարդիկ ի՞նչ կը մտածեն իմ մասին . . .

Եւ 1909 թ. մայիսին հերթը նրան էլ հասաւ. նրան բանտարկեցին եւ հանգուցեալ Թաղէոս Ամիրեանի հետ կարճ ժամանակով մի խուցում պահելուց յետոյ, ուղարկեցին Նովոչերկասկ, Լըժինի գործունէութեան կենտրոնը: Ծանապարհին, Դերբենտում, ամէն յարմարութիւն կար փախչելու. Թ. Ամիրեանը յորդորեց նրան փախչել

միասին, բայց նա հրաժարեց. Պապազայի պատճառով Ամիրեանն էլ չփախաւ:

Բանտարկութիւնը Նովոչերկասկում տեւում է մինչեւ 1911 թ.: Այդ միջոցին մեռնում է նրա մայրը եւ չորս երեխաները մնում են անխնամ: 1911 թ. ամառը նրան ազատ են թողնում 5000 թ. երաշխաւորութեամբ: Պահանջուած գումարը մտցնում է օտարացած մի հայ՝ Ալիբէգովը:

Բանտային արգելքը ազդել էր Պապազայի թոքերի վրա: Բժիշկների խորհրդով նա գնում է Կոշոր ամաբանոցը, Թիֆլիսի մօտ: Հոկտեմբերին, Երբ դալիս է Բագու, նորից բանտարկուած է, փոխադրուած է Թիֆլիս, Մետեխի բանտը, եւ այստեղից Գերասիմ Բալայեանի, Սրինգի եւ ուրիշների հետ տարւում է Պետերբուրգ, ուր 1912 թ. դարնան տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան մեծ դատաւարութիւնը: Պապազան արձակեց անպարտ եւ դալով Բագու, մինչեւ 1918 թ. սեպտ. 15-ը վարեց Նաւթ. Համ. Խորհուրդի քաղաքի գրասենեակի հաշւապահի օգնականի պաշտօնը:

Պաշտօնը Պապազայի համար օրւայ ապրուստի ապահովութեան միջոց էր սոսկ: Նրա կեանքի բովանդակութիւնը գլխաւորապէս Դաշնակցութիւնն էր. նրա ոյժի, ժամանակի, մտաւոր ու նիւթական միջոցների մեծ մասը պատկանում էր Դաշնակցութեան, որ ասել է՝ հայ ժողովրդին: Երբ 1918 թ. -ին Բագուն մատնեց քաղաքացիական կռիւի հրդեհին, որին յաջորդեց հայ-թրքական պատերազմը, Պապազան ամբողջ ժամանակ, «Բիւրոյում» էր: Լքած տուն ու ընտանիք, անձնական ամէն գործ՝ նա ոտքով-գլխով կլանւած էր կազմակերպական աշխատանքով. կուսակցական գործը գլխաւորապէս նրա վրա էր ծանրացած:

Նրան էին յանձնում եւ զանազան կողմերից բերուող թրքական իրերը: Նրա հսկողութեան տակ ինչ որ ստացւում էր խնամքով արձանագրւում եւ պահւում էր: Վերջը, էսէրների միջոցով, ամբողջը - ոսկեղէն, գորգեր եւ այլն - յանձնեց իրենց տէրերին: Թրքերը մնացել էին ապշած . . .

1918 թ. սեպտ. 15-ին Բագուն ընկաւ: Ընդհանուր նահանջողների հետ Պապազան էլ անցաւ Կնդէլի, ուր ծանր հիւանդացաւ եւ մէկերկու ամիս մնաց անկողնում: Առողջացաւ գլխաւորապէս Ռոստոմի գուրգուրոտ հոգատարութեան շնորհիւ:

Անգլիացիների Բագու մտնելուց յետոյ, Գաղթականական Կոմիտէի նախագահ Արամ Առաքելեանն էլ վերադարձաւ: Նրա տեղը նախագահ նշանակեց Պապազան, որ իրեն յատուկ եւտօնդով եւ անձնազօնութեամբ վարեց Գաղթ. Կոմիտէի գործերը եւ հետզհետէ

գաղթականներին վերադարձրեց Կովկաս: Ճանապարհ դրեց եւ Ռոստոմին: Այդ առթիւ Պապաշան յուզումով պատմում էր .

— Կարծես նախազգում էի: Ամէն կերպ աշխատեցի, որ հանգիստ անցնի ճամբորդութիւնը: Նաւ գնացի: Հետը մի տոպրակ նուշ դրի, որ Ռոստոմը այնպէ՛ս սիրում էր: Ո՞վ կը մտածէր, թէ այդ մեր վերջին տեսակցութիւնը պիտի լինէր: Նաւում հետը որբանոցի երեխաներ կային. նրանցից էլ վարակւեց, երեւի . . .

Դարձեալ Ռոստոմի մասին պատմում էր .

— Էնդէլիւմ գաղթականները բռնել էին բոլոր շէնքերը: Վերջին եկողներին համար տեղ չէր մնացել: Կարելի էր տեղաւորել միայն ուսւ գինւորները թողած տաղաւարներում, բայց նրանք էլ չափից աւելի աղտոտ էին եւ վարչանքով լեցւած: Մի օր, երբ նոր գաղթականներ եկան, Ռոստոմը դիմեց ընկերներին, որ գնան մաքրեն տաղաւարները: Բացի երկու հոգուց, ոչ ոք տեղից չչարժւեց: Ռոստոմը ոչինչ չասաց. եւ այդ երկու հոգու հետ ինքը սկսեց մաքրել տաղաւարը: Պէտք էր տեսնել, թէ ինչպէ՛ս միւսները ամօթահար տեղից վեր ցատկեցին եւ սկսեցին օգնել . . .

Գաղթականական գործը վերջացնելուց յետոյ, 1919 թ. յունիսին Պապաշան անցնում է Բագու: Այստեղ նրա տունն ու տեղը քար ու քանդ էր եղել: Գիրք ու դորդ, կահ կարասի, տանը ինչ որ կարարժէքաւոր՝ ամբողջը դողացել էր:

Յուլիսի վերջերը Երեւանից հեռագիր է ստանում, թէ ընտրւած է Խորհրդարանի անդամ եւ օգոստ . 1-ին պէտք է ներկայ գտնւել Խորհրդարանի բացմանը: Թողնում է ամէն ինչ եւ շտապում է Երեւան: Օգոստ . 1-ին, անհուն յուզումով մտնում է Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ Խորհրդարանի սրահը . . .

Այնուհետեւ սկսում է ոգեւորւած ու փոթորկոտ կեանքի մի նոր շրջան: Պապաշան իր մտքի եւ հոգու բովանդակ թափով լծւում է Հայաստանի պետական շինարարութեան գործին: Խորհրդարանական նրա աշխատանքը յատկապէս աչքի էր ընկնում ելեւմտական յանձնաժողովում, որի տեղեկարբն էր: Երբ որ եւ է գործի համար պէտք էր լինում անվիճելի հեղինակութիւն պահանջող անձի ներկայութիւնը, առաջին հերթին Պապաշայի անունն էր արտասանւում: Եւ զարմանալի չէ, որ երբ 1919 թ. աշնանը Երեւանում, Հ. Յ. Դ. Ց-րդ Ընդհ. Ժողովը որոշեց կազմել Գերագոյն Դատական Ատեան, բնական կերպով, դատաւորներից մէկը նշանակւեց Պապաշան:

Թէ որպէս Խորհրդարանի ու Դատական մարմնի անդամ, թէ իրբեւ պետական, հանրային ու դաշնակցական գործիչ, Պապաշան եր-

բեք չդաւաճանեց իր հաւատամքին, երբեք չընկրկեց, ամենադաժան օրերին անգամ մնաց բարոյական ու գաղափրական բարձրութեան վրա եւ տւեց ինչ որ կարող էր եւ աւելին իր սիրած ժողովրդին ու հայրենիքին:

Փետրւարեան սպստամբութիւնից յետոյ, նա էլ անցաւ Թաւրիզ, աշտեղից Փարիզ, Ժընէվ ու նորից Փարիզ: Եւ կեանքի վերջին տասնամեակը նւիրեց Հ. Յ. Դ. Կենտրոնական Դիւանին, որի տնօրէնն էր եւ որին ծառայեց հաւատարմութեամբ, ինչպէս դրանից առաջ ծառայել էր հայ ժողովրդին ու Հ. Յ. Դաշնակցութեան:

**

Այսքա՛ն հակիրճ, այսքան չոր դուրս եկաւ մեր յղւածը Պապաշայի մասին: Թող ներւի մեզ նաեւ, իբրեւ վերջաբան, առաջ բերել եւ մի քանի թուուցիկ վերլիչումներ:

Ինչպէս վերը ասի, Պապաշային եւ առաջին անգամ հանդիպեցի Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովում, Վիէննայում, 1907 թ. գարնանը, եւ այն ժամանակ արդէն նա Պապաշա էր: Անչուշտ, սխալւում է Վ. Ն. գրելով «Յուսարբեր»ում, (25 դեկտ.) թէ 1907 թ. աւառը Պապաշան դեռ Պապաշա չէր եւ որ այդ անունը ինքն է տւել նրան, Ա. Միքայէլեանի հետ միասին: Ինքը Պապաշան պատմում էր, թէ դեռ ուսուցիչ եղած ժամանակ իր ընկերակիցները իրեն կոչում էին Պապաշա: Նա այդ բացատրում էր իր հանդարտ եւ հոգատար բնաւորութեամբ: Ուր էլ լինէր, միշտ ուրիշի մասին էր մտածում, օգնում էր ուրիշներին, երբ ընկերների մէջ որ եւ է վէճ ու թիւրեմացութիւն էր պատահում, միջամտում եւ հաշտեցնում էր: Արդէն պատանի հասակից նա իրեն մեծ էր զգում եւ մեծի պէս էր վարւում: Իր նկարագրի այդ «հայրական» յատկութեան շնորհիւ նրան մկրտել էին Պապաշա անունով: Մի անուն, որ նա շատ էլ չէր սիրում, բայց, վերջ ի վերջոյ, հաշտւել էր հետը:

**

Ընդհանուր ժողովի ընթացքում, Վիէննայում, յաճախ մի խումբով միասին էինք ճաշում ճաշարանում - Եղիշէ Թոփչեանը, Պապաշան, Բ. Յ. Տէր-Դաւթեանը, Սեւքարեցի Սաքօն, Բալաշանը, Եր. Ֆրանգեանը, երբեմն եւ Ա. Շահխաթունեանն ու Արամը: Ճաշողների մէջ ամենից դանդաղը Պապաշան էր: Մինչեւ որ իր դանակ-պատառաքաղը եւ արիւնները անձեռնոցով մաքրէր, սեղանի վրա դրւած փոքրիկ հացիկներն արդէն սպառւած կը լինէին:

— Տօ՛ւ, անաշէններ, հլա չնստած՝ արդէն խժուեցիք. մի բան էլ ինձ թողէք, է՛, դանդառուում էր նա միշտ: Եւ ի վերջոյ սովորութիւն դարձրեց. հէնց որ սեղան նստէր, անմիջապէս մի զոյգ հացիկ դնում էր իր ամանի կողքը եւ աչալուրջ հսկում էր, որ ձեռք չտան:

Պապաչայի հացիկներն անվերջ սրախօսութեան նիւթ էին մեր սեղանի շուրջ: Մանաւանդ շատ էր ձեռք առնում Ե. Թովրէեանը իր տափակ-տափակ սրախօսութիւններով, կամ, ինչպէս Պապաչան էր ասում, «բթախօսութիւններով»:



Վիէննայի Ընդհ. Ժողովից յետոյ, երբ պատգամաւորները ցրւում էին շրջանները, մի շարք ընկերներ անցադրային դժարութիւններ ունեցան: Բնականաբար, Պապաչայի «մասնագիտութիւնը» այստեղ էլ պէտք եկաւ: Նա էր «յարմարեցնում» անցադիրները: Եւ, ի միջի այլոց, իմ անցադիրն էլ առաւ ձեռքիցս եւ ինձ տւեց մէկ ուրիշը: Իմ անցադրով Ռոստոմը անցաւ Ռուսմանիա եւ այնտեղ ձերբակալուեց: Հետաքրքրական է, որ տարիներ յետոյ, երբ 1915 թ. սկզբները ես Ադդ. Բիւրոյի կողմից որոշ յանձնարարութեամբ պէտք է եղբայրի Ռուսմանիա, Բուքրէշից ստացուեց վիզայի մերժում: Մերժման հիմքը իմ մի անգամ Ռուսմանիայում բանտարկուած լինելն էր. . .



1909-ին ես ուսանում էի Պետերբուրգում: Դաշնակցականների ձերբակալութիւնները լայն համեմատութիւններ էին ստացել: Հերթը կարող էր ինձ էլ հասնել: Զգուշութեան համար ես յաճախ բնակարան եւ անցադիր էի փոխում: Մի ժամանակ հասաւ որ բոլոր ընկերների անցադիրներն օդտագործել էի եւ պաշարս արդէն սպառւած էր: Ի՞նչ անել: Երբ մի օր այս մասին խօսք արի Միշա Արդումանեանին, որ նոյնպէս «ուսանում» էր Պետերբուրգում, նա վրձնական շէշտով պատգամեց.

— Փա՛հ, անաշէն, Պապաչային գրիր: Ես էլ նրա անցադրով եմ ապրում:

Երկու շաբաթ չանցած արդէն գրպանումս ունէի Պապաչայի «պաշտօնատանից» դուրս եկած անցադիրը Գորիսի բնակիչ Լեւոն Մելիք-Ղարագէոզեանի անունով: Այնքա՛ն ներկայանայի, պատկառելի արտաքինով, լաւ գրւած կնիքներով, մշտական ու կանոնաւոր անցադիր էր, որ մեր տան դռնապանը առանձին հաճոյախօսութիւն չբռայլեց Գորիսի պաշտօնատան քարտուղարի հասցէին: Աչխարհում

ի հարկէ, Լեւոն Մելիք-Ղարագէոզեան անունով մարդ զոյութիւն չունէր, եւ անցադրի հեղինակը Հ. Յ. Դ. Ոսկանապատի կենտր. կոմիտէի անդամ Զովորեանն էր: Այդ անցադրով ես ապրեցի Պետերբուրգում գրեթէ մէկ ամբողջ տարի: Եւ ո՞վ չի ապրել Պապաչայի պատրաստած անցադիրներով:



1908 թ. ամառը Բալախանիում Ռայոնական Ժողով ունէինք: Ժողովի վերջին նիստում ընտրել էր մի յանձնաժողով արձանա-գրութիւնները վաւերացնելու եւ առկախ մնացած խնդիրները կարգադրելու համար: Արձանագրութիւնների մէջ կային խիստ վտանգաւոր բանաձեւեր — ահաբեկում, էքս եւ այլն: Եթէ մէկի ձեռքին բռնէին՝ վերջը շատ վատ կը լինէր . . .

Ամառուայ մի օթ օր էր. Յանձնաժողովը Պապաչայի սենեակում նոր էր վերջացրել աշխատանքը: Յանձնաժողովի անդամ Ա. Գիւլիսանդանեանը տարածւած գորգի վրա հանգստանում էր, Պապաչան նստած էր գրասեղանի մօտ: Ես էլ ընկել էի մահճ սկալի վրա, արձանագրութիւններն էլ՝ բարձիս տակ:

Մէկ էլ՝ թա՛խկ, թա՛խկ, թա՛խկ ծեծեցին եւ անմիջապէս բաց արին դուռը: Ծէմքի վրա երեսաց ժանդարմական սպան՝ շրջապատւած ոստիկաններով:

— Այտե՛ղ է Լեւոն Իվանովիչ Թադէոսեանը . . .

Մէկ ակնթարթ միայն: Ա. Գիւլիսանդանեանը անմիջապէս թրուաւ կողքի սենեակը: Ես բնադէպէն վերցրի բարձի տակի կապոցը, գրի թելիս տակ ու ծլկեցի դուրս: Դրան մօտ, անզգուշութեամբ հրեցի սպային ու «ներողութիւն» ասելով՝ սուսջ անցայ: Սպան յանկարծակիի եկած՝ մի կողմ քաշուեց, ոստիկանները ճանապարհ բաց արին ու դուրսը սպասող բանուր ընկերները թոցրին ձեռքիցս արձանագրութիւնները եւ ինձ էլ կասք նստեցնելով՝ տարին ԲԺ. Յ. Զաւրեանի մօտ . . .

Այդ ամբողջ ժամանակ Պապաչան հանդիստ կանգնել էր սեղանի մօտ եւ ակնոցի տակից հանդարտ հետեւում էր կատարւածին:

— Ո՞վ են այդ պարոնները, հարցնում է նրան սպան:

— Մեր ծառայողները, պատասխանում է Պապաչան: Տեսէ՛ք՝ նրանց գլխարկն ու հագուստն էլ մնացել է:

Եւ, իրօք, մենք հեռացել էինք գլխարայ ու կէս հագնւած:

— Ա՛յ, շա՛ն տղերք, կատակում էր նա յետոյ, համա կախաղանի վրա կը ճօճէիք, եթէ ճանկերն ընկնէիք:

Փարիզ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱՍՈՐԵԱՆ

ԱՐՅԱԻՐՔԻ ՕՐԵՐ

III

ԴԵՊԻ «ՆԵՐՔԻՆ ԳԱՒԱՌՆԵՐԸ»

Սարբի-Բէյն ու փոլիսները ինձ տարին դէպի շուկայ: Թաղի գլխաւոր փողոցում վերէն-վար կենդանի շունչ չկար: Տէր-Գարեգիննի մեծ տունը փակ էր, վարադուրները՝ քաշւած: Վարը, աջ կողմից Պաշիկեանների տան մէջ մարդ չկար: Աւելի վար, փողոցի անկիւնում փաստածի Արմէնակի փոքրիկ խանութը, ուր սովորաբար պարսից հիւպատոսի դաւադը Ռուսաստանի հզօրութեան դովքն էր անում եւ պարտքով խմորեղէններ ուտում, փակ էր: Լուս ու մունջ, Սարբի-Բէյի հետ կողք-կողքի իջանք շուկայ, ապա նա յետ մնաց: Այստեղ, այնտեղ տեսարանների սիրահար թիւրք մանրավաճառները, դուրս ցատկելով խանութներից, բացազանչում էին.

— Տե՛ս, տե՛ս, տե՛ս, գլխարկաւորին բռնել են:

Փոլիսները ինձ առաջնորդեցին դէպի քաղաքապետարան: Սամսոնի ամենամեծ եւ ամենազեղեցիկ շէնքն էր այդ. կառուցումը կատարել էր վերջին երկու-երեք տարիների ընթացքում եւ դեռ ներսի աշխատանքները չէին վերջացել: Անհրապոյց շրջապատի մէջ այդ շէնքը գրաւում էր բոլոր ճամբորդների ուշադրութիւնը: Այժմ դարձել էր հայկական թաղի արու բնակչութեան բանտը:

Արեւը արդէն մայր էր մտել, երբ ինձ ներս առին Քաղաքապետարան: Նստած շէնքը կարծես թէ տնքում էր բանտարկեալների ծանրութիւնից: Յարկից-յարկ, միջանցքի դռների, պատուհանների մօտ խմբուած քրտնաթոր բազմութիւնը անհամբեր հետաքրքրութեամբ նայում էր: Եւ մազմաթիւ, իրար ընդմիջող ձայներ.

- Միւսի՛ւն, Միւսի՛ւն . . .
- Մարմնամարդի միւսի՛ւն . . .
- Միւսի՛ւ, միւսի՛ւ . . .
- Պարո՛ն Վահան . . .
- Մերոնց տեսա՞ք . . .

Երբորդ յարկի դուռը բացին ու ներս մտայ: Առջիւս բացեց մի մեծ սրահ, որ բռնւած էր ամբողջութեամբ. մարդիկ խումբ-խումբ կանգնած, նստած համատարած ու միակերպ խօսում էին.

— «Խըրըւըրը՛ւըրը» . . .

Դունից դէպի ներս մի արագ շարժելի յաջորդեց մեռելային լուսթիւն: Ապա, յանկարծ, մարդիկ միաժամանակ սկսեցին հարցեր տալ: Եղած անստուգութիւնների դիմաց, հապճեպով տւած տեղեկութիւններս, իրենց բոլոր դառնութեամբ, այնուամենայնիւ, կերեւի ի՛նչ, հանդստացուցիչ էին.

- Ողջ են . . .
- Ողջ են . . .
- Տեսել եմ . . .
- Չեն թրքացել . . .
- Չի եղել . . .
- Չեն դնացել . . .
- Ոչ ոքի . . .
- Ծախում են . . .
- Պատրաստում են . . .
- Հանդիստ է . . .

Ու, յանկարծ, դէմ-դիմաց օդը ճեղքեց մի սուր ձայն.

— Սո՛ւտ է, սո՛ւտ է, մի՛ հաւատաք առոր: Ելէ՛ք, ջարդեցէ՛ք, փշրեցէ՛ք, փշրեցէ՛ք դուռները . . . Ո՞ւր են ձեր չլուխչոճուխները . . . ո՞ւր են ապրանքները, ուղտերը . . .

Մարդու մէկը ուզեց նրան հանդստացնել, բայց նա բոլոր ուժով պոռաց.

— Ի՞նչ . . . գողացւա՞ծ են, ի՛նչ է, թուղթեր կան, թուղթե՛ր . . .

Խենթ էր, կամ խենթացել էր: Դրան պահակը ներս մտաւ ու շիփ-շիտակ մօտեցաւ խենթին: Խենթը շտկեց, բարեւ տւեց եւ ինքնափստահ ասաց.

— Վճարած եմ, կը հաստատեմ, թուղթեր կան, խնայեցէ՛ք, յետ տէք ապրանքներս, թոյլ տէք մեկնիմ, կեանքս մէջ բանտի երես տեսած չեմ . . .

— Դարձեալ սկսեցի՞ր, — հանդարտութեամբ ասաց պահակը, — եթէ այդպէս է, քեզ հանդստացնելու միջոց կայ:

Խենթը մէկէնիմէկ սմբեց: Ապա քսակը հանեց եւ մի քանի մանր դրամներ մեկնեց պահակին.

— Հաւատացէք, որ մօտս աւելի դրամ չունիմ . . . վաղը . . . վաղը կը տեսնուինք . . .

Ու գաղտագողի ժպտալով, աչք թարթեց: Ապա հանդարտութեամբ դրամն ու քսակը գրպանը դնելով սկսեց պրպտել միւս գրպանը: Յանկարծ, գունատեց ու սկսեց ձմել ծոցի գրպանները, եւ, կատարեալ յուսահատութեան մատնած՝ արագ — արագ սկսեց պրպտել նորից մէկ, միւս, երրորդ, չորրորդ գրպանը ու լաց եղաւ:

- Ի՞նչ ես փնտռում:
- Բառլաման, բառլաման (ապրանքագիր):
- Հնարամիտ պահակը մի թուղթ հանեց գրպանից եւ ասաց.
- Բառլաման ինձ մօտ է, դնանք:
- Խենթը առաւ թուղթը, արագութեամբ գրպանը դրաւ.
- Ուղտերը պատրաստ են:
- Շատո՞նց, դնանք:

Խենթը կոճկեց հագուստը, Ֆէսը շտկեց ու դիմեց դէպի դուռ: Մի վայրկեան կանգ առաւ. ապա փնտռեց, փնտե՛ց նորից բոլոր գրպանները, գտաւ թուղթը, մատները թրջեց, բացեց ու առանց նայելու պահակի յետեւից դուրս ելաւ: Դահլիճում մի պահ լուսթիւն տիրեց, ապա սկսեց նոյն խուլ ու համատարած խօսակցութիւնը.

— «ԽԵՐԵՐԵՐԵՐԵՐԵՐ» . . .

**

Որքան մարդ կար այդ յարկում, դժւարանում եմ յիշել. երեւի մօտ 250 հոգի էին բոլորը: Մեծ սրահի մէջ խմբւած էին այնպէս, որ չարժեւելու տեղ չկար. սրահի աջ եւ ձախ կողմերին եղած 5-6 սենեակներում աւելի նօսր էին տեղաւորւած: Մօտ ծանօթներից շատ քիչ մարդ կար այդ յարկում եւ յիշողութեանս մէջ մնացել են միայն Խերեանը, Եղիլեանը, Հաջին:

Տեղ-տեղ մարդիկ պատերի տակ կծկտած բոլորովին անտարբեր էին անցողւարձերին եւ ոչ միայն չէին խօսում, այլ, կարծես, չէին էլ լսում: Բայց հասարակութեան սոււար մասը անցողւարձ էր անում, կանգ առնում, ականջ կախում, հարցնում, դառնում, պտոյտ դորդրաղեցնում էր մէկ ինդիր. վէճ չկար: Բայց ինչոր իմ վրա ծանր ապաւորութիւն էր թողնում, այդ այն էր, որ ինչ խմբի էլ մօտենում էի անմիջապէս դադարում էր խօսակցութիւնը: Միակ մարդը որ իմ ներկայութեամբ չընդհատեց ասելիքը Մուրատիկ էֆ. Խերեանն էր.

— . . . Այնպէս չէ՞ . . . Ես, ի հարկէ, դիտեմ, որ գաղթը վտանգներ ունի եւ դիտեմ որ իմ աղջիկները . . . կարող են անպատել, բայց նրանք ինձ համար սուրբի հաւասար մաքուր կը լինեն . . . Այնպէս չէ՞ . . .

Մուրատիկ էֆէնտի կարկամած դէմքին մի ծուռ ժպիտ կար, եւ ոմանք նրան գլխով հաւանութեան նշան արին:

— Ես չեմ կարող, թէկուզ ձեւի համար, այնպիսի քայլ անել, որ յետոյ իմ դաւակները ասեն, թէ մեր հայրը թրքացաւ . . . Ի՞նչ կասէք . . .

Խմբի մէջ լուսթիւնը ոչ ոք չընդհատեց:

— Ես, ի հարկէ, խրամութիւնը յարգում եմ ոչ նուզ, քան որ եւ է այլ կրօն, բայց կարծում եմ, որ լաւ է մնալ այն, ինչ տնօրինել է ճակատգիրը, այնպէս չէ՞ . . .

Մարդիկ քիչ-քիչ հեռանում էին Խերեանից: Պատ՛ տակ քաշուցի եւ ես: Աղօտ կերպով հասկանում էի մարդկանց յուզող հարցերը եւ զնալով աւելի ու աւելի ընկճւում էի: Այդ նոյն վայրկեանին, Հաջին իր երկար հասակով, անդորր ու խաղաղ դէմքով, առջեւս ցցւեց: Մի լաւ զննելով ինձ, տեղ բռնեց մօտս:

— Յոգնած ես, Վահան էֆէնտի, պէտք է բան մը ուտես, կաղ-դուրիս. դեռ շատ քաշելիք ունինք, մօտդ դրամ կա՞յ . . . Ուրեմն լաւ է, պէտք է դուրսէն բան մը գնել . . . Բայց հիմա ուշ է, ըս-պասիր:

Ու զնաց: Քիչ յետոյ վերադարձաւ մի կտոր հաց ու պանիր ձեռքին:

— Շատ ընկճւած կերեւաւ, Վահան էֆէնտի: Բոլոր սարսափները, որոնց մասին կը խօսին, շատ հաւանական է մեզի ալ բաժին ընկնեն: Արդէն, ինչպէս գիտես, Տիրոջ ուսմունքը չարչարանքի կրթօն է. «ով կողգէ հետեւիլ ինձ թո՛ղ ձեռք քաշէ իր անձէն եւ իր խաչը առնելով քայլէ», ըսած է Ան: Ու հիմա ամէն մարդ պէտք է «քայլէ» եւ իր ինչ ըլլալը ցոյց տայ: Բայց, դժբախտաբար, վատ է մարդիկ քիչ-քիչ կընկճւին ու կը փոխուին:

Հաջին մոռայւեց, գլուխը թեքեց կրծքին եւ աւելի մօտ նստելով՝ շարունակեց.

— Ոմանք կուզեն թրքանալ, ա՛յս է ամենամեծ դժբախտութիւնը: Առաւօտեան Բեքիր փաշան մարդ է ճամբած եւ խորհուրդ տրւած է թրքանալ: Ոմանք կը պնդեն, որ, իբր Նէջմի-Բէյը ըսած է, թէ Սամսունի հայերը յանցանք չունին եւ եթէ թրքանան, կը մնան: Բայց, Վահան էֆէնտի, հաւատը ուրանալէ ետքը ալ կեանքը ի՞նչ արժէք ունի:

Եւ յանկարծ զւարթացած՝ շարունակեց .

— Երէկ, վարի յարկը, ծանօթ, բարեկամ թիւրքեր են եկած, խօսած, պնդած են, որ թուրքանան, խոստացած են թուրքացողները ազատել տալ: Բայց, մէկ-երկու տատանողներէն զատ, ո եւ է համաձայնող չեն դատած: Ասոնք ալ ժամանակ խնդրած են կիները համողելու: Գուշումճեանի կինը ուտելիք է բերած եւ ստած է. «Եթէ թուրքանաս եւ այդ տեղէն դուրս դաս, գիշերը քեզ եռացած ջուրով կը խաշեմ»: Հիմա կըսէ, թէ միտք չունի թուրքանալու: Մարդ հարցնէ. ա՛յ, անհաւատ, ո՞ւր էր խելքդ առաջ:

— Ովքե՞ր են ուզում թրքանալ:

— Կան, բայց կըսեն՝ ամենքս միասին թրքանանք. ե՞ս, Հաջին . . .

Մութը վրա հասաւ աննկատելի կերպով եւ անցուղարձը նւագեց: Այտեղ, այնտեղ յայտնուում էին ինչոր մարդիկ, որոնք պատուհանների եզրերին դնում էին ճրագներ: Սուերի տակ մարդկանց դէմքերը դունատ ու տարօրինակ կերպով պրկւած էին: Դիմացը նստած մարդկանց սլալացող աչքերը, կարծես, դուրս պիտի ցատկէին բիրտից: Մութը նրանց մղում էր ինքնամիտիման: Պատերի ուղղութեամբ խառնիխառն մարդիկ նախապէս չորում եւ ապա ճշդելով իրենց տեղը՝ պառկում էին: Բայց բազմութեան սուտար մասը խումբ-խումբ նստած, գլուխ-գլխի մըմնջում էր դեռ . . .

**

Չորրորդ գիշերն էր ինչ չէի կարողանում աչք փակել: Բայց եթէ մինչեւ այդ բոլորովին աննկատելի էին հետեւանքները, այժմ արդէն զգում էի, որ դրութիւնս վատ է: Մարմինս կրտիկ պէս այրւում էր, կոկորդս ծակծկում, գլուխս սաստիկ ցաւում էր: Գիշերուայ ընթացքում Հաջին մէկ քանի անգամ մօտեցաւ, ջուր տեց, տեղափոխեց ինձ հարեւան սենեակի աւելի հանդիստ անկիւններից մէկը, ինչ որ տեղից մի բարձ ու վերմակ բերեց: Բայց այդ բոլորը օդուտ չունեցան: Գլխիս վերեւ նստած էր մի մարդ, որը լուսեան մէջ, համաչափութեամբ համբիչ էր դարձնում: Եւ համբիչի ամէն մի հատիկի միւսին դարձելը սոսկայի ուժով արձագանդում էր դանկիս տակ:

Առաւօտեան, մեծ սրահից արտասովոր իրարանցում հասաւ ազանջներիս. իսկոն ելալ ու ներս անցալ: Յունաց թաղից մի հայ էին բերել, որի թեւի տակ մի գիրք կար: Վառվուուն ու ժպտերես մի մարդ էր: «Մոխակ Հայաստանի» երգարանն էր: Ի՞նչու այդ նեղ

ժամին գիրքը մնացել էր թեւի տակ՝ չեմ յիշում: Բուռնցքը օդի մէջ ծածանելով, ինչոր բաներ էր ասում ու ժպտում: Այդ նոյն ժամին հասարակութեան մի մասը, բաց պատուհանների առջև լսմբած, սպասում էր թրքացածների քաղաքապետարանից դուրս դալուն: Մարդիկ այժմ աւելի սրտապնդւած ու զւարթ էին, քան գիշերը. վախը կարծես թէ անհետացել էր: Թրքացածների հասցէին լսում էին սրախօսութիւններ: Խմբւած մայթի վրա մի փոլիսի հսկողութեան տակ նրանք սպասում էին կարգադրութեան: Թէ ովքեր էին՝ չեմ յիշում: Պատուհանի եզրից վար թեքւած՝ աշխատում էի թիւը ճշտել, բայց չէր յաջողում: Երբ համրում էի, նրանք մանրանում բազմանում էին: Երբ փակում, բաց էի անում աչքերս, վերածուում էին լսմբակի: Երեւի 15-20 հոգի կը լինէին: Տարօրինակ կերպով կարճահասակ մարդիկ էին, կարծես թզուկներ լինէին:

Ահա բաղերի պէս օրօրելով նրանք դնացին, եւ մայթի վրա հաւաքւած թուրքերը ցրւեցին: Նոր միայն նկատեցի, որ շէնքը շատ բարձր է: Որով, եթէ, ասեմք թէ, մէկն ու մէկը իրեն վար նետի, ցեխի պէս մայթին կը փակչի:

Շէնքը կարծես թէ ճօճւում էր: Վար սահելով՝ նստայ պատուհանի տակ: Սրահի մէջ սաստկացել էր շարժումը: Ոմանք ծալում, կապում էին բարձ, վերմակ: Ոմանք ազահութեամբ հաց էին ուտում: Աջ ու ձախ լսելի էին հարցումներ, պատասխաններ՝ «ձերոնք դացե՞ր են», «Աստուած մեծ է, բան մը կը լինի», «ե՞րբ», «ծխախոտները լ՞նչ արիւր», «փակ են, փակ, բանալիները յանձնած են կառավարութեան» . . .

Կէսօրին մօտ, Քաղաքապետարանի դիմացի լայն հրապարակի վրայի սովորական աղմուկը դադարեց: Շէնքի դէմուդէմ, զիչ վերը, ոստիկանական բաժանմունքին կից եղած երկու սրճարանների գլմաց հաւաքեց ամբոխ: Մարդիկ նայում էին դէպի մեզ այնպիսի մի դիրքով, որ կարծես թէ ներսը հրդեհ կայ: Քիչ անցած հրապարակի վրա յայտնեցին մէկ երկու տասնեակ հետեւակ ու ձիաւոր ոստիկաններ, փողիսներ: Ապա երեւացին վարի յարկերում եղած հայերի հինգ-հինգ կաղմւած շարքերը: Նշանակում է, տանում են:

Հրապարակը դրեթէ ամբողջութեամբ բռնւած էր հայերով, երբ լուր տւին, որ դուրս դանք: Մէկ-երկու վայրկեան անորոշութիւն տիրեց, որին անմիջապէս յաջորդեց անապարանք եւ խուճապ: Մարդիկ կանգնած դողում էին եւ նրանց համար արժէք ունէր, թէ ով ում հետ է դուրս դալիս: Ես, Եղիլեանը եւ երեք վաճառականներ, սրանից միայն մէկի անունն է մնացել յիշողութեանս մէջ, վերջիններն էինք, որ թողեցինք Քաղաքապետարանը: Բակում մի քանի

փողիսներ մարդկանց համրում էին, շարք կազմում: Եւ, Աստուած իմ, որքա՛ն անվարժ էին շարք կազմելու մէջ իմ աննման մանչերի հայրերը: Կանգնում էին չորս-չորս, վեց-վեց, եօթ-եօթ, այնինչ պէտք էր հինգ-հինգ շարքել: Երկու հրամանով մէկ ակնթարթում մեր 300 աշակերտները կարող էին հնգեակներ կազմել. այստեղ անհասկացողութիւնը կատարեալ էր:

Երբ դուրս ելանք, ամբողջ հրապարակը եւ շուկայի մի մասը շարք-շարք բռնած էին հայերով: Մայրը ուր էր, յայտնի չէր: Կանգնած էինք դէմքով դէպի յունաց թաղ եւ սպասում շարժելու հրամանին: Այլ ու ձախ կողմերից յետ ու առաջ էին վազվզում քրտնաթոր, զբաղւած փողիսներ: Տեղ-տեղ անհամբերութեամբ տոփում էին ոտքերը հեծեալ ոստիկանների ձիերը:

Ամբոխը գնալով բազմանում էր: Սրճարաններից մէկի առջև աթոռները զգալի կերպով շատացել էին. նստած՝ համր դիտում էին մեզ քաղաքի թիւրք երեւելիները: Թիւրք երեսխաներ քայլ առ քայլ խախտում էին մեզանից բաժանող արգելւած դօտին եւ, բոլորովին մօտենալով, իրարու ինչոր փսփաւով, մատնանշում էին մեզ վրա: Դրանց համար, ըստ երեւոյթին, յատուկ հետաքրքրութիւն էր՝ ներկայացնում անձս, որովհետեւ ամէն անգամ, երբ աշակերտների հետ քաղաք էի իջնում նւագով, սրանք միշտ մեզ ուղեկցում էին ու շատ յաճախ գալիս մինչեւ Թոռամանի դաշտերը՝ մարմնամարզը դիտելու:

Վերջապէս, ինչոր խուզող ձայներ հասան մեզ՝ յետեւի շարքերում կանգնածներին: Ամբոխը տարուբերւեց: Պահակների շղթայի մէջ առնւած հայերի առաջին շարքերը շարժեցին: Անցանք շուկան: Երկու կողմերում խմբւած ամբոխը դիտում էր շարքերը այնպիսի մի հետաքրքրութեամբ, ինչպէս դիտում են խորհրդաւոր դէպքերը: Ոչ առեւտրութեան եւ ոչ էլ ցաւակցութեան նշան կար դէմքերին: Միայն մի քանի անգամ յետեւից լսեցի «չապկալի» բառը, որ ըստ երեւոյթին, վերաբերում էր ինձ, որովհետեւ շարքերի մէջ մի ուրիշ գլխարկաւոր մարդ չկար:

Սկսեց յունաց թաղը: Մեզ տանում էին նեղ, յետ ընկած փողոցներով: Այստեղ, մայիթերի վրա, դռների մօտ կանգնած էին բացառապէս կանայք: Սրանց սոււար մասը, քարացած, յուսարեկ օրօրում էր գլուխը: Յիշում եմ, որ մի կին ուղիղ դէմքիս նայելով՝ հեկեկաց, որ խիստ ծանր տպաւորութիւն թողեց վրաս: Զգացածս այն էր, որ եթէ լալիս է, ուրեմն, մեզ համար, որ այսպէս դնում ենք, լաւ չէ . . .

Հասանք քաղաքի ծայրին եւ սկսեցինք վեր բարձրանալ յունական Կատը-Քէոյի ուղղութեամբ: Երեք-չորս օրւայ ապրումներից, անքնութիւնից ջարդւած՝ մարդիկ հազիւ հազ էին մագլցում: Երկար անկանոն շարքը յետեւից նման էր մի առասպելական սողունի, որ գլուխը վեր առած յամբօրէն ու աննպատակ շարժւում էր:

Կատը-Քէոյի չըջանում մեզ սպասում էին հարիւրից աւելի մեծ ու փոքր սայլեր, որոնց մօտ եւ կանգ առինք: Մեր առաջնորդները դանդաղում էին, թէ ինչո՞ւ, չգիտեմ: Մի անյայտ երիտասարդ առիթից օգուտեց եւ փախաւ. ըստ երեւոյթին, լաւ գիտէր չըջանը եւ փախաւ այնպիսի խորտուբորտ փոսերով եւ բլուրներով, որ հետապնդողները բաւականաչափ յետ մնացին, իսկ նա յունաց թաղ մտաւ եւ անհետացաւ: Այս դէպքի հետեւանքով հսկողութիւնը խլատացաւ:

Վերջապէս, եկաւ դաղտնի ոստիկանութեան պետ Նուրի-Բէյը, որին յանձնւած էր տեղահանութեան ղեկավարութիւնը: Նա անցաւ արտորականների շարքերը, տեղ-տեղ կանգ առաւ, խօսեց, մօտեցաւ նաեւ ինձ, դիտեց, անցաւ, յետ դարձաւ: Քիչ յետոյ կարգադրեց նստել սայլերը: Դժուար թէ ես կեանքիս մէջ երբեւիցէ արտայայտած լինեմ այնքան անճարակութիւն, որքան այս դէպքում: Զգիտէի, թէ լինեմ այնքան անճարակութիւն, որոնք հետ կարող եմ ընկերանալ: Անտեղեակ դալիք պատուհասի չափերին, միշտ մտածում էի, որ իմ ընկերակցութիւնը սրան կամ նրան կարողէ վնասել: Վերջապէս, երկու ծանօթ վաճառականներ ձայն տւին: Սայլերի մէջ տեղաւորւում էին հինգից տասը մարդ: Ուշադրութիւն էին դրաւում սայլապանները, որոնք բնաւ նման չէին թիւրք անտարբեր, սակաւախօս սայլապաններին: Նրանք անընդհատ հոհում էին, կոշտ ու կոպիտ կատակներ անում իրար հետ, առնում նետում էին կառապաններից սրա կամ նրա Փէսը, աքացիով անսպասելի հարւած տալիս մէկին կամ միւսին:

Սայլերը շարժեցին: Պահակներից մնացին միայն հեծեալները: Քաղաքապետարանից դուրս գալուց ի վեր գլխացաւս զգալիօրէն մեղմացել էր: Այժմ սայլի ցնցումներից ցաւը նորից սաստկանում էր: Քառորդ ժամ չանցած, լայն խճուղու վրա սայլապանները սկսեցին մի կատարեալ արշաւ: Անիւների դղրդոցը, սայլերի շղթաների շիկշիկոցը, կառապանների հարայհրոցը ազդում էին գլխիս այնպիսի ուժով, որ կարծես թէ ծակծկում էին ուղեղս: Երբեք չկարողացայ հասկանալ թէ ինչ բան էր այդ, բայց դա մի սարսափելի հիւանդութիւն էր: Քիչ անցած գլխացաւս հասաւ այնպիսի աստիճանի, որ այլեւս դիմանալու ուժ չկար. բառիս բուն առումով կարծես

քրքրում էր ուղեղս: Միև կողմից սայլերի արշւը գնալով սաստկանում էր: Վերջին մի ճիգ կատարեցի նստած տեղս փոխելու, բայց աւելի վատ եղաւ: Յաւից դրեթէ ուշաթափւած էի, երբ, յանկարծ սայլերը իրարու զարնելով կանգ առին: Սայլապանները ոչ միայն չգլխախնայեցին իրենց գործը, այլ եւ չէին ճանաչում ճանապարհը. նրանք հայհոյում էին իրար, թէ ինչու առաջին սայլերը կանգ առին: Պարզեց, որ առջեւում աղբիւր կայ, եւ ճամբորդները սուլօրաբար կանգ են առնում այդտեղ՝ ջրից օգտւելու համար: Մէկի օգնութեամբ վար իջայ սայլից. ջուրը բաւականաչափ օղնեց: Հակառակ վիճակիս, աղբիւրը անմիջապէս ճանաչեցի, այստեղ ես եղել էի վերի դասարանների աշակերտութեան սկստական խմբերի հետ:

Այդտեղից մեզ թոյլ տւին մօտ կէս ժամ ոտքով գնալ, ինչոր փրկութիւն եղաւ ինձ համար: Գայլում էինք լուռ, դատ-զատ, խրմբերով, խառնխուռն: Հեծեալ պահակները փրփրած ձիերով յետ ու առաջ էին գնում: Դրանցից մէկը քիչ մնաց ինձ ձիու ոտքերի տակ ձմլէր, եւ բոլորովին անսպասելի կերպով ինձ մէկ կողմ հրեց Մըկրտիչ Հէքիմեանը:

Քիչ յետոյ հրամայեցին նստել սայլերը եւ իր դըրդոցով, հարայհրոցներով նորից սկսեց արշւը: Որքան էլ աշխատում էի ինձ պահել, բայց քիչ-քիչ ընկնում էի նախկին դրութեան մէջ: Սակայն, սայլերը նորից կանգ առին. այս անգամ ճանապարհը բռնւած էր: Մեր առջեւից գնում էին շարժամբայիները: Ճանապարհը այս մասում բաւական նեղ էր եւ հեծեալ պահակները գոռում-գոչելւններով ճամբայ էին բաց անում սայլերի համար: Մեծ, փոքր, կին, երեխայ հաւասարապէս փոշու մէջ խրւած քայլում էին: Ոմանք իրենց հետ կապոցներ ունէին, ոմանք քաշում էին վերմակներով, բեռներով բարձած կով, եղ, այծ: Ոտաւորների շարքերը գնալով նօսրանում էին: Ճանապարհի երկու կողմերում շարւած, նրանք քարացած դիտում էին անցնող սայլերը: Ոմանք բացազանչում էին, ոմանք ձեռք էին մեկնում ծանօթներին. կանայք պինդ դրկած ծծկեր մանկանց՝ յուսարեկ օրօրում էին դուլխները: Մէկը դիմացի բլուրի վրա կանգնած ահնապիչ դիտում էր յատկապէս մեր սայլը. ամասիացի Գեր-Մելքոնն էր, Հ. Յ. Դաշնակցութեան Վանիկի Կ. Կոմիտէի անդամներից մէկը. ձեռքը կիսով չափ բարձրացրած, քարացած ու լայն բացած աչքերով՝ նման էր փոշիով պարուրւած արձանի. խօսք էր ուզում ասել, բայց արդէն սայլերը արշւում էին: Մեզ Չարժամբայի քաղաքացիներից բաժանում էին փոշու թանձր ամպեր . . .

**

Երբ էինք հասել Չախալի՝ չգիտեմ: Արդէն վաղուց դէպքերի ու ժամանակի կապը կորցրել էի: Բացի այդ, ինչպէս ասում էին, Չախալիում, առաջին երկու օրւայ ընթացքում, կորցրել եմ տեսածս զգալու, հասկանալու, ճանաչելու կարողութիւններս: Բայց ամենայն յատկութեամբ յիշում եմ, թէ ինչպէս ինձ նորից դտայ: Կարծես թէ երազիս մէջ ինձ հետ խօսում էր մի ձայն.

— Լաւ նայեցէք, յոյն է, ա՛յ, ձեր դիմացը նստած է, նոր է եկած քաղաքէն, ոչի՛նչ, ոչինչ չէ պատահած, կանանց, երեխաներու մեծ մասը արդէն հասած է Չախալի, մնացածներն ալ կուգան, կը լսէ՞ք, միւսիւ Վահան, ո՞վ եմ ես, տէ՛, ելէ՛ք, նայեցէք, յոյնը նոր է եկած քաղաքէն . . .

Դիմացս նստած էր մի յոյն դիւղացի, իսկ գլխիս վերեւ չոքած խօսում էր Մուրատիկ էֆ. Խերեանը: Քիչ անդին նստած էին Յակոբ Գալստեանը, Նշանը, Գալուստը: Անդին՝ մի քանի կանայք, երեխաներ: Ես պառկած էի մի փոքրիկ սենեակի յատակին փուած գորգի վրա: Յոյնը սկսեց պատմել այն, ինչ ասում էր Խերեանը: Դժուարութեամբ սկսում էի հաշիւ տալ ինձ, երբ, յանկարծ, դրսից օդը ձեղքեց մի սուր ձայն, սարսափով համակելով ինձ.

— Է՛յ, հլէ-հլէ՛, լօ-լօ, օ՛Փ . . . Է՛յ, հլէ-հլէ՛, լօ-լօ, օ՛Փ . . .
 — Մի՛, մի՛, մի վախենաք, խենթն է, ամասիացի վաճառականը, — վրա բերեց Խերեանը, — է՛ն, որ Բելեդիէի մէջ խենթացաւ: Տարօրինակ երգը նորից կրկնեց աւելի ուժգին ու ցաւաղին:
 — Միւսի՛ւ Վահան, կը յիշէ՛ք էն, որ փոլիսի հետ դուրս գնաց, որի ապրանքները խլած եւ իրեն բերած էին մեզ մօտ:
 — Այո՛ . . .

Երգը այժմ նման էր պարզապէս սպանդանոցում մորթւող անասունի բառաջի: Խենթի ճիչերը մտնում էին ուղեղիս ծալքերը, սարսուռով համակելով մարմինս: Ի՛նչ ահեղ բան է այս պարագաներում խենթեանալը . . .

Յակոբն ու Նշանը ինձ առաջնորդում են ջրհորի մօտ եւ դոյլով ջուր թափում գլխիս: Խենթը «երգը» ընդհատեց, պիչ-պիչ նայեց ինձ, ապա, մօտենալով Յակոբին, ցուցամատը երկարեց դէպի ինձ ու խկոյն յուզւած ասաց.

— Դա էր, որ տարաւ եւ պահեց եղեւնիներու մէջ . . .


Աղօտ կերպով յիշում եմ, որ մի քարւանսարայի ընդարձակ բակում, ձախ կողմից տարածւած երկյարկանի շէնքում եւ բակի խորքում եղած ախոռների մէջ արգիլափակւած էր Սամսոնի հասա-

րակութեան մի մասը: Փողոցի կիսարաց դրան մօտ կանգնած էր մի հրացանակիր ժանտարմ:

Խենթը, սլաալ տակ նստած, գլուխը վեր, ձեռքի մէկը աշտին, նորից սկսել էր իր «երգը», երբ անցայ: Նա, ինձ տեսնելով մէկէնիւմէկ սմբեց, ամբողջ հաստիով պատն ի վեր երկարեց ու քարացած մնաց: Մտրտուող ցնցեց երակներս: Հազիւ ինձ նորից վեր էին տալել ու մենայն թողել սենեակում, ուր սլառկած էի քիչ առաջ, երբ նեցս մտաւ կապտանեանը: Ասում էր, որ հէնց հիմա եկաւ եւ ինչոր բաներ էր պատմում: Յիշեցի փոքրերին, կնոջը, մօրը, պարտէզը, փողոցը, դպրոցը, Սամսոնը, բայց թէ եկել էր, չէր եկել իմ այդ մտերիմ ընկերը՝ ինձ համար հաւասարապէս միեւնոյնն էր: Նրա խօսելու ժամանակ, յանկարծ նկատեցի, որ ժիւլետի գրպանից կիսով չափ դուրս է ընկել սեւ հեղուկով լեցւած մի փոքրիկ դլանածեւ սրւակ: Ես դուրս քաշեցի սրւակը եւ գրպանս նետեցի: Նա ինձ ամենայն հանդարտութեամբ հաւատացնում էր, որ կոշտի դեղ է եւ առել է իր հետ այն հաշուով, թէ ճանապարհին կարող է պէտք դալ: Բայց սրւակը, որի մասին, ի դէպ, քիչ յետոյ իսպառ մոռացայ, մընաց մօտս:

Խենթը նորից սկսել էր իր «երգը», երբ կապտանեանը դուրս գնաց: Արդէն մոռացել էի նրա ներկայութիւնը եւ ուշի ուշով լսում էի խենթին: Այժմ նա իր «լէլէ»-ները երկարում էր այնպիսի հեծկլտոցներով, որոնք շատ նման էին հնդկահաւի պոռթկումներին:

Յանկարծ, ինձ մի միտք համակեց - փախչել: Ո՞ւր, ինչո՞ւ, ինչպէ՞ս՝ չգիտէի: Փախչել: Ելայ տեղիցս: Գաղափարով ծանրաբեւեռած էութիւնս իմաստ առաւ: Փախչել: Վար իջայ այնպէս, որ, իբր թէ, բոլորովին բան չկայ: Բակի մէջ մօտ ծանօթներից ինձ ոչ ոք չնկատեց: Խենթը, ինձ տեսնելով, աչքերը չռեց, ձեռքը դէմքից դէպի վեր տարաւ, երկարեց պատն ի վեր եւ բերանը բաց կանգնած մնաց: Խենթից դէպի վար, դրան մօտ կանգնած էին վերջին դասարանի երեք-չորս աշակերտներ: Ես մօտեցայ դրան: Տեսայ, որ ժանտարմը, հրացանը գրկած, դէպի ձախ կանգնած, ծխախոտ էր փաթաթում: Յանկարծ, դուրս նետեցի եւ հակառակ ուղղութեամբ, դէպի վար վազեցի: Միաժամանակ իրարանցման ձայներ հասան սկանջիս: Բաւականաչափ հեռացել էի քարւանտարայից, երբ, ինչ անելս չիմանալով, կանգ առի: Խճուղու այդ մասում, յանկարծ, նրկատեցի կամուրջի յատուկ քարէ պատնէշներ: Վազեցի դէպի այդ պատնէշներից մէկի ծայրը: Վարը տարածւում էր մի լայն, բայց աննշան խորութիւն: Այդ նոյն վայրկեանին մէկը ամուր թեւիցս բռնեց ու յետ քաշեց: Տիգրան Քիւրքճեանն էր, Ջանեցի Հ. Յ. Դաշ-



ՅԳՎԻՃԻՄԱ ՎԱԿԳՏՅԱՅԻՆՉԻ ՎՈՐՈՒՄՔՈՒՆՎՈՒՆՎՈՒՄ ԿՈՐՈՒՄՔՈՒՆՎՈՒՆՎՈՒՄ

նակցութեան կեդր. կոմիտէի դուրսը մնացած երրորդ անգամը: Շատ վաղուց էի տեսել նրան եւ այդ վայրկեանին, որտեղից լոյս ընկաւ՝ չգիտեմ: Գրեթէ միաժամանակ մեր գլխի վերեւ ցցւեց մի ձիաւոր ոստիկան, որ սպանակիքներով պահանջում էր յետ դառնալ: Չեմ յիշում, թէ ինչպէս Գիւրգճեանը մեղմեց այդ ոստիկանի բարկութիւնը եւ յաջողեցաւ ինձ իր հետ վար տանել: Քիչ վարը, մի այլ քարւանսարայի դրան մօտ կանգնած էին մի քանի հայեր, որոնց թուում նաեւ Պարունակ Գէորգիանը: Գիւրգճեանը ինձ յանձնեց նրան, իսկ թէ ինքը ինչ եղաւ՝ չեմ յիշում:

**

Չախալին ընկած է ներքին դաւառները տանող բանուկ ճանապարհի վրա, Սամսոնից մօտ 30 քիլոմետր դէպի հարաւ: Նա տարածւած է Կաւախի բլուրների ստորոտներում եւ մեծ ճանապարհի վրա երկարում է մի նեղ հովտի մէջ: Բաղկացած է բացառապէս ընդարձակ հին ու նոր քարւանսարաներից եւ այդ կարգի շէնքերից: Զօրակոչի հետեւանքով այդ բոլոր շէնքերը բռնւած էին նորակոչներով: Այժմ նրանց մէջ արդէլափակւած էր Սամսոնից տեղահանւած հայութիւնը:

Նոր քարւանսարայում մէկէն ի մէկ ինձ համակած սարսափը շքացաւ: Յայտնելիս ուրախութիւն պատճառեց ծանօթներին, որովհետեւ հիւանդութեանս մասին տարածւած լուրերը հասել էին այստեղ խիստ շափաղանցւած ձեւով: Յատկապէս ուրախ էր Պարունակի եղբայրը, փոքրիկ Տիգրանը: Հաղիւ 11 տարեկան այս մանչը, որ դըպրոցի երրորդ դասարանի աշակերտներից էր, առաջին մէկ օրից, մի առանձին քնքշութեամբ կապւած էր ինձ հետ: Վարքով խիստ չար, խաղերի մէջ հնարամիտ՝ Տիգրանիկը բացարձակապէս ճշմարտախօս եւ անսահմանօրէն բարի, զգայուն երեխայ էր: Երրորդ դասարանի մէջ անցնող իրադարձութիւնները միշտ որ եւ է՝ կապ էին ունենում նրա հետ: Այնպէս որ, երբ մտնում էի դասարան ու հարցնում՝ «Տիգրան, ի՞նչ անկարգութիւն է այս», նա սրտապատառ ասում էր՝ «Միւսի՛ւ, ես էի, ե՛ս, մտքէս, յանկարծ, ելաւ, պատժեցէք»: Բայց լինում էին դէպքեր, երբ աչքերը լայն բացած ասում էր՝ «Միւսի՛ւ, կաղաչեմ, մի բարկանաք, գիտեմ, թէ ով ըրաւ, բայց չեմ կրնար ըսել»: Հակառակ իր բոլոր ժրութեան, Տիգրանի դէմքը թախծոտ էր: Իսկ ինչոր նրա յատկանիշն էր կազմում, այդ այն էր, որ բոլոր ուսուցիչների հետ հաստատել էր «ընկերական» յարաբերութիւններ եւ փաստօրէն ուսուցիչներին աշակերտներից տարբերում էր «իրաւունքի եւ պարտականութեան» ինչոր բնազդական ըմ-

բանումով: Նրա խոշոր ու թախծոտ աչքերը դէմքին տալիս էին շատ ապրած ու, յանկարծ, մանկացած մարդու դէմքի արտայայտութիւն: Դպրոցում նա ինձ միշտ յոգնեցնում էր անվերջ բարեւներով ու հարցումներով, այնպէս որ յաճախ համբերութիւնս հատնում էր: Այժմ նա միայն մէկ հարցում արաւ — միշտ իրենց հե՞տ պիտի մնամ, թէ ուրիշ տեղ պէտք է դնամ:

Նոր քարւանսարայում հասարակութիւնը, կարծես թէ, աւելի նոսր էր, բայց եւ այնպէս ընդհանուր դումարը երեւի երեք-չորս հարիւրից պակաս չէր: Այստեղ էր նաեւ առաջնորդը, Յաղլիեանը: Ընդարձակ բակի ձախ կողմից երկարում էր անկիւնաձեւ շէնքը՝ բաղկացած մի շարք մեծ ու փոքր սենեակներից: Շէնքը ներսից ունէր բաւական լայն, անկիւնաձեւ, դեռնից քիչ վեր, պատշգամբ: Շէնքի մէկ պատը երկարում էր այնպէս, որ դիմացի պատի հետ կազմում էր նեղ անցք, դէպի փողոց: Ընդհանրապէս այս շէնքը աւելի շատ նման էր հանրակացարանի, քան քարւանսարայի: Սենեակները, պատշգամբը եւ նոյնիսկ յարակից շէնքերը համեմատաբար նոր եւ մաքուր էին: Բակում ջրհոր կար: Դարպասի դէմ առ դէմ կային ախոռներ, փայտարաններ, որոնք այժմ լեցած էին մարդկանցով: Շէնքի երկարութեամբ, պատշգամբի սիւներից կապւած էր զուգահեռ պարան, որի վրա շինել էին մսուրի պէս երկար հաւաքական օրօրոց՝ ծծկեր երեխաների համար: Մէկ մայրը հասնում էր մի քանի փոքրիկների, իսկ ուրիշները դրադւած էին ջրի, ուտելիքի, մաքրութեան եւ այլ հոգսերով: Յ-Ա տարիքից վեր փոքրերը յանձնւած էին մեծերի կամ հայրերի խնամքին: Սրանք պատերի տակ շարւած, օրօրոցի երկարութեամբ կանգնած, մի-մի կտոր հաց բոների մէջ սեղմած, հետաքրքրութեամբ դիտում էին անցողւարձը: Տղամարդկանց մեծ մասը խմբւած էր պատշգամբում, բակի անկիւններում, ինչպէս նաեւ փողոցի դրան յետեւում:

Այլեւս ոչ ոք չէր հաւատում Չախալիում մնալու ենթադրութեան: Եւ մարդիկ այժմ մտածում էին, թէ ինչպէս խուսափեն ճանապարհի վտանգներից, ուր ինչ գործ կարելի է անել, ով որտեղ ծանօթ, բարեկամներ ունի, որովհետեւ դեռ ենթադրւում էր, թէ ինչոք տեղ իրենց ազատ պիտի ձգեն՝ նոր կեանք սկսելու համար: Այս քարւանսարայի մէջ, Պարունակի շնորհիւ քիչ-քիչ ինձ գտայ:

Իրիկնապահին Չախալի հասաւ թաղում մնացածներից մի սոււար խումբ. դրանց մէջ էին Խանէտանները, Չատրեանները, Թումարզալեանները, Ալթունեանները եւ ուրիշ շատերը: Մեզ մօտ էին տեղաւորւել Ալթունեանը եւ կինը. մայրը փոքրիկ թոռան հետ յաջողել էր թաղնւել յունաց թաղում: Մեզ մօտ էին բերել նաեւ 8-10

հոգի հայ կաթողիկներ, որոնց մէջ կային մէկ քահանայ եւ երկու կոյսեր: Վերջին երկուսին տեսնելու պէս անմիջապէս ճանաչեցի: Մի կիւրակի առաւօտ, դեռ արեւը չէլած, նրանց ես տեսել էի իմ սովորական դրօսանքների ժամանակ՝ Կարա-Սամսոնի շրջանում, որը կազմում է քաղաքի հիւսիսային ապառաժոտ ծովեզերքը: Այս տեղ մի յաւիտենական պայքար կար ապառաժների եւ ծովի ալիքների միջեւ, որոնց շունդալից բախումները լսելի էին դիշերները, քաղաքի հիւսիս-արեւմտեան ծայրամասում, ուր ապրում էի ես: Գարնան այդ օրը ես դուրս էի եկել դաշտ սովորականից շուտ, երբ արշալոյսի կարմիր գօտիի առաջին բարակ շերտերը դեռ նոր էր երկարում ծովի հորիզոնի ստորոտներում: Ապառաժներից մէկի յետեւը, յանկարծ պատահեցի կոյսերին, որոնք նստած լուռ դիտում էին ծովը: Մանկահասակ կոյսը, որը երեւի 20-22 տարեկանից աւելի չէր, իր գեղեցկութեամբ ուղղակի շմեցուցիչ տպաւորութիւն թողեց վերաս, ինչ որ երեւի աննշմար չանցաւ արդէն ճերմութեան դուռը բախող միւս կոյսի համար: Նա անմիջապէս ելաւ եւ անհանդիստ ձեւով քաշեց-տարաւ իր հետ մանկահասակ կոյսին: Ես ուզեցի հասնիլ նրանց, խօսել, պարզել, որ անհանդիստ չլինեն, բայց հասկցայ, որ կարող եմ աւելի վախ պատճառել: Երկա՛ր ես դիտում էի նրանց մերադարձը: Իրենց գլխի ճերմակ ծածկոցների թեւերով, հեռւից նման էին բլրին թառած կուռնիների զոյգի: Այժմ նոյն գլխածածկերով, հագուստով եկել էին Չախալի: Պատշգամբի ծայրին, իրենց փոքրիկ կապոցների մօտ տեղ բռնած, նրանք օտարականների տպաւորութիւն էին թողնում: Մանկահասակ կոյսը դիտում էր չորս կողմը. կարծես թէ նոր էր տեսնում մարդկանց: Յանկարծ, նրա հայեացքը կանգ առաւ միտս եւ փոխեց դարմանքի: Յիշ՞ում էր արդեօք մեր հանդիպումը, թէ նա էլ ինձ պէս դարմանում էր, որ երկուսս էլ հայեր ենք . . .

Մութը միա հասաւ աննկատելի կերպով: Տարօրինակ համերաշխութեամբ երկար ճօճկի մէջ թառ ելած մանկիկները յուզեցին: Կսնայր, աղջիկները մեծ մասամբ կծկուած էին ներսերում: Տղամարդիկ նստած էին պատշգամբում եւ շարունակում էին խորհրդակցել: Միշտ մէկն ու մէկը դայիս էր փողոցի դրան մօտից եւ ինչոր բաներ հարցրելով՝ հարձեցում նորից դնում էր: Առաջնորդը անց ու դարձ էր անում բակում, նրա հետ էր միայն դաւաղ Սյազգի Ասատուրը: Հարջին ընկել էր ուրիշ տեղ եւ, ինչպէս ասում էին, հիւանդ էր: Ուշ էր արեւն, երբ առաջնորդը առանձնացաւ իրեն յատկացած սենեակը: Իսկ քիչ յետոյ մօտեցաւ դաւաղ Ասատուրը եւ խնդրեց ինձ նրա մօտ: Մի փոքրիկ սենեակի մէջ փուած դորդի վրա նստած էր առաջնորդը,

յնուած մի կապոցի, որը բարձի տեղ էր ծառայում նրան: Մեքենա-
բար դարձնում էր համրիչի խոշոր հատիկները եւ, կարծես թէ, զըն-
նում դորդի դժազրութիւնը: Խոհուն, դունաստ դէմքը, լայն ճակատի
վրա յօնքերի մէջ ընկած եռանկիւնաձեւ խորշումը պարզում էին ճըշտ-
ւած ապրումների մի աշխարհ:

— Նստեցէք, ինչպէ՞ս էք, ասաց նա իր սովորական հանդարտու-
թեամբ:

— Ոչինչ, այժմ դրեթէ լաւ եմ:

— Ի՞նչ պատահեցաւ ձեզի:

— Ոչինչ, միայն գլուխս սաստիկ ցաւում էր:

— Ժամանակները այնպէս են, որ պարտք կը դգամ հարցնելու . . .

— Ոչ մի յատուկ պատճառ չունիմ, սրբազան:

— Նա սկսեց մանրամասն հարցուփորձել Քաղաքապետարանում,
ճանապարհին, վերի քարաւնասարայում անցած օրերիս, դէպքերի մա-
սին ու յարեց:

— Այդ բոլորը շատ պարզ, հասկանալի ու մարդկային է: Ինքն
Աստուած երկրի վրա աւելի ուժեղ չեղաւ: Բայց պէտք է ձեզ աւելի
իրաւունքներ ու պարտականութիւններ վերադրէք, քան Տէրը դրած
է ձեր վրա: Այդ ուղղութեամբ ամէն մարդ, շատ թէ քիչ, իր բաժինն
ունի: Եւ ինչ է իրօք ձեր բաժինը՝ յայտնի չէ: այդ դեռ պէտք է պար-
զելի: Միակ խորհուրդը որ կարող եմ տալ ձեզ, այն է, որ աշխատէք
ձեր խաչը մինչեւ վերջ հանդարտութեամբ կրել: Իսկ ատոր համար
անհրաժեշտ է անսասն հաւատ, որ այս համատարած դժբախտու-
թեան մէջ ներքին մեծ խորհուրդ կայ: Թողէք ձեր տարակուսանքնե-
րը եւ ամենէն ստաջ խաղաղութիւն ձեռք բերէք: Այս թշուառութեան
խուսափելու համար բոլոր հնարաւոր միջոցները սպառեցինք: Եւ եթէ
այս է Աստուծոյ կամքը, օրհնեալ ըլլալ թող ան: Ողջ հայութիւնը
փրկիւմ ծովի ալիքներու պէս կը ծլուի եւ հաղարներ կան ձեզ հետ:
Մի մոռնաք երբեք, որ դուք ալ ինձ պէս այդ ծովի մէջ մի կաթիլ էք
միայն . . .



Գիշեր էր: Լուսիւնը պարուրել էր քարաւնասարան: Պատշգամբի
սիւների մէջ երկարած ձօճկի դիմաց փառում էր բեկբեկող մի մոմ:
ձօճկը նման էր պատանի: Մոմի մօտ կանգնած էին մի մայր եւ 5-6
տարեկան քնաթաթախ մի մանչուկ: Քոյնտի ձօճկի ուղղութեամբ,
պատի տակ կծկտած էին մայրեր: Աջ, ձախ, մեծ մասամբ դուրահետ,
պառկած էին մարդիկ: Չայն չկար, կարծես թէ քնած չեն, այլ մե-

ւած: Պատշգամբով անցնելու տեղ չկար, եւ իջայ բակը՝ Գէոորգ-
լեանների սենեակը գնալու համար, ուր պէտք էր գիշերէի: Բայց հա-
զիւ մի քանի քայլ էի արել բակով, երբ, յանկարծ, մութի մէջ առ-
ջեւս ցցւեց մեր վարժուհիներից օր. Մաթենիկ Առաքելեանը եւ յայտ-
նեց, որ հայրը ուզում էր ինձ տեսնել: Նա առաջնորդեց ինձ դէպի
բակի խորքը: Այնտեղ ինչոր տախտակների վրա նստած էր պ. Առա-
քելեանը, մանչերի դպրոցի հարեւանը, հպարտ ու ինքնամփոփ մի
մարդ, որ՝ հակառակ իր անցած տարիքին՝ Մամսոնում եռանգով
պայքար էր մղում իրեն վիճակւած անտեսական անյաջողութիւնների
դէմ: Ես տեղ բռնեցի մօտը: Սովորական հարցուփորձից յետոյ նա
ասաց.

— Շատ դժուար է ինձ համար ամէն բան պարզել, բայց պարագա-
ները կը հարկադրեն:

Արդէն որոշ գիտեմ որ երկար չպիտի ապրիմ. երկու օր է ինչ սիր-
տըս հետս կատակ չընեն: Եթէ ճանապարհին ոչինչ ալ պատահի, մի
եւ նոյն է, այս տարիքի մէջ եւ այս վիճակով ոյժ չունիմ այլեւս ա-
ռաջ գնալու: Եւ, ահա . . . չգիտեմ, թէ ինչ պիտի լինի աղջիկիս
հետ . . . սարսափելի է, եւ միայն այդ հոգսը հերիք է, որ մեռ-
նիմ . . . Կեանքիս միակ իմաստը աղջիկս էր, անոր կրթութիւնը,
դաստիարակութիւնը: Հիմա չգիտեմ, թէ իմ մահէն յետոյ ինչ պի-
տի ըլլայ անոր հետ . . . Կուգէի որ, քանի որջ եմ, տէր կանգնէիք
անոր . . . Ներեցէք, որ ձեզ անհանդատացուցի, արդէն շատ ուշ է . . .

Գամուծ մնացել էի նստած տեղս. կարծես թէ նոր էի հասկա-
նում համատարած թշուառութեան ահռելի չափերը . . .

Կիրք դեռ կանգնած էր պատշգամբում, մոմի վերջին մնացորդնե-
րը ձեռքին, երբ անցայ նրա մօտից: Մանչուկը չկար: ձօճկի մէջ եր-
կնցած մանկիկը հիւանդ էր, կրակի պէս այրւում էր . . .

Ձգուշութեամբ մտայ Գէոորգլեանների սենեակը: Ամէն ուղղու-
թեամբ անձայն, անշուղ պառկած էին մարդիկ: Մթութեան մէջ հա-
զիւ նշմարեցի Տիգրանի մօտ ընկած ազատ բարձն ու վերմակը: Եր-
կրնցայ աչք փակելու յոյսով, բայց ի դուր: Քարաւնասարայի համր
լուսիւնը երբեմն խանդարում էր դրսից հասնող սայլերի դորդիւ-
նով, որ քիչ-քիչ նւազելով կորչում էր խաղաղութեան մէջ: Երբեմն
լուսում էր կարճ կցկտուր մանկան լաց ու անմիջապէս դադարում: Որ-
քան ժամանակ էր անցել չգիտեմ ու, յանկարծ, զգացի, որ վրաս ե-
ղած վերմակը բարձրանում է եւ մէկը մտնում է տակը: Միաժամա-
նակ լսեցի Պարունակի շշուկը . . .

— Աղջիկ, ի՞նչ կընես . . .

— Մայրիկը ըսաւ, անխառն դժգոհութեամբ պատասխանեց

Պարունակի մեծ քոյրը, որ դպրոցի, 6 թէ 7րդ դասարանի աշակերտուհիներէց էր:

— Հիմա դնա՛ տեղդ:

Գնաց, բայց ես աչք փակել չկարողացայ . . .

Դեռ լոյսը չբացւած հեռաւոր որոտի արձագանդներ էին հասնում ահանջիս: Գուցէ անհետացող սայլերի դղրդիւնն էր, չզիտեմ: Պատշգամբում մարդիկ տեղ-տեղ վեր էին առնում գլուխները, ուշի ուշով դիտում չորս կողմը ու նորից կծկուում: Քիչ անցած, ընդոտ ու տարօրինակ մի ձևով, մէկէնիմէկ ստքի ելան բոլորը. պատշգամբի ծայրին, յանկարծ, մէկը վեր ցատկեց եւ խռովքոտ աճապարանքով սկսեց կարգի բերել իրեն. նրան հետեւեց հարեւանը, սրան՝ իր հարեւանը, ապա՝ չորրորդը, հինգրորդը . . . Եւ պատշգամբը լեցւեց աղաղակներով.

— Ի՞նչ կայ . . .

— Ի՞նչ կայ . . .

— Ի՞նչ կա . . . ա՛ . . .

Ոչինչ չկար: Միայն լուսարացին սկսած քամին դնալով սաստկանում էր: Թանձր ամպեր, կտոր-կտոր, ուղտերի ահաբեկած կարաւանների պէս, թռչում էին երկնքով: Ծօծկը քակում էին: Քնաթաթախ ծծկերները խմրով լայիս էին: Բակի մէջ յայտնուում էին սայլապաններ եւ ինչոր մարդիկ, պարապ պարկեր, պարաններ ուսերնին: Նրանք իրարու մէջ փոխանակում էին ձեռքի նշաններ, կանգնում, դնում էին իրերը, ապա իրարու սուլոցով կանչելով դնում էին. նրանց յաջորդում էին ուրիշները, ապա նորերը . . . Բակից դուրս հսկողութիւնը խստացել էր: Նոր, բոլորովին անձանթ փոխիներ երբեմն յայտնուում էին բակում, «դբաղւած» տեսքով անցողարձ աները դիտում ու նորից ուղղում էին դէպի փողոց: Գուրսը իրարանցում կար, բայց թէ ինչ էր կատարւում՝ ոչ ոք չգիտէր: Փողոցի դրանցում է կեսարացի կէտիլանեան էֆէնտին, եւ կանգ առնելով մի խմբի դիմաց թուրքերէն ասում է — «պա՛րդ է»՝ մարդիկ լարւած ու շագրութեամբ նայում են նրան, թէ եւ նա այլեւս բան չի ասում: Մտնում, գուրս են դալիս առաջնորդի սենեակը: Ահա երեք ծեր կաշայր անհաստատ անցնում են պատշգամբը եւ իրարու դիջելով առաջին տեղը կանգ են առնում դրան մօտ. նրանցից մէկը դնում է դուշտիկում, զգուշութեամբ մտնում է, ապա, դուրս հանելով գլուխը, կանչում է միւսներին: Այստեղ, այնտեղ դեղերում են փոքրեր, ան-

բաժան հացի կտորները ձեռքերին: Չեն ուտում, չեն խօսում եւ ոչ ոքի ոչնչով չեն զրաղեցնում: Բայց լսում են, դնում, մարդկանց ոտքերի արանքով մտնում են խմբերի մէջ, կանգնում առաջին շարքերում եւ հերթով դիտում են մեծերին:

Յանկարծ, փողոցի դրան մօտ իրարանցումը դադարեց եւ բակով շշուկ անցաւ, ապա յայտնեց գաղտնի ոտտիկանութեան պետ Նուրի-Բէյը, երկու փոխիները ուղեկցութեամբ: Նա մի պահ կանգ առաւ, չորս կողմը հայեացքով չափեց, եւ, մօտենալով պատշգամբին՝ կանգ առաւ իմ առջեւ.

— Լաւ կը լինէր որ գլխարկդ փոխէիր պարսկական փափախի, չէ՛ որ պարսկահագաթակ ես . . .

Ես չպատասխանեցի: Նրան մօտենում էր առաջնորդի դաւադր: Միաժամանակ առաջնորդի մօտից դուրս էին գալիս ծեր կանաչը: Հանդիպելով փոխիներին՝ նրանք շփոթւած ճամբայ են բաց անում: Նուրի-Բէյը անցնում է առաջնորդի սենեակը: Մարդիկ ինձ շրջապատած իրարու յետեւից հարցնում են.

— Ի՞նչ ասաց . . .

— Ի՞նչ ասաց . . .

Ես մտայ Քէտոօղլիանների սենեակը: Մայրը լալով տփտփում էր խմորի մանր դնդեր, իսկ աղջիկները սրիմուսի վրա մի պղնձէ կափաբիչ դրած հաց էին թխում:



Կէսօրին դրութիւնը պարզեց. պահանջւած քանակութեամբ սայլեր չկային եւ այդ օրը ճամբուում էր դէպի ներքին գաւառները միայն վերի երկու մեծ քարւանսարանների հասարակութիւնը: Մնացածները պէտք է տեղահանէին յաջորդ եւ միւս օրը: Առաջնորդին յամբարում, ճամբում էին առաջին իսկ խմբի հետ: Նման պարագայի խնդրով, ճամբում էին առաջին իսկ խմբի հետ: Նման պարագայի հաներում ստուգութիւնը, կերելի թէ, բարիք է: Եւ քարւանսարացի հասարակութիւնը քիչ-քիչ սկսեց խաղաղել: Միայն թէ յուսարեկութիւնը կատարեալ էր: Այլեւս ոչ ոք ոչինչ չունէր տեղահանելու դէմ, բայց մինչեւ ո՛ւր — խնդիրը այս էր: Իրադեկները բացատրում էին միայն ճամբան: Կանանց վրա ծանր էր աղղել յատկապէս առաջնորդի մեկնումը.

— Այլ ո՞վ մնաց, որ խօսք ըսէ, պաշտպանի . . .

— Չգնայ, ի՞նչ ընէ խեղճը . . .

— Գոնէ թո՛մարգալեան էֆէնտին մնար եւ մեզ հետ երթար . . .

— Հո՛ղը գլխուղ, առանց թաղական խորհուրդի ի՞նչ կրնայ ընել որ . . .

Հայ համայնքը քանդուկ էր, բազում տարիների համակեցութիւնը խախտուել էր: Իսկ այն, որ այժմ ամէն մարդ այլևս ինքն է իր «առաջնորդն» ու «թաղականը», անբնական էր թւում դեռ:

Մի փոլիս եկել, կանգնել էր առաջնորդի սենեակի դրան մօտ: Մարդիկ լուռ, մէկ-մէկ իջնում էին պատշգամբից եւ բոլորածեւ տեղ բռնում բակի մէջ: Իջնում է նաեւ կաթոլիկ քահանայն իր հետեւորդներով, որոնք մինչեւ այդ իրենց պահում էին կղզիացած: Կանայք, երեխաները խմբւած էին պատշգամբում: Չէի հասկանում, ի՞նչ է կատարւում, բայց քիչ անցած դուրս ելաւ առաջնորդը եւ մի քանի քայլ անելով՝ կանգ առաւ բակի մէջ:

Բոլորը մէկէնիմէկ վար առին Փէսերը: Առաջնորդի շրթունքները դողում էին. գլուխը վեր բռնած, աչքերը վար՝ նա աղօթում էր: Այդ տարօրինակ տեսարանը վրաս թողնում էր կենդանի մարդկանց հոգեհանգստի տպաւորութիւն: Վերջացրեց աղօթքը, բակում, պատշգամբում կանդնածներին խաչակնքեց եւ ուղղեց դէպի փողոց: Բակում խմբւած հասարակութիւնը ճանապարհեց նրան մինչեւ դուռը: Եւ մօտ կէս ժամ մնաց այնտեղ խմբւած, ապա, երբ սայլերի անվերջ դղրուցը մարեց, յետ դարձաւ ու նորից պատշգամբում տարածեց:

Ոչ միայն առաջնորդի, այլ եւ հասարակութեան մի մասի միւսից բաժանելը բոլորի վրա աղդել էր աւելի, քան կարելի էր սպասել: Տեղ-տեղ աշխատում էին պարզել, թէ ով դնաց, ով մնաց: Բայց ընդհանրապէս, նոր ուժով, նորից ցցուում էր հին հարցը՝ ի՞նչ անել: Կանանց ամենից շատ զբաղեցնում էր հասունացած աղջիկների խնդիրը: Ընդհանուր կարծիքը այն էր, որ նախ քան տեղահանուելը նրանց պէտք է ամուսնացնել եղած ամուսինների հետ: Պնդում էին, որ կարող են փախցնել միայն աղջիկներին, իսկ երէկւայ աղջիկը մի օր յետոյ կին դառնալով՝ փրկւում էր անպատուութիւնից: Բացի այդ, ի հարկէ, կային նաեւ ուրիշ հաշիւներ: Տղամարդիկ կարեւորութիւն չէին տալիս այդ ելքին եւ ամէն անգամ, երբ խօսք էր լինում այդ մասին, ջղայնացած ասում էին թէ, պէտք է աղջիկներին մաղթը կտրել, հին, պատառոտած հագուստներ հաղցնել, դէմքի վրա դնող սեղով վերքեր բանալ եւ ծեծած սխտոր դնել վրան, ընդհանրապէս ալլանդակել: Ոչ նւազ ծանր խնդիր էր նաեւ եղած զրամները պահելու հարցը: Ոմանք խորհուրդ էին տալիս ոսկիները կլլել, ոմանք ասում էին, թէ ով ոսկի ատամ ունի բերանում թող զգոյշ լինի, որովհետեւ դուրս պիտի քաշեն: Ապա դալիս էին նւազ կարեւոր խնդիրներ՝ մինչեւ ո՞ւր կարող են սայլեր ունենալ անհրաժեշտ իրերը փոխադրելու համար, ո՞ւր եւ ինչպէ՞ս կարող են ձեռք բերել ուտելիք, պիտի

զնա՞ն, թէ պիտի կանգ առնեն դիշերները եւ նորից ու նորից հին, ցաւատանջ հարցը՝ ո՞ւր պիտի գնան կամ ո՞րն է իրենց վերջին կայանը: Այս մտատանջութիւնների հետ միասին, տեղի էր ունենում լարւած աշխատանք, որը բացառապէս ընկած էր կանանց վրա. ջուր տաքցնել, լաւ, պրիմուսների վրա հաց պատրաստել, դապել-կապելու ինչ աւելորդ է՝ ժամ առաջ պատրաստ լինելու համար:

Իրիկան դէմ քամին քիչ-քիչ մեղմանալով դադարեց: Հեռուէն-հեռու եկան մեզ հասան որոտի առաջին արձագանդները: Քիչ չանցած յորդեց խոշոր ու շեշտակի կաթիլներով անձրեւ: Տիգրանիկի հետ միասին նստել էինք պատշգամբի միւս ծայրին, ուր դարսւած էին Ալիսոնեանների բերած իրերը: Օրւայ անհաշիւ տպաւորութիւնների տակ անտանելի կերպով յոգնել էի: Փողոցի կիսաբաց դրան արանքից Տիգրանը տեսել էր, թէ ինչպէս է անցել Չատրեանների սայլը եւ ուր էր նստած «միւսիւ Նշանը»:

- Ես գիտեմ, որ կը սպաննեն, ասում էր նա եւ արտասուքի երկու անդուսպ կաթիլներ ախօսում նրա դուռնաւոր այտերը:
- Եթէ ուղէին սպաննել, արդէն սպանած կը լինէին:
- Տիգրանը թեքեց դէպի ինձ եւ ախանջիւ շշնջաց.
- Հայրիկը դիշերը աղբարիկին ըսաւ, թէ ամենքս ալ կը սպաննեն եւ աղջիկները կը տանեն. ես քնած չէի . . .
- Իսկ աղբարիկը բա՞ն չասաց:
- Բան չըսաւ, չնչայեղձ վրա բերեց Տիգրանը ու լաց եղաւ:
- Պարզ է, որ հայրիկը վախեցել է, իսկ դու, որ կարծում էի, թէ վախկոտ չես, աղջկան պէս լալիս ես:
- Օ՛, ես չեմ վախնար, ես ինձ համար չէ, որ . . .
- Ո՞վ պիտի հասկնայ, թէ ինչի համար ես լալիս. անթիջապէս դադարիր, որ ուրիշները չտեսնեն:
- Իսկ դուք մեզ հե՞տ կերթաք . . .
- Ի հարկէ՛:
- Մի՞շտ մեզ հետ:
- Ի հարկէ . . .

Բեյգրադ (Շարունակելի)

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՏԱՐՕՆԻ ԱՇԽԱՐՀԸ

V

ՁԱՐԴԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

1915 Նոր տարւան առաջին օրը, ընդունեցինք Մշոյ թիւրք պաշտօնական եւ անպաշտօն «երեւելիներու» շնորհաւորական խմբական այցելութիւնները: ՄիւթէսարըՔը, վարչական, դատական եւ զինւորական ղեկավարները իրար կը յաջորդէին, կլլելով կօնեակը եւ շաքարեղէնները: Արտակարգ ոչինչ կը նկատէինք իրենց շարժումներու եւ խօսակցութիւններու մէջ — քաղաքավարական քանի մը խօսքերու փոխանակութիւն: Հիւրերը կընդունէր գլխաւորապէս Ռուբէնը իբր տանտէր. ես հիւր կը նկատուէի. հոն կը դռնէին տեղացիներէն նաեւ Մճօն, Կորիւնը, Տիգրանը եւ այլ ընկերներ:

ՄիւթէսարըՔը առանձնապէս ուշադիր էր դէպի Կորիւնը, որ քիչ մը թիւրքերէն դիտէր, բայց իր ծայրայեղ քաշուղ բնաւորութեամբ կից-կտուր ու կարճ պատասխաններ կուտար՝ կարմրած ու յարգանքով: Տարօնի բացառիկ ու հազւագիւտ տիպերէն մէկն էր Կորիւնը: Կարճահասակ, բայց պիւրկ ու ամրակուռ. խիտ սակաւախօս էր, չէր խնդար դրեթէ, քաղցր ու հաճելի կը ժպտար երբեմն բերանի մէկ կողմովը. սքանչելի էր իր աչքերու մեղմ արտայայտութիւնը. կանացի փուխը սիրտ մը, բայց իրական կորիւնի կատաղութիւն, երբ հարկադրւած էր դրսևարել — անխնայ էր այդ վայրկեաններուն. առասպելական յանդգնութեամբ, քաջութեամբ ու պաղարիւնութեամբ օժտւած այդ երիտասարդը ե՛լ մանուկ էր իր անարատ սիրտով ե՛լ ծերունի փիլիսոփայ՝ իր հարուստ հողիովը եւ զգացողութեամբ: Համեստ էր ու խենարհ բոլորի հանդէպ, կարգապահ ու բծախնդիր իր պարտականութիւններու մէջ, բայց իր մէջ թաքնւած



(Նկարում Արքայադ կղզի վրա 1904-ի)
 ԽՍՀՄ - ԿՈՐԻՒՆ

ամեհի ուժին ու կամքին կենթարկէր ակամայ իրեն շրջապատողները եւ ակնածանք կը ներշնչէր իրմէ մեծերուն :

Տօներէն վերջն էր, երբ օր մը միւթէսարըՓը Ռուբէնի միջոցաւ կառաջարկէր Կորիւնին ստանձնելու դաշտային միլիտի պետի պաշտօնը : Այս, պատասխանն էր երեւի բողոքներուն՝ հայ գիւղերու վերաբերմամբ տեղի ունեցող ասպատակութիւններու մասին : Առաջարկը մեզ շատ ձեռնտու երեւցաւ . Կորիւնը այսպիսով զինւած հայքերական ուժեր կունենար իր տրամադրութեան տակ եւ հարստահարութիւններուն վերջ կուտար : Այն ատեն դժուար էր հասկնալ անոր միտումները . հիմա միայն բոլորովին պարզ է ինծի, որ դեռ ջարդերէն առաջ, կառավարութիւնը նպատակ դրած էր երկրի հայ մարտական ղեկավարները ոչնչացնել (Կովկասի հայ կամաւորական գունդերու կազմութեան հետեւանքներն էին կարծես) ասպահովելու համար թիկունքի հայ ուժերու վտանգին դէմ . . . :

Կորիւնը լսեց Ռուբէնէն միւթէսարըՓի առաջարկը եւ ատկէ առաջ գալիք մեկ նպատաւոր եղող հետեւանքները : Առերեսոյթ համակիր երեւցաւ եղած առաջարկին, բայց հնարաւոր չէր գտներ հայքերտ խառն միլիտներու կազմութիւնը . խնդրեց որ առաջարկենք զուտ հայ միլիտներով բաւականանալ, որոնք զինւէին պետական հրացաններով : ՄիւթէսարըՓը ուղղակի չէր մերժած . խոստացած էր Բաղէշի կուսակալի հետ բանակցել այդ մասին . իսկ Կորիւնը վերադարձած էր գիւղը իր սեփական գործերու կարգադրութեան համար :

Միւս կողմէ սակայն շրջաններու մեր կարեւոր գործիչները իրար ետեւէ քաղաք կուգային բողոքելու իրենց շրջաններու անպահանջով կացութեան, կառավարութեան ճնշումներու եւ օրինակահանցած թալանի դէմ, ինչպէս նաեւ քրտական չէթաներու կազմակերպութեան մասին : Պարբերաբար կուգային Գառնենու Մկրտիչը, Բաղլուա Յովօն - ծերունի հին յեղափոխականներ . Ջրեց Տէր-Մուշեղը, Մոկունքէն՝ Կարապետը, Բերդակայ Օսկիանը, Վարդենիսէն՝ Մարտիրոսը - աչքի ինկած յեղափոխական մարտիկները, որոնք, ի միջի այլոց, կը յայտնէին, թէ ոստիկանները լուրեայն կը հետապնդէին զիրենք :

Այդ միջոցին հին եւ կարեւոր ընկերներու հաւաքական լայն խորհրդակցութիւններ կունենայինք : Սասունէն եւս պարբերաբար սկսան երեւնալ փոքր խումբեր, որոնք կուգային պատերազմէն լուրեր առնելու եւ իրենց բռնելիք դիրքի մասին թելադրութիւններ ըստանալու, քանի որ հոն եւս զինւորագրման խնդիրը առօրեայ չա-

րիքներէն էր: Այնտեղերը եւս աշխրէթներու շարժումներ եւ թշնամական տրամադրութիւններ նկատած էին: Թէեւ ձիւնը հաստ շերտերով բռներ էր Սասնոյ լեռները, բայց այդ կրակէ մարդկանց համար չէր. «լաքան»-երը ոտքերնուն, կուրծքերնին բաց, կուռային քաղաքէն աղ, ցորեն, հագուստեղէն եւ մանաւանդ վառօղի պատաստութեան եւ ռազմամթերքի պարագաները գնելու, ինչպէս ծրծումբ, բորակ եւ կապար ու գիշերով ծանր շալակներով կը վերադառնային եղնիկներու արագութեամբ:

Յոռետես էին ամենքը, բայց ոչ յուսահատ. իրենց ունեցած գինամթերքը, կըսէին, պիտի բաւէր քրտական հորդաններու եւ չէթաներու կոխներուն, չէին կրնար երեւակայել, որ զօրքն եւս պիտի մասնակցէր ասպատակութիւններուն, խորհելով որ պատերազմի ճակատին անկարելի է որ կառավարութիւնը զօրքը դործածէ ներսի կարիքներուն: Անոնցմէ մէկ քանին, ինչպէս Մճօն, Բերդակայ Օսկիանը եւ ուրիշներ, կառաջարկէին նախաջարձակ լինել պետական գինանոցներու վրա. Ռուբէնը նպատակաւորմար կը գտնէր Սասունի Տափլըկ գիւղի պահականոցի վրա յարձակիլ եւ ազատիլ այսպիսով Սասունի ներքին թշնամիներէն: Ամենքս կըզգայինք անշուշտ որ ծանր օրերը կը մօտենային, ընդհարումները անխուսափելի էին, բայց շատ ընկերներ - որոնց թւին եւ ես - կառարկէինք թէ մեր ռազմական ուժերը շատ սակաւ էին եւ անկազմակերպ՝ յարձակողական կռիւներու համար: Սասունի ժողովուրդը խիստ թերի գինեւած էր. 7-8 հարիւր կտոր շէշխանա եւ որսորդական հրացաններու հետ թերեւս 150-200 քիչ-շատ կանոնաւոր զէնք գտնէր, որոնք սակայն փամփուռի չնչին պաշար ունէին. դաշտը աւելի խղճալի վիճակ կը ներկայացնէր. կանոնաւոր զէնք, կարելի է ըսել, բացառապէս միայն մեր նախկին մարտիկներու ձեռքը կը գտնէր. դաշտի 90 գիւղերը հազիւ 200 քիչ-շատ կանոնաւոր հրացան ունենային, փամփուռտի նոյն թերիներով:

Համեմատաբար լաւ գինեւած էր քաղաքը, ուր կուսակցութիւնն եւս ունէր պզտիկ պահեստ մը արծանակներու եւ 2-3 տասնեակ զէնքերու: Տրամադրելի այս ուժերով թերեւս ժամանակ մը հնարաւոր ըլլար հաւաքական ինքնապաշտպանութեան: Տարօնի վիճակի մասին պարբերաբար տեղեկադիրներ կը ղրկէինք Պոլիս՝ կուսակցական բիւրոյին. կանոնաւոր թղթակցութիւն կը պահէինք Վասպուրականի եւ էրզրումի կուսակցական մարմիններու հետ: Պոլսէն հանգստացուցիչ տեղեկութիւններ կուտային, շեշտելով միանգամայն ինքնապաշտպանութեան զօրեղացման անհրաժեշտութիւնը:

Փետրուարի մէջ էինք, երբ Ռուբէնը որոշեց անձամբ շրջան ելնել եւ կորիւնի հետ զբաղել ինքնապաշտպանութեան վերակազմութեամբ: Վերադարձին կորիւն հետը պիտի բերէր միլիտի կազմութեան նախապատրաստութիւններու համար:

Իեռ նոր Ռուբէնը հասած էր Գոմս, երբ Աղջանէն լուր առինք, որ տեղի 7-8 քիւրա ժանդարմաներ Ֆախկի Մուստաֆա տասնապետի առաջնորդութեամբ մեկներ է Գոմս, կորիւնի գիւղը: Չարագուշակ կասկած ծագեցաւ բոլորին մէջ. պիտի ձերբակալէին թէ՞ դաւադրութիւն մը պատրաստած է կորիւնի եւ Ռուբէնի դէմ: Երկրորդ օրը արեւածագին, միւթէսարըՖը յատուկ ոստիկան ղրկած էր Սարախանեան եպիսկոպոսին եւ ինծի իր քօլն հրաւիրելու . . . Անոր դէմքէն մաղձ կը թափէր, աչքերը հիւանդագին կը փայլէին, ձեռքերը կը դողային եւ դէմքը հողի գոյն էր առած: Չսպասած զայրոյթով եւ խօսքերը շեշտելով յայտնեց թէ առաջին իրիկունը Իսրօն (կորիւնը) եւ Ռուբէնը դոմի մէջ վառած են ժանդարմա տասնապետ Ֆախկի Մուստաֆան եւ քանի մը ժանդարմներ ու փախած. միւթէսարըՖը կաւելցնէր որ իր համբերութեան բաժակը լեցած է արդէն, պիտի հրամայէ քանդել գիւղը, անխնայ ըլլալ դաւադրութիւն կազմակերպողներու հանդէպ եւ կը պահանջէր որ Ռուբէնը եւ կորիւնը անմիջապէս ներկայանային իրեն. իսկ մինչ այդ նա ինծի կը յայտարարէր աղատութենէ զրկած եւ իր բնակարանի մէջ վար կը գնէր գիւ: Սարախանեանը յանկարծակիի եկած՝ ամէն միջոց դործ դրաւ գիւ ազատելու. անհնար եղաւ: «Հիւր» էի միւթէսարըՖին. . . Սրբազանը յուսահատ ու լքած մեկնեցաւ: Ծաշեցինք միատեղ. իր բացակայութեան սենեակին մէջ նստած էր ոստիկանապետը, իսկ իրիկունը բաւական երկար այս ու այն կողմէ խօսելէ վերջ, յանկարծ, մտածեցի պահանջել խիստ քննութիւն. յայտնեցի անոր առաջարկս, ըսի որ ընկերացնէ ինծի զօրքերու հրամանատար Վասըֆ պէյը տեղի վրա քննութիւն բանալու: ՄիւթէսարըՖը քանի մը ժամ բացակայելէ վերջ վերադարձաւ, ըսելով թէ կընդունի առաջարկս: Մեզի պիտի ընկերանային նաեւ Պուլանըիի գայմազամ հարիւրապետ Էսադ պէյը եւ Հազոյի միւտիւր Սիւլէյման անունով զազրելի թրքացած քիւրա մը, արտաքինով աղէտի նմանող: Հանդիստ չէի կեանքիս նկատմամբ. Սիւլէյմանի դէմքը վստահութիւն չէր ներշնչէր ինծի, բայց էսադի եւ մանաւանդ Վասըֆ պէյի ուղեկցութիւնը քիչ մը կը հանգստացնէր ջիղերս: Երբ ձիերը հեծած 7-8 ոստիկաններու ջոկատի մը հետ ձամբայ պիտի ելնէինք, միւթէսարըՖը իր խօսքերը Վասըֆ պէյին ուղղելով ըսաւ, «Փափաղեան էֆ.ն ձեզի կը յանձնեմ. ողջ առողջ ինծի պիտի վերադարձնէք» . . . Այս խօսքերը փոխանակ

հանդատացնելու, աւելի մուշլ տրամադրեցին ինծի: Հրամանատարը վստահ եմ թէ բարեմտօրէն ընդունելով այդ պատուէրը, պատասխանեց «անհող եղէք. եղբօրս պէս պիտի պահեմ»: Եւ այդպէս ալ ըրաւ. անբաժան էր ինձմէ քրտական հօրդաներուն մէջ, որոնք զիշատիչ ազոռաներու նման, թափած էին անպաշտպան Գոմս դիւզի վրա: Զիւնի մէջ բացած արահետէն, իրար հետեւելով՝ կը յառաջանային մեր ձիերը: Հազիւ իրիկեան մթնշաղին հասանք զիւզը: Գոմսի բնակչութիւնը փախած էր Սաշղարտաղ - Եփրատի միւս ափը. դիւզին մէջտեղը, պղտիկ բարձրութեան մը վրա կորիւնի տունն էր, իսկ անոր ստորոտը ախոռն էր որ դեռ կը ծխար. պատերը տեղ-տեղ քանդած էին եւ գերանները թափված: ախոռի դուռին քով եւ քիչ մը անդին տարածած էին կիսովին այրած քանի մը մարդկային դիակներ եւ բազմաթիւ դիակներ քոմէշներու ու եզներու. շրջականերէ գլուխ էին թափեր հարիւրաւոր քիւրտեր իրենց կանանցով եւ բեռնատար եզներով ու էշերով. արդէն մաքրած էին բոլոր տունները իրենց կարասիքէն եւ կենդանիներէն. քանի մը շուներ երգիքներէն դուռները դէպի երկինք ցցած կոռնային:

Կորիւնի տունը հողէ յատակով սենեակ մը ունէր՝ սրու՝ երկու պատուհանները ախոռին կը նայէին. բակին մէջ մեծ թոնրատուն մը կար ուր քիւրտ չէթաները նախապէս յաջողած էին ձերբակալել յիսունի մօտ կին եւ տղամարդ ու ոչխարներու պէս լեցուցած էին հոն իրար վրա. սպանութիւններ չէին եղած, բացի կոյր տղամարդէ մը, որ սպաննած էին ճամբուն վրա:

Հարցաքննութեան կանչեցան «գերի»-ները: Իմ ներկայութիւնը կը քաջալերէր անոնց: Պարզեցաւ հետեւեալ իրողութիւնը, որ կարճանազրէր Սիւլէյման էֆէ-ի կողմէ:

Փախկի Մուստաֆան ժանդարմաներու խումբով կուզայ զիւզը, իրիկնադէմին, հարկերու հաւաքման գործով. Կորիւնը կը կարգադրէ որ տեղաւորեն ախոռի սենեակին մէջ եւ կերակրեն. քիչ մը վերջ Կորիւնի սենեակը կը մտնայ անոր հինաւուրց բարեկամ քիւրտ ժանդարմա մը եւ կըսէ թէ Փախկիի միտքը դէշ է. գիշերը ծրագրած է պատուհանէն սպաննել Կորիւնը (եւ Ռուբէնը, ի հարկէ) եւ թէ այս մասին հրահանգած է Մուշի իթթիհատի քլիւպէն: Կորիւնը առանց ժամանակ թողնելու, որ ժանդարմաները իրենց ոճիրը գործադրեն, անմիջապէս ծակեր կը բանայ պատուհանէն դուրս. ուշ ատեն իր խոտի դէզերէն խուրճեր կը փոխադրէ ախոռի դրան առջեւ, դուռը դուրսէն կը գոցէ եւ կրակ կուտայ. քանի մը հոգի կը յաջողին երգիքէն փախչել, մէկ քանին կը փորձեն դուրս նետուիլ եւ կը դնդակահարւին, իսկ 1-2 հոգի կայրին: Կալանաւորներու մէջ գտնուող տեղա-

ցի մեր ընկերներէն մէկը առանձինն ըսաւ ինծի թէ անոնք Ս. Կարպետ անցած են: Հետեւեալ առաւօտ կալանաւորները արձակել տւի. հրամանատարը համուլեցաւ դաւադրութեան մը գոյութեանը. Էսադ պէյը կը թէքր թէ կը տատանի. ձէթի աղօտ ճրագին քովիկը եւ սենեակի մէջտեղը վառած փայտերու ջերմութեան ու սենեակին մէջ խոնամ քիւրտերու դաժան հայեացքներու տակ միտքս տենդօրէն կաշխատէր. կղզայի որ ահաւոր ոճիր մը կը պատրաստուի. այլևս չէր կարելի խաղաղութիւն յուսալ. Ռուբէնը եւ Կորիւնը ահամայ գրկեցան դաշտը կազմակերպելու հնարաւորութենէն ու փախստական դարձան: Ես, շատ աչքի եմ ինկած ինքնապաշտպանութեան գործի կազմակերպման համար եւ դեռ ո՛վ գիտէ, վերադարձիս ազատ պիտի թողո՞ւն . . ., իսկ տեղացի ընկերներէն ամէն մէկը իր դիւզին եւ վայրին մէջ միայն օգտակար կրնային լինել: Վերադարձի ճամբուն կը խորհէի, որ կառավարութիւնը անմիջապէս ամենախիստ հալածանքի պիտի սկսի:

Մեր տեղեկութիւնները եւ արձանագրութիւնը լսեց միւթէսարը՝ Քը. իմ դիրքս ուժեղ էր. շյամեցայ խիստ խօսքերով որակելու մութ ուժերու ղեկավարներու ընթացքը: Միւթէսարը Քը ի վարմանս իմ, անմիջապէս համաձայնեցաւ ինձ հետ, որ մերիւնները մեղաւոր չեն: Ես ազատ էի վերադառնալու առաջնորդարան: Սրբազանին ուրախութեան չափ չկար: Զարմացած էինք, որ կառավարութիւնը «արդար» գտնեցաւ այս անգամ: Յետոյ, ի հարկէ, միայն գլխի ինկանք, որ այդ բոլորը խաղեր էին Կորիւնն ու Ռուբէնը որսալու համար . . .: Յետոյ լորը խաղեր էին Կորիւնն ու Ռուբէնը շատութեան պատճառով ըսլսեցինք որ փախստականները ձիւներու շատութեան պատճառով ըսպաննած են իրենց ձիերը եւ Փէթարի դժով Սասուն են անցեր: Քանի մը օր յետոյ, յանկարծ, լուր բերին, որ կուսակցական ահումբը պիտի խուզարկուի: Ես ու սպասուոր Պօղոսն էինք հոն. հազիւ կըցանք մեզ մօտ գտնուող զէնքերը եւ արիւիւր ետեւի դռնէն փախցնել: Ոստիմեզ մօտ գտնուող զէնքերը եւ արիւիւր ետեւի դռնէն փախցնելու ըսին թէ հրաման ունին փակելու մեր ահումբը: Ժամանակ կուտային մեր անձնական իրերը առնելու, ապա փախցին ու կնքեցին դուռները եւ հեռացան: Ես դուրս մնացի: Ասոնք ամենը, ի հարկէ, բարենշան չէին կրնար համարուիլ. դրութիւնը աւելի ու աւելի կը ծանրանար: Հակառակ ասոր սրբազանը եւ ես կը շարունակէինք պահել մեր սովորական յարաբերութիւնները կառավարչի հետ՝ սեղմելով մեր ատամները եւ զսպելով մեր յուսահատութիւնը եւ վրդովու՞մը օր օրին բազմապատկուող ակնյայտնի դէպքերու հանդէպ:

Փետրուարի ընթացքին «ամէլիա թաղուրներէն» (չայակներով պաշար փոխադրող հայեր) սկսան անհետանալ նախ անհատապէս ու

հնամաշ կապոյտ լաթի մը մէջ, անկիւնը ամբացուցինք երկու կապոյտ ուլունքներ եւ կարեցինք ներսէն Տիգրանի թեւին տակ . . . : Այսպէս ճամբու դրինք՝ մեր վերջին սակէ յոյսերը անոնց յաջողութեանը կապելով: Հայ աղջիկը պահեցինք. զնաց Տէրկէվանք գիւղը եւ թշուառ ու թանկագին հերոսուհին հետապային զոհ զնաց հաղարատընքու հետ:

Բանակի նամակի պատճէնը, ինչպէս նաեւ մեր պատասխանը, անմիջապէս Մասուն գրկեցան: Որքան ալ աշխատէինք դադանիքը պահել, մեր շրջանակներու մէջ տարածեցաւ լուրը: Բարձրացաւ ժողովրդի ընկճած ոգին. ինչպէ՛ս չողեւորէին, երբ ուսական բանակը Մանագիւերտէն Պուլանըխ կը յառաջանար, իսկ ձախ թեւը Վասպուրականէն Ախլաթ եւ Դատուն: Վարդոյէն եւ Վարդենիսէն լուրեր կը ստանայինք թէ արշալոյսներուն թնդանօթի ձայներ կը լրսէին արդէն . . . :

Ռուսական յառաջխաղացման իրողութիւնը ստուգեցի նաեւ պատահական հանդիպման մը միջոցին:

Ես շատ լաւ յարաբերութեան մէջ էի գերմանական միտինարական հաստատութիւններու հետ: Օրիորդներ էին, որոնք աղջկանց որբանոցներ ունէին: Օրիորդներէն մէկը գերմանացի, միւս երկուքը սկանտինաւեան թերակղզիէն էին. մասնաւորապէս Եվէստէր Քրիստինէն (գերմանուհի) երկար ատենէ ի վեր Վասպուրական եւ Տարօն գտնուելով, աւելի ընտանի էր մեր շրջանակներուն. աչքի կիյնար նաեւ շվեդացի Եվէստէր Պոլլէր, խելացի, լուրջ եւ պատրաստած միւսականութիւն մը, որ անգնահատելի ծառայութիւն րբաւ Մշոյ ժողովուրդին: Այդ օրերը այցելեցի Եվէստէր Քրիստինէի որբանոցը. այցի եկած էր նաեւ շատ երիտասարդ գերմանացի սպայ մը, որ զբերւած էր Պոլսէն Հէքեարի երթալու՝ համիտիէական դունդերու կողմակերպման եւ գլխաւորելու համար: Քրիստինէն ըսաւ թէ մէսպուս եմ եւ անունս շատ ազաւազլած եւ անորոշ արտասանելով, դուրս ելաւ թէյի պատրաստութեան: Օդաւելով առիթէն հարց ու փորձի ըսկրսայ եւ առաջին իսկ խօսքերէն հասկցայ, որ թիւրքի տեղ կը դնէ դիս: Աւելի ու աւելի արժարժեցի խօսակցութիւնը եւ անոր բերնէն լսեցի, որ իսկապէս ոուսերը մօտեցած էին Պուլանըխին եւ Ախլաթին. ըսաւ թէ թրքական բանակը կիսաաբաշքալած է եւ տիֆի համաճարարակը օրական հարիւրներ կը հնձէ:

Քանի մը օրէն, այս անգամ յատկապէս, հրաւիրւած էի օր. Քրիստինէին կողմէ. ներկայացուց ինձ Մուսուլի գերմ. հիւպատոսին: Ի հարկէ, նախապէս օրիորդը ըսած էր իմ մասին. լաւ առիթ



ՆՆՐԱՆՍ ԵՊ. ՂԱՐԱԽԱՆՆԵԱՆ

էր Տարօնի վիճակը եւ կառավարութեան դերքը պարզելու իրեն: Խիստ դժգոհ կերեւար թիւրքերէն. «բարբարոս ժողովուրդ է» կըսէր եւ կը հետաքրքրէր մասնաւորապէս ռազմական թիկունքի աշխատանքներով:

VI

ԽԱՐԱԽԱՆՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՄԱՀԸ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՍ ԵՒ ՓԱՅՈՒՍՏԸ

Այրբիլի սկիզբն էր արդէն: Ռազմադաշտէն հասնող լուրերը ըստ երեւոյթին միթարական չէին. թիւրքերու դէմքերէն մաղձ կը թափէր եւ միեւնոյն ատեն անորոշ երկիւղ մը կար աչքերնուն մէջ, մանաւանդ Քօթաննից ընտանիքի անդամներու արտայայտութիւնը ըզդաջնաչափի դեր կը կատարէր մեզ համար: Լուրեր կը պտտէին, թէ անթիւ սպանւածներ կան, թէ բանակը քայքայւած է համաճարակի եւ անօթութեան շնորհիւ: Հրամանատար Վասրֆ պէյը աջ ու ձախ հայհոյելով, իր սենեակէն կարգադրութիւններ կընէր իբր թէ. միւթէսարըֆը այլանդակ ժանտ կերպարանք էր ստացած. ամենքը ծանրապէս մտահոգ էին:

Միւս կողմէն ժամէ ժամ կը ծանրանար հայ դիւղերուն վիճակը: Ակնյայտնի կերպով չէթաներ կը կազմէին քիւրտ աւատապետներու գլխաւորութեամբ, որոնք տէր էին դարձած երկրին ու անարգել կատաղատակէին: Այս ատթիւ էր, որ Սրբազանը այդ օրերուն այցելեց միւթէսարըֆին:

Եւ սէրայէն հեռու, ճամբու քով կը դբօնէի, սպասելով անոր վերադարձին: Վերադարձաւ խիստ մտահոգ ու տրտում. իմ հարցական հայեացքին, քթի տակէն ըսաւ՝ «Ասուած հեռու ընէ, թշուառական անիծւածը, դայի դէմք էր ստացած. չարագուշակ բան մը կար անոր հայեացքին մէջ . . . »:

Եւ այդ միջոցին իթթիհատը արդէն որոշած էր ջարդը ու տարադրութիւնը եւ անկասկած դործադրութեան հրամանը տրւած էր ամէն տեղ. ինչպէ՛ս դայի դէմք չստանար իժի այն ծնունդը:

Երկու թէ երեք օր յետոյ, իրիկան կողմը, երբ մթնշաղին փակւած էին բոլոր պետական հիմնարկութիւնները, սուաջնորդարան եւ կաւ միւթէսարըֆի հետ պտտող ոստիկանը. «Միւթէսարըֆ պէյը կը ինդրէ ձեզ շնորհ բերել սէրայ» յարգանքով դարձաւ ան ինձի: Ոս-

տիկանին զրկեցի ըսելով թէ քիչ մը վերջը կուգամ. «ոչինչ, վարը կը սպասեմ», պատասխանեց ան եւ իջաւ . . . : Սրբազանը, զոյնը նետած յուղմունքէն կը դողար, տարակուսանքի մէջ էինք. ի՞նչ կուզէ. ինչո՞ւ այսպէս ուշ, այն ալ սէրայի մէջ . . . Ինչո՞ւ ոստիկանը մնաց ուղեկցելու: Բնադրօրէն դաւադրութիւն մը կենթադրէինք պատրաստեալ: Ատրճանակ կը կրէի միշտ. փոխադրեցի վերաբերուիս աջ զրպանը: Սրբազանը ըսաւ թէ անմիջապէս լուր պիտի տայ տղայոց սէրայի մօտերը գտնելու:

Ոստիկանը լռելեայն սկսաւ հետեւիլ ինձ:

ՄիւթէսարըՖը անբնական քաղաքարութեամբ մը եւ ջղային շարժումով մը ձեռքս սեղմեց ու հրաւիրեց նստելու պատուհանի դիմացի կողմը. ես նախընտրեցի պատուհանին առջեւը նստիլ եւ դայն թողուլ յոյսին դիմաց, կարենալ դիտելու անոր դիմադիծը եւ մանաւանդ շարժումները: Սէրայը ամայի էր. ջիղերս շատ լարեալ էին:

ՄիւթէսարըՖը նստած չէր. անբնական, կարճ տարածութեան մէջ քովէս կերթար-կուգար, կից-կտուր բաներ մը կըսէր եւ յանկարճ առջեւս կը ցցէր ձեռքը ետին տանելով. «ի՞նչ ունի»-կը մը-տածէի ես եւ յանկարճ այդ միջոցին էր որ նկատեցի ատրճանակի կոթը ետեւի գրպանին մէջ՝ սէրայի դրան առջեւի կանթեղի ճառագայթի շնորհիւ: Կայծակի արագութեամբ ձախ կողմս իրեն դարձուցի եւ ատրճանակս գրպանիս մէջ պատրաստեցի: Միտքս տենդագին արագութեամբ կաշխատէր. միեւնոյն ատեն, հակառակ դստու միս, անբնական բարձր ձայն մը եկաւ ներսէս. բնդհատելով իրեն պոռացի՝ «Ձեմ հասկնար ձեր ինձի կանչելու նպատակը. նստեցէք ու այնպէս խօսեցէք. չեմ բմբռներ ի՞նչ ըսել կուզէք»: Պահ մը քարացաւ, ձեռքը օդին մէջ կախեալ մնաց ու լռելեայն դիմացս նստեցաւ: Ինձմէ անկախ, ջղաձգօրէն ատրճանակս կիսով հանած էի գրպանէս. նկատած էր. բաւական մը լուռ մնայէ վերջ, գսպեալ կիրքով մը, հեւիհեւ ու միշտ կից-կտուր՝ խօսեցաւ Սասուն փախչողներու մասին. ըսաւ թէ անոնք քայքայեցին այս երկրի խաղաղութիւնը, որ աղբեղութիւնս պէտք է որ գործ գնեմ վերադարձնելու, թէ՛ վերէն նորուհի հրամաններ կը ստանայ ծայրայեղ միջոցներու դիմելու, սակայն ինքը կուզէ սպասել բոյոր միջոցները: Պատասխանեցի թէ՛ այլ լեւս աղբեղութիւնս կորսնցուցած եմ, բանի որ ոչ մէկ խոստումս չի երսայ երազործել, իսկ իմ խոստումներս հիմնած էին միւթէսարըՖի հաւատարմութեան վրա: Ըսի թէ անձնապէս որքան կրնամ օգտակար լինել իրենց, տրամադրելի եմ, բայց ոչ մէկ պատասխանատրութիւն կուզեմ ստանձնել ու եւ է մէկի համար . . . պատուհանէն

դուրս նայելով աւելցուցի՝ «չեմ ուզեր ձեզի այլեւս ճանճրոյթ պատճառել. իմ հետեւորդներս դուրսը ինձի կը սպասեն»: Նայեցաւ դուրսը լապտերի լոյսին մէջ երեւցող քանի մը սոււերներուն եւ ինձ հետ միմեկին սենեակին դուռը դալով կանգնեցաւ: Ելայ դուրս եւ դուռը ծածկեցի: Իրապէս կուզէր անձա՞մբ սպաննել ինձ թէ ոչ ձերբակել եւ դրկել սպաննելու - կը դժարանամ ըսել . . . :

Հետեւեալ իրիկունը հրամանատրին դացի, անկէ կամ անոր արտաքինէն ու շարժուձեւերէն բան մը հասկնալու համար. դժբախտաբար, հոն չգտայ: Շուկայէն կանցնէի, բացա՛րձակ ամայի. երբեմն այս ու այն անկիւնէն երկչոտ դէմքեր կերեւնային, որոնք կը փուսթային աննշմարելի անհետանալ: Փողոցներու երկայնքին զինուորնեթային աննշմարելի անհետանալ: Գողոցներու երկայնքին ինկած էին ըստ համազգեստի ցնցոտիներու մէջ տասնեակ դիակներ ինկած էին ցեխերու մէջ կամ հողի գոյն ստացած կմախքներ, որոնք մահաւան հոնդիւններ կարձակէին. բորոտ ու զաղրելի շուներու խումբեր դիակները այս եւ այն կողմ կը քաշքշէին. տեսայ երկու շուներ, որոնք դեռ կենդանի զինուորի մը կողորդը կը պատուէին . . . :

Դէպի հայոց թաղը իջնելէս վերջը միայն քիչ շատ կեանք ու շարժում նկատեցի: Գլխաւորապէս կանայք դուռներու առջեւ՝ պաղատողին ու փրկութեան մը սպասող հայեացքները սրտիս մէջ կը մխրձէին. անկարելի էր տոկալ այդ բոլորին:

Սրբազանը պատուհանին առջեւ ինձի կը սպասէր. գրկեց ինձ ու փղձկաց: Ինչո՞ւ կուլար - ես ալ, ինքն ալ չէինք դիտեր, բայց համր ու խեղդող թախիծ մը ծանրացած էր կուրծքերնուս վրա . . . :

Տիֆուսը մտած էր նաեւ հայոց թաղը, բայց քիչ զոհեր տալու. ատոր փոխարէն սակայն խեց Տարօնի թանկագին եւ իրական հովիւ Պարախանեան եպիսկոպոսին:

Ինչպէս ըսած եմ, ցորեկը միշտ իր ըովն էի եւ մօտէն կը հետեւէի իր ժուժկալ կենցաղին, զոհարեթութիւններուն ու ժողովրդասիրութեան: Իր դուռը եւ սեղանը ամենքի առջեւ բաց էր եւ մասամբ այդ բանի պատճառով վարակուած շատ դիւրին էր: Իր ննջարանը որ եւ սեղանատուն էր միաժամանակ, ոջիւններու բոյն էր դարձած. ինկաւ անկողին. վարակուած էր: Բանակի յոյն բժշկապետը եւ վախումբերով կը շրջէին անկողինն ու սեղանին վրա . . . : Ու որ մը նեցի հայ երիտասարդ զինուորական բժիշկ Ներսէս Շահապալեանը փութացին փրկել իր կեանքը. սիրտը շատ թոյլ էր, տարիքը 60-ը անց, չկրցաւ տոկալ եւ ութերորդ օրը մեռաւ:

Մահաւան վերջին վարկեաններուն հոն չէի. ես ալ վարակուած էի անկէ ու նոյն օրը անկողին ինկայ ձօջօյի Գասպարի սենեակին

Յոյն բժշկապետէն լուրեր կառնէինք Տարտանէլի կռիւներէն. անոր կարծիքով օրերու խնդիր է. Պոլիսը պիտի գրաւեն եւ պատե-
րազմը պիտի վերջանայ:

Բաղէչէն վերադարձին, միւթէսարըՔը նորէն պատուեց ինձ իր
այցելութեամբ: Շատ լաւ տրամադրութեան մէջ էր: Ես, որ ելած
էի անկողնէն եւ սենեակի մէջ ուժերս կը փորձէի, անմիջապէս մտայ
անկողին եւ դեռ շատ թոյլ ձեւացայ:

ՄիւթէսարըՔը ըսաւ թէ Բաղէչի մէջ տեսած է Վառմեանին, որ
Պոլիս կը վերադառնար. «չատ խելացի եւ դիտուն մարդ է, աւել-
ցուց, ճամբու դրինք. բարեւ ըրաւ. ինչալլա՛հ, դուք ալ քանի մը օ-
րէն կելլաք անկողնէն, ձեզի հետ 2-3 շաբաթ կերթանք վերի այգի-
ները օդ առնելու. կը կազդուրելք ու անկէ յետոյ կը մեկնիք. . . .
դէ՛, շուտ ըրէք շուտ», կատակով վերմակը ծեծեց քանի մը անգամ:

Զգիտեմ ի՛նչ մղումով (տիճուս հիւանդութիւնը նման տարակա-
նոն տրամադրութիւններ կը ստեղծէ) վայրկեան մը միտքէս անցաւ
բարձիս տակէն ատրճանակս հանել եւ կրակել վրան - երանի ըրած
լինէի: Ելաւ եւ մեկնեցաւ:

Ընկերները դիմեա՛ծ, յարեա՛ծ հետաքրքրութեամբ կը հետեւէին
անոնց: Եւ երբ փոստի միւտիւրը նորէն այցի եկաւ, հաստատեց Վը-
ռամեանի անցնիլը Բաղէչէն, ինքն ալ, ի հարկէ, չէր դիտեր, որ դա-
զաններու պէս պիտի յօշոտէին դայն Պաթման Սու-ի կամուրջին քո-
վը: Միւտիւրը յայտնեց նաեւ, թէ միւթէսարըՔը անձամբ ստուգե-
լու կուզայ. եթէ առողջ տեսնէ, պիտի ձերբակալէ . . . :

Սասուն գտնուող մեր ընկերները օրէ օր տեղեակ էին անցուղար-
ձէն. Վարդան վարդապետը եւ ընկերները պարբերաբար լուր կու-
տային: Սասունի ընկերները խիստ անհանգիստ էին իմ մի՛ճակի նը-
կատմամբ: Յունիսի սկիզբն էր, երկու անգամ լուր դրկեցին որ պահ-
ւիմ կամ Սասուն բարձրանամ. անհնար գտայ վարդապետին մինակ
թողուլ: Անգամ մը լուր էր դացած որ Մուշի մէջ ձերբակալութիւն-
ներ կը կատարէին. Մճօն իր խումբով իջած էր Կուրտիկէն:

Ես եւ շրջապատիս ընկերները կը զգայինք որ սուրբ կախա՛ծ է
մեր գիտուն. մէկ օրէն միւսը ինձ եւ աչքի ինկած ընկերներուն կրնան
ձերբակալել: Մանաւանդ անկողնէն ելնելէս ետքը պէտք էր ինձ քիչ
մը թարմ օդ եւ քայելու վարժութիւն: Յորեկին երբեմն սկսայ դուրս
գալ առուի եզերքով. առջեւէս եւ ետեւէս տղաք կուղեկցէին:

Յունիսի երկրորդ կէսին էր, երբ միւտիւրը հեռագրատան պաշ-
տօնեայ մեր երիտասարդ ընկերը դրկած էր ինձի ըսելու, թէ զգո՛յ՛
ըլլամ, տունս փոխեմ . . . : Այդ թելագրութեան վրա, զիշերները

ճրագս վառ կը ձգէի, իսկ ինքս Պօղոսի հետ կերթայի ուրիշ տեղ
դիշերելու:

Այլ օրերէն մէկը, յանկարծ, Սասունէն վանի իմ զինակիցնե-
րէն Մատթէոսը լիջաւ 5-6 զինուորներով. եկած էր զիս բռնի լեռ տա-
նելու այլեւս: «Միտք չունինք իշի նահատակ դարձնելու քեզ» ըսաւ
ան խստօրէն: Նոյն օրը խնդրած էի Կոտոյի Հալիին գալ խորհրդակ-
ցելու դաշտի եւ քաղաքի ինքնապաշտպանութեան կազմակերպու-
թեան մասին: Հայկ Միւրիշանեանի տանը հաւաքած էին նաեւ տեղա-
ցի ընկերներէն քանի մը կարեւոր եղողները:

Ներկաները, ինչպէս եւ Մատթէոսը, համաձայն էին որ Տարօնի
ամբողջ ժողովրդի փրկութեան խնդիրն է որ պիտի շօշափուի. Սա-
սունը չի կրնար ապաստան դառնալ հարիւր հազարէ անց ժողովը-
դին, ուրեմն պէտք է ջանալ վայրերուն մէջ ինքնապաշտպանութիւ-
նը կազմելու: Ահա՛ս, քիչ մը ուշ, բայց պատրաստեցաւ ճրագիր
մը, որուն համաձայն դաշտը կը բաժնէր հինգ ինքնապաշտպանու-
թեան շրջանակներու, իրենց շրջապատներով: Կը կազմէին պաշտ-
պանողական եւ թուուցիկ խումբեր, կարճանազրէին գէնքերը եւ
փամփուշտները. կը նշանակէին համապատասխան վարիչներ, կո-
րուչէին կապերը, դէրճերը, նշաններ, պահեստներ եւ այլն:

Նոյնը պէտք էր դորձադրել եւ քաղաքի մէջ: Այս միջոցով չըր-
ջանակները փոխադարձաբար միմեանց օգնութեան կրնային երթալ եւ
պաշտպանուիլ հաւաքաբար: Կոտոյի Հալին, Տիգրանը, դերձակ Յա-
րօն եւ այլ ընկերներ շրջան պիտի ելնէին այս նպատակով եւ նախ
պիտի օգտագործէին հին մարտիկներու փորձառութիւնը՝ անոնց
յանձնելով ղեկավարութիւնը շրջանակներու: Սասունի ընկերները,
ըստ երեւոյթին կընա՛ծ էին Սասունի պատրաստութեան մասին:
Դանութեան նշոյլ չէին ցոյց տար դաշտի պատրաստութեան մասին:
Ի՞նչ կը խորհէին. միթէ՞ իրենց ճակատագրին պիտի ձգէին, թէ՞ ու-
րիշ ճրագիրներ ունէին - ինձ անյայտ էր. քաղաքի ղեկավար ընկեր-
ներ շատ վշտացած էին եւ զայրացած:

Այլեւս բնակարանս չվերադարձայ. սկսեցի ապրիլ ընկերներու
տունները փախստական վիճակով: Մատթէոսի խումբն ալ միշտ ապ-
րածս տունիս դիմացը՝ ձորին միւս կողմը կը տեղաւորէր: 4-5 օր
անցեր էր այս կացութեան մէջ, երբ առաւօտ մը կանուխ լուսամու-
տէս նկատեցի, որ դէպի ձօճոյի Գասպարի տունը կը բարձրանան
10-15 զինեա՛ծ ոստիկաններ. տունը շրջապատած են, ներս մտան,
բայց 15-20 բողբոջներ թողին ու արագութեամբ իջան Առաջնորդարան.
Գիս կը փնտռէին անշուշտ: Վարագոյրը պատուած էր: Երկար մը-
նացին հոն. հարցուցած էին վարդապետին իմ մասին: Պատասխա-

նած էր թէ հիւանդ եմ եւ Գասպարի տանը պառկած : Չկրնալով բան մը հասկնալ, մեկնած էին :

Կը սպասէինք ընդհանուր խուզարկութեան եւ, ուրեմն, ընդհարումներու : Եթէ այս օրերուն պայթէր կռիւը, կրնամ հաստատապէս ըսել, որ Տարօնը փրկւած էր . զօրք գրեթէ չկար . կռիւը պիտի ընդլայնէր . մերինները լեռներէն կը կանչէինք, քաղաքը կը գրաւէինք եւ կը կապէինք ուսական յառաջացող բանակին :


Կառավարութիւնը այլեւս ձայն չհաննց . ըստ երեւոյթին զօրք էր ուզած եւ կը վախնար ժամանակէն առաջ սկսիլ :

Ամէն կողմէ հարկադրանքը սկսաւ : Մանաւանդ Վարդան վարդապետը եւ Մատթէոսը կը պնդէին որ հեռանամ քաղաքէն գոնէ ժամանակաւորապէս : Երթալէս առաջ շատ պնդեցինք, որ Միրիշանեան Արշակը, Տօքթ. Շահպաղլեանը, «Թիմարի Հաջին» ինձ հետ դան, բայց չհամաձայնեցան ըսելով թէ իրենք կրնան տեղի վրա պահուիլ :

Յունիսի վերջն էր . դեռ բոլորովին չապաքինած ծանր հիւանդութենէն, խումբին հետ ոտքով ինկայ ճամբայ : Չորս ժամ անընդհատ քայլեցինք ու լուսածագէն քիչ մը առաջ բարձրացանք Բերդակ գիւղի լեռը :

Փարիզ

(Շարունակելի)



ԱՐՄԵՆ ՍՅԻԱՆ

Փետրւար 18-ի Յեղափոխութիւնը *

I

ՆԱԽ ԳԱՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ը

Փետրւար 18-ի ժողովրդական յեղափոխութիւնը մեր ազատարարական պատմութեան գեղեցկագոյն էջերէն մին կը կազմէ, որ սակայն ցարդ ճշգրտօրէն չի ներկայացուցաւ հանրութեան : Ներկայ յօդածի նպատակն է՝ տալ համառօտ եւ ինչքան հնար է առարկայական պատկերը փետրւարեան շարժման :

Հայաստանի, ինչպէս նաեւ Կովկասի միւս անկախ փոքր ազգերու՝ Ազրբէջանի եւ Վրաստանի խորհրդայնացումը անխուսափելի պէտք էր համարել այն օրէն, երբ Տէնիքինի ու Վրանկէլի բանակները շարժուեցան, երբ Կովկասի մասնը ազգերու համագործակցութեան փորձերը ապարդիւն անցան եւ Թիւրքին ու Ռուսաստանը դաշնակիցներու, ի մասնաւորի Անգլիոյ դէմ իրենց պայքարը աւելի յաջող կերպով տանելու համար՝ պէտք զգացին ներդաշնակեցնելու իրենց գինւորական եւ քաղաքական քայլերը : Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր, որ վերացէին այն բոլոր արգելքները, որ

* Այս տարի լրացաւ փետր. 18-ի յեղափոխութեան 15ամեակը : Հանգամանքները մեզ, տարաբախտաբար, բայլ չտուին ուսումնասիրութիւններով եւ վաւերագրերով լուսարանել մեր նորագոյն պատմութեան այդ նշանակաւոր դէպքը : Մենք այդ դեռ կանենք : Այժմ կը բաւականամեծ միայն՝ հրատարակելով մեր աշխատակից եւ փետր. 18-ի աչքի ընկնող դերակատարներից Արմէն Սեւանի այս գրութիւնը, որ բռուցիկ, բայց ընդհանուր առմամբ, ճշգրիտ արձանագրութիւնն է կատարած դէպքերի : Գրածքը արժէքաւոր է, մանաւանդ այն պատճառով, որ նա պատրաստած է դէպքերից անմիջապէս յետոյ, բարձր տպագրութեան տակ, երբ հեղինակը, Պարսկաստանի, Իրաքի եւ Հնդկաստանի վրայով անցնում էր Եւրոպա :

ներու մէջ իր անկախութեան շէնքը, միւս կողմէ ստիպւած էր մտածել ուսական սպառնալիքները դիմադրուելու մասին: Ղազարի սահմանին վրա սկսած էր ուսական զօրքերու կեդրոնացումը, հաշտութիւնը Ալեքսանդրապոլի մէջ դեռ չէր կնքուել: զօրքը ստիպւած էր մնալ այնտեղ: Լրգրանը կը հաւաստիացնէր շարունակ Ռուսաստանի չէզոքութեան մասին. մինչ նոյեմբերի 29-ին կարմիր զօրքերը մըտան Ղազար: Լրգրանը նոյեմբեր 30-ին, առաւօտեան ի պատասխան Հայաստանի կառավարութեան բողոքին, գրաւոր կերպով յայտնեց թէ եղածը թիւրիմացութիւն է, թէ ինք միջոցներ է ձեռք առեր որ զօրքը ետ քաշել: բայց այս բոլորը արգելք չեղան, որ նոյն օրը, կէսօրին յայտնէր մեր կառավարութեան, թէ Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի որոշմամբ, Հայաստանի մէջ պէտք է հաստատուին խորհրդային կարգեր:

Իրութիւնը ծանր էր, թիւրքերը դրած էին ամենածանր պայմաններ վերջնադրի ձեւով. մտածելու ատեն չկար, մէկ ժամէն միւսը կարող էին շարժիլ Երեւանի վրա. ուսական սպառնալիքը կար իր բոլոր մեծութեամբ. բայց ուս զօրքը հեռու էր: Կանխելու համար թրջական նոր վտանգը կառավարութիւնը հրահանգեց պատուիրակութեան ստորագրել թրջական պայմանները, միաժամանակ բանակցելով Լրգրանի հետ ոչժամի փոփոխութեան մասին: Եւ Դեկտ. 2-ին ստորագրուեցաւ համաձայնութիւն՝ հետեւեալ պայմաններով.

- ա) Հայաստանը կը ճանաչել անկախ խորհրդային հանրապետութիւն:
- բ) Խորհրդային Ռուսաստանը կապահովէ Հայաստանի սահմանները եւ վտանգի դէպքին կը պարտաւորուի ցոյց տալ զինուորական օգնութիւն:
- գ) Հայաստանի սահմաններուն մէջ անվիճելիօրէն պէտք է մըտնեն հետեւեալ հողամասերը: 1) Ամբողջ Երեւանի նահանգը, 2) Կարսի նահանգի մէկ մասը, 3) Գանձակի նահանգէն՝ Զանգեզուրը եւ Ղազարի դաւառի այն մասը որ Հայաստանի կիցնար 1920 թ. Օգոստ. 10-ի համաձայնութեամբ, 4) Թիֆլիսի նահանգի այն մասը որ Հայաստանի ձեռքն էր մինչեւ 1920 թ. սեպտ. 28:
- դ) Ոչ մի ընկերվարական կուսակցութեան անդամ չպիտի հալածուի իր կուսակցութեան պատկանելիութեան եւ իրենց առաջնայ դրօշերու պատճառով:
- ե) Հայ բանակի սպաները չպիտի հետապնդուին իրենց նախկին գործունէութեան համար:
- զ) Հայաստանի Յեղկոմը պիտի կազմուի 7 հոգիէ, 5 կոմունիստ եւ 2 ձախ դաշնակցական:

Այս համաձայնագրին եւ կառավարութեան ընդգրկած ուղղութեան համաձայն էին բոլոր կուսակցութիւնները: Հարցը նոյն իմաստով վճռուեցաւ նաեւ խորհրդարանական շրջանակներու մէջ: Թրջական ծանր պայմաններու յայտնուելէն յետոյ, մանաւանդ, Հայաստանի խորհրդայնացումը կը համըւէր նազադոյն չարիք մը: Պետական եւ կուսակցական գործիչներու խոշոր մասը համակերպած էր կառավարութեան եւ անկեղծօրէն կը բաղձար գործակցել մեծամասնականներուն երկրի վերաշինութեան գործին, հոգ չէ թէ երկրորդական եւ երրորդական պաշտօններու մէջ: Մէկ մտահոգութիւն միայն կար՝ այնպէս մը ընել, որ փոխանցումը ըլլայ առանց ցնցումներու. . . եւ ժողովուրդը լծուի իր խաղաղ աշխատանքին:

Ղեկավար շրջաններու մէջ հարցը քննուելէն եւ որոշուելէն յետոյ, համաձայն Լրգրանի հետ կնքուած պայմանագրի, մինչեւ Յեղկոմի Երեւանի ժամանումը, իշխանութիւնը Դեկտ. 2-ին յանձնուեցաւ բանակի հրամանատար Դրոյին: Նոյն օրը, առաջի ընկնող խումբ մը գործիչներ հեռացան Երեւանէն: Երեկոյեան ժամը 6-ին արձակուեցան բոլշեւիկ բանտարկեալները: Հայկական եռագոյնը այլեւս չերեւաց խորհրդարանի շէնքին վրա, ու տեղ-տեղ կարմիր դրօշակները սկսեցին ծածանիլ այնքան եղերականօրէն օտարոտի:

Հայաստանը յայտարարուած էր խորհրդային . . .

II

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2-ԷՆ ՄԻՆՉԵՒ ՓԵՏՐ. 18

Հայաստանի ժողովուրդի, կարելի է ըսել, բոլոր խաւերու բաբեցակամ վերաբերմունքը նոր իշխանութեան հանդէպ ամէն կասկածէ դուրս էր այն ատեն, երբ առաջին անգամ, Դեկտ. 6-ին, Յեղկոմը մտաւ Երեւան: Նոյնիսկ որոշ շրջաններու մէջ խանդավառութիւն ալ կը նշմարուէր. զանազան կուսակցութիւններ եւ հասարակական մարմիններ չի վարանեցան ողջունելու կասեանի կառավարութեան գալուստը, իրենց կողմէ նշանակուած յատուկ ներկայացուցիչներու բերնով: Յոյս կար որ դէպքերը պիտի ընթանային խաղաղ, առանց չափազանցութիւններու: Թէեւ դեռ Յեղկոմի գալէն առաջ եղան որոշ անհաճոյ դէպքեր, զանազան նախկին նախարարներու տներու թալան. մի քանի աչքի ինկող գործիչներու ձերբակալութիւն, ինչպէս տարաբաղդ Բախշի իշխանեանի, բայց ամէն ոք տրամադիր էր այդ դէպքերը նկատելու սկզբնական օրերու իշխանութեան թուլութեան հետեւանք եւ արդիւնք ջահել կոմունիստներու:

չափազանցած եռանդին: Սխալեր էինք սակայն: Սկզբնական օրերու ձերբակալութիւններէն մի քաի օր յետոյ ստացեցաւ ձերբակալութեան լուրը վրացական սահմանն անցնելու համար ճամբայ ինկած կարգ մը հանրածանօթ գործիչներու՝ նախկին վարչապետ Համ. Օհանջանեանի, Արտ. Չիլինգիրեանի, րժ. Յով. Տէր-Գալթեանի՝ Վ. Նաւասարդեանի, Վ. Բարայեանի, Գ. Վարչամեանի, Ա. Աստաւատրեանի եւ այլն, որոնք ձմրան ցուրտին, աննախանձելի պայմաններու մէջ արգելափակեցան Երեւանի բանտին մէջ: Այս ձերբակալութիւններուն սկսան յաջորդել նորեր, այս կամ այն պատրուակաւ, միշտ աշխատելով խուսափել քաղաքական բնաւորութիւն տալէ: Սկզբնական օրերու լաւատեսութիւնը սկսաւ տակաւ աղօթիլ. զգալի դարձան բռնութիւնները գաւառներու մէջ. գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք երթեւեկները դժարացան, տակաւ յայտնի եղաւ, որ իշխանութեան գլուխ գտնողները ոչ պէտք եղած հեռատեսութիւնն ունէին եւ ոչ ալ ուժն ու ազդեցութիւնը ժողովուրդին աւելորդ ցընցումներ խնայելու համար: Հրապարակ եկան կոմունիստ տղայամիտ, մոլեռանդ ու տգէտ գործիչներ, այլուր իրենց տեսածն ու լըսածը կիրարկելու համար նաեւ մեր իրականութեան մէջ, առանց ճանաչելու երկիրն ու ժողովուրդը դոնէ նւազագոյն չափով:

Ազգային բոլոր արժէքները անարգեցան իբրեւ բուրժուական ստեղծագործութիւններ: Ազգի, հայրենիքի, ժողովրդապետութեան, ազատութեան, հաւասարութեան դաղափարները համարեցան հակայեղափոխական հասկացողութիւններ: Հայ լեզուն անհեցանքաւ բոլոր պետական եւ հասարակական հիմնարկութիւններէն: Երեւանը մասնաւորապէս դարձաւ ոռուական քաղաք, կորսնցնելով իր ամբողջ հարազատութիւնը: Ոչ մի կուսակցութեան չարտօնեցաւ բերել իր հաւաքական աշխատանքը պետական, հասարակական կեանքի մէջ: Մամուլը դարձաւ բոլշեւիքներու մենաշնորհ, մտածեւացութեան տրեցաւ ամբողջութեամբ: Հայրածանքները ամէն գետնի վրա դարձան պետական սխտէմ: Յեղկոմէն չեզոքացուցին դաշնակցական անդամները՝ Հ. Տէրտէրեանը դարձնելով զանձատան պաշտօնեայ, իսկ Դրոյին քաղաքապարի աքսորելով դէպի Բազու եւ յետոյ Մոսկա: Վերջին հեռացումը, մանաւանդ, շատ ծանր տպաւորեց ժողովրդի վրա, նախազգալ տալով տխուր հեռանկարներ:

Սկսաւ կոմունիստական աշխատանքը, ամբացնելու համար դոյութիւն չունեցող պրոլետարիատին իշխանութիւնը: Ամենուրեք բռնադրուումներ ու պաշտօնական թալան. դէնքի սպառնալիքով իւրեցան ժողովուրդի ապրուստի վերջին հնարաւորութիւնները,

«նւէրներ» ուղարկելու համար Բազուի ու Մոսկայի բնաւորութեան եւ կերակրելու համար Հայաստան բերած ոռուական զօրքը: Ամենայն յետին չքաւորի տնէն աշխատեցան խլել հացահատիկի եւ մթերքի ամենաչնչին քանակն իսկ, ձեռք բերած ամենաչարքաշ աշխատանքի եւ զոհողութեան դնով: Հայրածանքը միայն հարուստին դէմ չէր, կը եւ զոհողութեան դնով: Հայրածանքը ամենքը անխտիր: Ամենէն անվնաս կողոպուէին ու կը հայրածանքին ամենքը անխտիր: Ամենէն անվնաս խօսքը, արտասանւած բռնարարած իրաւունքի պաշտպանութեան համար, ենթական կը դարձնէր «հակայեղափոխական»: Չտեսնած, չլուծած բռնութիւն էր: Հայաստանի մերկ բնակչութենէն խլեցաւ հազուատեղէնի «աւելորդ» նկատուած քանակը. ամէն կոմունիստ իրեն իրաւունք կը համարէր պատահած տեղէն, այս կամ այն անձէն սեփականացնելու այն ամենը՝ ինչ իրեն հաճելի էր, յայտարարելով սեփականութեան սկզբունքի ժխտումը: Ամենուրեք հայ գիւղացիէն ստանները մորթեցան ոռու զօրքին համար. մաս մը ուղարկեցաւ Ռուսաստան: Յուցակագրեցան ամենավերջին հաւն ու հաւկիթը: Ժողովուրդը յուսահատ սկսաւ մորթել իր անասունները, լծկան եղները: Իր կովն ու ոչխարը, այսպէս սեփական ձեռքով ահամայ քանդելով իր առանց այն ալ աղքատ տնտեսութեան հիմքերը:

Այսպէս անխնայ խլեցաւ գիւղացու հացն ու անասունը, քաղքրցու ստացածքն ու սեփականութիւնը: Հայ մտաւորականութիւնը ստիպուած եղաւ տալու ոչ միայն իր ցամաք հացը, այլ եւ գիրքն ու թուղթը: Բոլոր մասնաւոր գրքերն ու գրադարանները բռնադրուեցան իբրեւ թէ պետական մտտեղարարանի ճոխացնելու. բայց պետութիւնը բաժնեցան կոմունիստ բնկերներու միջեւ: Գրագէտները, որոնք իրենց ձեռագիրները պահելու տեղ չէին գտներ, անդար պտտցնելով գանոնք տնէ տուն, պահ տալով ասոր անոր մօտ:

Քաղաքական այս մթնոլորտին մէջ ծանր էր չնջել: Անդրանիկ օրերու յոյսերուն յաջորդեց կատարեալ հիասթափութիւնը ու քիչ յետոյ խուլ դժգոհութիւնը, որը աւելի անդուսպ բնաւորութիւն ստացաւ, մանաւանդ, գիւղերուն մէջ:

Ստեղծած այս կաղութեան հաւանական հետեւանքներու մասին նախկին կառավարութեան վարչապետ Ս. Վրացեանի կողմէ յատկապէս դիտելի արեւցալ Յեղկոմի նախագահ Կասեանի, առաջարկելով վերջ տալ հայրածանքներուն եւ ճնշումներուն: Դիմումը անցաւ անօգուտ:

Շատ չանցած վրա հասաւ Հայաստանի բանակի սպաներու հաւաքական աքսորը ամենատմարդի ձեւերով եւ ամենատաժանելի

առաւօտուն սկսաւ ապստամբութիւնը մայրաքաղաքին մէջ ալ: Թշնամին կարճ ղիմադրութենէ յետոյ, յուսահատ նահանջեց դէպի Ղամարլու, համաձայն իր կանխորոշած ծրագրին:

Երեւանը ահ ու դողի եւ անձկութեան ամիսներէ յետոյ, այլեւս ազատ էր. բանտերուն դռները խորտակւած էին եւ հազարաւորներու կեանքը փրկւած: Ամէն ոք ցնծութեան մէջ էր: Խորհրդային կարմիր դրօշները այլևս չկային եւ հայկական կարմիրն էր որ կը ժպտէր կապոյտին ու նարնջագոյնին հետ միասին:

Հայաստան յայտարարւած էր ազատ եւ անկախ: Յայտարարւած էր Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի իշխանութիւնը Ս. Վրացեանի նախագահութեամբ:

III

ՓԵՏՐԻԱՐ 18-ԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՊՐԻԼ 2-Ը

Փետրւար 18-ի յեղափոխութիւնը յաջող կերպով սկսաւ: Այդ յաջողութեան մեծապէս նպաստեց կարմիր բանակի մէջ գտնուող հայ զօրքի եւ սպայութեան մեծ մասը, որ կռիւներու ընթացքին ընդհանրապէս բռնեց կրաւորական դիրք՝ երբեմն ալ անցնելով յեղափոխական ժողովրդի կողմը:

Ճիշտ է. առաջին յաղթանակը շահւած էր, բայց անհրաժեշտ էր ապահովել յաղթանակի տեւականութիւնը: Երկրի մեծագոյն մասէր ապահովել յաղթանակի տեւականութիւնը:

Կռիւր դեռ վերջացած չէր: Երեւանէն նահանջած կարմիր զօրքը, թուով 3000 հոգի, մեծամասնութեամբ ուռւ, զօրացած երկու զբրահայատ գնացքներով եւ ուժեղ հրետանիով՝ կամրանար Երեւանէն քիչ հեռու, Ղամարլուի շրջանին մէջ, ստեղծելով կուր ուժեղ ճակատ մը: Կուր ճակատ կազմւած էր եւ Ելենովկա, նախաձեռնութեամբ այդ շրջանի մարտիկներու եւ փախստական կարմիր զօրքեթեամբ այդ շրջանի մարտիկներու:

ւած եւ կամ յեղափոխութեան կողմ անցած Հայաստանի բանակի ըստաներէն: Ամբողջ հայ մտաւորականութիւնը՝ մեծով պղտիկով կամ մաւորապէս զինւորագրւեցաւ ժողովուրդի փրկութեան գործին: Ողբերգ մէկ աշխատանք միայն կար - զինւորական աշխատանքը: «Ի՛նչպի ուղմաճակա՛տ»: այս էր ամենուն կարգախօսը. կարելի է ըսել, թէ հայ ժողովուրդը ոչ մէկ ատեն չկուեցաւ ողբերգութեան այնքան բարձր աստիճանով, ինչքան այս յեղափոխական կուր ընթացքին:

Մինչ մէկ կողմէ կազմակերպչական ախատանքը ուժեղ կերպով կը շարունակէր, միւս կողմէ թշնամին սթափած իր ստացած հարձեռներէն՝ կը դառնար սպառնալից, ջանալով վերցնել կուր նախաձեռնութիւնը: Փետր. 26-27-ի կռիւները ճակատագրական կռիւներ էին, երբ թշնամին յարձակողականի դիմելով՝ հասաւ Երեւանի տակ, գրաւելով Շէնգաւիթ գիւղը եւ ուժակոծելով մայրաքաղաքը: Բայց գրաւելով Շէնգաւիթ գիւղը եւ ուժակոծելով մայրաքաղաքը: Բայց գրաւելով Շէնգաւիթ գիւղը եւ ուժակոծելով մայրաքաղաքը: Բայց գրաւելով Շէնգաւիթ գիւղը եւ ուժակոծելով մայրաքաղաքը:

ա) Բոլշեւիկեան Ռուսաստանը ճիշդ կընէր հաշուելու դաշնակիցներուն հետ եւ արդէն յաջողած էր Անդլիոյ հետ կնքել առեւտրական դաշն:

բ) Ռուսաստանը Մուստաֆա Բէմալի բարեկամութիւնը վերջնապէս ապահոված էր՝ կնքելով մարտի սկիզբին Մոսկուայի ուռւ եւ թուրք դաշնագիրը:

գ) Վրաստանը, որ մինչեւ յեղափոխութիւնը կը պահէր իր անկախ գոյութիւնը, ուռւերու կողմէ նուաճեցաւ անյաջող ղիմադրութենէ մը յետոյ, Հայաստանի յեղափոխութենէն շարաթ մը վերջ՝ փետր. 25-ին:

դ) Այդ ատեններն էր, որ Լոնտոնի դաշնակից խորհրդաժողովը, ի նպաստ թուրքերուն որոշեց վերաքննել Սէվրի դաշնագիրը: Ահա թէ ինչպէս էին դասաւորւած արտաքին քաղաքական պայմանները:

Ներքին կեանքին դալով՝ այդտեղ ալ դժւարութիւնները մեծ էին եւ բազմատեսակ, գլխաւորաբար շնորհիւ այն հանգամանքին, որ

բողիկեիկները ամէն ինչ փճացուցին իրենց երկուք եւ կէս ամուսյ գոյութեան ընթացքին. կողոպտեցին երկիրը ինչով որ կարող էին, ամէն ինչ մսխեցին առանց բան մը աւելցնելու մեր պետական թէ ժողովրդական հարստութեան վրա: Թէ այդ բոլորը ինչով անդրադարձաւ յեղափոխական կուէի ընթացքին՝ դժւար է թելել:

ա) Զօրքը՝ ձմրան բուք ու բորանին մնաց առանց հազուստի, պետական պահեստներու ղինւորական ղգեստները բաժնուած ըլլալով ոռւսական զօրքին:

բ) Բոլոր պետական շտեմարանները դատարկուած էին հացահատիկէ կերակրելու համար ոռւսակ. 11-րդ բանակը. ժողովուրդի ունեցած համեստ պաշարն ալ սպառելով անվերջ բռնազրաւումներով, որով դժւարացաւ յեղափոխական բանակի պարենաւորումը:

գ) Կարելի չեղաւ բաղձալի չափով կազմակերպել եւ լաւագոյնս ղեկավարել յեղափոխական զօրքը, որովհետեւ Հայաստանի բանակի լաւագոյն ղեկավարներն ու սպաները քիչ բացառութեամբ, աքսորուած էին Հայաստանէն:

դ) Հաղորդակցութեան միջոցները, որոնք կենսական կարեւորութիւն ունէին, կարելի չեղաւ նոյն իսկ միջակ չափով մը օգտագործելու, որովհետեւ պետական պահեստներու մէջ կաթիլ մը ալքէոլ կամ պէնզին չէր մնացեր:

ե) Բացի այդ կարեքներէն, բանակը մեծ պակաս ունէր նաեւ փամփուշտի: Գիւղացիութեան ունեցած ղէնքը ոռւսական Մօսկնն էր, նա վարժ էր առաւելապէս այդ ղէնքին. ղինւորական պահեստներու մէջ սպառեր էր համապատասխան փամփուշտը. կուէր կարենալ շարուսակելու համար անհրաժեշտ կրկար ման գալ գիւղէ գիւղ եւ փամփուշտ հաւաքել՝ հինգով, տասնով, քսանով, մինչ միայն Ծաղկափուշտ հաւաքել՝ հինգով, տասնով, քսանով, մինչ միայն հաշուով ձորի ճակատին վրա օրական սպառումը կը հասնէր միջին հաշուով 15,000-ի: Ամբողջ կուէի բեռը ծանրացած էր ղիւղացիութեան վրա: Գիւղացին ինք էր թէ կուտը եւ թէ կուէի համար անհրաժեշտ բոլոր պէտքերը հայթայթողը. հրացանն իրն էր, իրն էր փամփուշտը. հազուստը իր տան գործածն էր, հազր՝ իր ապրուստի համեստ պահարկի վերջին բեկորը, եւ այսպէս ամէն ինչ: Գիւղացին առանց տրւատունջի տարաւ ազատագրական կուէի բոլոր պարտութիւնները, որոշած ըլլալով մեռնիլ իր ազատութեան համար. որովհետեւ մահէն աւելի վատ մի ուրիշ բան կար՝ բողիկեիկեան մթնոլորտի մէջ ապրելը: Զուրկ՝ ձմրան ցուրտին ղէմ պաշտպանելու անհրաժեշտ միջոցներէ, միայն Ծաղկաձորի ճակատին վրա օրական միջին հաշուով 50 հոգի ցրտահար կրկար՝ դառնալով որոշ ժամանակի համար այլեւս ղէնք կրելու եւ կամ աշխատանք կատարելու անընդունակ, չհաշ-

ւելով սպանուածը, վիրաւորն ու հիւանդը: Այս բոլորին ղէմ, ամէն օր պէտք է դային, եւ կուգային նորերը, լեցնելու համար նօսրացած շարքերը:

Եղրակացնելով՝ մի բան կարող ենք առանց վարանելու յայտարարել, որ մենք ոչինչ չունէինք կուէի յաղթական վախճանը հաշուելու համար, ունէինք միայն իր ազատութեան համար մեռնելու որոշում տուած ժողովուրդի մը անտեղիտալի կամքը, որ կը պայծառացնէ փետրուարեան յեղափոխութեան իմաստը՝ նւիրազործելով անոր եւ սկիզբը ե՛ւ վախճանը:

Փետր. 18-ի յեղափոխութիւնը, ըլլալով զուտ ժողովրդական նախաձեռնութեան եւ ժողովրդական անընդաւրբելի կամեցողութեան արդիւնք՝ իր թափին մէջ կրցաւ մէկ օրէն միւսը պարտութեան մատնել թշնամուն: Լաւագոյնս յաջողած շարժում մ'էր ան իր գործունէութեան դաշտին վրա գտնուող հակամարտ ուժերու պայքարի փոխարարելութեան մէջ: Բողիկեիկեան Հայաստանը, եթէ իսկապէս դոյութիւն ունէր իրրեւ զուտ Հայաստանի իշխանութիւն, հայ ժողովուրդի եւ հայ հողի համար ստեղծուած, ջախջախուած էր նոյն հայ վուրդի եւ հայ հողի համար ստեղծուած, ջախջախուած էր նոյն հայ ժողովրդի կողմէ իրրեւ անհարազատ եւ անպէտ գոյութիւն մը, որուն չէր կարող հանդուրժել հայ ժողովուրդը:

Ռազմաբեմի բոլոր ճակատներուն վրա թշնամին պարտուած էր անյոյս կերպով, բայց բաղդը տարբեր կերպով տնօրինեց. կուէի շատուածը ղիւղացաւ որ հայութիւնը քաղէ իր յաղթանակի արդար պտուղը: Վրաստանը իր բաղդին հետ որոշեց եւ Հայաստանի՝ ճակատադիրը. ոռւսական բաղմահադար մութիկներու կողք ալիքը ուղղեցաւ ղէպի Հայաստան, անդամ մը եւս արեան մէջ իսկողելու տառապած ժողովուրդի մը այնքան սուղ գնած ազատութիւնն ու անկախութիւնը:

Թիֆլիզը ինկած ըլլալով փետր. 25-ին, մարտ ամսոյ սկզբին Ծաղկաձորի եւ Համամուլի ճակատներուն վրա թշնամու ճնշումը նկատելի կերպով աւելցաւ. սկսան շարաթներ տեւող յամառ կռիւներ. յեղափոխական զօրքը ստիպուեցաւ նահանջել: Արիւնայի կռիւներ մղեցան Ախտալի շուրջ, որ ինկաւ Մարտ 17-ին, Սուխոյի-Փոնտանի՝ որը թշնամին գրաւեց 23-ին: Ապրիլ 2-ին դրութիւնը դարձաւ յուսահատական՝ Էյլարի, Քանաքեռի եւ Աշտարակի անկումով, որու հետեւանքով դատարկեցաւ Եղարդը:

Վէտիի մէջ ամբացած կարմիր զօրքերը, որ մարտի վերջը պատրաստուած էին անձնատուր ըլլալու, շարունակեցին իրենց ղիւտագրութիւնը, երբ Թիֆլիզէն ճամբայ ինկած յատուկ օգնուած մը իրադէկ դարձուց ղիւրենք Վրաստանի անկման եւ ոռւսական օգնական ու-

Ժերու ժամանումին եւ մեր դանդաղ այլ տեւական նահանջին մասին :
 Որոշեցաւ դատարկել նաեւ Երեւանը, խուսափելու համար պաշարելէ եւ քաղաքը կուրի ասպարէզ դարձնելէ : Սկսաւ նահանջը . եւ միայն զօրքը չէր որ նահանջեց, այլ անոր հետ տասնեակ հազարով ժողովուրդ՝ ծեր, երախայ, դինւած, անոգէն, կին, տղամարդ, ամենքը հեռացան քաղաքէն : Հրադրանի դաշտերուն մէջ եւ տեսայ հիւանդներ, որոնք միայն ճերմակեղէններով ոտարօպիկ փախեր էին հիւանդանոցէն, այնպէս որ երբ կարմիր զօրքը եւ անոր ղեկավարները մայրաքաղաք մտան, սրսափեցան տիրող ամայութենէն . . . :
 Եւ այդ ապտակը, որ Երեւանի ժողովուրդը իջեցուց կոմունիստներու երեսին, ազգային անկախութեան համար մղւած ճակատամարտներու մէջ շահւած ամենամեծ ճակատամարտն էր . . . :

Ապրիլ 2-ին, կէս օրէ յետոյ, Երեւանը ինկաւ, բայց հայրենի լեռները դեռ կանգուն էին . . . :

IV

ԱՊՐԻԼԻ 2-ԷՆ ՅՈՒԼԻՍԻ 10

Նոր Եղիշէ մը պէտք է 20-րդ դարու այս նոր Վարդանանցը պատմելու համար : Հայաստանի ամբողջ մտաւորականութիւնը, բոլոր անոնք որ հնարաւորութիւն ունեցեր էին նահանջի ճանապարհն ինչալու, ազգային դրօշին հաւատարիմ ամբողջ զօրքն իր հրամանատարներով, համալսարանի եւ առհասարակ ամէն կարգի դպրոցներու ուսուցչութիւնը, գրադէտ, բանաստեղծ, քաղաքական գործիչ, բժիշկ, իրաւաբան, երկրաչափ, ամէն կարգի մասնագէտներ, ուսանողներ, աշակերտներ, ամբողջ պետական պաշտօնէութիւնը, անխտիր, ամէն դասէ, սեռէ ու կուսակցութենէ, ամբողջ հայ ժողովուրդի ազը, ապրիլի 2-ին ճամբայ ինկան դէպի Բաշ-Գառնի՝ չունենալով նահանջի ուրիշ ո եւ է ճանապարհ : Ուղին դժւարին էր, բայց հողիները բարձր . իրենց սիրտը տխուր էր, բայց չես գիտեր ո՞ր հեռաւոր յոյսին հաւատքովը կը պայծառանար իրենց նայածքը : Մարդկային հսկայ թափօրը կը սողոսկէր Հայրենի լեռներն ի վեր, ծանր ու յոգնարեկ, դեռնին կաւը կը ծանրացնէր իրենց քայլերը եւ մարդիկ օգնութեան կը հասնէին գրաստներուն, բարձրացելու համար ցեխոտ եւ ուղղածիզ ճանապարհէն ծանր թնդանօթները : Ապրիլ 3-ի երեկոյեան Բաշ-Գառնի են բոյորն ալ : Հազարներ հաշուող անոգէն ժողովուրդը կը շարունակէ իր ճամբան Միլլի ձորով, ամայի եւ անմարդաբնակ վայրերով, օրեր յետոյ հասնելու համար Գարա-


լազեաղ, եթէ երբեք հնար լինի ճեղքել անդունդներն ու լեռները միաժամանակ պատած ձիւնը : Զօրքը կը բռնէ Բաշ-Գառնիի դիրքերը՝ ապահովելու համար ժողովուրդի նահանջը :
 Ապրիլ 4-ին կը սկսի կարմիրներու ուժեղ յարձակումը դիւրի դիրքերուն դէմ, բայց մեր հակայարձակումով ետ կը մղուի : Անոնք կը դրաւեն անկէ թնդանօթներ, դնդաձիւրներ եւ ոսկամթերք եւ մեր զօրքը յառաջանալով՝ կը դրաւէ մի քանի դիւրեր : Այդ ատենն է, որ կը սկսի խուճապը Երեւանի մէջ, ուր կոմունիստները կը պատրաստուին փախուստի, ինչպէս կը վկայեն ամիսներ յետոյ Երեւանէն հեռացող արժանահաւատ անձինք : Կարմիրները սխալէր էին . հակայարձակման միակ նպատակն էր ապահովել ժողովուրդի նահանջը : Ապրիլ 6-ին վերսկսան թշնամու նոր եւ ուժեղ յարձակումները . անոգէն մարդիկ, կիներ, ծերեր, եւ այլն, արդէն քանի մը օր առաջ հեռացեր էին . այլօր ինկաւ եւ Բաշ-Գառնին : Մեր զօրքի մէկ մասը նախապէս ուղարկւած էր Սարաբայ-Գոթանլու նահանջի դիժը ապահովելու համար :
 Անլուր դժւարութիւններով, հազարաւոր մարդիկ ձիւնին ու անձրեւին տակ, կիսաքաղց, հետիոտն, անքուն, առանց հանգստանալու, յաճախ ոտարօպիկ՝ մատաղատի օրիորդներ, տարիներու ձիւնը շալկած մարդիկ, հողեկան զմայելի տոհմութեամբ, արձաւոր համարհանքի եւ ինքնապատահութեան ժպիտը երեսնին, կատակը չրթունքին, հինգ վեց օր անընդհատ քալելէ յետոյ, կտրեցին բարձրաբերձ լեռները եւ ձիւներուն ու ցեխին մէջէն հասան Գարալազեաղ, ուր ժողովուրդը դեռ տէրն էր իր ազատութեան : Զօրքի մէկ կարեւոր մասը մնաց այնտեղ, իսկ բոլոր մնացածները, 10-15 օր քաղաքէն համեմատաբար աւելի հանգիստ պայմաններու մէջ, լեւէ յետոյ, համեմատաբար աւելի հանգիստ պայմաններու մէջ, հայ դիւրերէ՝ ուր հնարաւորութիւն ունեցան գլուխը բարձին դնելու եւ անօթի չի մեռնելու, ոտք դրին Արաքսի ափը՝ Մեղրի, անկէ ալ Շահնշահներու երկիրը :
 Այս նոր «Նահանջ Բիւրօցն»-ը իր բոլոր կողմերով յարմար բուսէին անհրաժեշտ է որ հատորով մը պատմութեան յանձնուի :
 Դեկտ. 2-ին, երբ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը իշխանութիւնը կը յանձնէր բոլշեւիկներուն, անկէ առաջ Զանգեզուրը ենթարկւած էր սովի թիզացիայի եւ ճաշակելի յետոյ նոր իշխանութեան բարիքները օր մ'ալ իր ձորերուն մէջ ջախջախեր էր ոռւսական հորդաները եւ ժողովրդական համագումարով մը ինքէր վինքը յայտարարեր էր ինքնավար, Գ. Նժդեհի ղեկավարութեամբ կազմակերպելով իշխանութիւնը իր անհրաժեշտ ղինւորական եւ քաղաքական հաստատութիւններով : Դեկտ. 2-էն մինչեւ փետր. 18 տե-

ցաւ 800 հոգի, 5 թնդանօթ, 26 զնդացիր, ուսումամթերք, պաշար եւ այլն: Ռազմաճակատի մէկ ուրիշ կէտին վրա կրած անյաջողութիւն մը անհրաժեշտ դարձուց Դարալազեացի դատարկումը, որուն հետ դժւարացաւ հաշուել զօրքը. սկսաւ թշնամու յարձակումը Զարուղէն՝ սպառնալով Գորիսին. Մենքէնդի հազարաւոր քօչուորները միացան թշնամուն. սաստիկ կռիւ սկսաւ եւ Գենւազի դէմ:

Յուլիսի 2-ին ինկաւ Գորիսը: Դրութիւնը ծանր էր: Կարճեւանն ու Կաքաւաբերդը հերոսական դիմադրութիւն ցոյց տւին մինչեւ վերջին րոպէն՝ պարտութեան մատնելով հակառակորդը, պատճառելով անոր անազին կորուստներ եւ ապահովելով մեր զօրքի թիկունքը: Որոշեցաւ ընդհանուր նահանջ: Կառավարութիւնը ամէն ճիգ թափեց, որ ժողովուրդը տեղէն չչարժի, եւ այդ պատճառաւ Զանգեզուրէն համեմատաբար քիչեր դաղթեցին: Յուլիս 10-ին «Մայր Արաքսը» կը բաժնէր հայրենիքի վերջին պաշտպանները մայր երկրէն:

Acta es fabula! Իջաւ վարագոյրը այս մեծ սուամին, որը մեր ազատագրական պատմութեան ամենէն արեւոտ էջերէն մին կը կազմէր իր բոլոր արիւններով միասին:

10 Յունւար, 1922, Բասրա.



ԱՆՑԵԱԼՔ

ԱԿԱԳ. ԱԼԵԲՍԱՆԻՐ ԹԱՄԱՆԵԱՆ

Երեւանում փետր. 23-ին վախճանել է նարտարայետ Ա. Թամանեանը: Նրա կեանքին ու փայլուն գործունէութեան մեկ դեռ առիթ կուենանք անդրադառնալու: Առայժմ տալիս ենք հանգուցեալի համառօտ կենսագրութիւնը, գրւած պրոֆ. Ա. Բալանթարի կողմից «Ն. Հ.»-ի մէջ, 1926 թւին:

Ալեքսանդր Յովհաննիսի Թամանեանը ծնւել է մարտ 5-ին, 1878 թ. Եկատերինուարում: Միջնակարգ կրթութիւնը ստացել է նոյն տեղի ոչալական դրոցում: Դեռ ստորին դասարաններից նա մի առանձին սէր ու հակումն է ունեցել դէպի նկարչութիւնը: Իր նկարչութեան ուսուցիչ Կուրոչկինը, մի շատ հմուտ եւ պատրաստած մանկավարժ, նկատելով նրա մէջ գեղարեւոտական արտասովոր ընդունակութիւններ՝ յատուկ ուշադրութեամբ եւ հոգատար կերպով դունակութիւններ՝ յատուկ ուշադրութեամբ եւ հոգատար կերպով սկսեց հետեւել նրա աշխատանքներին, եւ, ոգեւորւած իր աշակերտի յառաջդիմութեամբ, նրա ինքնակամ ղեկավարը դարձաւ:


Հինգերորդ դասարանից սկսած արդէն միանգամայն պարզւած էր Թամանեանի համար իր ապագայ ուղին: Նրա ամբողջական հաշիւում գեղարեւոտով ու մաթեմատիկայով եւ հրապոյրը դէպի քարէ խոշոր զանգւածները, նրանց զուգորդութիւնը, ուժեղ թափը՝ տանում են նրան դէպի ճարտարապետութիւն: Աւարտելով ոչալական դպրոցը՝ նա մեկնում է Պետերբուրգ՝ մտնելու Գեղարեւոտից Ակադեմիային կից Բարձրագոյն Գեղարեւոտական Դպրոցի ճարտարապետական լուսնը: Մտնելու համար պէտք էր ենթարկւել շատ դժւար մրցումի:

Մի տարի պատրաստելով Թամանեանն առաջինների թւում անցաւ մրցումը եւ ընդունւեց 1898 թ.: Բարձրագոյն Գեղարեւոտական դպրոցը յաջող աւարտեց վեց տարում, որից չորս տարում գիտական բոլոր առարկաներն անցնելուց եւ նրանց համընթաց գեղարեւոտական ծրագրային աշխատանքները կատարելուց յետոյ՝ նա ստացաւ շինարարական աշխատանքների պատասխանատու ղեկավարի իրաւունք 1902 թ., իսկ երկու տարի յետոյ ստացաւ գեղարեւոտագէտի կոչումը՝ աշակերտելով պրոֆ. Ա. Պոմերանցեւին եւ անցնելով այն մրցումից, ուր աւարտողները հանդէս են դալիս գեղարեւոտական խոշոր եւ լուրջ նախագծերով:

Դպրոցական աշխատանքների շրջանում նա հակւած է ամբողջ-

Թ. դարնանը, հրաւիրուով է Նարոսլաուով բացելիք ցուցահանդիսի համար շէնքեր կառուցանելու, ամենակարճ ժամանակում: Սա իբրեւ մի թուոցիկ, ոչ մնայուն գործ, պէտք է կատարէր փոքրիկ դուրմարով: Թամանեան շինեց յանպատրաստից, մօտ մի ամսում, ծախսելով ընդամէնը հազար ուրբի: Այստեղ հիւսիսային ուղևական փայտէ ճարտարապետութեան ոճով պատկերացած է իր ամբողջական ձևով հին ուղևական տիպիկ քաղաքը՝ շէնքերը դասաւորւած մի հրապարակի շուրջը, եւ ամբողջն ամենայն մանրամասնութեամբ վարդարւած ուղևական ժողովրդական արւեստի մոտիվներով, քանդակւած, բազմերանգ ներկւած: Մեծ եղաւ այն տպաւորութիւնը, որ թողեց բոլորի վրա Նարոսլավի գործը, իր չափազանց կենդանի կերպով ցուցադրած ուժեղ գեղարւեստական պատկերովը: Մատնանշելի է յատկապէս այն մեծ հետաքրքրութիւնը եւ դաստիարակիչ ազդեցութիւնը, որ ունեցաւ այս գործը տեղացի ժողովրդի եւ յատկապէս մասնակցող վարպետների վրա՝ սէր դարթեցնելով դէպի արդէն մոռացած ժողովրդական ստեղծագործութիւնը: Նա լայն օգտագործման նիւթ դարձաւ: Յուցահանդիսից յետոյ Մոսկուայի շարժապատկերի մի ընկերութիւն գնեց այն եւ գործադրեց մի քանի ուղևակամական նկարների համար (Ստենկա-Ռադին եւ ուրիշն.): Կինօ Ֆիլմի նիւթ դարձաւ նաեւ Շչերբատովի տունը Աննա Կարենինայի համար:

Ահա այս գեղարւեստական նւաճումները, որոնք նրա 10 տարւայ (1904-14) գործունէութեան արդիւնքն են հանդիսանում՝ արժանացրին նրան գերագոյն գնահատականի: 1914 թ. հոկտ. 27-ին Գեղարւեստից Ակադեմիան «ի նկատի առնելով նրա կատարած խոշորագոյն նւաճումները գեղարւեստի ասպարիզում», ընտրեց Թամանեանին ակադեմիկոս: Թամանեանի ակադեմիկ ընտրւելուց առաջ եւ թէ նրանից յետոյ կատարած աշխատութիւններից յիշենք գլխաւորները: Լենինգրադում Աբամելիք-Լազարեւի տան նախագիծ, Հայկական մեծ տան նախագիծ (1908 թ.), Հրետանու Բրիգադայի հանդէսների դահլիճ 18-րդ դ. առաջին քառորդի ոճով եւ այլ շէնքեր, Շուվարովի տանու թատրոնի ներքին սարքաւորումը, բանկ (Ռուս. արտաքին առեւտրի) հրաւիրւած մրցումով, նոյնպէս հրաւիրւած մրցումով մի բաժնետիրական ընկերութեան համար ամբողջ թաղամասի շինութիւն իր սեփական ներքին փողոցով (1915 թ.), Հոմի ուղևական դեսպանատան մի շէնքի նախագիծ, մի քանի բնակելի տների (Բեդակի, Վոլկովի եւ ուրիշն.) եւ դպրոցների նախագիծեր եւ այլն: 1915 թ. Թամանեանը ստանում է շատ խոշոր պատւէր. Մոսկուա-Կազան երկաթուղու 50ամեայ յորեկեանի առիթով ո-



ԱՆՈՂ. ԱԼ. ԹԱՄԱՆԵԱՆ

րոշած էր Մոսկւայից 36 վերստի վրա Ռեազանի ուղղութեամբ կա-
ռուցանել մի քաղաք տիպը «քաղաք-պարտէզ»-ի՝ իր բոլոր յարմա-
րութիւններով յատկապէս երկաթուղու ծառայողներին եւ բանւորնե-
րի համար: Այս նպատակի համար յատկացւած էր 15 միլիոն ռուբլի:
Քաղաքի նախագիծը, գեղարւեստական մշակումը եւ կառուցման գե-
կավարութիւնը յանձնւած էր Թամանեանին: Չեւով եւրոպական, իսկ
ոճով դասական ուսական՝ այս քաղաքն անխտիր իր բոլոր բաղա-
ցուցիչ մասերով ու շէնքերով՝ լիճ, զբօսավայր, թատրոն, բնակելի
տներ, մեծ հիւանդանոց, սանատորիա, դպրոցներ, կօօպերատիւ եւ
այլն՝ ամէն ինչ ոճաւորւած էր եւ գեղարւեստական. (1915-17թ. ե-
րեք տարի շինուած էր, բայց մնաց անաւարտ):

Մի այլ տիպի քաղաք գուտ արդիւնաբերական, բայց ըստամե-
նայնի գեղարւեստական, վաղուց նրա մտածութեան առարկան է
եղած. քանի որ արդիւնաբերական հիմնարկութիւնները մեծ տեղ
բռնելով ազդում են քաղաքի ընդհանուր հեռանկարի վրա՝ Թաման-
եանը գտնում էր անհրաժեշտ այդպիսիները ենթարկել գեղարւես-
տական-ճարտարապետական մշակման, «միմիայն տաճարներն ու
պալատները չեն, ասում էր նա, որ կարելի է շինել գեղարւեստա -
կան. սրանց ժամանակն անցած է արդէն, այլ պէտք է գեղեցիկ ճար-
տարապետութիւնը գործադրել գործնական խնդիրների վրա՝ գործա-
րանների, կայարանների, հիւանդանոցների, բնակելի տների, դըպ-
րոցների եւ այլն, տալով նրանց գեղարւեստական զարգացում: Նման
յանձնարարութիւն Թամանեանը ստացաւ նոյն երկաթուղային վար-
չութիւնից՝ Լուբեքի կայարանի մօտ շինելու վաղոնակառուցման
գործարան-քաղաք: Նախագիծը պատրաստեց, բայց մնաց առանց
իրականանալու: Նոյն այդ տարիները (1915-17) Մոսկւայում երկա-
թուղային վարչութեան տան դահլիճն ու գլխաւոր սենեակներն է
զարգարում իտալական վերածնութեան ոճով, Գալիցիինի եւ Գարբի-
չեւսկու տների նախագծերն է կազմում, ինչպէս նաեւ վերակազմու-
թեան է ենթարկում Եկատերինեան շրջանի մի տուն, որին աւելա-
ցնում է ի նորոյ նոյն ժամանակի ոճով մի դահլիճ տանու թատրո-
նի համար. սա նրբութեան տեսակէտից Թամանեանի արւեստի կա-
տարեյատիպն է հանդիսանում: Այս տանն է ներկայումս գտնուած
Գեղարւեստական Գիտութիւնների Ակադեմիան: Այս բոլորը ճար-
տարապետական գործերի նկարչական ու քանդակագործական ման-
րամասնութիւնների մշակման մէջ նրան աշխատակցել են ուսւ ա -
ռաջնակարգ եւ յայտնի նկարիչներ՝ Բենուա, Լանսերէ, Եակովլեւ,
Շուխայեւ եւ քանդակագործներ՝ Կուզնեցով, Կուզինով, Ստրախո-
վըսկայա:

Նրա բոլոր աշխատութիւնները, չափազանց տարբեր իրենց բը-
նոյթով ու ծաւալով՝ դահլիճների ներքին զարգացման նրբագոյն
աշխատանքից, արդ ու զարդի արծաթէ սերվիդից սկսած մինչեւ
խոշորագոյն շէնքերը, անգամ ամբողջական քաղաքները՝ բոլորն էլ
առանց բացառութեան գրաւել են զեղարւեստական շրջանների ու-
չադրութիւնը եւ արժանացել բարձր գնահատութեան (Իգոր Գրա-
բարի, Կուրբատովի, Ֆ. Բերենշտամի, Ս. Մակովսկու եւ ուրիշների
կողմից) ու նիւթ դարձել գրականութեան, զեղարւեստական հրա-
տարակութիւնների («Ապոլոն», «Ստարիյէ Գոդի», «Ձոզիյ» եւ այ-
լրն)։ Այս բոլորից յետոյ, զարմանալի չէ թէ ի՞նչու Թամանեանն է
հրաւիրուում կատարելու մի շատ պատասխանատու եւ պատուաւոր
պարտականութիւն – ուստական պետական պալատների գեղարւես-
տական վերահսկողութիւնը։ Ռուսական պալատները չափազանց մեծ
զիտական եւ զեղարւեստական արժէք են ներկայացնում՝ իբրեւ հին
յուշարձաններ եւ եւրոպական նշանաւոր ճարտարապետների գործեր
(ինչպէս են՝ Տրեգլինի, Բաստրելլի, Բենայլդի, Վալեն դը Լամոտ,
Գլարինդի, Կամերոն, Բրեննա, Կոնդազո, Բաթենով, Բոսսի եւն.)։
Մրանք լինելով ոչ բաւարար հսկողութեան տակ՝ ժամանակի ընթաց-
քում մեծ աղաւղումների էին ենթարկւել եւ լուրջ խախտումներ
ստացել։ Վերջին տարիները զեղարւեստական գրականութեան հա-
սարակական կարծիքի ճնշման տակ նրանց գրութիւնը լուրջ ուշա-
դրութեան առնւեց եւ Թամանեանը հրաւիրեց կազմակերպելու ուս-
տական պալատների զեղարւեստական վերահսկողութիւնը եւ զեկա-
վարելու նրանց վերականգնումի գործը (1916 թ.)։ Թամանեան մի
տարի ուսումնասիրեց ամբողջ նիւթը եւ ներկայացրեց իր ծրագիրը
պահպանութեան համար, որը եւ ընդունւեց։

Գեղարւեստի ասպարիզում Թամանեան միաժամանակ կատարել
է նաեւ հասարակական աշխատանք. իբրեւ ճարտարապետ. Գեղար-
ւեստագէտների Ընկերութեան գործօն անդամ, մասնակցութիւն է
ունեցել բազմատեսակ հարցերի քննութեան, մշակման եւ իրակա-
նացման (չինարարական, քաղաքների բարեկարգման, հին զեղար-
ւեստական Պետերբուրգի եւ առհասարակ հին յուշարձանների պահ-
պանման, հրատարակութիւնների – իբրեւ խմբագիր Արիսիք. Խուտ.
Եժէգոռնիկ–ի եւ Արիս. Խուտ. Եժէնէդէրնիկ–ի, մրցումների կանոնն
է մշակել եւ այլն)՝ միշտ լինելով թարմ հոսանքի արտայայտիչը եւ
աւանդամբողջութեան կիսամիջոցների դէմ պայքարողը։ Այս բո-
լորն ահա հասարակական դէմք ստեղծեցին եւ նախագծեցին նրա գիր-
քն ու գերբ ուսւ զեղարւեստական աշխարհում։

Յեղափոխութեան հետեւանքով, երբ հնի հիմունքները խախտը-

ւելով դեռեւս չկար նորը՝ զեղարւեստի ասպարիզում տիրող խառն
ու խճուղած դրութիւնը ստիպողական է դարձնում մի ընդհանուր
ղեկավարող կազմակերպութեան՝ բոլոր զեղարւեստագէտ ուժերի
միութեան անհրաժեշտութիւնը։ Մարտ ամսում (1917 թ.) մի մեծ
միտինգից յետոյ, ուր Թամանեան հանդէս է գալիս իբրեւ զեկուցող՝
կազմուում է Գեղարւեստից Գործիչների Միութիւնը։ Այդ միութեան
մէջ համախմբուում է ամբողջ զեղարւեստական Պետրոգրադը (մօտ
հինգ հազար հոգի) իրեն առաջնակարգ ուժերի գլխաւորութեամբ։
Միութիւնն իբրեւ ամենահեղինակաւոր եւ ուժեղ մարմին զեղար-
ւեստի ասպարիզում՝ իր վրա վերցրեց վերաշինելու նոր Ռուսաստա-
նի զեղարւեստական կեանքը, յեղափոխութեան մատնանշած ուղի-
ով։ Այս մեծ գործի ծանր բեռն ընկաւ Թամանեանի վրա։ Միութիւնն
իբրեւ հեղինակաւոր զեղարւեստագէտի եւ հասարակական գործչի՝
Թամանեանին ընտրեց իրեն նախագահ, որը եւ վարեց այդ պաշտօնը
Միութեան ամբողջ գործունէութեան ընթացքում։

Հասարակական այսպիսի եզակի գիրքի եւ վայելած անսահման
վստահութեան պատճառով՝ Թամանեան ասպարիզի վերջերին հրաւիրեց
ստանձնելու Գեղարւեստից Ակադեմիայի նախագահի պաշտօնը։ Թա-
մանեան զիջելով Միութեան ցանկութեան՝ համաձայնեց, միաժամա-
նակ պայման դնելով իրականացնելու այն բարենորոգումն Ակադե-
միայում, որը իր եւ ընկերների վաղուցւայ երազն էր հանդիսանում։
Այս բարենորոգումը վերաբերում էր Ակադեմիային, իբրեւ զերա-
գոյն զեղարւեստական գիտական հիմնարկութեան, ապա բարձրա-
գոյն զեղարւեստական դպրոցին եւ Ռուսաստանի բոլոր միջնակարգ
զեղարւեստական դպրոցներին։ Առանձին բարենորոգումներ ծրա-
դրւեցին նաեւ Շտիգլիցի զեղարգիւնարարական դպրոցի եւ Թան-
դարնային գործի համար։ Մի ամբողջ տարի չափազանց եռուն եւ
զարանային գործի համար։ Մի ամբողջ տարի չափազանց եռուն եւ
յարեւած աշխատանք կատարեց այդ ուղղութեամբ Թամանեանի ան-
հատական եռանդով եւ նրա նախագահութեամբ գործող յատուկ
յանձնաժողովի կողմից, որ կազմւած էր ուստական առաջնակարգ զե-
ղարւեստագէտ ուժերից։

1918 թ. օգոստոսին Թամանեան մեկնեց Մոսկւա իր ձեռքում ե-
ղած նախադժային եւ չինարարական գործերը հաշւեյարդարի են-
թարկելու եւ ապա մեկնելու Հայաստան ու ներքելու Հայաստանի
վերաշինութեան գործին՝ հայրենի հողի վրա կիրառելով այն ամ-
բողջ փորձն ու նւաճումները, որ ինքը ձեռք էր բերել իր գործունէ-
ութեան ընթացքում։

1919 թ. հոկտեմբերին հասնելով Հայաստան՝ Թամանեան ան-
միջապէս սկսեց ուսումնասիրել երկիրը՝ նախ Երեւանի շրջակայքը,

ապա անցաւ Աբարան եւ տեսաւ այն անմխիթար սլատիկերը, որ ներկայացնում է հայ գիւղը: Այդ ժամանակ նա նախագծեց Հայաստանի շինարարական գործի իր ծրագիրը, որը եւ հիմք դարձաւ նրա հետագայ ամբողջ գործունէութեան: Այս ծրագրում գլխաւոր տեղ է բռնում Հայաստանի գիւղի եւ քաղաքի վերաշինութիւնը: Միաժամանակ ձեռնարկեց շինարարական նիւթերի (գլխաւորապէս քարի տեսակների ուսումնասիրութեան) եւ մշակման գործին: Լուրջ ուշադրութեան առաւ հայ ոճի եւ ժողովրդական արւեստի կիրառման եւ դարգացման խնդիրը, ինչպէս նաեւ հայ արւեստի յուշարձանների պահպանութեան գործը: Հայաստանի Հնութիւնների պահպանութեան Կոմիտէն ծնեց նրա ձեռնարկեցութեամբ եւ գործում էր նրա դեկավարութեամբ: 1923 թ. գարնանից, երբ նոր թափով սկսեց Հայաստանում շինարարական գործը՝ Թամանեան կազմեց Ժողկոմխոհին կից Գերադոյն Տեխնիքական Բաժինը՝ դեկավարելու ամբողջ Հայաստանի շինարարական գործն իր բոլոր ճիւղերով: Հիմնեց Ճարտարապետական Արւեստանոց, որտեղ նա մշակում էր իր ճարտարապետական նախագծերը: Կատարեւած նախագծային աշխատանքներից յիշենք հետեւեալ քաղաքների յատակագիծերը՝ Երեւանի, Վաղարշապատի, Նոր-Բայազետի, Ստեփանակերտի, Նոր-Արաբկիրի, Լուկաշէնի. վերջինս ներկայացնում է մեծ հետաքրքրութիւն թէ իրրեւ ճարտարապետական նորութիւն՝ կազմեւած լինելով կոմունայի ձեւով, եւ թէ իրրեւ դեղարւեստական մի ամբողջութիւն՝ շինեւած հայկական ոճով: Իսկ գիւղերի յատակագծեր մշակեւած են՝ Նոր Արմաւիրի, Ներքին Ախտալի, Նոր Անի (Չարբախի), Մարտունաւանի (Նոր Արէշի) եւ ուրիշների: Մշակեւած են նաեւ մի շարք շէնքերի նախագրծեր - պետական հիմնարկների, Համայնարանի արւարձանի բնակելի տների եւ այլն: Այս բոլոր նախագծերն արդէն կիրառոււմ են կեանքի մէջ: Նրա անմիջական դեկավարութեամբ շինեց Երեւանի Հիգրոտեխնորակայանը (շէնքի ճակատների մշակումը հայկական ոճով):

Թամանեան անդամ է Հայկենագործկոմի, Հ. Գիտութեան եւ Արւեստի Ինստիտուտի, Հ. Պետ. Համայնարանի Պորհրդի, նրան է պատկանում տեխնիկի ծրագրի մշակումն ու կազմակերպումը, նրա նախագահութեամբ են իրենց գործունէութիւնն սկսել Հայ Տեխնիքական Ընկերութիւնը, Հայաստանի Կերպարւեստագէտների Ընկերութիւնը. նրա նախագահութեամբ են գործում Պետալանի Շինարարական Սեկցիան, Հնութիւնների Պահպանութեան Կոմիտէն:

ԱՇԽԱՐՀԻՅԳ ՔԱՂԱՆԹԱՐ

Ակաա. Ա. Թամանեանի կենսագրութիւնը, որ տւինք վերը, հասցեւած է մինչեւ 1926 թիւը: Անհրաժեշտ ենք համարում համառօտ գծերով շարունակել հանդուցեալի կեանքի ու գործունէութեան պատմութիւնը մինչեւ նրա մահը:

Ինչպէս յիշեւած է նաեւ Աշխարհբէդ Քալանթարի գրած կենսագրութեան մէջ, Ա. Թամանեանը Հայաստան է եկել Հանրապետութեան օրով եւ այդ ժամանակներից էլ սկսած նա ձեռարկել է իր շինարարական մեծ ծրագրների իրականացման: Երեւան քաղաքի նոր յատակգծի մշակումը նա կատարել է նախ քան խորհրդայնացումը: Միւս խոշոր ձեռնարկով՝ Սարդարաբատի ուղղման հարցով, որ հերթի էր դրեւած այդ միեւնոյն շրջանում, նոյնպէս զբաղւել է ակադ. Թամանեանը: Առհասարակ, շինարարական բոլոր ծրագրների ու ձեռնարկների ոգին է եղել Թամանեանը եւ միեւնոյն ժամանակ նըրանց ուղղութիւն տուղն ու իրականացնողը: Եւ ինչ որ անհրաժեշտ է շէնքել, այդ այն է, որ յիշեալ շրջանում նա եղել է միանգամայն ազատ իր ճարտարապետական ստեղծագործութեանց, մտայնացումների ու ծրագրների մէջ եւ որ եւ է միջամտութիւն կառավարութեան կամ այլ կազմակերպութիւնների կողմից չէ եղել նրա այդ ուղղութեամբ կատարած աշխատանքների մէջ:

Փետրեարեան ապստամբութիւնից յետոյ, Ա. Թամանեանը Հայաստանի մի խումբ ճարտարապետների եւ, առհասարակ, միւս մտաւորականների ու ժողովրդի հետ անցնում է Չանգեզուր եւ ապա Թաւրիզ, որտեղից հետագային վերադառնում է Երեւան: Սկզբում, երբ Խորհրդ. Հայաստանում կիրառոււմ էր համեմատաբար մեղմ քաղաքականութիւն, Ա. Թամանեանը հնարաւորութիւն է ունենում նըրկառելի գործունէութիւն ցոյց տալ: Նա կառուցանում է Հող. Ժողովրդական կոմիսարիատի շէնքը, հայկական ճարտարապետական ոճով ինչպէս նաեւ Անասնաբուժական, Բժշկական, Ֆիզիքուքիմիական Ինստիտուտների շէնքերը ու ձեռնարկում է գլուխ հանելու Երեւանի վերակառուցման հսկայական ծրագիրը: Երբ 1926-ին «եղբայրական» հանրապետութիւնների նախաձեռնութեամբ հերթի է դրեւած Երեւանում Ժող. Տան կառուցումը, այդ գործը եւս յանձնըւում է նրան: Դժբախտաբար շուտով վրա է հասնում առաջին հնգամեակի սեւ շրջանը եւ մշակութային բոլոր գործիչների դէմ սկսեւած հայաժամերի հետեւանքով չէզոքացւում է նաեւ Ա. Թամանեանը: 1930 թ. յունւար 31-ին Երեւանում կողմում է պրոլետարական ճարտարապետների միութիւն, որի մէջ մտնելու իրաւունքը վերապահւում է միայն կոմունիստ կամ «կարմիր» ճարտարապետներին: Այդ թերուս երիտասարդները, Կուսակց. Կենտր. Կո-

միտէի խրախուսանքով, սկսում են կատաղի մի արշաւանք Հայաստանում գտնուող ոչ-կոմունիստ ճարտարապետների ու դերանց թւում նաեւ Ա. Թամանեանի դէմ: Նրա կառուցած շէնքերը (Հողժողովոմատի) համարում են կղերական-Ֆէոդալական ոճի արտայայտութիւն եւ անհարազատ պրոլետարիատի համար: Նոյն ձեւի քննադատութիւններ են արւում նաեւ Ա. Թամանեանի երկու խոշոր ծրագրների՝ Ժողովրդ. Տան եւ Երեւանի յատակագծման դէմ, որի հետեւանքով նրանց իրազործումը ժամանակաւորապէս հանում է օրակարգից: Ա. Թամանեանից պահանջում են վերամշակել իր նախագծերը եւ դուրս նետել նրանց միջից «անհարազատ մոտիւնները», «սնամէջ հընամոլութիւնները», «անցեալից փոխառնւած էլէմէնտները» եւ, առհասարակ, այն բոլոր աղբեցութիւնները, որոնք արդիւնք են «Թամանեանի իր հետ բերո՞ծ ճարտարապետութեան իղէալիստական ըմբռնման»: Շինարարութեան ասպարէզում դրութեան տէր են դառնում «կարմիր» ինժինեաները, որոնք եւ իրենց վրա են վերցնում հետագայ բոլոր կառուցումների գործը: 1929-ից յետոյ ոչ մէկ նոր շէնքի նախագիծ ու կառուցում չէ յանձնուում Ա. Թամանեանին: Այսպէս, օրինակ, Աշխատանքի եւ Կուլտուրայի պալատի նախագիծը կազմում են պրոլետինժինեաներ Գ. Քոչարը, Մ. Մազմանեանը եւ Ս. Սաֆարեանը, Երեւանի կարի գործարանինը՝ Ա. Ահարոնեանը եւ Հ. Մարգարեանը, Տուրքիկիւեանը, Դիսպանսերինը՝ Կ. Հալարեանը, Մ. Մազմանեանը եւ Գ. Քոչարը, Անասպանսերինը՝ Կ. Հալարեանը, Ինստիտուտի պրոֆեսորների հանրակացարանինը՝ Ահարոնեանը եւ Յ. Մարգարեանը, Լենինականի միասնական դիսպանսերինը՝ Ս. Սաֆարեանը, Լենինականի Քաղ. Խորհրդի շէնքը կառուցանում է Գ. Քոչարը, Ղարաբլիխայինը՝ Բաշխինեանը, Լենինականի հիւրանոցը՝ Զիւրեանը, Հոկի հիւրանոցը Երեւանում՝ Գ. Քոչարը, կառուցանողների ախումբը (Երեւանում)՝ Մ. Մազմանեանը, Կ. Հալարեանը եւ Գ. Քոչար եւ այլն եւ այլն:

Միայն վերջին երկու տարիներին, Կոմկուսի քաղաքականութեան մէջ տեղի ունեցած որոշ փոփոխութեանց հետեւանքով, Ա. Թամանեանը նորից գործի է կանչւում եւ ձեռնարկում է Ժող. Տան կառուցման: Բայց ճարտարապետական այդ հոյակապ կոթողի միակայն հիմքն է կարողանում նա դնել: Անաւարտ է մնում նաեւ Երեւան քաղաքի վերակառուցման վերջնական նախագիծը:

Ա. Թամանեանի մահով Հայաստանը զրկւում է համառուսական նշանակութիւն ունեցող մի ուժից, որի նմանը չկայ մեր մշակութային եւ ոչ մէկ մարդի մէջ:

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՎԱԻԵՐԱԳՐԵՐ

Դեկտեմբեր 30-ին, Կրեմլում, ուրիշ պալատի պատերազմութիւնների շարքին, մի պատերազմութիւն էլ Հայաստանի կողմից է ներկայացել Ստալինին՝ յայտնելու համար Հոյաստան աշխարհի հաւատարմութիւնն ու երախտադրութիւնը «մեծ առաջնորդին»: Այդ պատերազմութեան հետ, թէեւ ոչ որպէս անգամ, ներկայացել է եւ նաստեղծ Նայիրի Չարեանը: Ուրիշները արձակուրդին դովեստ հիւսել Ստալինին,

ն. Չարեանը կարգացել է մի բանաստեղծութիւն, որ իբրեւ մարդկային վաւերադիր առաջ ենք բերում ստորեւ: Մի վաւերադիր, որ բնորոշում է ոչ միայն հեղինակին, այլ եւ խորհրդային միջավայրն ու բարձրը եւ, ամենից առաջ, իրեն՝ «մեծ առաջնորդին»: Այդպիսի ներբողականներ միտածաւնակ՝ ձօնում էին ասիական բռնապետներին:

ՄՍԱԼԻՆ

Աֆիլէսին Հոմերն երգեց, Ռուստամ-Ջալին՝ Ֆիրդուսին: Ոսկեգօծեց հագար երգով Բոնապարտի փառքը սին. Հագար կայծակ փայլատակեց մրրիկներում արմաների Ու շողացին գիշերներում հագարաւոր աուպներ: Բայց տառապած մարդու համար չէր ցաւագել մի արեւ Մարքսի նման ցանկաւաւալ, էնգելսի պէս համեմարեց, Լենինի պէս բացակորով, Լենինի պէս լուսայորդ եւ քեզ նման մեծ ու յստակ, ով պողպատէ առաջնորդ: Չի խաւարի ծիրանավառ հորիզոնում պատմութեան Ձեր հանձնարի արեգնային շորթորդութիւնը տիտան. նա յաւիտեան կը ծաւալի արեւելից արեւմուտ եւ կը պատի հօր լոյսով ապագայի փող մուր: Հագար Հոմեր ու Ֆիրդուսի կտանն գրիչ ու փնար Ու երգելով չեն սպառի ձեր մեծութիւնն անհրճար, Կերպն բոլոր լեզուներով բանաստեղծներ նորանոր, Կլտան դարերը ձեզ վայել յուշարձաններ փառաւոր: Իսկ ես - զինուորդ Լենինեան, Իսկ ես մի հայ բանաստեղծ - Բերում եմ քեզ ժողովրդիս երախտապարտ սիրտը մեծ, Սրբում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարգաւոր ամենից, Դու ազգերի երջանկութեան ցարտարագէտ ու դարբին: Կանգնած էր նա, իմ ժողովուրդն, անկման վիճի եզերքին,

Իր համեմարի հազարամեայ գոհարներով քանկազին:
 Կանգնած էր նա անդունդի մօտ անօգնական ու հիւժւած,
 Արիւնակից եւ այլազգի ոսոխներից հալածւած:
 Մահւան կարմիր մրրիկների ամենակուլ բերանում
 Նա յօշոտած բազուկներով ելք էր մի նոր որոնում:
 Ազատարար Հոկոտեմբերի ֆայլերն այնժամ քնդացին,
 Հնչեց ֆո՛ւ աւայնը լեռնեան, լեռնի հետ միասին:
 Դուք փրկութեան յոյս նետեցիք ժողովրդին իմ չափած,
 Դուքս կոչեցիք շիրմից խաւար դէպի կեանքի դուռը բաց:
 Նա վեր կացաւ գօտեպնդւած, ոստնեց քափով ահագին
 Ու միացաւ կոմունիզմի աշխարհաբոյժ բանակին:
 Մեռաւ լեռնին ու մարդկութեան սիրտը մի պահ դադարեց,
 Ու շողացիք հորիզոնում դու որպէս նոր մի արեւ:
 Նախորդներից հզօր լոյսով եւ ֆո լոյսով սեփական
 Տանում եւ դու երկիրն ահա դէպի չճնաղ ապագան:
 Անուընդ խոր երգի նման մարդկանց հոգին ողողում,
 Թեւ է տալիս եւ հիաստանջ հերոսութեան է մղում:
 Եւ մեր չճնաղ Հայաստանի ծաղկածիծաղ լեռներում
 Իր նոր աշխարհն է կառուցում ֆեզնով լցւած մի սերունդ:
 Եւ ես - նրա ծոցից ելած մի խանդավառ բանաստեղծ -
 Բերում եմ քեզ մի երջանիկ ժողովրդի սէրը մեծ:
 Երգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենքին,
 Դու մարդկային երջանկութեան մարտարապետ ու դարբին:

Իմ երջանիկ ժողովրդի մեծ սէրն եմ
 մատուցում քեզ, ընկեր Ստալին, երգե-
 լով քեզ, մեծ առաջնորդ: Այդ դո՛ւ ես

*Երկրորդ վաւերագիրը նոյն Նայբրի
 Զարեանի մի ուրիշ բանաստեղծութիւնն
 է, գրւած 15 տարի առաջ, երբ բուլշե-
 վիկները հիւսիսից եւ քէմալական թիւր-
 քերը հարաւից յարձակւել էին Հայաս-
 տանի վրա եւ Քեաղիժ Կարաբէքերի
 բանակը մօտենալով Կարսին՝ խուճապի
 էր մասնել հայկական դօրքերը: Այդ*

ժողովուրդների երջանկութեան ինձի-
 ներն ու դարբինը:

*օրերին էր, որ հերոսական մահով իր
 կեանքին վերջ տւաւ Գնդ. Մաղմանեա-
 նը եւ ներշնչեց Ն. Զարեանին գրելու
 հետեւեալ բանաստեղծութիւնը, որ
 նոյնպէս առաջ ենք բերում աճրողու -
 թեամբ՝ խորհրդածութիւնները թողնե-
 լով ընթերցողին:*

ԳՆԴԱՊԵՏ ՄԱԶՄԱՆԵԱՆԸ

(Կարսի անկման առթիւ)

Այս պատմութիւնը ամօքակէզ բերնէ բերան է գալարում,
 Եւ ինչպէս օձ բիրաժանիք հոգիներն է մեր խայթում:

Նրանք եկան, խոնրեցան մեր անառիկ դիրքերի տակ,
 Ոռնում էին դիրքերն ի վեր գերք գայլերի սոված վոհմակ,

Գնդապետը մե ֆաջարի նշան տեց վերջին կուի,
 Ինչպէս մի հօտ հեզ ոչխարի մերիմները կարկամեցին:
 Սովալուրի գայլերի պէս նրանք սողում էին դէպ մեզ:
 Գնդապետը երեք անգամ աղաղակեց կուի նշան,
 Երեք անգամ «յառա՛ջ» ձայնեց ու սլացաւ սուսերամերկ,
 Երեք անգամ դիրքերն ի վեր նա պաղատեց կուի հրաւեր . . .
 Մերոնք, աւես, շշմած էին ինչպէս հօտը հեզ ոչխարի, -
 Չկըռեցին, չգոռացին հրացանները հազար-լեզու,
 Չխօսեցին գնդացիներ - հըրակոտոր հըռետորներ:
 Մինչ գազագած գայլերի պէս նրանք սողում էին դէպ մեզ,
 Մերիները կորասըւին, բիրակըռնակ խուճապեցին:
 Երբ որ խուճապը նա տեսաւ ոչխարախուռն իր գօրքերի,
 Երբ ամօքը սեւ ամպի պէս նստեց նրա մակտի վրա, -
 Իր դիակը սըւինամերձ քշնամիի առջեւ փռեց . . .
 Իսկ զինուորները դասալիք, մեր զինուորները խուճապող
 Հաւաքեցին միջնաբերդում իրենց վախը ամօքալի,
 Խոնրեցին իրարու մօտ գերք գայլ տեսած ոչխարի հօտ,
 Լեարդերի պէս իրենց ներմակ բարձրացուցին մի քոշակ, . . .
 Այս պատմութիւնն ամօքակէզ սրտերից-սիրտ է գալարում,
 Եւ ամօքը բիրակըռնիւն մակատներն է մոայում:
 Այս պատմութիւնն է գալարում մայրերի վրա, դահլիճներում,
 Պատմըւում է հազար լեզու, չարագուշակ ինչպէս բուհու,
 Գիշերում է եւ իմ հոգում առկայծում է դէմքը նըրա -
 Սուսերամերկ, հերոսատիպ, հերոսամահ գնդապետի:
 Մերկացած սուրը նըրա փայլատակում է իմ հոգում
 Եւ ամօքի մուրը սառցէ շանքի նման ախօսում է:
 Դեռ իմ հոգում վարանել են մերիները աիմանակ,
 Դեռ իմ հոգում որոտում է նրա ձայնը ուղմահրաւեր:
 Դեռ իմ հոգում հազար-կոնակ խուճապում է հօտը նրանց:
 Դեռ իմ հոգում նա կանչում է, աղաչում է դիրքերն ի վեր:
 Նախատիմքը հազար լեզու ու կշտամբանքը բիրաչափ
 Հալած գլուխը Մասիսի նա տեսնում է դեռ իմ հոգում:
 Նա տեսնում է Եւրոպայի արիամարիանքը սառոյցէ,
 Հայրենիքը խաչւած կարապ ու բիր յոյսեր սին ու պարապ,
 Հըդեհ, աւեր ու կոտորած, սով, հեծեծանք, համատարած
 Մէկ վայրկեանում հազար անգամ նա նա տեսնում է դեռ իմ հոգում . . .
 Նըրա աչքերն են այրըւում աղերսական, ազնւարոց,
 Նրա մակտն է մքագնում սեւ ամօքից դեռ իմ հոգում,
 Դեռ շանքի պէս աստածամերկ նրա սուրն է փայլատակում,
 Դեռ իմ հոգում կարկաչում է սուրը վտակը նրա կրծքից . . .
 Նրա մահը վառում է դեռ հերոսութեան գերք սուրը պատկեր,
 Դեռ իմ հոգում նա մեռնում է, կարկաչում է ու մտազում:
 Այս պատմութիւնն ամօքակէզ ամպանում է բիր սրտերում,
 Մքին ամպում շանքի նման նրա մահն է փայլատակում . . .

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

ՄԻ ՈՉԽԱՐԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

1920 թ. նոյեմբերի սկիզբը, բացի վրաց ազգային-դեմոկրատների պաշտօնաբերք «Սախարբ-վիո»-ից, Թիֆլիսի վրացերէն բոլոր բերքերը գրեցին, թէ ազգային - դեմոկրատ կուսակցութեան պարագլուխ, վրաստանի Սահմանադիր ժողովի անդամ եւ «Սախարբ-վիո» բերքի գլխաւոր աշխատակից Գեորգի Գըվազաւան, Բաքուի վրայով, 10,000 կով եւ եգ է ուղարկելու եղել Թիւրքիա, Հայաստանի դէմ պատերազմող թիւրքական բանակի պարեմաւորման համար, բայց ժողովրդական գւարդիականները արգելի են եղել նրան, այն աւարկութեամբ, թէ Գվազաւան այդ անասունները ձեռք էր բերել վրաստանում:

Այդ լուրը ցնցող տպաւորութիւն գործեց Թիֆլիսի հասարակութեան վրա: Մանաւանդ չափից աւելի վրդոված էին հայկական շրջանակները: Ամենքը սպասում էին, թէ ի՞նչ պիտի ասէ ինքը՝ վրաց ազգային-դեմոկրատների պետը: Լուրը երեւալուց մի քանի օր յետոյ, Գվազաւան «Սախարբ-վիո» լրագրի 141 համարում տւեց հետեւեալ պատասխանը:

«Սոցիալ-դեմոկրատական լրագրիները - գրում էր նա - աղմուկ բարձրացրին այն բանի առիթով, որ ես ուզում եմ տրանզիտով արտասահման անցկացնել իմ գնած անասունները:

Պարոններ, կարող է պատահել, որ դուք ինձ քաղաքական հակառակորդներ լինէք, բայց չպէտք է դիմէք անխելագրութեան՝ անուս վարկաբեկելու նպատակով: Ապրանքի իրօք օտար երկրից գալու վերաբերութեամբ ներկայացած է փաստաբուրք-վկայական տրւած սահմանի վրայի պետական այն միակ հաստատութեան պաշտօնէութիւնից, որի գործն է այդ: Մինիստրութեան բացատրութեան համաձայն՝ այդ վկայութիւնը միանգամայն գտնացուցիչ է:

Այժմ հարցնում ենք ձեզ. արդեօք ի՞նչ վկայութիւն, ուրիշ ի՞նչ փաստաբուրք պէտք է ներկայացնենք ձեզ՝ նշմարտութիւնը հաստատելու համար: Միքէ իւրաքանչիւր ոչխարի վզից մի մի անցազի՞ր պէտք է կախենք: Կամ գուցէ սաւառակն՞ով պէտք է անցկացնենք ոչխարի հօտն վրաստանի հողով:

Չնայած դրան, տեղական գւարդիան գործի խառնեց - մի կողմ շարտեց մինիստրի տւած բացատրութիւնը եւ ընտապով հեռագիրներ ուղարկեց կառավարութեան նախագահին, թէ իբր ի յայտ է բերւած մեծ չարագործութիւն - չգիտեմ, արդեօք ի՞նչ, հանրապետութեան, թէ՞ սահմանապահ զօրմասի ձեռնով կատարւած մի չարագործութիւն:

Լաւ է, որ գւարդիան արքուն է վերաբերում իր պարտականութեան, բայց չափազանց ցաւալի է, որ նա չէ հասկանում, թէ ի՞նչ է այդ պարտականութիւնը: Գւարդիան կամ մի ուրիշը իրաւունք չունի կանգնեցնելու տրանզիտային ապրանքը, երբ մինիստրութեան կողմից բացատրւած ամէն տեսակ վաւերաբուրքերը ուղիղ ու կարգին են:

Արդեօք ո՞րտեղ է գտնուում գործադիր իշխանութիւնը - մինիստրութեան թէ տեղական գւարդիայի շտաբում: Ո՞վ ում պէտք է հնազանդի՞ գւարդիան մինիստրութեան, թէ՞ մինիստրութիւնը գւարդիային: Եթէ մինիստրութիւնը որ եւ է անարդար գործ կատարէ, վերջստուգելու իրաւունքը կը պատկանէ մինիստր Սահմանադիր ժողովին եւ ոչ թէ գւարդիային . . . Միքէ կարելի է այդպէս տակն ու վրա անել իշխանութիւնը եւ անիշխանութիւն ստեղծել պետութեան մէջ:

Ինձ համապատասխան պետական մարմինը բոյլ տւեց անասուններ անցկացրելու հանրապետութեան հողով, եւ գւարդիան, փոխանակ պաշտպանելու իմ քաղաքացիական իրաւունքները, Աստուծ

գիտէ, ինչ է անում . . . Գուրս է գալիս մի գզելի աւերածութիւն ու կոդպուտ մեծ մանապարհի վրա . . .

Լրագիրները գրեցին նոյնպէս, թէ ես անասունները գնել եմ վրաստանի սահմաններում: Վնասկանապէս յայտնում եմ, որ սա կատարեալ սուտ է, անաօթ-յերիւրանք»:

Այսպէս, ուրեմն, այն պահուն, երբ Հայաստանը օրհասական դիմադրութիւն էր ցոյց տալիս թիւրքական արշաւանքին դէմ, երբ թիւրք զօրմասերը քափանցում էին Հայաստանի ներքը, վրաց ազգային-դեմոկրատ կուսակցութեան պարագլուխ, Սահմանադիր ժողովի անդամ, անւանի գործիչ Գ. Գվազաւան պարեմաւորում էր թիւրք բանակը, 10,000 անասուն էր հասցնում հարեւան հայերի դէմ կուռղ թիւրք բանակի հրամանատարութեան:


Երբ Գվազաւայի այս խայտառակ արարքը մերկացւեց, նա քաշուրիւն ունեցաւ խոստովանելու, թէ, այո՛, ինքը տաւար ծախել է թիւրքերին, բայց այդ տաւարը գնել է ոչ թէ վրաստանի այլ հարեւան Հայաստանի սահմաններում: Երբ հայերի գլուխը խառնւած էր

բշտաւու ներխուժման դիմադրութեամբ, Գ. Գվազաւան վրաստանի սահմանակից Արդահանի եւ կարսի հայկական շրջաններէց, գաղտագողի, անասուններ է հաւաքել - 10,000 գլուխ - եւ քշել թիւրք բանակին սնունդ հասցնելու համար . . .

Ինքնարդարացման բնորոշ ձեւ. Հայաստանի դէմ պատերազմող թիւրք զօրքին անասուն մատակարարելը Գվազաւայի համար յանցանք չէ. յանցանք կը լինէր, եթէ անասունները վրաստանից ստուած լինէին . . .

Խայտառակութիւնը կատարեալ կը լինէր, եթէ աւելացնենք, որ այդ Գեորգի Գվազաւան անուն կրող անձը համարածանօթ «Փրոմէթէ»-ի խմբագրապետն է, կովկասեան Անկախութեան կոմիտէի սիւննրից մէկը, որ սեա քանի տարի է նախանձելի աշխոյժով կովկասեան կոմիտէի քաղաքացիական քարոզմ է հնչեցնում . . . Փարիզում:

Աւելի բնական է տրամաբանական չէ՞ր լինի, եթէ Գ. Գվազաւան Թիֆլիսում կոմիտէի քաղաքացիական քարոզէր, իսկ Փարիզում ոչխարի ստեւտորով գրադուր . . . :



ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ԹԻՒՐԳԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՆՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆՅՑ

Բերլինի համալսարանին կից գործող Արեւելեան Լեզուների Մեմբերի Թիւրքաբանութեան ուսուցչապետ Դուկտ. Գ. Եշկէ նոյն հիմնարկութեան 1933 թ. գիտական Տեղեկագիրներում (Բ. Բաժին) մի համաօտ ուսումնասիրութիւն է հրատարակել, «Թիւրքիոյ Ազգային Ուխտի պատմութեան մասին» վերնագրով: Այն շատ, հեղինակը ներկայացնում է այդ ուխտի համաօտ նախապատմութիւնը միջին, սկսելով Օսմանեան պետութեան փլուզումից (հոկտ. 1918 թ.) եւ Մուղրասի զինադադարից:

Որպէս առաջին փորձեր այդ համարում վրա՝ յիշատակում են Կ. Պոլսոյ ակնբայժ Տոքթ. Էսադի հիմնած (29 նոյ. 1918 թ.) «Ազգային Կոնգրէսը» եւ Ահմէդ Ռիզայի «Ազգային Բլոգը»: Վերջապէս, Քեազիմ Կարաբէքի փաշան մի յօդուածով («Ճումհուրիէթ», 16 մայիս 1933 թ.) իրեն է վերագրում «Թիւրքիան փրկելու միակ իրական համարան տեսնելու եւ քայլելու նախաձեռնութիւնը» (1919 թ. մայիս 3):

Եշկէ այդ բոլոր փորձերին «տեղական» նշանակութիւն է տալիս ու Թիւրքիոյ վերականգնումը համարում է Մուստաֆա Քեմալի գործ: Վերջինիս սկզբնաւորութիւնը նա դիտում է Ամա-

սիայի կոչը (21 յունիս, 1919 թ.), որպէս նախաժամ Սըվազի Կոնգրէսի: Սրա յապարման պատճառով, Մ. Քեմալ հրաւիրում է նախ Էրզրումի տեղական խորհրդածուովը (Օգոստ. 1919 թ.) որին հետեւում են ապա Սըվազի Կոնգրէսը (սեպտ. 1919 թ.) եւ կոչը, այլ եւ Ազգային Ուխտի բանաձեւումը: Մինչդեռ, առում է Եշկէ, Թիւրքիոյ Ազգային Ուխտի բնագիրը եւ քարգմանութիւնները մի քանի անգամ արդէն հրատարակւած են * իսկ Սըվազի կոչն էլ առաջ է բերւած Մ. Քեմալի 1927 թ. հոկտեմբերին արտասանած ճառում, « ցայժմ պակտում էր գրականութեան մէջ *երզրումի կոչի* վստահելի վերարտադրութիւնը»: Եւ նա իր յօդուածի վերջում առաջ է բերում այդ կոչի Թիւրքերէն բնագիրը ու գերմաներէն քարգմանութիւնը: Ինչպէս առասարակ իր բոլոր գրածները, նաեւ այս ուսումնասիրութիւնը Եշկէ օժտել է բազմաթիւ ծանօթագրութիւններով եւ ամբողջական աղբիւրների յիշատակութեամբ:

* Այդ մասին տեսնել նաեւ Ա. Արեզ-Լանի «Թիւրքիոյ Ազգային Ուխտը» յօդուածը, «Հայրենիք» ամսագիր 1923 թ. սեպտ. 1-ի թիւ:

ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՇԱՀ ԻՍՄԱՅԻԼ Բ. - Ի ՄԱՍԻՆ

Արեւելեան Մեմբերի «Տեղեկագիրներ»-ի նոյն հատորում (1933 թ.) գերտեղած է մի ընդարձակ եւ ներքում հետազոտութիւն պարսից Շահ Իսմայիլ

Բ. - Ի մասին: Աշխատութեան հեղինակն է երկուստարդ իրանագետ Վալտեր Հինց, դասախօս Բերլինի համալսարանի եւ միեւնոյն ժամանակ վարիչ կրթական

նախարարութեան արեւելեան բաժնի: Գրածքը ներկայացնում է մի հատուածը ծրագրւած մեծ աշխատութեան, ներածութեամբ Սեֆաւիդների պատմութեան:

Հետազոտողը Շահ Իսմայիլ Բ. - Ի նորպէս մարդ եւ որպէս իշխանաւոր նշանակում է ժամանակակից ուսուցար Յովհան Ահեղին (Իվան Գրոզնի), բնականաբար, աւելի փոքր չափանիշով: Եզրակացութիւնը, ինչպէս որ սպասելի էր արդէն, ջախջախիչ է Շահի համար, որպէս իշխողի եւ որպէս մարդու: Նրա քաղաքականութեան հիմնում դրւած է եղել, առում է Հինց, «բացառապէս քրիստոնէական եւ համալուրիական, որից բնականաբար չարիք միայն ծնել կարող էր»:

Թէեւ որպէս մարդ աւելի եւս մտայն գոյններով է ներկայանում մեզ Շահ Իս-

մայիլի դէմքը - ատելութիւնը, կասկածատուութիւնը, վայրագութիւնը, կեղծիքը, արծաթամուրիութիւնը եւ այլն եւ այլն, կազմում էին նրա բնաւորութեան գլխաւոր գծերը - բայց պատմաբանը այդտեղ գտնէ «մեղմացուցիչ դէպք յանցանաց» գտնել կարող է: Այն որ՝ մարդը պարզապէս «հիւանդ է եղել եւ խորտակեալ մէկը, մարմնապէս եւ հոգեպէս, քերեւս նաեւ՝ մտովին»:

Հինց իր այս հետազոտութեան համար լայնօրէն օգտագործել է արեւելեան եւ արեւմտեան աղբիւրները: Հայ եւ վրացի պատմիչների հաղորդած տեղեկութիւնները նա ամառում է «այ այնչափ առատ»: Յամենայն դէպս, օգտագործելի էջեր պիտի գտնէր նա մեր պատմիչների հոյ. մանր պրպտումներ անելու դէպքում:

ՕՍԵՐԻ ԳԻՒՅԱԶՆԱՎԷՊԸ ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆ ԼԵԶԻՈՎ

Նոյն «Տեղեկագիրներ»-ի 1934 թ. հատորում լոյս է տեսել *օս կամ օսէթ* գրքի *Ալեքսանդր Կուբալովի* մշակած ազգային դիւցազնավէպը՝ բնագրով (Երբողական - գիտական տառադարձութեան վերածած) եւ գերմաներէն քարգմանութեամբ մէկտեղ: Աշխատագիրը կատարել են Արեւելեան Մեմբերի օսերէնի դասախօս Գեորգ-Գապօ Բայել (Վլադիկաւկազի նախկին քաղաքագլուխ) եւ իր աշակերտ Դուկտ. Վոլֆգանգ Հէնց, որ մասնագէտ-իբանագէտ է եւ աշխատակից Բերլինի Գիտութեանց Կաճառի:

Հեղինակները տալիս են եւ անբաժնշտ տեղեկութիւններ օսերի, նրանց երկրի ու ազգային գրականութեան, այլ եւ դիւցազնավէպի հեղինակի մասին, կցելով բազմաթիւ ծանօթութիւններ:

Օսերը մեզ ծանօթ էին Ալանների յաջորդներն են: Իրենք իրենց անունում են արդէն Երօն, Իրանական ժողովուրդ: Երբեմնի այդ հօր ազգի բեկորներն են մնացել այսօր, ընդամենը 272000 հոգի:

Երկիրը, - բաժանւած է երկու մասի - Հարաւային Օսէթիա, որ ինքնավար շրջան է վարստանի սահմաններում, եւ Հիւսիսային Օսէթիա որ բուն Ռուսաստանի վարչական միաւորը կազմող Հիւսիս. Կովկասի երկրամասի մէջ է մտնում: Օսերի քիւն է Հիւս. Օսէթիայում՝ 128 հազար, իսկ Հարաւ. Օսէթիայում՝ 60 հազար:

Հարիւր տարի հազիւ կայ, որ օսերը գիր ու գրականութիւն ունին, ազգատիկ: Ժողովրդական բանահիտութիւնը սակայն ունի ինքնատիպ արտադրութիւններ: Օսերի լեզուն մաքուր իրաներէն է: Գերման հայագէտ հանգ. Հիւրշմանը եւ ուսու լեզագէտ Վա. Միլլերը մի շարք ուսումնասիրութիւններ ունեն այդ լեզուի ներքին: Միլլեր հեղինակած է նաեւ օսերէն-ռուսերէն-գերմաներէն մի ընդարձակ բառարան, որ եզակի աշխատանք է իր տեսակում: Խորհրդային իշխանութիւնները օսերէնի համար եւս նոր այբուբեն են կազմել, լատինականի վրա յենւած:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՖԻՐԴՈՒՍԻ, Բանաստեղծի ծննդեան հազարամեակին նվիրած
ժողովածու. - Պետերատ, Երեւան, 1934

Ամբողջ քաղաքակիրք աշխարհի հետ միասին Պարսկաստանի մեծ բանաստեղծ Ֆիրդուսիի ծննդեան հազարամեակը տօնեց եւ Հայաստանում, որի առթիւ Հայաստանի կուլտուրայի պատմութեան ինստիտուտը հրատարակեց այս գրախօսականի նկրքը կազմող ժողովածուն:

Ժողովածուի ամենէն արժեքաւոր մասը Կ. Մելիք Օհանջանեանի ընդարձակ յօդուածն է՝ «Ֆիրդուսի եւ Իրանի վիպական մօտիւնները «Շահ Նամէ»-ում ու հայ մասնագործութեան մէջ», որ գրած է հմտութեամբ եւ գիտական եղանակով:

Հեղինակը իր յօդուածը սկսում է բընորոշելով արաբական տիրապետութիւնը Իրանում եւ պարսիկ ժողովրդի մշակութային - քաղաքական եւ ընկերային-տնտեսական վիճակը 9րդ ու 10րդ դարերի ընթացքում: Թագաւորական ազգային հարստութիւնների անկման պատճառ նա ցոյց է տալիս այն հանգամանքը, որ շահերը հովանաւորում էին աւատապետ-դեֆթաւաններին ու առեւտրական խոշոր դրամատէրերին ի վնաս քաղաքային արհեստաւոր դասի եւ գիւղացիութեան, որոնք՝ անտանելի հարկերի ծանրութիւնից յուսահատ՝ դարձել էին բոլորովին անտարբեր դէպի տիրող դասակարգը: Գիւղացիութեան եւ արհեստաւորների համար այլեւս միեւնոյն էր, թէ ով է իրենց

իշխանութիւնը՝ ազգային, թէ՛ եկուր քաղաւորները: Այս տրամադրութիւնն էր, որ օգնեց Մահմուդ Գագմեւիին նըւանելու Պարսկաստանը, 11րդ դարի շէմֆին:

Սամանիդները, որ առհասարակ գիտութեանց եւ արեւստի հովանաւորներ էին, յատուկ ուշադրութիւն դարձրին հին պարսկական վէպի եւ պատմական գրականութեան վրա եւ առանձնապէս հոգ էին տանում, որ պահպանւի յուշարձանները քարգմանիւն պարսկերէն, որովհետեւ դրանով ուզում էին ամբապնդել պարսիկ-սամանիդների ժառանգական իրաւունքները եւ պահպանել Իրանի իրենց ձեռքից խուսափող գահը: Վերջին Սամանիդ Էմիր Նույս Բ. Իբն Մանսուրը (976-999) պահպանական աւանդութիւնների պարսկերէն քարգմանութիւնը յանձնեց տաղանդաւոր բանաստեղծ Դաւաբիին, որը սակայն առաջին հազար բէյիտներ (երկտող) քարգմանելուց յետոյ սպանեց: Այդ հսկայ գործը գլուխ բերեց Իրանի մեծագոյն բանաստեղծ Ֆիրդուսին:

Հեղինակը շատ սրամիտ բացատրութիւն է տալիս, թէ ի՞նչու Ֆիրդուսիի երկը յաջողութիւն չունեցաւ Պարսկաստանի նոր վեհապետ Մահմուդ Գագմեւիի մօտ. սա «չէր կարող եւ չէր ցանկանայ արժեքաւորել այդ խոշոր քերթուածը, որ վերաբերում էր այլ յարաբերութիւնների, Իրանի յաղթապան իր-

ւին ընդդէմ Թուրանի եւ իրեն նախորդող Իրանի հօգրների փառաբանութեան»:

Շահ-Նամէի աղբիւր են ծառայել բանաւոր աւանդութիւններն ու պահպանական գրականութեան յուշարձանները, գլխաւորապէս Հուդա-ի-Նամէ (տերերի գիրքը) կամ պահպանելու Հվատայ-Նամակ, ինչպէս եւ «Նատկար-ի-Չարիբան» եւ «Կարնամակ-ի-Արտաֆշիր»-ի-Տապական: Վերջին երկու յուշարձանները պահպանել են եւ կայ նոյն իսկ «Կարնամակ»-ի հայերէն քարգմանութիւնը (Գր. Յ. Թիրեախեանի): Ֆիրդուսի գըլխաւոր եւ հիմնական աղբիւրը, սակայն՝ «Հուդա-ի-Նամէ»-ն մեզ հասել է միայն արաբերէն քարգմանութեամբ եւ ժամանակակիցների քաղած մի քանի հատւածներով:

«Կարնամակ»ը պատմում է Արտաշիրի եւ յաջորդների կեանքն ու գործերը, Արշակունիների եւ Սասանեանների կըռիւր: Դա մի ժողովածու է Իրանի անցեալին վերաբերող վիպական նկրքերի, որոնց նմանները տարածւած էին եւ Իրանի հարեւան ժողովուրդների բանաստեղծագործութեան մէջ: «Կարնամակ»-ի ու «Նատկար-ի-Չարիբան»-ի եւ մակ պատմագիրների (Ագաթանգեղոս, Փաւստոս Բիւզանդ եւ Մովսէս Խորենացի) երկերի ու հայկական վէպի («Մասնայ Ծոն'ը» համեմատական վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ երկուսի նկրքերը նման են իրար, բայց նպատակներն ու մանրամասնութիւնները տարբեր, որով անհնար է բուււ, որ միեւնոյն աղբիւրներից օգտուած լինէին: Հեղինակի կարծիքը այդ մասին կարելի է բանաձեւել հետեւեալ կերպով. -

«Նատկար» -ի-Չարիբան-ի եւ «Կարնամակ»-ի վիպական նկրքերը կամ ընդհանուր, համատարած վիպական բնոյք են կրում, կամ, մասամբ, իրանական են եւ հայկական միջավայրը փոխադրւելով, մտել են հայկական վէպի մէջ եւ վերջնականապէս հայացել: Այդ վիպական նկրքից են քաղել հայ պատմագիր-

ները իրենց նկարագրած դէպքերը: Միւս կողմից, հայ աւատապետութեան քայքայումից յետոյ, աւատական շրջաններում գոյութիւն ունեցող վէպերը տեղափոխել են գիւղացիութեան մէջ եւ բերնէ բերան անցնելով՝ հասել մինչեւ մեր օրերը, ինչպէս «Մասնայ Ծոն'ը»: Հեղինակը առաջ է բերում մի շարք նետափրփրական համեմատութիւններ իրանական եւ հայ վէպի եւ ցոյց է տալիս նկրքի փոփոխութիւնները տարբեր միջավայրերում:

Ֆիրդուսի ստեղծագործական սեւերին անցնելով՝ Կ. Մելիք-Օհանջանեանը ցոյց է տալիս, որ բնորոշման հիմք կարող են ծառայել միայն իրանական վէպից մնացած գրաւոր աղբիւրները. սրբանց շարքն է դասում եւ հայկական այն յուշարձանները, որոնց մէջ պահպանել են հին պահպանական վէպի հետեւները: Իրբեւ ստեղծագործող՝ Ֆիրդուսին համեմարել է: Նա վարպետութեամբ մշակել է Իրանի ժողովրդական վէպը, որ անց է կացրել իր ստեղծագործութեան գաղափարաբանութեան բովից: Նրա նպատակն է եղել փառաբանել Պարսկաստանի ազգային քաղաւորներին, որոնք երկարատեւ եւ յաղթական կռիւ մղեցին Թուրանի դէմ: Ֆիրդուսին շատ լաւ էր ըմբռնում իր երկրի արժեքը Պարսկաստանի համար եւ բարձր էր դասում իր հանճարը: Հովանայեցի բանաստեղծ Հորացիուսի պէս նա էլ ջատագովում է իր կատուցած գրական յուշարձանը. -

«... Դարեր իրար կը յաջորդեն,
բայց իմ երկը կը մնայ,
եւ ամէն մարդ կուզէ կարդալ, եթէ
խելքի տէր է նա...
... Սակայն բէպէտ շատն է եղել
եւ շատ գործեր են արւած,
բայց իմ գործի նման մի գործ դեռ
եւս չէ կատարւած,
Այս երեսուն տարիներում քաղելով
մեծ նեղութիւն՝
Ես իրանը կենդանացրի ֆարսի լեզուով
իմ սիրուն»:

Հակառակ Ազգաբանգեղոսի, Բիւզանդի եւ Մ. Խորենացու անունների յիշատակութեան, այլ եւ Գրիգոր Մագիստրոսի նամակներում եղած վկայութեան, պէտք է ասել, որ հայերը շատ քիչ բան են փոխ առել պարսիկ ժողովրդական վէպից, բէն իրանական մշակոյթը շատ խոր արմատներ է ձգել հայկական միջավայրում, - մինչդեռ հարեւան վերաստանում իրանական վէպը եւ ի մասնաւորի Ֆիրդուսին եւ յաջորդ պարսիկ գրականութիւնը խորունկ հետքեր է բռնել վրաց գրականութեան մէջ, ուր անհաշիւ են Ֆիրդուսին եւ սրա հետեւորդների բարգմանութիւններն ու ընդօրինակումները: Այս երեւոյթի պատճառը հեղինակը շատ ճիշտ կերպով բացատրում է հայ եւ պարսիկ ժողովուրդների պատմական նակատագրի պայմաններով եւ մատնանշում է հետեւեալ երկու վնասական փաստը. 1) Արշակունիների անկումը Պարսկաստանում, որից յետոյ սրում է հայ Արշակունիների եւ նախարարների կռիւը պարսիկ Սամանիդների հետ եւ 2) հայերի քրիստոնէութիւն ընդունելը եւ գրադաշտութեան զօրացումը Պարսկաստանում: Վերջին պարագան ունի եւս սրեց հայ-պարսկական հակամարտութիւնը:

Վիպական այդ նիւթերը բոլորովին այլ վերաբերումի արժանացան հայ գիւղացիութեան կողմից, որը ազատ էր կրօնական-հաղափական նախապաշարումներից եւ տիրող դասերի ազգայնական ոգուց: Գիւղացիութիւնը սիրեց ու խրաջրեց այդ վէպերը եւ դարձրեց սեփական բանասիրութեան մաս: Ռոստոմ Ջալը եւ միւս հերոսները հայ գիւղացու աչքին օտարականներ եւ բշմամիներ չեն, այլ Սասնոյ ծոերի Սանատարի ու Բաղդասարի յաջորդները, Սասունցի Դաւթի եւ Ձէնով Օհանի եղբայրները:

«Նքէ Ֆիրդուսու «Շահ-Նամէ»-ն բարգմանութեան չարժանացաւ հայ կղերական բանաստեղծի կողմից, ապա

«Շահ-Նամէ»-ն քանապարհ հարթեց դէպի հայ անգրագէտ գիւղացու խաղաղ մահապետական օջախն ու այնտեղ ունեցաւ մի այնպիսի կենդանի յուշարձան, որպիսին է «Ռոստոմ-Ջալ»-ը, «Բեժան-Մեհիժա»-ն, գրում է Մելիք-Օհանջանեանը:

Ժողովածուի երկրորդ յօդուածն է Մ. Արեղեանի «Շահ-Նամէ»-յի ոտանաւորի չափը Հայ բանաստեղծութեան մէջ» (199 128): Միջնադարի նշանաւոր հայ բանաստեղծ Կոստանդին Երզնկացին (14րդ դար) իր երգերից մէկին կցել է հետեւեալ մակագրութիւնը. «Այր մըն (նստ)ել կայր ու Շահնամայ ասէր ձայնով. նա եղբայրք խնդրեցին թէ ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ. ես շինեցի գրանֆս գայս ի Շահնամայի ձայն կարդացէք»:

Այս ոտանաւորի մասին մենք ունենք միջնադարեան հայ բանաստեղծութեան լուստեղեակ Կ. Կոստանեանի կարծիքը: Նա գրում է. «Կոստանդին ոչ միայն Ֆիրդուսու տաղաչափութեան քաջ տեղեակ է, այլ մինչեւ անգամ նորա ձեւերին էլ է հետեւում. նա իր երգն սկսում է գրեթէ այնպէս, ինչպէս Ֆիրդուսին իւր Շահնաման»:

Արեղեանը ասում է, որ Շահնաման գրած է հետեւեալ չափով.

— 1 1, — 1 1, — 1 1, —
 Իրօք Շահ-Նամէի չափով ոտանաւոր գրելու համար հայերէն լեզուն հնարաւորութիւններ չունի, որովհետեւ նրա մէջ բացակայում են երկար ու կարճ ձայնաւորները:

Կոստանդինը իր ոտանաւորում միջի երկար, խիստ շեշտուած վանկի տեղ դրւում է շեշտուած մի վանկ, որից առաջ եւ յետոյ դնում է անշեշտ վանկ -

Այս կեանքն է ունայն եւ ժառանգ ենք մահոյ,
 Զունի մեզ դրբունք բարութեան եւ շահու:

Արեղեանը հաւաստիացնում է, որ Գրիգոր Նարեկացին էլ նոյն չափով է գրել իր ազօբները:

Մեզ շատ կակածելի է բուն Մ. Արեղեանի տւած բացատրութիւնը:

Գ. Լեւոնեանը «Ֆիրդուսին Հայ գրականութեան մէջ» յօդուածով հանգամանօրէն ներկայացնում է հայերէն գրւած ֆեմերը Ֆիրդուսինի մասին:

Աս. Շահնաղարեանը - «Շահ-Նամէ»-ի ձեռագրի մի օրինակ» ամփոփ տեղեկութիւններ է տալիս պարսիկ մանրանկարչութեան մասին եւ նկարագրում է Հաստանի քանդակագործը:

Կաստանի քանդակագործը պահած «Շահ-Նամէ»-ի 19րդ դարի պարսկերէն մի ձեւագիր:

Եւ, վերջապէս, ժողովածուի վերջում դրած է Ռոստոմ-Ջալի ամենաընդարձակ օրինակներից մէկը (1550 տոյ) Կ. Մելիք-Օհանջանեանի յառաջարկով: Թէ բնագիրը եւ թէ յառաջարկը իրաւ եւ տրեքական են:

Առ հասարակ, ամբողջ ժողովածուն հետաքրքրական եւ լուրջ ուշադրութեան արժանի մի գործ է: Թ. Զ.

ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- Խ. Ոստաբեկյան, « Կենսագրութիւն Մանուէլ Կ. Միրախոբեանի - Վանցի», 1935, Պուֆրէշ.
- Յովհ. Վարժապետեան, « Ուղեցոյց Մարտէլլի» Ը. տարի, 1936 Բ.
- Յ. Ճ. Սիրունի, «Մեծ Դարադարձը» (Աստուածաշնչի հայերէն բարգձ. 1500-ամեակի առթիւ), «Մասիս» Մամկ. Գրադարան, Բիւ 16-17, Պուֆրէշ, 1935.
- Մ. Սարգսեան, «Կարօի ՌՁ133 Սաւանակը», «Նոր-Հասկեր»-ի Գրադարան, ՌՁ1, Թեհրան, 1935.
- «Գոյամարտ», Պատի օրացոյց, հրատարակ. Հ. Յ. Դ. Պատմութեան, 1936, Մարտէլլ.
- «Նորհրդային Գրականութիւն», Օրգան Հայաստանի Խորհրդ. Գրողների Միութեան, Երևան, 1935, Բիւ 1, 2, 3, 4, 5.
- «Կեանք եւ Արևստ», ամսագ., խմբ. Մ. Ե. Մ. Պարսամեան, Փարիզ, 1936, Բիւ 1, 2, 3.
- «Հասկ», Բիւ 1-2.
- «Միոն», Բիւ 1, 2.
- «Նոր Հասկեր», Բիւ 5, 6, 7, 8, 9, 10.
- «Միութիւն», Բիւ 176.
- «Հայ Բոյժ», Բիւ 15, 16, 17.
- Frédéric Feydit «Grammaire de la Langue Arménienne moderne», dialecte occidental, 2e et 3e année, 1935, Venise1
- «Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la Littérature Arménienne» 1 Poèmes, articles, discours. Réunis et traduits par A. Tchobanian. Préface de Fernand Greggh, 1935, Paris, Librairie Ernest Leroux.
- Arshag Ohan Sarkissian. « The Beginning of the Armenian Question», an abstract of a thesis, 1934, Urbana, Ill.
- «Massis», oct.-déc., № 5.
- L. Katchperouni, «La Paix et la Prospérité Mondiales», 1935, Paris.

ՎԷՄ ՆԻՒՐՈՂՆԵՐ

- Տիկ. Մար. Յակոբեան (Բրաղէլ) - Պրիսմէտի Ապաքիմարանի (Լիբանան), Յ. Աժպրուբեան (Նիւ-Եօրթ) - Քէր-բուկի Ազգ. Վարժարանին,
- Դ. Սարգիսբէգեան (Ռեթէլ) - Հայ ձեմարանին, Բէյրութ,
- Պ. Գորգիկեան (Փարիզ) - Հ. Հալա-նեանին, Դամասկոս,
- Պ. Գորգիկեան (Փարիզ) - Յ. Տէյիբ-մէնեանին, Թեհրան,
- Տարոնեան (Փարիզ) - Հայ Նքիտա. «Տարոնեան» Միութեան, Տէտէ-Ազաք,
- Մ. Չօրեան (Նիւ-Եօրթ) - Հ. Յ. Դ. Պատ. Միութեան, Բէյրութ,
- Մ. Օզանեան (Բոստոն) - Մեարդեան ձեմ., Սօֆիա,
- Յ. Պարոյրեան (Նիւ - Եօրթ) - Ատըրպատականի Կեդր. Դպրոցի,
- Յ. Պարոյրեան (Նիւ-Եօրթ) - Յ. Պարոյրեանին, Թեհրան,
- Յ. Կորոյեան (Նիւ-Եօրթ) - Ազգային Վարժարանին, Հավրէզէ,
- Ս. Աւատեան (Նիւ-Եօրթ) - Սուրբա-նապատի Ազգ. Վարժարանին,
- Ա. Թ. Բրուտեան (Նիւ-Եօրթ) - Միւս Եփէի Հաստ. Հալէպ,
- Տըթ. Պ. Յ. Դարբինեան, Տիթրոյիէ - Սեւրի Մուրատեան Վարժարանին, -Մուրատ - Ռաֆայէլեան Վարժարանին,
- Պ. Վարդանեան, Ամբրիկա - «Հրայր-Վահան» գրադարանին, Բուլգարիա,

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 5 դուար
Վեցամսայ 3 ,,
ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԹԵՐԹ ՄԻԱՍԻՆ

Տարեկան 10 դուար
Վեցամսայ 5 ,,
Հասցէ՝

13-15 Shawmut st.
BOSTON MASS (U.S.A.)

Ա Ս Պ Ա Ր Է Ջ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Ամերիկա, տարեկան, 1.50 դուար
Արտասահման 2.00 ,,
Հասցէ՝

"ASBAREZ" P. O. Box 865
Fresno, Calif., U. S. A.

Ա Ջ Ա Տ Խ Օ Ս Ք

ՕՐԱԹԵՐԹ

Բուլգարիա՝ տարեկան 550 լեւ
Բուլգարիա՝ վեցամսայ 300 լեւ
Ամերիկա՝ տարեկան 6 դի.
Ռիբէ Երկիրներ՝ տարեկան 150 ֆր.
Հասցէ՝

45, Bld. M. Louiza,
Sofia, (Bulgarie)

Ա Լ Ի Ք

ԵՐԿՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Տարեկան 85 դիալ
Վեց ամիսը՝ 45 դիալ
Արտասահման Տարեկան՝ 170 ֆր. ֆր.
Հասցէ՝

"ALIK", Impr. Moderne
Khiabane Posthané, Teheran
(Iran)

Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս, տարեկան, 150 եգ. դի.
,, վեցամսայ, 80 ,,
Արտասահման, տարեկան, 40 շիլինգ
,, վեցամսայ 20 ,,
Հասցէ՝
'Houssaper', B. P. 868
Le CAIRE (EGYPTE)

Մ Ե Ղ Ո Ի

Երգիծական Շարաքաբերք

Ներքին՝ տարեկան 100 լեվ
,, վեցամսայ 50 լեվ
Ամերիկա Տարեկան 2 դուար
Արտասահման Տարեկան 30 ֆրանկ
Հասցէ՝
K. Kaladjian
B. P. 444, Sofia, (Bulgarie).

Հ Ո Ր Ի Ջ Ո Ն

ՕՐԱԹԵՐԹ

Ներքին՝ տարեկան 300 տր.
Արտասահման՝ տարեկան 150 ֆր.
Հասցէ՝
Rue Mitropoleos, 14.
Salonique, (Grece)

Ս Ի Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 6 անգլ. շիլինգ կամ 1.50 դի.
Հասցէ՝
Patriarcat Arménien, Jérusalem
(Palestine)

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 3.50 դուար
Հասցէ՝
"Pazmaveb", St. Lazar, Venise
(Italie)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ՌՈՍՏՈՄ .— Հայ-վրացական փոխյարաբերութիւնները 1

ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆ .— Հայերուրբ վաւերաբոյժեր 12

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ .— Բագրատ վարդ . Գէորգ-Թաւափախան 25

ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ .— Լեւոն Թադէոսեան (Պապաշա) 37

ՎԱՀԱՆ ՄԻՆԱՍՈՐԵԱՆ .— Արհաւիրքի Օրեր 48

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ .— Համաշխարհային Պատերազմը եւ
Տարօնի Աշխարհը 68

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ .— Փետրուար 18-ի Յեղափոխութիւնը 87

ԱՆՑԵԱԼԻՔ .— Ակադ . Ալեքսանդր Թամանեան 105

ԿԵՆՆԻՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ .— Մարդկային երկու վաւերագրեր .—
Մի Ոչխարի վաճառականի մասին 118

ԳԻՐԻՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ 120

ԳՐԱԵՕՍԱԿԱՆ .— Ֆիրդուսի, «Բանաստեղծի ծննդեան հազար-
ամյակին նվիրված ժողովածու», Յ. Զ. 122

ՅԱԻԵԼԻԱՍ .— Վ. Մանկունի, Գէորգ Դ. եւ իր ժամանակը 177

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝ տարեկան 70 ֆրանք

Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, Իռլանդիա, Բուլղարիա, Յունաստան Սիւրիա, եւ տարեկան՝ 60 ֆրանք

Պարսկաստան՝ ,, 50 ֆրանք

ՆԱՍՈՐԳ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՐԱՔԱՆՁԻՐ ՏԱՐԻՈՅ 6 ԳԻՐՔԸ՝ 25 ՖՐ.

Հասցէ՝ նամակների, դրամի, յօդւածների եւ ուրիշ ամէն տեսակ առաքումների համար .—

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE, 42, Rue de la Jonquièrè, PARIS (17^e)

« քառասուն եւ հինգ Առաջնորդական թեմոց Տաճկաստանի, եւ
« վերջապէս Ս. Մատթէոս եւ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսներն առա-
« լելադոյն քուէ ստանալով, վերջնական կանգիդառք կամ ընտրե-
« լիք, ըստ Պալատէնիայի, անուանին ուսաց կայսեր բարեհաճու-
« թեանը կը ներկայացուի, եւ Ն. Վեհափառութիւնն ալ զՄատ-
« թէոս կը նշանակէ կաթողիկոս ամենայն Հայոց»:

Յետ կարգելոյ եւ զպատճէնս նամակի յիշելոյ, որպէս եւ զնա-
մակին որ առ Բէհայուտեան իշխան, քաղէ եւ զպարբերութիւնս ինչ
ի զրութենէ Սինոդի, շարունակէ Յանձնաժողովն զգլխադուրթիւնս
եւ զքննադատութիւնս իւր ըստ այսմ կարգի:

« Այս վաւերական տեղեկութիւններէն յայտնի կը տեսնուի, որ
« Ս. Էջմիածին Ռուսաց կայսրութեան երկիր ըլլալէն ի վեր՝ երեք
« անգամ կաթողիկոսի ընտրութիւն եղած է, եւ թէպէտ Ս. Էջմի-
« ածնի Միաբանութիւնը ահամայ Պալատէնիայի տրամադրութեանց
« համեմատ վարուելու պարտաւորուած է միշտ, բայց եւ անպէս
« Ներսիսի եւ Մատթէոսի ընտրութիւնն ըստ այնմ չէ կատարուած .
« այսօր ալ Ս. Էջմիածնի Միաբանութիւնը նոյն կանոնաց համեմատ
« վարուելու պարտաւորեալ է, թէեւ իր պաշտօնական նամակը Պա-
« լատէնիայի յիշատակութիւն չընէր, այլ ըստ ամենայնի համաձայն
« ծիսից եւ աւանդութեանց մերոյ եկեղեցւոյ վարուիլ կառաջարկէ:
« Տեսնենք ուրեմն ո՞րն է մեր Եկեղեցւոյ ընդհանուր կանոնը
« կամ աւանդական սովորութիւնը կաթողիկոսական ընտրութեան
« մասին:

« Ազգային եկեղեցին՝ եկեղեցական նուիրապետութեան եւ ընդ-
« հանրապէս ամէն տեսակ բարեկարգութեան վերաբերեալ կանոնաց
« եւ սահմանադրութեանց հետ հարկաւ կաթողիկոսական ընտրու-
« թեան վրայ ալ մասնաւոր կանոնադրութիւն ունեցած է ի նախ-
« նեաց, ի հայրապետաց եւ յընդհանրական ժողովոց սահմանեալ,
« բայց ազգային թանկագին հոգեւորական մեծ մասին կորստեան հետ,
« Ազգը սոյն կանոնադրութեան ալ կորուստը ողբալու դժբաղդու-
« թեան մէջն է այսօր, այնպէս որ կաթողիկոսական ընտրութեան
« վրայ մեր Եկեղեցւոյ օրէնքը եւ մեր նախնեաց կարգադրութիւն-
« ները գտնել ուղղորդ՝ կը պարտաւորուի ազգային պատմութեան
« հատուկտոր մնացորդացը դիմել, եւ անոնց ծաղկաքաղովը բաւա-
« կանանալ:

« Կաթողիկոսական Յանձնաժողովս սոյն կէտին վրայ ազգային
« մասնագիտութեանց հետադրութիւնը ընելով, բոլոր պատմական
« անցից ընդհանուր տեսութեամբ եւս եզրակացութեան հասաւ, որ՝
« Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, Ազգային եկեղեցական նուիրա-

« պետութեան զլուխ, Ազգին Հողերը Տէրն ու Հովիւը, մէկ բառով
 « Ազգին Ընդհանրական Հայրապետը Ազգովին կընտրուի, այսինքն՝
 « հաւանքն Ազգէն եւ միայն Ազգէն: Ազգային պատմութիւնը կը ցու-
 « ցընէ, որ Ազգին ամէն կարգի եւ ամէն աստիճանի անձինք՝ լուսա-
 « ւորչական Եկեղեցւոյ անդամ ըլլալու իրաւամբ կաթողիկոսական
 « ընտրութեան մասնակից եղած են: Եկեղեցական կարգէն եղիտիւ-
 « պոսունք եւ քահանայք (վարդապետք), սարկաւազք եւ դպիրք
 « ամբողջ, քաղաքային վիճակի մէջ ալ թագաւոր, նախարար, իշ-
 « խան, սոսկան աղքատ, հարուստ, մեծ եւ փոքր, ամէն կարգի ազ-
 « դայինք իրաւունք ունեցած են ամենայն Հայոց Կաթողիկոսի ըն-
 « տրութեան մէջ: Այս իրաւանց արգելք ըլլալու միակ պարագայ՝ ե-
 « կեղեցւոյ փարախէն դուրս գտնուիլն եղած է: Այն որ եկեղեցւոյ
 « մէջ է, եւ չէ մերժուած, եւ հասակի կամ ընկերական վիճակի նը-
 « կատմամբ քաղաքականապէս անբաւական չէ, Եկեղեցւոյ գլխոյն՝
 « Հասարակաց Հօր ընտրութեան մասնակցելու իրաւունք կը վայե-
 « լէ: Պատմութիւնը կը ցուցնէ նաեւ, որ մեր Ազգին մէջ կաթողի-
 « կոսական ընտրութեան մասին երբեք օտարի միջամտութիւն մը-
 « տաղիւր ընդունուած չէ, եւ բնաւ տեղ մը ազգային կաթողիկոսի
 « ընտրութեան վաւերացում յիշատակուած չի կայ: Կերեւի որ մեր
 « նախնիք այս պարագային եւ ոչ իսկ գտողափարն ունեցած են:

« Մեր Ազգին մէջ, ազգ. եկեղեցականք եւ քաղաքայինք միեւնոյն
 « Եկեղեցւոյ անդամ եւ ի Քրիստոս Յիսուս եղբայր ճանչնալով զիրար,
 « Ազգային Հայրապետի ընտրութեան մէջ վիճակի խորոզութեան
 « սկզբունք երբեք ընդունած չեն:

« Ամէն կարգի անձինք սոյն ընտրութեան մասնակցեր են, ու
 « իսպառ ի խուռն անշուշտ, այլ իւրաքանչիւրն իր ձեռնհասութեան
 « սահմանին մէջ շարժելով, բայց ամենն ալ գործելով, այնպէս ու-
 « Կաթողիկոսունք ընտրուեր են միշտ Քրիստոնէական Արեւելեան
 « եւ նախնական պարզ, մաքուր կանոններով: Կաթողիկոսական ըն-
 « տրութեան գործողութիւնները կանխաւ օրինաւորութեան շաղկին
 « մէջ ուղղելով իրենց պաշտօնը կատարած են, նուիրապետութեան
 « ան գերագոյն աստիճանին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան
 « պաշտօնին արժանաւորագոյն անձինքները ցոյց տալով ժողովրդ-
 « եան, որով նոյն պաշտօնին արժանաւորութեան հասնելու արգելք
 « ունեցողները ինքնին յայտնուելով, Ազգայնոց ընտրութիւնը ճա-
 « նաչողութեամբ կատարուելու տրամադրութեան մէջ գտնուեր է:
 « Քաղաքայինք հանդերձ եկեղեցականօք ի մի վայր գումարուելով,
 « եկեղեցականաց ցոյց տուած անձանց մէջէն Ազգին Հայրապետն
 « ընտրեր են, երբեմն պարզապէս միաձայն աղաղակ բառնալով,

« երբեմն ատենական կարգով կանոնօք վարուելով. եւ երբ ըն-
 « տրութիւնը կատարուեր է, ալ բնաւ մէկուն վաւերացմանը սպա-
 « սելու հարկ եւ օրէնք չըլլալով՝ ընտրեալը յԱթոռ Հայրապետու-
 « թեան օժուումն առեր է:

« Այս է ահա պատմութեան մնացորդաց մեզ սովբեցուցածը,
 « իրբեւ հիմնական տրամադրութիւնք կաթողիկոսական ընտրու-
 « թեան կանոնաց. անոնց համեմատ կատարուեր է Կաթողիկոսաց
 « մեծ մասին ընտրութիւնը: Թէպէտեւ եղեր են Կաթողիկոսներ, որ
 « իրենց յաջորդներն իրենք ընտրեր են, մեր թագաւորներն ալ ըն-
 « տրեր են շատ անգամներ զկաթողիկոսներ, ինչպէս նաեւ նախա-
 « բարք, եղիտիպոսունք՝ միայնակ, կամ ժողովրդեան հետ մէկ-
 « տեղ. երբեմն նաեւ սոսկ ժողովուրդն աղաղակաւ ընտրեր է զկա-
 « թողիկոս, եւ վերջին ժամանակները կաթողիկոսական դահլին
 « մերձակայ եկեղեցականք միայն. շատ անգամ Ս. Էջմիածնի Միա-
 « բանութիւնը. երբեմն ալ Կոստանդնուպոլսոյ պատրիարքները,
 « բայց ասոնք ամենն ալ ընդհանուր կանոնի դարտուողութիւններ ե-
 « դած են, եւ ազգային քաղաքական դժուարութեանց եւ տատապա-
 « նաց ժամանակ, կամ անպայման վստահութեան եւ կամ անիրաւ
 « բռնաւորութեան արդիւնքը եղած են: Ազգին առաջին Հայրապետ եւ
 « լուսաւորիչն հոգւոց Մեծն Գրիգոր աստուածային յայտնութեամբ
 « ընտրուեր է՝ Հայկազն թագաւորին, նախարարաց եւ ժողովրդա-
 « կանաց ամենուն կամօք եւ խնդրաւորքը, բայց Լուսաւորիչ ինքն ու-
 « բոշեր է իր յաջորդը, եւ այսպէս պէտք էր ըլլալ, վասնզի Ազգը
 « նոր լուսաւորուած ըլլալով քրիստոնէական հաւատոյ լուսովը, կա-
 « տարեայ եւ անպայման վստահութիւն ունէր իր Լուսաւորչին, ինչ-
 « պէս նաեւ անոր յաջորդին միայն, որով մտադիւր եւ իրաւամբ ճը-
 « դած է անոր՝ յաջորդ Հայրապետին ընտրութեան իրաւունքը որ
 « իրն էր. եւ անոր ընտրելովը ինքն ընտրած կը համարուէր:

« Թագաւորներն ալ ընտրեր են կաթողիկոսներ, ոչ միայն ազ-
 « դայինք, այլ եւ օտար իշխաններ, մասնաւորապէս պարսից թագա-
 «ւորները եւ Շահարման կոչուած Հաղարացի բռնաւորները, որ
 « շատ անգամ մերայնոց ձեռք անուղղակի կերպով ուղածնին կը
 « բարձրացունէին կաթողիկոսական Աթոռ: Բայց անոնք բռնաւո-
 « րութեան արդիւնք են եւ ոչ այլ ինչ. Ազգն այսպիսի պարագային
 « մէջ իր գտնուած վիճակին համեմատ վարուելով՝ կամ լռելեայն
 « ընդուներ է նորընտիր կաթողիկոսը՝ եթէ արժանաւոր գտեր է
 « դայն իւր կոչման, եւ կամ ինք թագաւորին կամ բռնակային դէմ
 « բողոք բառնալու կարողութիւն չէ ունեցեր: Բայց երբեմն նաեւ ա-
 « սոր հակառակ բողոք եւ աղաղակ բարձեր է, մերժեր է այն բռն-

« նաւորական կաթուղիկոսը եւ ուրիշ մը ընտրեր ու կաթուղիկոսա-
« ցուցեր է անոր տեղ :

« Եկեղեցականք ալ ընտրեր են շատ անգամ զկաթուղիկոս , եւ
« երբեմն միայն եկեղեցականք , առանց քաղաքային անձանց մաս-
« նակցութեան : Բայց ե՞րբ . Ազգին ցիր եւ ցան , նուաճեալ եւ դեր-
« եալ ժամանակներուն մէջ . այսպէս որ եթէ քաղաքայինք ուզէին
« ալ՝ թերեւս չպիտի կարողանային մասնակցութեան իրաւունքնին
« ի գործ դնել , մերթ առ ահի բռնակալաց , եւ մերթ առ դժուարու-
« թեան ճանապարհաց . եւ ի մի վայր գումարելոյ :

« Բայց ժողովուրդն ալ այսպիսի չափազանցութեանց մէջ դտնը-
« ւեր է երբեմն : Երբ Սուրբն Ներսէս Ծնորհալի վախճաններ է , անոր
« եղբորորդին Գրիգոր Տղայ՝ յուղարկաւորութեան հանդէսին դտնը-
« ւելով , ժողովուրդն անոր չնորհապարտ վեհ կերպարանքին ու ի-
« մաստայից բանիցն դմայելով՝ միաբերան ազազակ բարձեր ու
« դնա ինքն Գրիգոր Կաթուղիկոս խնդրեր է , եւ ըստ այսմ խնդրա-
« նաց , որ առաւել ստիպման կերպարանք ունի քան թէ ընտրութեան ,
« երանելին ի դահ կաթուղիկոսութեան համբարձեր է հաճութեամբ
« եւ օժմամբ եպիսկոպոսաց :

« Ասոնց ամենն ալ եղեր կատարուեր են , բայց , ինչպէս որ
« վերն բսինք , իրբեւ դարտուղութիւն ընդհանուր կանոնաց , որով
« Ազգը ի սկզբանէ անտի իր Հայրապետին ընտրութիւնն ինքն ընել
« կարգադրեր է միայնակ եւ բովանդակ . այսինքն ազգային ամէն
« կարգի եւ աստիճանի արժանաւոր անձանց ձեռք , եւ միայն ա-
« նոնց ձեռք : Օտարը երբեք իրաւամբ ձեռք ձգած չէ անոր մէջ :
« Բայց միթէ կարկառած ալ չէ . - Այո՛ . Սուրբն Գրիգոր Պահլա-
« ւունիին՝ Ծնորհալուցն եղբորը կաթուղիկոսութեան ժամանակ ,
« Բիւզանդիոյ կայսրութեան եւ Յունական Եկեղեցւոյ Պատրիար-
« քութեան կողմէն առաջարկութիւն կ'ըլլայ մեր Հայրենի Եկեղե-
« ցին Յունականին հետ միաւորելու , եւ այս նպատակաւ կայսեր
« եւ Պատրիարքին կողմէն պատգամաւորութիւն մը կը ներկայանայ
« Հայկազանց Կաթուղիկոսին՝ ինն դյուլս առաջարկութիւն բերելով
« Յունական Եկեղեցւոյ կողմէն , որոնց իներորդն է . « Զի ընդու-
« նիցին Հայք գառաջարկութիւն Կաթուղիկոսին՝ միայն ի թաղաւո-
« րէն Հոռոմոց » :

« Առ այս Հայրապետն Հայոց հանդերձ եպիսկոպոսօք պատաս-
« խանի արտպէս . « Վասն իններորդին՝ ազաչեն Հայք թոյլ տայ իւ-
« րեանց ընտրութեամբ կացուցանել կաթուղիկոս , զի ընդ իշխանու-
« թեամբ դանազան ազգաց գոյով մեր , ասեն , դժուարին է ընտրու-
« թեամբ կայսերն դնել կաթուղիկոս » : Եւ որպէս զի այս խնդրական

« պատասխանին իւր նշանակութեան ծանրութիւնը չկորսնցունէ ,
« յաւելուն առ այն թէ « զաթուռն Անտիօքայ , եթէ հնար է , եւ զթեմս
« նորա կալցի կաթուղիկոսն Հայոց , եւ յորժամ այս լինելցի , ըն-
« տրութիւն կաթուղիկոսին կախեսցի զԽաւանութենէ կայսերն » :
« Յունաց կայսրն ու արեգերական պատրիարքն եւ կեցան սոյն
« խնդրը կրկնելէ , եւ ինն առաջադրութիւններէն միայն երկուքու-
« վը բաւականանալով որոշեցին :

« Միթէ յայտնի չերեւի՞ր այս պատմութենէն որ մեր Եկեղեցին
« Հայրապետական ընտրութեան համար չը կրնար եղեր ընդունիլ
« օտարի միջամտութիւն , թէեւ օտարն ըլլայ յունական կայսր մը ,
« եւ իր միջամտութիւնը յունական Եկեղեցւոյ դյուլս արեգերական
« պատրիարքի մը համահաճութեամբը զօրութիւն ստացած ըլլայ :
« Ի՞նչ դժուարութիւն կար մեր նախնեաց ընդունիլ Բիւզանդիոյ
« կայսեր առաջարկութիւնը , որ մեր Ազգայնոց մէկ մասին վրայ
« տիրող իշխանն ըլլալէ զատ , Ս . Եկեղեցւոյ հարազատ ծիրանա-
« ծնունդ թագաւորներէն էր , եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքն
« անոր կը համաձայնէր . եւ եթէ մերայինք ընդունէին սոյն առա-
« ջարկութիւնը , քաղաքականապէս Ազգին մեծ ծառայութիւն ըրած
« չէ՞ին համարուեր : Բիւզանդիոյ հզօր կայսեր հաւատակցութեան
« շնորհիւ՝ անոր մասնաւոր պաշտպանութիւնը գրաւելու հարկ եւ
« կարօտութիւն չը կա՞ր արդեօք նոյն ժամանակները , որ մեր Ազ-
« ցին երկրորդ հարստութեան տունը կործանած , Ազգայինք մեծ
« մասամբ Մեծին Հայաստանի վրայ բռնացող հեթանոսաց ձեռքը
« մատնեալ , եւ Ասիոյ Արեւմտեան կողմը՝ Ռուբինեանց փոքրիկ եւ
« տակաւին խիստ տկար տէրութենէն զատ՝ Ազգային իշխանութեան
« ոչինչ նեցուկ չէր մնացած : Այո՛ , կարօտութիւն կար , եւ ոչ մի-
« այն կարօտութիւն , այլ երկիւղ ալ կար , որ եթէ մերոնք Յունա-
« կան առաջարկութիւնները մերժեն , թերեւ Յունաց կայսրութիւ-
« նըն առիթ ունենալով Հայաստանի մնացորդաց եւ մասնաւորապէս
« Կիլիկիոյ փոքրիկ , բայց անկախ իշխանութեան վրայ յարձակում
« ընէր , եւ Ազգին վերջին յոյսն ու միակ միխթարութիւնն ալ կորըն-
« չէր յաւիտեան : Բայց մեր նախնիքն այս առարկութեանց եւ դի-
« տողութեանց եւ ոչ մէկուն ունին մատուցին , այլ Հայրենական
« Եկեղեցւոյ օրինակ նախանձանդրութեամբ դօտեւորեալ՝ հա-
« մարձակ պատասխանեցին կայսեր , եւ խնդրոց ձեւով անոր հրա-
« մանը մերժեցին :

« Կաթուղիկոսական ընտրութեան վերաբերեալ սոյն ընդհանուր
« սկզբունքն զատ՝ պատմութիւնն անոր մէկ քանի տրամադրու-
« թիւնները կը յայտնէ , որով կը տեսնենք թէ մեր նախնիք Արշա-

« Կունեաց թագաւորութեան վերնալէն ետքը, տեսնալով օտարազգի
 « բունաւորաց ազդեցութեամբ մէկ քանի զաւաճող եկեղեցականաց
 « կաթողիկոսութեան հասանելը, եւ երբեմն նաեւ մէկ քանիին մէկէն
 « զանազան տեղուանք նոյն բարձր աստիճանին ընտրուելը, այնպէս
 « որ միեւնոյն ժամանակ մինչեւ հինգ-վեց կաթողիկոս երեւան ե-
 « լած են Ազգին մէջ, Գրիգոր Պահլաւունի օրինաւոր կաթողիկոսին
 « նախագահութեամբ եկեղեցական Սինոդը ըրեր են եւ օրէնք դրեր
 « են, «զի առանց հաւանութեան չորից Աթոռոց եպիսկոպոսաց ոչ
 « ոք նստցի կաթողիկոս՝ որ ի Սինոդս, եւ Թաղէօսի վանոց՝ որ
 « յԱրտաղ»: Բայց այս օրէնքն շատոնց անգործադրելի եղած է, նոյն
 « իսկ յիշեալ չորս եպիսկոպոսական Աթոռոց պակասելով:

« Բաց յայտմանէ, Մխիթար կաթողիկոսին ի սկիզբն չորեքտա-
 « սաներորդ դարու Հռովմ գրած թուղթին մէջ յիշատակութիւն կը
 « գտնուի Ազգային կաթողիկոսաց ընտրութեան եղանակին վրայ
 « այսպէս. «Ժողովին հրամանաւ Արքայի Արքեպիսկոպոսունք, ե-
 « պիսկոպոսունք . . . իւրաքանչիւր ոք ի նոցանէ տայ զանուն միոյ
 « ուրուք յեպիսկոպոսաց կամ ի վարդապետաց . . . եւ զանունս
 « գրով տան թագաւորին ընդ կնքով իւրեանց, եւ եթէ բաղումք ի-
 « ցեն վիճակովքն, հրամայէ թագաւորն, զի միարանեցին ի վերայ
 « երկուց կամ երից, եւ ապա թագաւորն հանդերձ ժողովով իւրով
 « ընտրէ յերից ի նոցանէ զմին զոր կամի, եւ յաւուր օծութեան անդ՝
 « թագաւորն ինքնին ծուներ կրկնեալ՝ դնէ զմատանին ի ձեռն նորս
 « համբուրելով զաջ նորին եւ զառնայ ի տեղի իւր, եւ յայնժամ առ-
 « նուն զնա Առաջնորդք, եւ օծանին ընդ օրինի կաթողիկոսութեան»:
 « Ահա այս տրամադրութիւններն ալ կապացուցանեն, որ Ազգն ինք
 « կընտրէ զիւր կաթողիկոսը իւր կրօնական եւ քաղաքային աստի-
 « ճանաւորաց ձեռք, եւ օտարի ազդեցութեան առաջքն առնելու
 « համար ամէն պէտք եղած միջոց ի գործ դրած է:

« Արդ՝ կաթողիկոսական Յանձնաժողովը Ամենայն Հայոց
 « կաթողիկոսութեան արդի ցաւալի կացութեանը եւ ընտրութեան
 « ներկայ եղանակին հակառակ մեր նախնական օրինաց տրամա-
 « դրութիւնները տեսնելով, իր պաշտաման Ա. եւ Բ. կէտերուն
 « կատարմանը համար բաւական կը համարի յայտարարութիւն ընել
 « առ պատկոսի ժողովը, թէ կաթողիկոսական աքռոխի արդի վի-
 « մակն եւ կաթողիկոսի ընտրութեան արդի սահմանադրութիւնը
 « հիմնական ուղղութեան կը կարօտի, եւ պէտք է ամէն ինչ մեր ե-
 « կեղեցւոյ նախնական օրինացն ու աւանդութեանց վերածել»:

Ըստ այսմ աւարտի Կ. Յանձնաժողովն զգիտողութիւնս իւր եւ
 զտեղեկութիւնս ըստ երկուց խնդրոցդ, անցանէ ի մասն Գ., իմա՝

յերրորդն ինդիւր սակա որոշելոյ զեղանակ ինչ ի մասնակցութիւն
 Հայոց Թուրքիոյ յընտրութեան կաթողիկոսի Ամենայն Հայոց եւ
 Ծրագրի այսպէս:

Ա. Ս. Էջմիածնի կաթողիկոսը Ամենայն Հայոց Ընդհանուր
 Հայրապետ եւ Հոգեւոր Տէրն ըլլալով՝ իր ընտրութիւնն ազգային
 կըլլայ:

«Բ. Ս. Էջմիածին, Հայաստանեայց Մայր Եկեղեցին, Աստուած-
 « որդւոյն հրաշալի ճարտարապետութիւնը Ա. Լուսաւորչին ձեռք
 « շինուած, անոր Հայրապետական Աթոռն եւ համօրէն Հայկազանց
 « հոգեւոր միութեան կեդրոնը ըլլալուն համար, Ամենայն Հայոց
 « կաթողիկոսական գահը միշտ հոն կը մնայ, եւ հետեւաբար կա-
 « թողիկոսին վերջնական ընտրութիւնն ալ հոն կը կատարուի:

« Գ. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան Տաճկաստանի
 « Հայոց մասնակցութեանը համար նախ եւ առաջ Կ. Պոլսոյ եկեղե-
 « ցականք՝ վիճակային ժողով գումարելով՝ կաթողիկոսական ըն-
 « տրելոց հանգամանքը կորոշեն, այսինքն՝ Ազգին մէջ գտնուած
 « բարձրաստիճան եկեղեցականներէն միայն զանոնք, որ կաթողի-
 « կոսի աստիճանին արժանանալու արդէլք մը չունին, կը դատեն,
 « եւ անոնց ցուցակը ժողովոյ անդամոց ստորագրութեամբ կը վա-
 « ւերացնեն:

« Դ. Սոյն ցուցակը՝ Տաճկաստանի Հայոց ընդհանուրութիւնն օ-
 « ըրնաւորապէս ներկայացնող Ազգային Երեսօխոխանական ընդհա-
 « նուր ժողովոյ կը ներկայացուի, որ անոր մէջէն եւ միայն անոր
 « մէջէն՝ զազանի քուէարկութեամբ երեք ընտրելի կորոշէ: Եթէ
 « ասոնցմէ մէկը քուէին բացարձակ առաւելութիւն չստանայ, երկ-
 « րորդ անգամ քուէարկութիւն կ'ըլլայ երեք առաւելագոյն քուէ
 « ստացողաց վրայ, եւ սոյն երեք ընտրելիք իրենց ստացած քուէից
 « յին կեդրոնական ընդհանուր ժողովով ընտրած են:

« Ե. Տաճկաստանի Հայոց Առաջնորդութիւնները, Սոսոյ եւ Ազ-
 « թամարայ կաթողիկոսութեանց սահմաններուն մէջ գտնուող վի-
 « ճակներուն հետ 65 ըլլալով, ընդհանուր ժողովոյ կողմէն ընտր-
 « ուած երեք ընտրելեաց ամէն մէկը 130 քուէի արժէք կունենան,
 « այնու իբրաւմբ որ բոլոր Տաճկաստանի Հայոց թէ եկեղեցական
 « եւ թէ աշխարհական ընտրողաց ամենուն ներկայացուցիչ ազգա-
 « յին կեդրոնական ընդհանուր ժողովով ընտրած են:

« Զ. Տաճկաստանի Հայոց Երեսօխոխանական ընդհանուր ժողո-
 « վը երկու պատգամաւոր կընտրէ, մին եկեղեցական (միւսն աշխար-
 « հական), որք Ս. Էջմիածին կերթան, եւ Տաճկաստանի երեք ըն-
 « տրելեաց անունները եւ անոնց ամէն մէկուն 130 քուէի արժէք ու-

« նենալը յայտնող ընդհանուր ժողովոյ պաշտօնական գիրը Սինոդին
 « եւ ընտրող ժողովին ներկայացելէ ետեւ, Ս. Էջմիածնի տաճարին
 « մէջ երկրորդ անգամ կատարուելիք քուէարկութեան ժամանակ՝
 « քուէնին կուտան միայն այն բարձրաստիճան եկեղեցականին ,
 « որ Տաճկաստանի ընդհանուր ժողովին մէջ քուէից բացարձակ ա-
 « ռաւելութիւն ստացած է :

« Է. Ս. Էջմիածնի Տաճարին մէջ ներկայացեալ Համագրային
 « Պատգամաւորներուն ըրած քուէարկութեան արդիւնքը յայտնուե-
 « լին ետք, ամենէն աւելի քուէ ստացող եպիսկոպոսն օրինաւորա-
 « պէս Հոգեւոր Տէր է Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Կաթողիկոս
 « Ամենայն Հայոց սիրուելոց ընդ ամենայն տիեզերս» :

Այսպէս աւարտի Յանձնաժողովն Կոթողիկոսական գծրադիր
 իւր եւ զեզրակացութիւն՝ յաւելեալ եւ զյոյս իւր սիրաշահելոյ զբա-
 ղեհաճութիւն Օգոստ. Կայսեր Ռուսաց առ այս :

Թուի մեզ հետաքրքրական լինել ինքնաբերուիս - յաւելուած ա-
 ռաջարկութեան Յանձնաժողովոյ որ վասն Սսոյ եւ Աղթամարայ
 պիտականուն կաթողիկոսութեանց՝ զտեալ եւ ուղղեալ առ Ընդհ.
 ժողով Տեղեկագրովն իւրով : Ուստի ի կնքել մերում զայսուսիկ պար-
 բերութիւնս որ սակս ջանից եւ արդեանց Յանձնաժողովոյ առթիւ
 խնդրոյ վերաքննութեան Պալատէնիոյ, ոչ աւելորդ համարիմք ըն-
 դօրինակել ասէն միայն գծրագիր առաջարկութեանն ընդ երկուց
 պարբերութեանցն որ ի սկիզբն ծրագրոյ, թողեալ ի բաց զհամայն
 պատմական տեսութիւնս եւ զխորհրդածութիւնս՝ առիթ առեալ եւ
 պատրուակեալ զմիաժամանակեայ թափուր վիճակս Աթոռոյն Սսոյ
 Աղթամարայ, եւ կամեցեալ ենթարկել գնորդութիւնս ընդ գերիշխա-
 նութեամբ Կաթողիկոսի Ամենայն Հայոց՝ ի կատարեալ միութիւն
 Եկեղեցւոյ Հայաստանեայց ընդ միով գլխով : Ահաւասիկ .

« Այս նպատակաւ Յանձնաժողովս կառաջարկէ որ Ընդհանուր
 « ժողովը վճիռ տայ եւ տնօրէնութիւն ընէ, որ այսուհետեւ Սսոյ
 « Աթոռին Կաթողիկոսի յաջորդութեանն նկատմամբ Աջապահ կռչ-
 « ուած կարգ մը անձանց ըրած պահանջողութիւնն անընդունելի է,
 « եւ թէ այս աթոռոյն, եւ թէ՛ Աղթամարայ աթոռոյն համար Կա-
 « թողիկոս ընտրելու իրաւունքն Աղգային Ընդհանուր ժողովին է-
 « րեն սեպհական (° . . .) ըլլալով, նա կընտրէ կաթողիկոսները,
 « երկուքն ալ Միաբանութեանց կողմէն ներկայացուած օրինաւոր
 « ցուցակին մէջէն գատելով, ինչպէս որ Ս. Երուսաղէմի Պատրիար-
 « թի ընտրութեան համար ըրած է եւ կընէ :

« Եթէ Ընդհանուր ժողովն այս վճիռը տալու կամք ընէ, Յանձ-
 « նաժողովիս կը մնայ սա հետեւեալ յօդուածներն առաջարկել, իբ-

րեւ ընտրական օրէնք Սսոյ եւ Աղթամարայ կաթողիկոսաց ընտրու-
 « թեան :

« Ա. Երբ Սսոյ կամ Աղթամարայ Կաթողիկոսը վախճանի,
 « Միաբանութիւնը իր Տնօրէն ժողովոյ հրաւիրմամբ ընդհանուր ժո-
 « ղով կազմելով՝ Տեղապահ մը կընտրէ Կաթողիկոսութեան աթո-
 « ոոյն, եւ զանի կառաջարկէ Կեդրոնական Վարչութեան խառն ժո-
 « ղովոյ հաստատութեանը :

« Բ. Միաբանութեան ընդհանուր ժողովը տեղապահի նախա-
 « դահութեամբ ատեան կազմելով (քաղտնի քուէարկութեամբ)
 « ցուցակ մը կը պատրաստէ կաթողիկոսութեան աթոռը բարձրանա-
 « լու արժանաւոր եկեղեցականաց, որուն մէջ դրուելու անձինք պէտք
 « է 40 տարին լրացուցած եւ դէթ հինգ տարիէ ի վեր եկեղեցական
 « աստիճան ընդունած ըլլան, Աթոռոյն եւ Միաբանութեան ամէն
 « պարագայից տեղեկութիւն եւ հմտութիւն ունենան, եւ որ եւ իցէ
 « դատի ներքեւ չգտնուին տէրութեան կամ Աղգին կողմէն :

« Գ. Սոյն ընտրելեաց ցուցակը որ գոնէ երեք անուն պիտի պա-
 « րուակէ, Միաբանութեան ընդհանուր ժողովոյ մեծագոյն մա-
 « սին ստորագրութեամբ եւ Տնօրէն ժողովոյ անդամոց եւ կաթու-
 « ղիկոսական տեղապահին կնքովը վաւերացնելով՝ կը ղրկուի Կե-
 « դրոնական Վարչութեան խառն ժողովոյ, որ իր ունեցած դիտո-
 « ղութիւններով հանդերձ զայն կը ներկայացնէ Աղգ. Ընդհանուր
 « ժողովոյ :

« Դ. Ընդհանուր ժողովը կընտրէ զկաթողիկոս նոյն ընտրելեաց
 « ցուցակին մէջէն գաղտնի քուէարկութեամբ եւ բացարձակ առա-
 « ւելութեամբ քուէից :

« Ե. Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը ընդհանուր ժողովոյ ըն-
 « տրութեան գործադրութիւնը կընէ նորընտիր կաթողիկոսին օժ-
 « ման համար պէտք եղածը անօրինելով եւ Բ. Դոնէն մասնաւոր
 քաղրիքով հաստատութեան ֆէրման առնելով :

« Զ. Նորընտիր Կաթողիկոսն իր ընտրութեան լուրը կը հա-
 « ղորդէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին պատշաճաւոր եղանակաւ,
 « եւ շրջաբերական կոնդակով ալ իր թեմերուն մէջ դատնող ժո-
 « ղովրդեան կը ծանուցանէ իր դահակալութիւնը» :

Այսու եւ այսպիսեաւ ծրագրաւ ջանայ Յանձնաժողով հաստա-
 տել զնոր իմն դրութիւն հակասական, բարձրացուցանել առաւել
 զիշխանութիւն Ընդհ. ժողովոյ եւ Պատրիարքարանի Գում-Գարույի,
 փոխանակ պատրուակեալ միութեան Եկեղեցւոյ եւ Աղգի Հայաս-
 փոխանակ պատրուակեալ միութեան Եկեղեցւոյ եւ Աղգի Հայաս-
 տանեայց ընդ միով գլխաւոր Գլխով, եւս եւ չփոթէ զներքին եւ

զարտաքին իրաւասութիւնս ծանոնս՝ զբողոքս զլինդիւր արժանապատուութեան ոռու. կառավարութեան:

Թողցուք զայս, եւ առցուք ի ձեռս զընթացս Սինդի, որ հետեւի յաճախ եւ ի նուիրական խնդիրս անգամ հրահանգաց եւ թելադրութեանց ոռու. կառավարութեան:

Արդ՝ յաւելորդաց լմն է երկարաբանել զըժգոհութեանց եւ վթեկադրութեանց ոռու. կառավարութեան առթիւ անցից եւ վերաքննութեան Կանոնադրութեան 1836-ի եթէ աստ ի Կ. Պոլիս եւ եթէ անդ ի Ս. Էջմիածին:

Սինդ առաւել իմն հլու հպատակութեամբ կամակատար լեալ օտարաց, մանաւանդ զի Տեղակալ եւ անդամք Սինդի էին արքայիկարք եւ տգէտք ըստ բազում մասանց՝ զուրկ մինչեւ խալառ ի բարեպաշտական զգացմանց, օրադրական որոշմամբ արձանագրէ գոտարահրահանգ պատուէրս զայսոսիկ:

« Ա. Համարել մասնաւոր իմն Յանձնաժողով եւ ոչ պաշտօնապետ զի. Յանձնաժողովն Կ. Պոլսոյ:

« Բ. Ոչ ճանաչել զորոշումն, ապա ուրեմն զծրագիր նորա « (Յանձնաժողովոյ), որ ոչ ունի ի ձեռին զերաշխաւորութիւն ապահով, եթէ կարէ՞ ժողովակը արդեօք հաւատարիմ թարգման կալ փափաքանաց Հայոց Տաճկաստանեայց, մանաւանդ զի դարեալ է Ազգ. Սահմանադրութիւն, տարակուսական է վերաքննութիւն եւ ապագայ նորա, վասն որոյ Սինդ համարի զեզրահացութիւն Յանձնաժողովոյ իբրեւ զաշխատութիւն վիճարանելի, որ ոչ կարէ վայելել զկշիռ ինչ ի գործս պաշտօնականս:

« Գ. Մերժել իսպառ զեզրակացութիւն Յանձնաժողովոյ, որ սակս Պոլսոյ (Պալատէնիոյ), ըստ որում կազմեալ է կանոնադրութիւնը զմի մասն օրինաց տէրութեան եւ հարկ էր ըստ սահմանեալն կարգի (իմա առեալ կանխաւ զամենողորմած բարեհաճութիւն եւ զհրամանս ո. կայսեր) ենթարկել ընդ վերաքննութեամբ եւ ընդ փոփոխութեամբ, որպէս լինին առհասարակ փոփոխութիւնք օրինաց: Եւ զի Պալատէնիան պատկանի ոռուսահայոց, ապա ուրեմն ոչինչ արժեն քննադատութիւնք օտարերկրեաց անձանց (°): Անկ էր միայն ոռուսական կառավարութեան, որ հաստատեաց զկանոնադրութիւն 1836 ամի, եւ իրաւունք նորա են մոծանել զփոփոխութիւնս ի նմին: - Եւ միանգամայն ոչ ընկալեալ Սինդի զծրագիրն զայս համարէր ըստ առաջնոյն եւ ճանաչէր միայն զ45 Առաջնորդութիւնս Տաճկահայոց եւ զ90 ձայնս պատգամաւորաց, ցորչափ մնային ի գաղտնի (°) եթէ որպէս բարձրա-

« ցան 45 Առաջնորդութիւնք ի 65, եւ զիս՞րդ յաւելաց ի նորոյ 20 « Առաջնորդութիւնք »:

Սինչ այսպէս շփեին ընդ միմեանս երկուքին Կեդրոնական Մարմինք պաշտօնականք աննախանձելի լմն եւ անգիտակից ուղղութեամբ եւ յարարերութեամբք, Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ Տ. Պօղոս Արքեպս. Թաքթաքեան կրկնեաց գրել Սինդի զգրութիւն զայս ի 26-ն Օգոստոսի (1866), զոր եւ արժան համարիմք ամփոփել աստեւն ամբողջութեամբ՝ ի բաց թողեալ զպատկերացուցակ Առաջնորդութեանց ըստ նորոգ կազմութեան:

« Որպէս գրեցաւ ի մենջ առ Սրբազան Սինոտդ ի 15 Յուլիսի անցելոյ ընդ 164 համարաւ, խնդիր ընտրութեան Յաջորդի ընդհանրական Հայրապետի Մայր Աթոռոյ Սրբոյ՝ առաջի ետաւ Ազգային Ընդհանուր Ժողովոյ մայրաքաղաքիս, որ կազմեալ գոլով յեկեղեցական եւ յաշխարհական երեսփոխանաց ազգիս ընդ մերով նախադահութեամբ զազգն ողջոյն զթուրքիարնակ՝ առաջի Օսմանական պետութեան եւ առաջի ազգին ներկայացուցանէ եւ ըստ տրամադրութեան Մերոյ Ազգային Սահմանադրութեան ձեռնհաս է սնորինել զիրաւունս մասնակցութեան թուրքիարնակն հայոցս յընտրութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

« Ազգային արդի Ընդհանուր Ժողովս հասու եղեւ կարգադրութեան Սրբոյ Սինոտիդ, այն է խնդրել ի պատրիարքէն Կ. Պոլսոյ՝ զի հանդերձ Կրօնական Ժողովով նշանակեսցէ զմի ոք եկեղեցական պատգամաւոր, եւ ի Քաղաքական Ժողովոյ՝ զի եւ նա որոշեսցէ զմի ոք աշխարհական՝ պատգամաւոր վասն Կ. Պոլսոյ, եւ հրաւիրեսցէ զամենայն Առաջնորդական վիճակայինս թուրքիոյ ընտրել իւրաքանչիւր ի նոցունց կրկին պատգամաւորս, յորոց մին եկեղեցական ի զիմաց Առաջնորդի, եւ մին աշխարհական՝ ի զիմաց Ժողովրդեան, եւ այսու ամենեքին մասնակից լիցին պատգամաւորք եւ կամ նամակաւ ընտրութեան Կաթողիկոսին Ամենայն Հայոց, որ հանդերձեալ է կատարել ի 15-17 սեպտեմբերի այսր ամի ի Միածնաէջ Ս. Տաճարին: Եւ տեսեալ, զի ընտրական կարգադրութիւնս այս, որ թերեւս համաձայն կանոնադրութեան եկեղեցական վարչութեան մերազնէից Ռուսաստանեայց, այլ ոչ ի զէպ գայ բնաւին թուրքիարնակ հայկազանցս քաղաքական վիճակի պարագայից, որք պահանջեն «միոյն ի ձեռն պաշտօնական գլխոյ Ազգին՝ այն է Պատրիարքին Կ. Պոլսոյ, եւ ընդ նորին նախադահութեան կարգեալ Ազգային Կեդրոնական Ժողովոյ ունել պաշտօնական յարարերութիւնս ընդ համայն համագլխոս օտարաբնակը», եւ նկատելով իսկ զի Ս. Սինդն զհրաւիրագիրս իւր ի խըն-

« Դեր պատգամաւորացն պահանջելոց ի մերազնեայ վիճակայնոց
 « Թուրքիոյ՝ ոչ առ վիճակայինս ուղղակի, այլ առ Կեղերոնական
 « Վարչութիւնն ի Կ. Պոլիս ուղղեալ՝ ակն յայտնի յերեւան ածէր
 « զիւրն քաղաքադիտական խոհականութիւն ի պատճառս փափուկ
 « Դրեց քաղաքական վիճակի թուրքիաբնակ հայկազանցս, վասն ո-
 « ղոյ Ազգային Ընդհանուր Ժողովն սահմանեաց զմասնակցութիւն
 « թուրքիաբնակ Հայոցս յընտրութիւն Ամենայն Հայոց Հայրապե-
 « տին՝ առնել ոչ ի վիճակաւորացն եւ ի ժողովրդականացն պատգա-
 « մաւորն եւ կամ քուեայս առանձինս խնդրելով ըստ պատուիրանաց
 « Ս. Սինոդիդ, որ նոր իմն է եղանակ ընտրութեան եւ ոչ երբեք ի
 « գործ եղեալ աստանոր ի մէջ մեր, եւ ոչ զԱզգն ողջոյն յերկս բա-
 « ժանեալ՝ միայն զթեմականս Ս. Էջմիածնի ընդունել ի մասնակ-
 « ցութիւն ընտրութեան, որպէս անուշադրութեամբ եղեալն է յըն-
 « տրութեան հանգուցելոյ Հայրապետին, վտարելով արտաքս զթե-
 « մականս Կիլիկիոյ եւ Աղթամարայ մասնաւոր կաթողիկոսու-
 « թեանց, որպէս թէ չիցեն եւ նոքա որդիք Հայաստանեայց կաթու-
 « ղիկէ Առաքելական Եկեղեցւոյ, եւ կամ թէ ընտրելի կաթողիկոսն
 « չիցէ կաթողիկոս ամենայն Հայոց, որ ընդ տիեզերս իցեն: Այլ
 « զհամօրէն Տաճկաստանի եւ Դանուբեան աշխարհեաց հայորեայն
 « ընդունել ի մասնակցութիւն ընտրութեան Հայրապետին Ամենայն
 « Հայոց, ըստ կարգաց վաղնջուց եւ օրինաց Հայաստանեայց Մի,
 « Սուրբ, Կաթողիկէ եւ Առաքելական Եկեղեցւոյ:

« Եւ արդ՝ ընդ սահմանելոյ Ազգային Երեսփոխանական ընդհա-
 « նուր Ժողովոյ՝ գումարեցաւ վիճակային Եկեղեցական Ժողով յեր-
 « կոտասաներորդումն Յուլիսի յԱթոռանիստ Մայր Եկեղեցւոջ Կ.
 « Պոլսոյ ընդ մերով գահերեցութեամբ, ուր բաց յեպիսկոպոսաց
 « գտելոց ի Մայրաքաղաքիս եւ ի քարոզիչ վարդապետաց եւ յաւազ
 « եւ յաթոռակալ քահանայից ամենայն եկեղեցեայց Կ. Պոլսոյ՝ ներ-
 « կայ գտան նաեւ յատուկ հրաւիրմամբ մերձակայ վիճակաւոր Ար-
 « քեպիսկոպոսունք եւ վանահարք Ս. Ուխտին Գլակայ եւ Արմաշու
 « հուշակաւոր վանուցն, եւ Կիլիկիոյ եւ Աղթամարայ եւ Ս. Երուսա-
 « ղէմի Աթոռոց (° . . .) եւ յայս սակս կարգեալ փոխանորդի բարձ-
 « րաստիճան եկեղեցականք: Ի ժողովի աստ նախ պատրաստեցաւ
 « ցուցակ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց եկեղեցւոյ ա-
 « ռանց խարութեան երկրի եւ պաշտաման եւ այլ հանգամանաց,
 « որոց թիւն եհաս ի յիսուն, եւ ի յինիցն անդէն ի ժողովի անդ
 « որոչեցան եօթնեկին արժանաւորագոյնք ի գահակալութիւն Արա-
 « բատեան Գերագոյն Աթոռոյն. այս ցուցակ եօթն անուանց ստորա-
 « գրեալ ի հարց ժողովականաց՝ ներկայացաւ Ազգային Երեսփոխա-

« նական Ընդհանուր Ժողովոյ, որ ի քսաներորդ երկրորդ նմին ամ-
 « սոյ գումարեալ ի տաճարին Սրբուհւոյն Աստուածամօր մայրաքա-
 « ղաքիս ընդ մերով գահերեցութեամբ եւ գործակցութեամբ ներ-
 « կայացուցչաց Կաթողիկոսական Աթոռոյն Կիլիկիոյ եւ Աղթամա-
 « րայ, եւ Պատրիարքական Աթոռոյն Ս. Երուսաղէմի, գեօթն ըն-
 « տրելեացն ցցուցակ ըստ ատենական կարգաց եւ կանոնաց՝ դադո-
 « նի քուէարկութեամբ վերածեաց յերկս ընտրելիս, յորոց առաջինն
 « է եւ զիսաւոր նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ Ամենապատիւ Ս.
 « Գէորգ Ս. Արքեպիսկոպոս Պրուսացի, զկնի նորա Ամենապատիւ
 « Տ. Եսայի Ս. Արքեպոս. Պատրիարք Ս. Երուսաղէմի, եւ յետ նորա
 « Գերապատիւ Տ. Իգնատիոս Ս. Արքեպիսկոպոս Վասպուրականի:
 « Սուրբ եւ երեք ընտրելիք կաթողիկոսական գահուն Մօր Լուսոյ
 « Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի ի դիմաց հանուրց Հայաստանեայց
 « բնակելոց ի Թուրքիա, եւ մեր ներկայացուցեալ զանուանող առ
 « Ս. Սինոդդ եւ առ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ընտրո-
 « դական Համագրային Բարձր Ժողովդ՝ յանուն Ընդհանուր Ժողո-
 « վոյ Կեդրոնական Վարչութեան Ազգիս, ի պաշտօնէ սղդ առնեմք՝
 « թէ իւրաքանչիւր ի սոցանէ ունին իրաւունս կրկնաթիւ քուէից
 « վաթսուն եւ հինգ առաջնորդական փիճակաց Հայոցս Տաճկաստա-
 « նի յառաջին անդ ընտրողական գործողութեան, որ ունի կատարել
 « ի Մայր Տաճարի Սրբոյ Էջմիածնի ի հնդեոտասաներորդն առաջի-
 « կայ սեպտեմբեր սոսեան, որպէս յայտ արարեալ է դիր Սրբոյ
 « Սինոդիդ:

« Իսկ յերկրորդ գործողութեան ընտրական քուէարկութեան՝
 « որ առ ի վերջնական եւ իճոտական ընտրութիւն ի միջոյ չորեցունց
 « ստացելոցն ստաւերագոյն քուեայս պարտի կատարել ի համադգա-
 « յին ընտրողական բարձր Ժողովի, պատգամաւորքն Հայոց թուր-
 « քաստանեայց ունին հրահանգ յընդհանուր Ժողովոյ մերմէ թէ
 « ո՛ւմ պարտին տայ զքուեայս ի միջոյ երից անդի ընտրելոց, ունե-
 « յով յայս նուագ եւս իւրաքանչիւր պատգամաւոր վաթսուն եւ հինգ
 « ձայնից գորութիւն, եւ իւրաքանչիւր միահագոյն հարիւր երեսուն
 « քուեայս:

« Ոչ տարազէպ թուի մեզ աստանոր մեկնարանել զտարբերու-
 « թիւն վերոյնշանակեալ թուոյ առաջնորդական փիճակաց թուրքիա-
 « բնակ Հայոցս ի թուոյն ցուցելոց յազգային Կեդրոնական Վարչու-
 « թեանէս ի մասնակցութեան քերում յընտրութեան նախորդ Քահա-
 « նայապետի: Այս տարբերութիւն որպէս տեսանի ի ցուցակէն,
 « ի ձեռս պատգամաւորաց մերոց, ծագի յայնմանէ, զի ի ժամանա-
 « կի նախընթաց կաթողիկոսական ընտրութեան՝ Ազգային Կեդրո-

« նահան Վարչութեան տեղւոյս՝ ոչ էր առեալ ի գիր զթեմս կա-
 « թուղիկոսութեանց Կիլիկիոյ եւ Աղթամարայ եւ ոչ զվիճակս
 « պատրիարքութեան Ս. Երուսաղէմայ՝ զոր ի վեր անդք ասացաք,
 « զորոց զմասնակցութիւն յայս համազգային ընտրական գործողու-
 « թեան սահմանեաց արդի Երեսփ. Ընդհ. Վարչութիւն թուրքիա-
 « բնակ Հայոցս :

« Ազգային Ընդհանուր Ժողովս քաջ համոզեալ է, զի յետ օրի-
 « նաւորապէս եւ ըստ ատենական կարգաց կատարման առաջին եւ
 « երկրորդ քուէարկութեանց յընտրութեան Կաթողիկոսին ամենայն
 « Հայոց ի Մայր Տաճարին՝ ներկայութեամբ եւ գործակցութեամբ
 « մերս պատգամաւորացս, եկեղեցականն այն բարձրաստիճան՝ որ
 « առաւել քան զամենեսին ընկախուցու քուէայս, նա ամբառնայ
 « արժանւորութեամբ ի գերագահ Աթոռս Սրբազան Առաքելոցն Թա-
 « դէի եւ Բարդուղիմեայ եւ առաքելանման Առնն Սրբոյն Գրիգորի
 « Լուսաւորչին մերոյ, ըստ իրաւանց եւ արդարութեան եւ ըստ օ-
 « րինաց ազգային սուրբ Եկեղեցւոյս մերոյ: Եւ յայնժամ աթոռք մաս-
 « նաւոր կաթողիկոսութեանց Կիլիկիոյ եւ Աղթամարայ, Պատրի-
 « արքութեանց Կ. Պոլսոյ եւ Ս. Երուսաղէմի, եւ ամենայն վիճակա-
 « ւորք Տաճկաստանի մասնակցեալք յընտրութիւն Հայրապետին ա-
 « մենայն Հայոց՝ իրաւամբ որդիս դաւանին զանձինս ընտրելոյն յա-
 « մենայն Հայոց, որ եւ իրաւամբ կրէ զբարձր տիտղոս Գերագոյն
 « Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ իրբեւ արդարեւ զլիսոյ միոյ մի-
 « այնոյ Կաթողիկէ եւ Առաքելական Հայաստանեայց ուղղափառ Ս.
 « Եկեղեցւոյ, զոր պանծացուցէ» . . .

Այսպէս ուրեմն Տ. Պօղոս Արքեպս. - Պատրիարք պաշտպանեալ
 ի դիմաց Երեսփ. Ընդհ. Ժողովոյ՝ զիրաւունս եւ զնոր զբութիւն
 մասնակցութեան Հայոց թուրքիոյ յընտրութիւն Կաթողիկոսի ա-
 մենայն Հայոց հակառակ գրութեան եւ շրջաբերականի Սինոդի,
 հաղորդէ միանգամայն զեռանուն ցանկ կաթ. ընտրելեաց հանդերձ
 ալովքն, պարզեալ եւ յայտնեալ զյաւելեալս ի նորոյ զթեմս Կիլի-
 կիոյ, Աղթամարայ եւ Ս. Երուսաղէմի ի յրումն 65 վիճակաց փո-
 խանակ 45-ի:

Իսկ Սինոդի Ս. Էջմիածնի ընկալեալ զայս թուղթ՝ փութայ կազ-
 մել խոնարհաբար ի 16-ն սեպտեմբերի զօրադրական որոշումն եւ
 յաւելու ի Հրամայեցինն օրինակ զայս. « Զներկայ զբութիւն Պատ-
 րիարքին Հայոց Կ. Պոլսոյ ընկալեալ ի տեղեկութիւն՝ կցել ընդ գոր-
 ծոյն: Իսկ ըստ որում ի վերտողեալ գրութեան անդ նշանակին 130
 ձայնք ըստ թուոյ 65 վիճակաց Հայոց Տաճկաստանի, սակայն Սինո-
 դիս, նոյնպէս եւ տէրութեան Ռուսիոյ յայտնի են միայն 45 վիճակք:

որպէս եւ ընկալեալ է յընտրութեան նախկին Կաթողիկոսի ամենայն
 Հայոց Տ. Մատթէոսի, վասն որոյ եւ ի ներկայ ընտրութեան եւս
 ընկալնուլ ըստ առաջնոյն ի հաշիւ ձայնից միմիայն զ45 վիճակն,
 իսկ վասն մնացեալ 20 վիճակացն Սսոյ, Աղթամարայ, Երուսաղէ-
 մայ եւ Դանուբեանց (Դանուբեան գաւառաց կամի ասել) յիշատա-
 կելոց ի վեր անդք զբութեան, առնել զորոշումն զինի ընտրութեան
 եւ հաստատութեան նորոյ Կաթողիկոսի Ազգիս կարեւոր խորհրդ-
 դակցութեամբ զայս վսեմ ինդրոյս ընդ նորին Վեհափառութեան,
 որոյ վասն եւ տալ յերումն ժամու դառանձիմ զեկուցումն անկախ
 յայտնակէ, եւ զայտնակէ յայտնել զլիսաւոր պառավարութեան փո-
 խարբային Կովկասու»:

Ոչ վրիպեցին անշուշտ յուշադրութեանց վերջին տող եւ պար-
 տաւորութիւն օրագրոյ Սինոդի, որպիսիք ոչ յաւելուն երբեք զպա-
 տիւ եւ զպարծանս յայնժամեան անդամոցն, որք էին. Տեղակալ ա-
 տեմապետ Սինոդի Գէորդ Արքեպս. Վեհապետեան, Յովհաննէս
 Արքեպս. Յովրեան, Գէորդ Արքեպս. Մկրտչեան, Յովհաննէս Ե-
 պիսկոպոս Արշարունի, Թադէոս վարդապետ (արեղայ) Զիւնական,
 Պօղոս վարդ. (արեղայ) Տէր-Մարգարեան եւ Գրիգոր վարդ. (արե-
 դայ) Մուշղեան: (Ոչ ունէին վերջինքն եւ ոչ զմասնաւոր իշխանու-
 թիւն վարդապետական, որպէս եւ ոչ իսկ եպիսկոպոսունք):

Ոչ աւելորդ համարեսցի փակագծել ասդէն, զի համաձայն զը-
 բութեան Պօղոս Արքեպիսկոպոս - Պատրիարքի հասին Ներսէս Եպս.
 Վարժապետեան եւ Յակոբ Իֆէնտի Նորատունեկեան ի պատգամաւոր
 ի դիմաց ընդհ. Երեսփ. Ժողովոյ՝ ունելով եւ զյատուկ յաճարա-
 բութիւնս եւ զհրահանգս կարեւորս, զորս պաշտպանեցին ըստ ար-
 ժանւոյն ի Համազգային Կաթ. ընտր. Ժողովի ի Ս. Էջմիածին թէ-
 պէա թերի իմն եւ անտորձ ուղղութեամբ պաշտօնականաւ, թողեալ
 իրբեւ զինդիր վիճելի եւ անվերջանալի: Միանգամայն ստորագրե-
 ցին պատգամաւորք ի վերջին Կաթ. ընտրութեան ըստ այսոցիկ օ-
 րինակացն. « Ես՝ պատգամաւոր ի դիմաց համայն եկեղեցականաց
 ամենայն վիճակացն (°) Ս. Էջմիածնի, եւ Կաթողիկոսութեանցն
 Սսոյ եւ Աղթամարայ, եւ Պատրիարքութեանն Սրբոյ Երուսաղէմի,
 ըստ հրահանգին սուելոյ ինձ յԱզգային Ժողովոյ Պատրիարքութեանն
 Կոստանդնուպոլսոյ, ընտրեցի կաթողիկոս ամենայն Հայոց եւ
 Ծայրագոյն Պատրիարք համազգական Մայր Աթոռոյ Արարտեան
 Սրբոյ Էջմիածնի՝ զամենապատիւ զՏէր Տէր ԳԷՈՐԳ Սրբազան Ար-
 քեպիսկոպոս Պրուսայու, եւ ոչ զոք կանդիտատ: Ներսէս Եպիսկո-
 պոս Վարժապետեան. » — « Նոյնպէս եւ ես՝ պատգամաւորս ի դի-
 մաց ամենայն ժողովրդականաց վերոյիշատակեալ վիճակաց կայսե-

բուժեան Տաճկաստանի ընտրեցի կաթնուղիկոս զՏէր ԳԷՈՐԳ Սրբազան Արքեպիսկոպոս Պրուսայու եւ ոչ զոք կանդիտատ: Յակոբ Պ. Նորատունկեանց»:

Գովելի էին ընթացք երեսփ. Ընդհ. Ժողովոյ Հայոց Թուրքիոյ եւ երկուց պատգամաւորացն ընդդէմ կանդիտայական դրութեան որ ըստ տրամադրութեան ցարալի Պալատէնիոյ 1836-ի, այլ սակայն քննադատելի էին բանք ինչ ստորագրութեան եկեղեցական պատգամաւորի, որպիսիք զրդուեն ի միոյ կողմանէ զներքին հակառակութիւնս, եւ ի միւսմէ տան օտարացն հակառակորդաց զառիթս եւ զհաստս իրաւարանական-միջազգային խնդրոց եւ վիճուց:

Ռուս. կառավարութիւն ունէր եւ վարէր կանոնաւորապէս զդիւանագիտական ուղղութիւն եւ զծրագիր ներհուն եւ հաստատուն նաեւ ըստ խնդրոյ վերաքննութեան Պալատէնիոյ, յորմէ, գէ'թ ըստ ներքին խնդրոյ եւ յականէ յանուանէ՝ ըստ խնդրոյ Պալատէնիոյ՝ զուրկ էին Հայք առհասարակ, եթէ ի Մայր Աթոռուջ Ս. Էջմիածնի յաջորդութեամբ, կաթողիկոսաց անխորձից եւ համբակաց, միանգամայն ոչ հետեւողաց իրերաց, եթէ աստ ի Կ. Պոլիս անհաստատ եւ իրերահակառակ ուղղութեամբք Պատրիարքաց եւ վարչական անգամոց ընդ անգամոց երեսփ. Ընդհ. Ժողովոյ եւ եթէ յայլ ամենայն տեղիս եւ ի սիրուս տիեզերաց:

Վասն որոյ յաջողէր ուս. կառավարութեան յաւէտ մեքենայել, խարդաւանել, գծեցուցանել ընդ միմեանս պաշտօնական մարմինս, եւ այսպէս ենթարկել շփոթութեանց եւ թողուլ ապարդիւն զջանս Հայոց ըստ խնդրոյ Պալատէնիոյ: Յապացոյցս բանից մերոց յաւելումք շարադասել զանցս եւ զհետեւանս պալատէնիական խընդրոյ եւ կաթ. ընտրութեանց որ ի 1884-85 եւ ի 1893 բաւականս առ ի ամփոփել եւ աւարտել զպատմութիւն հաստատութեան եւ խնդրոյ վերաքննութեան Պալատէնիոյ, թողեալ յայլում տեղուջ ծանրանալ եւ պարզել առաւել զառանձին կարծիս մեր որ վասն խնդրոցք եւ ձախորդ ընթացից պաշտօնական մարմնոյ կենտրոնականաց եթէ անդ ի Ս. Էջմիածին եւ եթէ աստ ի Կ. Պոլիս (եթէ ժամ բարեպատեհ եւ պարապոյ դտանիցիմք, մանաւանդ թէ եթէ ներեսցեն անձնական տկարութիւնք մեր):

Արդ՝ յետ յաջողելոյ ուսական կառավարութեան մեքենայել դիւանագիտական ընթացիւք եւ ջրատել զջանս Հայոց նաեւ յայսմ նըւազի, որպէս թողուլ ապարդիւն եւ զձեռնարկս Գէորգայ (կաթողիկոսի) մինչեւ զամ Տեառն 1882-3, զկնի վախճանի Գէորգայ, յորս միջոցի էր Պատրիարք Կոստանդնուպոլսոյ՝ հռչակաւոր հակառակորդ Պալատէնիոյ Ներսէս Եպ. Վարժապետեան, յետ 1865-6 եւ 1870




Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը --

- Ֆրանսա՝ Լ. Գեւորեան, 17, Rue Damesme, Paris.
- Ն. Կակոսեան, (Մարտէլի եւ շրջակայքի ընդհ. գործակալ) 49, Rue Nationale, Marseille.
- Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.
- Կիպրոս՝ Յ. Մահտեսեան, Arasta St. No. 1, Nicosia.
- Բուլղարիա՝ Գ. Հալաճեան, K. Haladjian, B. B. 444, Sofia.
- Ռումանիա՝ Ե. Սարգսեան, Typ "Astoria", 14, Str. Pictor Lichian, Bucarest.
- Եգիպտոս՝ Գ. Միթարեան, խմբագր. «Յուսարեր»-ի, B. P. 868, Le Caire.
- Երովրիա՝ Յ. Գ. Պուրսալեան, Hirna.
- Պաղեստին, Վահան Կէտիկեան, Haret-el-Nasara. Jerusalem.
- Սիրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 310, Alep.
- Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.
- Իրաք՝ Մ. Սոսեան, South Gate Badaveen, 27-1, Bagdad.
- Իրան՝ Խ. Մելքումեան, Թաւրիզ:
 - Ս. Գէորգեան (Խողիտտանի ընդհ. գործակալ), Թեհրան՝ Ար. Խոջայեան, A. Khodjayan. Magasin «Khochnoud», Avenue Lalezar, Téhéran.
 - Սպահան - Ջուլա՝ Թաղ. Թաղէոսեան
 - Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կորոյեան, H. Gopoian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.).
 - Հարաւ. Ամերիկա՝ Եղ. Խաչերեան, Canning 1245, Buenos-Aires

«Յ Ա Ռ Ա Զ»
ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱԲԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
Եմբաղիք՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԲԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ	ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	Վեցամսայ	Եամսնայ
Ֆրանսա եւ Գաղութներ		140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆրանք
Անգլիա, Եգիպտոս, Զիցերիա, Իտալիա		250 ֆրանք	130 ֆրանք	
Ռուսի Երկիրներ		200 ֆրանք	100 ֆրանք	
Ամերիկա		200 ֆրանք	100 ֆրանք	

ՀԱՍՏԵ. — 17, Rue Damesme, Paris XIII



Imp. ARTISTIQUE — 42. Rue de la Jonquière, PARIS (17^e)